



° ñ ̄ YÇ Û³ ÙáäÇ³ Í áðµ



Ἐθνικὸν Κέντρον Ἑρεῦνης
Ἑλληνικῆς Γλώσσας
Ἐθνικὸν Κέντρον Ἑρεῦνης
Ἑλληνικῆς Γλώσσας



˘³ ó Ñ³ è³ ñ Í áäÙ Ý ÇYeiÇiaσÇ
Ø³ ñ áσÇñ Í áäÙ»ñÇ
»óÍ³ è³ Í³ ñ³ Ý
¹ ñ Û³ BÝáñÑ³ ϖÝ Í ñ · Çñ

Ð Û êî ² ÙàôØ
ÄàÔàì ð, ²ì ² ð²Î ² Ù
˘² ð° ö àÊ àôØÛ° ðÆ
ØàÛÆ àðÆÛ¶

¼° Î àôÙò

2005

Ü³ È³ µ³ Ý 5
Ð³ Ü³ éáí³ Ù: á÷ áð 7

- 1. è³ ÑÜ³ Ý³ 1 ñ³ Í³ Ý ÷ á÷ áÈ áðÁðÝ»ñ 11
- 2. ÁÝíñáðÁðÝ»ñ Ñ³ Ýñ ù »Ý»ñ ùñ Ýé¹ ñáðÁðÝÁ »ðá ñ ÍíÇ³ Ý 25
- 3. ³³ Ì³ Í³ Ýµ³ ñ÷ áÈ áðÝ»ñ 39
- 4. Ð³ Ýñ Ñ³ í³ Ù»ñ ÁáÇáí Ý»ñ Ü³ ñí³ Ýó³ ½ íí»Ç³ Ñ³ ñ 43
- 5. È áßí³ Ý. áðÝ»ñ³ ÝÜ³ ñí³ ÇÝí »ñ µñáðÝ 52
- 6. Ð³ ñ áðÇñ í áðÝ»ñÇ á³ Ñí á³ ÝÇÇÝéíÇ áðÁÐ Ñ³ Ü éí³ Ýáð 59
- 7. È ÇÇ³ ½ íáðÁðÝ »ðí ñáÝ³ Í³ ÝÍ³ ½ Ñ³ Í »ñ áðÁðÝ»ñ 66
- 8. ²½³ ÇÝ »ðÁÝÇ³ Í³ Ý 69
- ÷ áðñ Ü³ èÝáðÁðÝ»ñÇÇñ í áðÝ»ñ 74
- 9. ²ÁÝíñ ÝÇ ÇÝí³ è³ áðÁðÝ
- 10. ²ÝÓÝ³ Í³ Ýíí Ü ÉÝ»ñÇ á³ Ñí á³ ÝáðÜ Ý 80
- í »ñ µñÜ ÈñÝé¹ ñáðÁðÝ 82
- 11. í »Ç³ íí áðÜ Ý »ðÈ áéÇ³ ½ íáðÜ Ý µÝ³ . ³ í³ é

Ð³ í »È³ Í 1
°È È í Í³ ñ ÇúÁÇ 221 (2000)
Ð³ Ü éí³ ÝÇ¹ ÇÚáðÁ »í ñá³ ÇÈ áññ ÇÝ³ Ý¹³ Ü³ Í óáðÜ Ý Ñ³ Ü³ ñ 109

Ð³ í »È³ Í 2
°È È í Á Ç 1361 (2004) µ³ Ý³ Ó»ð
Ð³ Ü éí³ ÝÇéí³ ÝÓÝ³ Í á³ ñ³ í áñáðÁðÝ»ñÇ Í³ í³ ñ³ Ý Ü³ èÇÝ 115

Ð³ í »È³ Í 3
°È È í Á Ç 1374 (2004) µ³ Ý³ Ó»ð
Ð³ Ü éí³ ÝÇéí³ ÝÓÝ³ Í á³ ñ³ í áñáðÁðÝ»ñÇ »ð
á³ ñ³ Í³ ÝáðÁðÝ»ñÇ Í³ í³ ñ³ Ý Ü³ èÇÝ 122

Ð³ í »È³ Í 4
°È È í Á Ç 1405 (2004) µ³ Ý³ Ó»ð
Ð³ Ü éí³ ÝÇéí³ ÝÓÝ³ Í á³ ñ³ í áñáðÁðÝ»ñÇ »ð
á³ ñ³ Í³ ÝáðÁðÝ»ñÇ Í³ í³ ñ³ Ý Ü³ èÇÝ
Á Ç 1361 (2004) »ðÁ Ç 1374 (2004) µ³ Ý³ Ó»ð ñÇ Í³ í³ ñáðÁ 126

Ð³ í »È³ Í 5
Ð³ Ü éí³ ÝÇ Ñ»éáéí³³ ÈÇÝ»ñ ÚáÝÇíáñÇ Ç Ñ³ Ñí »íí áðÁðÝ 130

Ð³ í »È³ Í 6
°í ñá³ ÇÈ áññ Ç ŞÁáÇáí ñ³ í³ ñáðÁðÝ Çñ í áðÝÇ ÙÇçáóáí !
Ñ³ ÝÓÝ³ ÁáÇáí (í »ÝíÇí Ç Ñ³ ÝÓÝ³ ÁáÇáí)
í »ñÇ³ Í³ Ý »ñ³ Í³ óáðÁðÝ Ð³ Ü éí³ ÝÇ Ð³ Ýñ á »íáðÜ Ý
è³ ÑÜ³ Ý³ 1 ñáðÜ Ý ÷ á÷ áÈ áðÁðÝ»ñÇ í »ñ µñÜ È 155

Ð³ í »È³ Í 7
Ð³ Ü éí³ ÝÇ ¼ÈØ-Ý»ñáðÉÐè³ ÑÜ³ Ý³ 1 ñáðÜ Ý
÷ á÷ áÈ áðÁðÝ»ñÇ Ý³ È³ . Í Ç 2005Á.
ÝáðÜµ»ñÇ 27-Ç Ñ³ Ýñ ù »Ç Éáè³ µ³ ÝÜ³ Ý ÚáÝÇíáñÇÝ Ç
Ñ³ Ñí »íí áðÁðÝÁ 163

2001 թվականի հունվարի 25-ին դառնալով Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ՝ Հայաստանի Հանրապետությունը որոշակի պարտավորություններ էր ստանձնել, որոնք ամրագրված էին ԵԽ անդամակցության դիմումում եւ այդ դիմումի վերաբերյալ ԵԽԽՎ N 221 (2000թ. հունիսի 28) կարծիքում (*stus` հավելված 1*): Այդ պարտավորությունների կատարման ընթացքը մի քանի անգամ քննարկվել է ԵԽ խորհրդարանական վեհաժողովում եւ ընդունվել են բանաձեւեր (*stus` հավելվածներ` 2, 3, 4*):

Սույն հետազոտությունը, որ Երեւանի մամուլի ակումբը («Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնության անդամ մի քանի հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ) սկսել է 2004 թվականի հոկտեմբերից, նպատակ ուներ պարզել, թե ԵԽ -ին անդամակցությունից հետո Հայաստանն ինչպես է կատարել մարդու իրավունքների եւ ժողովրդավարության բնագավառներում իր ստանձնած պարտավորությունները, ընդ որում՝ մոնիտորինգի առարկա են եղել ոչ միայն բուն պարտավորությունները, այլեւ հետագայում՝ պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ ԵԽԽՎ բանաձեւերի պահանջները:

Յուրաքանչյուր պարտավորության մոնիտորինգն ընդգրկել է հարցի նախապատմությունը, օրենսդրական փոփոխությունները, պրակտիկան, ընթացքը, ինչպես նաեւ՝ բարեփոխումներն առավել արդյունավետ դարձնելու առաջարկություններ: Ուսումնասիրվել են 2001 թվականից հետո ընդունված օրենքները, օրենքներում կատարված փոփոխությունները, տարբեր նորմատիվ փաստաթղթերը, քաղաքացիների եւ տարբեր մարմինների միջեւ նամակագրությունը, վիճակագրական տվյալները, պարտավորությունների կատարմանն առնչվող հրապարակումներն ու մարդու իրավունքների խախտումների արձանագրված փաստերը, անց են կացվել հարցումներ, անձնական հարցազրույցներ, լրատվամիջոցների մոնիտորինգ, ինստիտուցիոնալ բարեփոխումների ընթացքի վերլուծություն, ինչպես նաեւ՝ տարբեր հաստատությունների դիտարկումներ:

2005 թվականին Հայաստանի համար ամենանշանակալի իրադարձությունը ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի լրամշակումն ու այն հանրաքվեով ընդունելու ամբողջ գործընթացն էր: Գործող Սահմանադրությունն իբրեւ Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների խոչընդոտ, իսկ փոփոխությունները՝ իբրեւ դրանց խթանման կարելուագույն միջոց էին համարում եւ ՀՀ իշխանությունները, եւ ընդդիմությունը, եւ միջազգային կառույցները: Սակայն Սահմանադրության փոփոխությունների նախագծի լրամշակման որոշակի պահից սկսած ընդդիմությունը հրաժարվեց համագործակցել իշխանությունների հետ, իսկ հանրաքվեի քարոզչության ընթացքում նախ կոչ էր անում «Ոչ» ասել փոփոխությունների նախագծին, ապա եւ՝ ընդհանրապես բոյկոտել հանրաքվեն: Սահմանադրական փոփոխությունների գործընթացի անբավարար թափանցիկությունը մատնանշեց «Գործընկերություն հանուն

բաց հասարակության» նախաձեռնությունը, համարելով, որ Հայաստանի հասարակայնությունը բավարար չափով ընդգրկված չէ սահմանադրական բարեփոխումների գործընթացում, մի շարք կարելուր այլընտրանքային առաջարկություններ անհրաժեշտ ուշադրության չեն արժանացել, ինչի պատճառով նախագծի առանձին դրույթներ լուրջ դժգոհությունների տեղիք են տալիս: 2005 թվականի նոյեմբերի 27-ին հանրաքվեի դրված նախագծի քվեարկությունն էլ բազմաթիվ հարցեր առաջացրեց: Փորձագետների գնահատմամբ տեղի են ունեցել օրենքների խախտումներ, ընտրողների ակնհայտ պասիվության պայմաններում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է թվեր, որոնք լուրջ կասկածների տեղիք են տալիս: Քվեարկության բուն պրոցեսի վերահսկողության վրա բացասաբար անդրադարձավ նաեւ այն, որ ընդդիմությունն ընտրական հանձնաժողովների իր ներկայացուցիչներին կոչ արեց չներկայանալ տեղամասեր: Քվեարկությանը ընտրողների մասնակցության վերաբերյալ կասկածներ է հայտնել նաեւ ԵԽԽՎ եւ Տեղական ու տարածքային իշխանությունների կոնգրեսի 17 հոգանոց դիտորդական առաքելությունը, որի եզրակացության մեջ նշվել է, թե հանրաքվեն ընդհանուր առմամբ համապատասխանում էր միջազգային չափանիշներին, սակայն այն անցել է լուրջ չարաշահումներով: ԵԽ դիտորդները, ավելի ուշ նաեւ ԱՄՆ պետդեպարտամենտը ափսոսանք էին հայտնել, որ ՀՀ իշխանությունները դիտորդներ չհրավիրեցին ԵԱՀԿ-ից: Տեղական դիտորդները համարում են, որ հանրաքվեն անցել է բազմաթիվ խախտումներով, որ ընտրատեղամասերում դատարկություն էր, եւ մասնակցության նման բարձր ցուցանիշն ապահովվել է լցոնումներով:

Ինչեւէ, Սահմանադրության փոփոխությունների նախագիծը պաշտոնապես համարվում է ընդունված, եւ այս վերլուծության մեջ մենք ելնում ենք այդ իրողությունից:

Սույն հետազոտության վերաբերյալ միջանկյալ զեկույցը հրապարակվել է 2005 թվականի մայիսին: Այն ներկայացնում էր Հայաստանում ժողովրդավարացման գործընթացի վերլուծությունը 2005 թվականի մարտի 1-ի դրությամբ: Այս զեկույցը Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների վիճակը ներկայացնում է 2005 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ:

Հետազոտությունն իրականացվել է Երեւանի մամուլի ակումբի` «Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների մոնիտորինգ» ծրագրի շրջանակներում: Ներկայացվող զեկույցի բաժինները պատրաստել են «Գործընկերություն` հանուն բաց հասարակության» նախաձեռնության մեջ ընդգրկված «Ժողովրդավարություն. քաղաքական եւ իրավական հետազոտությունների կենտրոն», «Հայաստանի Հելսինկյան կոմիտե», «Խաղաղարար նախաձեռնությունների կովկասյան կենտրոն», «Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն», «Ինտերնյուս-Հայաստան», «Երեւանի մամուլի ակումբ», «Խոսքի ազատության պաշտպանության» կոմիտե հասարակական կազմակերպությունները, ինչպես նաեւ` Հայաստանի իրավաբանների միությունը:

Նախագիծը ֆինանսավորել է Բաց հասարակության ինստիտուտի Մարդու իրավունքների եւ կառավարման դրամաշնորհային ծրագիրը:

ՅԱՅԱՍՏԱՆՈՒՄ Ժողովրդավարական բարեփոխումների կարելուաթյան ընդունումը: Թեպետ Եվրոպայի խորհրդի առջեւ ստանձնած պարտավորություններում Սահմանադրության փոփոխությունները ուղղակիորեն նախատեսված չէին, սակայն մի շարք պարտավորությունների կատարումը պայմանավորվում էր նաեւ Սահմանադրության փոփոխությամբ: ԴՅ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը ԱԺ-ը երրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց սեպտեմբերի 28-ին, իսկ հանրաքվեն տեղի ունեցավ 2005 թ. նոյեմբերի 27-ին, եւ ըստ ԿԸԴ որոշման՝ նախագիծը համարվեց ընդունված: Չնայած փոփոխված Սահմանադրությունը, ամբողջությամբ վերցրած, առաջընթաց ունի (իշխանության գերկենտրոնացման փոխարինում ըստ էության կիսանախագահական համակարգով, դատական իշխանության անկախության եւ մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ երաշխիքների մեծացում), այսուհանդերձ, փոփոխությունները չեն լուծում Հայաստանի ժողովրդավարական զարգացման եւ իրավական պետության կառուցման համար անհրաժեշտ բոլոր խնդիրները:

ԵՎՐՈՊԱՅԻ խորհրդի անդամ դառնալուց հետո Հայաստանի Հանրապետությունում անցկացված եւ ոչ մի ընտրություն (նաեւ՝ 2005թ, նոյեմբերի 27-ի հանրաքվեն) դիտորդների կողմից չի գնահատվել լիովին ազատ եւ արդար, իսկ հասարակության մեջ կասկածներ են մնացել արդյունքների վերաբերյալ: Հայաստանի Հանրապետությունում ըստ էության բացակայում են ազատ եւ արդար ընտրություններ ու հանրաքվեներ կազմակերպելու եւ անցկացնելու համար անհրաժեշտ երեք պայմանները՝ ժողովրդավարական չափանիշներին համապատասխանող ընտրական օրենսդրությունը, որոշակի աստիճանի հասած ընտրական կուլտուրան եւ պատշաճ ընտրություններ կազմակերպելու իշխանությունների կամքը: Բավարար չեն նաեւ ազատ ու արդար ընտրություններին նպաստող մյուս իրավունքների եւ ազատությունների (խոսքի ազատություն, հավաքների ազատություն, ազատ տեղաշարժվելու իրավունք եւ այլն) ապահովումն ու պաշտպանության աստիճանը:

1995 ԹՎԱԿԱՆԻՆ ԴՅ Սահմանադրությամբ հռչակվեցին դատական մարմինների անկախության երաշխիքները: Սակայն, միաժամանակ, դատավորների նշանակման (լիազորությունների դադարեցման, կարգապահական պատասխանատվության ենթարկման) գործընթացն իրականացվում էր ԴՅ նախագահի կողմից՝ արդարադատության խորհրդի առաջարկությամբ, որը նույնպես գլխավորում էր ԴՅ նախագահը (փոխնախագահներն էին ԴՅ արդարադատության նախարարը եւ ԴՅ գլխավոր դատախազը): 2005թ. սահմանադրական փոփոխություններով արդարադա-

տության խորհրդի կազմը փոփոխվեց: Սակայն պահպանվեցին այն դրույթները, ըստ որոնց վերջնական որոշում կայացնողը երկրի նախագահն է եւ սահմանված չէ, թե ինչ կարող է անել արդարադատության խորհուրդը, եթե նախագահը չի կատարում իրենց առաջարկությունը: Սահմանադրությունում կատարված փոփոխությունները, դրական քայլ լինելով հանդերձ, անուամենայնիվ, չեն կարող բավարար համարվել դատական իշխանության ինստիտուցիոնալ անկախությունը երաշխավորելու համար:

2004 թ. ԸՆԴՈՒՆՎԵՑ «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» օրենքը, որը գործադիր իշխանությանը հնարավորություն էր տալիս արգելել հանրահավաքների անցկացումը Երեւանի կենտրոնում տեղակայված վարչական շենքերի մոտ: Եւս պահանջով օրենքը բարեփոխվեց: Սակայն հայեցակարգային առումով այն շարունակում է մնալ հրապարակային միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը սահմանափակող բնույթի: Ինչպես մինչ օրենքի ընդունումը, այնպես էլ դրանից հետո քաղաքական լարվածությունների ժամանակ հրապարակային միջոցառումների անցկացումը իշխանությունների կողմից խոչընդոտվում է (օրենքին չհամապատասխանող հիմքերով արգելվում է, հանդիպումների համար շենքեր չեն տրամադրվում), ոստիկանության կողմից հանրահավաքների մասնակիցների կամայական հետապնդումներ են լինում: Խախտվում է նաեւ քաղաքացիների սահմանդրությամբ երաշխավորված ազատ տեղաշարժի իրավունքը՝ փակվում են ճանապարհները, ավտոմեքենաները տարվում են տուգանային հրապարակ:

ԱԶՍՏԱԶՐԿՍԱՆ վայրերը արդարադատության նախարարության ենթակայությանը փոխանցելուց 3 տարի հետո՝ 2004 թվականից, գործում է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերի հասարակական դիտորդների խումբը: Խումբը, ինչպես նաեւ մի շարք հասարակական կազմակերպություններ, մոնիտորինգներ անցկացնելով քրեակատարողական հիմնարկներում՝ արձանագրել են, որ տարբեր միջազգային կազմակերպությունների աջակցությամբ կատարվել են քրեակատարողական հիմնարկների բարեփոխումներ եւ վերանորոգման աշխատանքներ: Սակայն մեկուսարաններում շարունակում է անբավարար մնալ բուժսպասարկումը, սնունդով ապահովումը, տեղեկատվության հասանելիությունը: 2005թ.-ին դիտորդների խմբի կողմից բացահայտվել են կալանավորված անձանց իրավունքների խախտման դեպքեր: Միաժամանակ, դիտորդների խումբը համարում է, որ քրեակատարողական հիմնարկներում խոշտանգումների փաստերի սակավության պատճառը ոչ թե դրա բացակայությունն է, այլ այդ մասին հայտնելուց խուսափելը:

2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ընդունվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքը, ըստ որի Պաշտպանին մինչ սահմանադրական փոփոխությունները նշանակում էր ՀՀ նախագահը՝ խորհրդակցելով Ազգային ժողովի խմբերի եւ խմբակցությունների հետ: Սակայն ՀՀ նախագահը 2004թ. փետրվարին Մարդու իրավունքների պաշտպանին նշանակեց առանց Ազգային ժողովի խմբերի եւ խմբակցությունների հետ խորհրդակցելու: Այնուհետեւ Պաշտպանի տեղակալ նշանակվեց ոչ թե Պաշտպանի առաջարկած, այլ, հակառակ «Մարդու իրավունքների պաշտպա-

նի մասին» ՀՀ օրենքի պահանջի, ՀՀ Նախագահի նախընտրած թեկնածուն: Ըստ օրենքի՝ Մարդու իրավունքների պաշտպանը զրկված է դատական մարմինների եւ դատավորների դեմ ներկայացված, ինչպես նաեւ այն բողոքները քննելու իրավունքից, որոնց վերաբերյալ ընթանում է դատաքննություն: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի առաջին տարեկան զեկույցն իշխանության ներկայացուցիչների կողմից բացասական արձագանքների արժանացավ, իսկ 2005 թվականի մի շարք հարցադրումներն այդպես էլ մնացին անպատասխան, ապա եւ՝ որոշակի ճնշումներ եղան Պաշտպանի նկատմամբ: Ըստ փոփոխված Սահմանադրության եւ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի, Ազգային ժողովը 2006 թվականի փետրվարի սկզբին, պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-րդով՝ 6 տարի ժամկետով պետք է ընտրի Մարդու իրավունքների նոր պաշտպան՝ «ՀՀ Նախագահի եւ Ազգային ժողովի տրամադրումների առնվազն 1/5-ի կողմից առաջարկված թեկնածուներից»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ Հանրապետության «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքն ընդունվել է 1991թ. հունիսի 17-ին՝ հիմք ունենալով ԽՍՀՄ 1990-ի նույնանուն օրենքը: Դրանից հետո այն երկու անգամ՝ 1997թ. եւ 2001թ. փոփոխվեց եւ լրացվեց: Օրենքն ունի բազմաթիվ թերություններ: Առանձին դրույթներ միմյանց հակասում են: Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախաձեռնել է «Կրոնական կազմակերպությունների մասին» նոր օրենքի նախագծի մշակումը: Հայաստանի մամուլում եւ հեռուստաալիքներով պարբերաբար անհանդուրժողականության, անգամ բռնության կոչեր են հնչում կրոնական համայնքների դեմ: 1992-1995թթ-ի ընթացքում Հայաստանում տեղի էին ունեցել հարձակումներ կրոնական կազմակերպությունների գրասենյակների վրա, որոնց ընթացքում տարբեր համայնքների անդամներ ստացել էին մարմնական վնասվածքներ: 1995 թվականից հետո նման կարգի հարձակումներ չեն գրանցվել:

ՍԿՍԱԾ 2004 թվականից, ՀՀ կառավարությունը նկատելի դրական միտումներ է ցուցաբերում՝ առավել ակտիվ գործունեություն ծավալելով ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում: Օրենքի նոր նախագիծը հավանության է արժանացել Շվեդիայի հելսինկյան կոմիտեի եւ Ազգային փոքրամասնությունների գործերի կենտրոնի (ECMI) փորձագետների կողմից: 2006 թվականը, ամենայն հավանականությամբ, որոշիչ կլինի պարզելու համար, թե որքանով են լուրջ կառավարության հայտարարած մտադրությունները:

«**ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ** ծառայության մասին» օրենքով այլընտրանքային քաղաքացիական ծառայության փոխարեն սահմանվեց այլընտրանքային զինվորական ծառայություն՝ 36 ամիս եւ այլընտրանքային աշխատանքային ծառայություն՝ 42 ամիս տեւողությամբ: Վերջինն անցկացվում է ՀՀ կառավարության սահմանած կազմակերպություններում (հոգեբուժարան, հաշմանդամների տուն-ինտերնատներ, ծերանոցներ, հոգեբուժական եւ նյարդահոգեբուժական հիվանդանոցներում, «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցում): Այլընտրանքային ծառայությունները վերահսկվում են պաշտպանության նախարարության գերատեսչությունների կողմից: Այլընտրանքային զինվորական ծառայողների պատասխանատվության հարցերը լուծվում են պարտադիր զինվորական ծառայու-

թյան զինծառայողներին հավասար՝ օրենքով սահմանված կարգով: 2004թ. աշնանային զորակոչի ընթացքում այլընտրանքային ծառայության ուղարկված քաղաքացիները հինգերորդ ամսում՝ 2005թ. մայիսին, հրաժարվել են ծառայությունը շարունակելուց: Նրանցից 13-ը դատապարտվել է տարբեր ժամկետների ազատազրկման: Մյուսների դատը շարունակվում է: 2005 թվականի զորակոչերի ընթացքում այլընտրանքային ծառայության անցնելու դիմումներ չեն եղել: 27 «Եժովայի վկաներ» դատապարտվել են ազատազրկման՝ հերթական զինվորական զորակոչից խուսափելու համար:

ԹԵՊԵՏ Հայաստանում խոսքի եւ տեղեկատվության ազատության բնագավառը կարգավորող մի շարք առաջադիմական օրենքներ են ընդունվել («Տեղեկատվության ազատության մասին», «Զանգվածային լրատվության մասին»), սակայն այս ոլորտում դեռեւս առկա են բազմաթիվ բացասական երեւույթներ: «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը շարունակում է խոչընդոտել հեռարձակվող լրատվամիջոցների առաջընթացին ու զարգացմանը: Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը դեռեւս մնում է իշխանության խոսափողը: 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության փոփոխություններն էլ էական ազդեցություն չեն ունենալու հեռարձակման բնագավառը կարգավորող մարմինների կազմերի վրա: Փոփոխված Սահմանադրությունը միայն մեկ կարգավորող մարմնի գոյություն է ենթադրում, իսկ վերջինիս ձեւավորման կարգն էլ (անդամների 50 տոկոսն ԱԺ-ի, 50 տոկոսը՝ ՀՀ նախագահի նշանակմամբ) արդեն իսկ կաղապարների մեջ է դնում «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի հետագա փոփոխությունները: Ստահոգիչ է հեռարձակվող լրատվամիջոցների ազատության վիճակը: Հեռուստառադիոհաճախությունների արտոնագրման 2002 թվականից անցկացվող մրցույթների արդյունքների, ինչպես նաեւ ոլորտը կարգավորող մարմինների գործունեության վերլուծությունները ցույց են տալիս, որ մի շարք հարցերում այդ մարմինները, հետեւաբար նաեւ հեռարձակող ընկերությունները առաջնորդվում են ավելի շատ քաղաքական եւ այլ շահերով, քան օրենքների պահանջներով, ակնհայտ է օրենսդրության ընտրովի կիրառումը: Վտանգավոր միտումներից է նաեւ «Վհաբեկչության դեմ պայքարի մասին» օրենքում «Հակահաբեկչական գործողության մասին տեղեկատվության սահմանափակումը» հոդվածը, որը կարող է լրատվամիջոցների ներկայացուցիչների համար խոսքի ազատության եւ տեղեկություններ ստանալու հերթական խոչընդոտը դառնալ: Վերջապես, 2005 թվականի վերջից տեղեկատվության ազատ տարածմանը սկսեցին խոչընդոտել «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքը եւ դրա ընդունման հետ միաժամանակ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, ըստ որոնց բաժանորդագրությամբ տպագիր մամուլ տարածող ընկերությունները պետք է լիցենզավորվեն: Բացի օրենքների անկատարությունից, վտանգավոր են նաեւ այնպիսի երեւույթներ, ինչպիսիք են լրատվամիջոցների եւ լրագրողների նկատմամբ ահաբեկումներն ու դրանք իրականացրած անձանց անպատիժ մնալը (կամ ձեւական պատժի արժանանալը), սեփականության համակենտրոնացումը տեղեկատվության ոլորտում, հեռուստատեսություններում թաքնված գրաքննությունն ու բազմակարծության պակասը:

1. «ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը»

Սահմանադրության փոփոխությունների հատուկ պահանջ Եվրոպայի խորհուրդը Հայաստանի առջև սկզբում չէր դրել, քանի որ Հայաստանում սահմանադրական բարեփոխումների պաշտոնական գործընթացն արդեն սկսվել էր, եւ այդ հարցում իշխանությունները սերտորեն համագործակցում էին Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) հետ: Եվրոպայի խորհրդին անդամակցելու Հայաստանի դիմումի վերաբերյալ թիվ 221 կարծիքում (2000թ. հունիսի 28) ԵԽԽՎ-ը միայն նկատի էր առնում, որ «Հայաստանը մտադիր է անդամակցության երկու տարվա ընթացքում ապահովել սահմանադրական դատարան դիմելու իրավունքը՝ նաեւ կառավարության, գլխավոր դատախազի, բոլոր ատյանների դատարանների եւ, հատուկ դեպքերում, անհատների» համար, ինչպես նաեւ՝ «Անդամակցության երեք տարվա ընթացքում բարեփոխել արդարադատության խորհուրդը՝ նրա անկախության ընդլայնման նպատակով»:

2002թ. սեպտեմբերի 26-ի 1304 բանաձեւում ԵԽԽՎ-ը, նկատի առնելով 2003 թվականին նոր Սահմանադրություն ընդունելու Հայաստանի իշխանությունների վճռականությունը, նրանց հրավիրեց շարունակել համագործակցությունը Վենետիկի հանձնաժողովի հետ՝ հետեւելով նրա կողմից արված առաջարկներին: 1304 բանաձեւը, բացի այդ, Հայաստանի իշխանություններին հրավիրում էր քննելու Սահմանադրության նախագծում Ազգային ժողովի վերահսկողական դերի բարձրացման հնարավորությունը: Հայաստանի իշխանությունները, որոնք ԵԽ Վենետիկի հանձնաժողովի 2001թ. հուլիսի եզրակացությունից հետո փաստացի դադարեցրել էին իրենց համագործակցությունը հանձնաժողովի հետ Սահմանադրության փոփոխությունների հարցերով, չհետեւեցին ԵԽԽՎ-ի առաջարկություններին, եւ 2003թ. մայիսի 25-ին հանրաքվեի դրվեց մի նախագիծ, որի տեքստին հանձնաժողովը նույնիսկ տեղյակ չէր:

2003թ. մայիսի 25-ի հանրաքվեում սահմանադրական փոփոխությունները չընդունվեցին: 2004թ. հունվարի 27-ի 1361 բանաձեւում ԵԽԽՎ-ը նշում էր, որ Հայաստանի որոշ օրենսդրական պարտավորությունների կատարումը դեռեւս կախված է սահմանադրական փոփոխություններից: Վեհաժողովը, մասնավորապես, նշում էր տեղական ինքնակառավարման ուժեղացումը, մարդու իրավունքների պաշտպանի անկախ ինստիտուտի ներդրումը, հեռուստատեսության եւ ռադիոյի անկախ կարգավորիչ մարմնի ստեղծումը, սահմանադրական դատարանի լիազորությունների փոփոխությունը եւ դիմող սուբյեկտների ցանկի ընդլայնումը, արդարադատության խորհրդի բարեփոխումը: Վեհաժողովը մեկ անգամ եւս կոչ էր անում Հայաստանի իշխանություններին՝ արագացնել սահմանադրական փոփոխությունները եւ հանրաքվե անցկացնել ոչ ուշ, քան 2005թ. հունիսին: ԵԽԽՎ 2004թ. հոկտեմբերի 7-ի 1405 բանաձեւում արդեն նշվում էր,

որ սահմանադրության փոփոխության գործընթացում առաջընթաց է գրանցվել եւ նորից կոչ էր արվում, որ հանրաքվեն անցկացվի 2005թ. հունիսից ոչ ուշ: 2005թ. հունիսի 23-ին ԵԽԽՎ-ն իր նոր՝ 1458 բանաձեւում, որն ամբողջությամբ նվիրված էր Հայաստանում սահմանադրական փոփոխությունների գործընթացին, կոչ արեց Հայաստանի քաղաքական ուժերին եւ քաղաքացիական հասարակությանը՝ ապահովել այնպիսի սահմանադրական բարեփոխումների հաջողությունը, որոնք ամբողջությամբ կհամապատասխանեն Եվրոպայի Խորհրդի ստանդարտներին:



Վենետիկի հանձնաժողովի հետ 2000-2001թթ. համագործակցությամբ ստեղծվել էր մի նախագիծ, որի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովը 2001թ. հուլիսի 6-7-ի 47-րդ պլենար նիստում ներկայացրեց իր զեկույցը (CDL-INF(2001)17): Այդ նախագիծը հետագայում, 2001թ. սեպտեմբերի 8-ին, գրեթե առանց փոփոխությունների, Հանրապետության նախագահը ներկայացրեց Ազգային ժողով:¹ Ազգային ժողովում քննարկումներից հետո նախագահը 2003թ. մարտի 27-ին Ազգային ժողով ներկայացրեց իր լրամշակած նախագիծը², որը զգալիորեն տարբերվում էր առաջինից: Ազգային ժողովը 2003թ. ապրիլի 2-ին, որոշ փոփոխություններից հետո, համաձայնություն տվեց այդ նախագծին: Այն 2003թ. մայիսի 25-ին դրվեց հանրաքվեի եւ չընդունվեց:

2004թ. ամռանն ու աշնանը Ազգային ժողով ներկայացվեցին սահմանադրական փոփոխությունների երեք նախագծեր՝ կառավարող կոալիցիայի երեք կուսակցությունների նախագիծը (2004թ. օգոստոսի 8), ՀՀ ԱԺ պատգամավոր Արշակ Սադոյանի նախագիծը (2004 թ. օգոստոսի 16) եւ Միավորված աշխատանքային կուսակցության նախագիծը (2004թ. սեպտեմբերի 17): Այս երեք նախագծերի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովը 2004թ. դեկտեմբերի 3-4-ի 61-րդ պլենար նիստում ընդունեց իր միջանկյալ զեկույցը (CDL-AD (2004)044):

Վենետիկի հանձնաժողովն այդ փաստաթղթում նշեց, որ ներկայացված նախագծերն ամբողջությամբ չեն համապատասխանում Եվրոպական չափանիշներին եւ որպես բարեփոխումների հիմք պետք է ընդունել 2001թ. նախագիծը:

Չնայած հանձնաժողովի եզրակացությանը, ԱԺ-ն 2005թ. մայիսի 11-ին հիմք ընդունեց կոալիցիայի նախագիծը, որը բազմաթիվ կարեւոր հարցերում անտեսել էր Վենետիկի հանձնաժողովի 2004թ. դեկտեմբերի եզրակացությունը: Մայիսի 27-ին ԵԽ մամլո ծառայությունը հաղորդագրություն տարածեց, որ Վենետիկի հանձնաժողովի Հայաստանի սահմանադրական փոփոխությունների աշխատանքային խումբը խոր հիասթափություն է հայտնել առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի վերաբերյալ եւ ընդգծել, որ այդ նախագիծն արմատական փոփոխությունների կարիք ունի:

2005 թ. հունիսի 1-2-ին Երեւանում Վենետիկի հանձնաժողովի աշխատանքային խմբի եւ Հայաստանի քաղաքական ուժերի միջեւ սահմանադրության փոփոխությունների նախագծի քննարկման նպատակով

¹ «Հայաստանի Հանրապետություն», 01. 02. 2002:

² Հայաստանի Հանրապետության Պաշտոնական Տեղեկագիր հ. 19 (254), 12 ապրիլի 2003, «Հայաստանի Հանրապետություն», 12 ապրիլի 2003:

նախատեսված կլոր սեղանը տեղի չունեցավ: Փոխարենը Վենետիկի հանձնաժողովի ներկայացուցիչները Երեւան ժամանեցին ԶԶ իշխանութիւններին իրենց խոր դժգոհությունը արտահայտելու համար: Հունիսի 2-ին Վենետիկի հանձնաժողովի աշխատանքային խումբը եւ ԶԶ իշխանութիւնների ներկայացուցիչներն ընդունեցին հուշագիր: Փաստաթղթում Վենետիկի հանձնաժողովն արձանագրեց, որ առաջին ընթերցմամբ ընդունված նախագիծը երեք հիմնական հարցերում դեռեւս կարելուք թերություններ է պարունակում. պետական մարմինների միջեւ իշխանութիւնների հավասարակշռում, դատական մարմինների անկախություն եւ Երեւանի քաղաքապետի նշանակման կարգ: Հուշագրում ԶԶ իշխանութիւնները հանձն առան այդ հարցերում նախագիծը համահունչ դարձնել Վենետիկի հանձնաժողովի պահանջներին:

Ըստ հուշագրում սահմանված ժամանակացույցի, 2005թ. հունիսի 23-24-ին Ստրասբուրգում տեղի ունեցավ ԶԶ իշխանութիւնների եւ Վենետիկի հանձնաժողովի աշխատանքային խմբի հանդիպումը, որի արդյունքում համաձայնություններ ձեռք բերվեցին նախագծի վիճահարույց խնդիրների լուծման սկզբունքների շուրջ: Հաստատված նոր ժամանակացույցով ԶԶ իշխանութիւնները պարտավորվեցին այդ սկզբունքներն իրացնել մինչեւ 2005 թ. հուլիսի 7-ը: Ներկայացված նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովն իր եզրակացության նախագիծը տվեց հուլիսի 21-ին (CDL(2005)054), որում կատարված փոփոխությունները հիմնականում դրական էին գնահատված: Փոփոխության ենթարկված նախագիծն Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ ընդունեց 2005 թ. սեպտեմբերի 1-ին, իսկ երրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ՝ սեպտեմբերի 28-ին: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի հանրաքվեն տեղի ունեցավ 2005 թ. նոյեմբերի 27-ին: ԿԸՀ -ը նոյեմբերի 29-ին ընդունեց որոշում, որով «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին» նախագիծը համարեց ընդունված:

Փոփոխված Սահմանադրության 2-րդ՝ «Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները» գլխի վերաբերյալ

Փոփոխված Սահմանադրության կարելորագույն ձեռքբերումներից մեկը մահապատժի վերացման սահմանադրական ամրագրումն է: Այն գործելու է ցանկացած իրավիճակում, այդ թվում՝ պատերազմական:

Փոփոխված Սահմանադրությունն ամրագրում է մարդու արժանապատվության սկզբունքը, որի հիմնական իմաստն է. պետությունն է մարդու համար, այլ ոչ թե մարդը՝ պետության: Սահմանադրության մակարդակով մարդու արժանապատվության սկզբունքի ամրագրումը նշանակում է, որ իշխանության գործունեությունն ու նպատակները կարող են արդարացվել միայն այն դեպքում, երբ ծառայում են մարդկանց:

Դրական փոփոխություններից է ընդհանուր ազատության սկզբունքի ամրագրումը: Այս սկզբունքը մարդուն հնարավորություն է տալիս ազատ կատարել այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով եւ չի խախտում այլոց իրավունքներն ու ազատությունները:

Ի տարբերություն չփոփոխված Սահմանադրության, սահմանված են մարդուն ազատությունից զրկելու բոլոր դեպքերը: Դա նշանակում է, որ բացի Սահմանադրությունում նշված հիմքերից, մարդուն ազատությունից զրկելու այլ հիմքեր չեն կարող լինել:

Փոփոխված Սահմանադրությունն ամրագրում է մարդու՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմիններում գտնվող, իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունքը: Մարդն իրավունք ունի շտկել իր մասին ոչ հավաստի տեղեկությունները կամ վերացնել դրանք, եթե տեղեկությունները ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով:

Փոփոխված Սահմանադրությունն ավելի ճշգրիտ է ամրագրել կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը: Պետությունը երաշխավորում է նաև տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության առկայությունը եւ գործունեությունը:

Անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության համար յուրաքանչյուր ոք իրավունք ունի իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնել եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալ:

Փոփոխված Սահմանադրությունը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին եւ տեղական հանրաքվեներին կարող են մասնակցել նաև Հայաստանի քաղաքացիություն չունեցող անձիք:

Մինչ փոփոխությունները, Սահմանադրությունը մի շարք իրավունքներ վերապահում էր միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին: Սահմանադրական փոփոխությունները վերացրել են այդ խտրականությունը: Աշխատանքի, հավաքների, հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու իրավունք է տրվել բոլոր նրանց, ովքեր օրինական կարգով բնակվում են Հայաստանում:

Թեև մինչ փոփոխություններն էլ Սահմանադրությունն ամրագրել էր մարդու եւ քաղաքացու բազմաթիվ հիմնական իրավունքներ եւ ազատություններ, սակայն դրանց իրականացման երաշխիքներն ու պաշտպանությունը թերի էին, քանի որ մարդու հիմնական իրավունքների եւ ազատությունների խախտման դեպքերում, մարդը չէր կարող դիմել սահմանադրական դատարան եւ վերականգնել իր իրավունքները: Փոփոխված Սահմանադրությունն ամրագրում է յուրաքանչյուր անձի իրավունքը՝ դիմելու Սահմանադրական դատարան եւ վիճարկելու իր նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի հիմքում ընկած օրենքի սահմանադրականությունը (հոդված 101, կետ 6): Սակայն այստեղ անհարկի սահմանափակվել է Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա առարկան, եւ այդ հիմքով ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը սահմանադրական գանգատի ընթացակարգով չեն կարող քննվել:

Մարդն իր սահմանադրական իրավունքները կարող է պաշտպանել նաև Մարդու իրավունքների պաշտպանի միջոցով, որը նույնպես կարող է դիմել Սահմանադրական դատարան (հոդված 101, կետ 8), ինչպես նաև՝ այլ համապատասխան մարմիններ: Փոփոխված Սահմանադրությունը զգալիորեն ուժեղացրել է Մարդու իրավունքների պաշտպանի անկախության երաշխիքները: Պաշտպանին նշանակում է ԱԺ-ի 3/5-րդը (հոդված 83.1) եւ ոչ թե Հանրապետության նախագահը: Նշանակման այս

կարգը թույլ կտա, որ Մարդու իրավունքների պաշտպան նշանակվի հանրության տարբեր շերտերի վստահությունը վայելող անձնավորություն:

Դրական փոփոխությունների կողքին, սակայն, առկա են բազմաթիվ բացթողումներ ու թերություններ:

Փոփոխված Սահմանադրությունը սահմանել է հեռարձակման բնագավառը կարգավորող անկախ մարմնի (ՀՌԱՀ-ի) կազմավորման կարգը, համաձայն որի նրա անդամների կեսին նշանակում է ԱԺ-ն, իսկ մյուս կեսին՝ Հանրապետության նախագահը (հոդված 83.2): Սակայն, միաժամանակ, անտեսելով ԵԽԽՎ-ի կոչերը՝ փոփոխված Սահմանադրությունը չի պահանջում անհապաղ փոխել ՀՌԱՀ-ի կազմը: ՀՌԱՀ-ի անդամները շարունակելու են պաշտոնավարել մինչեւ իրենց պաշտոնավարության ավարտը (հոդված 117, կետ 11):

Փոփոխված Սահմանադրությունը պարունակում է հռչակագրային բնույթի մի շարք դրույթներ, որոնք չեն կարող իրականացվել եւ պաշտպանվել անմիջականորեն՝ Սահմանադրության հիման վրա: Սահմանադրությունը մարդուն չի կարող անմիջականորեն ապահովել բնակարանով, առողջ շրջակա միջավայրով եւ այլն, այսինքն այս իրավունքներն այդպես էլ կյանքի չեն կոչվի:

Սահմանադրության մեջ բացակայում է մարդու քաղաքացիական ու քաղաքական իրավունքների եւ սոցիալական իրավունքների տարբերակված մոտեցումը: Մարդու իրավունքներին եւ ազատություններին վերաբերող գլխում պետք էր ամրագրել բացառապես նրանց սուբյեկտիվ, այսինքն՝ դատական պաշտպանությամբ երաշխավորված իրավունքները, իսկ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներն այդ գլխում պետք է շարադրվեին սոսկ այնքանով, որքանով պետությունն ի վիճակի է երաշխավորելու դրանց դատական պաշտպանությունը: Մնացածը պետք էր շարադրել պետության պարտականությունների մասին հատուկ գլխում:

Փոփոխված Սահմանադրության մեջ հստակ չեն մարդու իրավունքների սահմանափակման հիմքերը, որոնք ամրագրված չեն կոնկրետ իրավունքը սահմանող հոդվածներում: Այս բացթողումը կամայականությունների լայն հնարավորություններ կարող է ստեղծել:

Ուղղակիորեն չի ամրագրված հիմնական իրավունքների պաշտպանության համար կարելու ազույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը: Այս սկզբունքի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին եւ պիտանի, անհրաժեշտ են դրանց հասնելու համար:

Փոփոխված Սահմանադրությունը, վերացնելով երկքաղաքացիության բացարձակ արգելքը, միաժամանակ Սահմանադրության մակարդակով չի լուծում երկքաղաքացիների քաղաքական իրավունքների հարցը: Դա բավական վտանգավոր է, քանի որ օրենսդիրը կարող է ընտրելու իրավունք ընձեռել նաեւ այն երկքաղաքացիներին, որոնք մշտապես չեն բնակվում Հայաստանի Հանրապետությունում: Դա նշանակում է, որ Հանրապետության նախագահի եւ Ազգային ժողովի ընտրության վրա կարող են վճռորոշ ազդեցություն ունենալ այն մարդկանց ձայները, ովքեր բնակվում են Հայաստանից դուրս եւ որոնց վրա Հայաստանի իշխանությունը չի տարածվում:

Փոփոխված Սահմանադրության մեջ անձին սեփականությունից զրկելուն վերաբերող հոդվածը հետընթաց է: Անձին սեփականությունից զրկելու յուրաքանչյուր դեպքի համար չփոփոխված Սահմանադրությունը նախատեսում էր առանձին օրենքի ընդունում: Փոփոխված Սահմանադրությունը նման պահանջ չի առաջադրում:

Իշխանությունների բաժանումը եւ հավասարակշռությունը (գլուխ 3-5)

Փոփոխված Սահմանադրությունը շատ կարելուք քայլեր է կատարել կառավարության դերը բարձրացնելու եւ Յանրապետության նախագահից նրա լիակատար կախվածությունը վերացնելու ուղղությամբ: Յտակ սահմանվել է կառավարության դերը. այն մշակում եւ իրականացնում է երկրի ներքին քաղաքականությունը, իսկ արտաքին քաղաքականությունը մշակում եւ իրականացնում է Յանրապետության նախագահի հետ միասին (հոդված 85, մաս 1): Կառավարությունը ձեռք է բերել նաեւ կազմակերպչական ինքնուրույնություն՝ կառավարության նիստերը հրավիրում եւ վարում է վարչապետը (հոդված 86, մաս 1), իսկ որոշումներն ընդունում են նրա անդամները եւ չկա Յանրապետության նախագահի կողմից դրանց վավերացման անհրաժեշտություն: Յաշվի առնելով կիսանախագահական կառավարման համակարգի այն սկզբունքը, որ ուղղակիորեն ընտրված Յանրապետության նախագահը մեծ ազդեցություն ունի արտաքին քաղաքականության, ազգային անվտանգության եւ պաշտպանության բնագավառներում, փոփոխված Սահմանադրությունը նախատեսում է, որ Յանրապետության նախագահն այդ հարցերով իրավունք ունի հրավիրել կառավարության նիստեր եւ նախագահել դրանք (հոդված 86 մաս 2), սակայն որոշումները շարունակում են ընդունել կառավարության անդամները եւ այդ որոշումների ստորագրումը կրկին վերապահված է վարչապետին: Կառավարության կառուցվածքը սահմանվում է օրենքով, այլ ոչ թե Յանրապետության նախագահի հրամանագրով:

Փոփոխված Սահմանադրության՝ կառավարման համակարգին վերաբերող դրույթներում տեղ գտած ամենակարելուք բարեփոխումն այն է, որ կառավարությունն այլեւս երկակի պատասխանատվություն չի կրում Յանրապետության նախագահի եւ Ազգային ժողովի առջեւ: Վարչապետը պատասխանատու է միայն Ազգային ժողովի առջեւ, եւ Յանրապետության նախագահը որեւէ պարագայում չի կարող պաշտոնանկ անել նրան: Նախագահը միայն կարող է կառավարությանն անվստահություն հայտնելու առաջարկություն ներկայացնել, իսկ որոշում ընդունելու բացառիկ իրավասությունը պատկանում է Ազգային ժողովին (հոդված 84):

Միաժամանակ՝ փոփոխված Սահմանադրությունն ամբողջությամբ չի վերացրել կառավարության կախվածությունը Յանրապետության նախագահից: Ըստ փոփոխված Սահմանադրության 85 հոդվածի 2-րդ մասի. «Յայաստանի Յանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, օրենքների կամ Յանրապետության նախագահի նորմատիվ ակտերի հիման վրա եւ դրանց կատարումն ապահովելու նպատակով կառավարությունն ընդունում է որոշումներ, որոնք ենթակա են կատարման Յանրապետության ամբողջ տարածքում»: Այս դրույթն ընդհանրապես ավելորդ է: Մի կողմից՝ փոփոխված Սահմանադրության 5 եւ 6 հոդվածների ուժով կառավարությունն արդեն իսկ կաշկանդված է գոր-

ծող իրավունքով (Սահմանադրությամբ, օրենքներով, միջազգային պայմանագրերով), իսկ մյուս կողմից՝ ներքին քաղաքականության հարցերում Հանրապետության նախագահը չունի որեւէ իրավասություն, հետեւաբար նա այդ բնագավառում չի կարող ընդունել որեւէ հրամանագիր, որը պարտադիր լինի կառավարության համար: Թեւեւ վերացվել է կառավարության որոշումները վավերացնելու Հանրապետության նախագահի լիազորությունը, սակայն պահպանվել է այն դրույթը, ըստ որի նախագահը ստանում է կառավարության ցանկացած, այդ թվում՝ անհատական բնույթի որոշում կասեցնելու եւ Սահմանադրական դատարան դիմելու լիազորություն: Սահմանադրությանը դրանց համապատասխանության հարցը պարզելու նպատակով (86 հոդված, 4-րդ մաս): Հանրապետության նախագահին այս հնարավորությունը կարող է օգտագործել ոչ միայն բացառիկ հիմնավոր դեպքերում, այլեւ որպես քաղաքական ճնշման միջոց՝ կառավարության՝ իր համար քաղաքական նպատակներով անընդունելի որոշումների դեմ: Բացի այդ, Սահմանադրական դատարանի ներգրավումը վտանգավոր է այն առումով, որ Սահմանադրական դատարանը կարող է ներքաշվել Հանրապետության նախագահի եւ կառավարության միջեւ հրատապ եւ քաղաքական մեծ նշանակություն ունեցող վեճերի մեջ, ինչը կարող է վտանգել դատարանի հեղինակությունը:

Փոփոխված Սահմանադրությունը չի նախատեսում կառավարության որեւէ մասնակցություն Հանրապետության նախագահի կողմից որոշումներ ընդունելու գործընթացին: Վենետիկի հանձնաժողովը դեռեւս 2000 թ. ընդգծում էր, որ եթե սահմանադրական փոփոխությունների նպատակը Հանրապետության նախագահի գործունեության նկատմամբ պառլամենտական վերահսկողության մեծացումն է, ապա դրան կարելի էր հասնել նախագահի կողմից որոշումներ ընդունելու գործընթացում ներգրավելով նախարարներին եւ պահանջելով, որ նախագահի որոշումները կրկնաստորագրվեն համապատասխան նախարարի կողմից: Կարելի էր նաեւ նախատեսել, որ նախագահը անպայման խորհրդակցի համապատասխան պետական մարմինների, օրինակ՝ Ազգային անվտանգության խորհրդի հետ:

Կիսանախագահական համակարգի տրամաբանությունից ուղղակիորեն բխում է, որ կառավարությունը պետք է ունենա խորհրդարանի մեծամասնության վստահությունը: Հետեւաբար, խորհրդարանն ի սկզբանե պետք է մասնակցություն ունենա կառավարության ձեւավորմանը, որպեսզի կառավարությունը, հենվելով խորհրդարանական մեծամասնության աջակցության վրա, կարողանա արդյունավետ իրականացնել երկրի ներքին եւ արտաքին քաղաքականությունը: Քանի որ Հանրապետության նախագահը այլեւս գործադիր իշխանության փաստացի ղեկավարը չէ՝ զգալիորեն ուժեղացել է Ազգային ժողովի ազդեցությունը կառավարության ձեւավորման հարցում: Հանրապետության նախագահին Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման եւ պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա վարչապետ նշանակում է պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա՝ առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին: Փոփոխված Սահմանադրությունը, սակայն, հստակորեն չի սահմանում կառավարության ձեւավորման մեխանիզմները, ինչը պրակտիկայում բարդությունների տեղիք կարող է տալ:

Այն նաեւ հստակ պատասխան չի տալիս, թե որքանով է Հանրապետության նախագահը կաշկանդված նախարարների նշանակման եւ ազատման վերաբերյալ վարչապետի առաջարկություններով:

Փոփոխություններում անդրադարձ չկա Սահմանադրության 49 հոդվածում ամրագրված Հանրապետության նախագահի գործառույթներին վերաբերող դրույթներին: Հստակ չէ, թե ինչ իրավական նշանակություն ունի 49 հոդվածը, եւ թե ինչ իրավական կապ կա 49 հոդվածի եւ 55 հոդվածում շարադրված Հանրապետության նախագահի լիազորությունների ցանկի միջեւ: Ներկա խմբագրությամբ Սահմանադրության 49 հոդվածը կարելի է մեկնաբանել իբրեւ Հանրապետության նախագահի օգտին լրացուցիչ ընդհանուր իրավասության նորմ: Ակնհայտ է, որ Սահմանադրության այս անորոշությունը կարող է օգտագործվել նախագահի՝ 55 հոդվածում նշված լիազորությունների շրջանակներից դուրս՝ նրա իշխանությունն ավելի ընդլայնելու համար: Նման դեպքում հարցականի տակ կդրվի իշխանությունների բաժանման սկզբունքը, քանի որ կխաթարվի քաղաքական հավասարակշռությունը Հանրապետության նախագահի եւ մյուս սահմանադրական մարմինների՝ խորհրդարանի, կառավարության եւ դատարանների միջեւ: Քանի որ Սահմանադրության 49 հոդվածում ամրագրված Հանրապետության նախագահի գործառույթներին վերաբերող դրույթները կարող են նրա լիազորությունների անընդհատ ընդլայնման աղբյուր հանդիսանալ, անհրաժեշտ էր այս հոդվածում ավելացնել, որ Հանրապետության նախագահին իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրությամբ եւ օրենքներով իրեն վերապահված լիազորությունների միջոցով: Դրանով հստակություն կմտցվեր, որ 49 հոդվածը նախագահի պաշտոնի ընդհանուր գործառույթի նկարագրությունն է:

Փոփոխված Սահմանադրությունը պահպանել է 56 հոդվածի շարադրանքը. «Հանրապետության նախագահը հրապարակում է հրամանագրեր եւ կարգադրություններ, որոնք չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը եւ օրենքներին ու ենթակա են կատարման Հանրապետության ամբողջ տարածքում»: Առանձին վերցրած, այս հոդվածը Հանրապետության նախագահին թույլ է տալիս օրենսդրական կարգավորման բացակայության պայմաններում բոլոր ոլորտներում իրականացնել առաջնային նորմաստեղծում: Հանրապետության նախագահի նման իրավասությունը համաձայնեցված չէ 6 հոդվածի 5-րդ մասի փոփոխության հետ, ըստ որի նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության եւ օրենքների հիման վրա եւ դրանց իրականացումն ապահովելու նպատակով: Հետեւաբար, ավելորդ է Հանրապետության նախագահի ակտերի՝ Սահմանադրությանը եւ օրենքներին չհակասելու մասին դրույթը, քանի որ բոլոր ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը պետք է ընդունվեն Սահմանադրության եւ օրենքների հիման վրա եւ ի կատարումն դրանց: 56 հոդվածը պետք է ընկալվի եւ մեկնաբանվի 49 եւ 55 հոդվածների հետ համատեղ, այսինքն՝ «գործառույթների» եւ «լիազորությունների» սահմանազատմանը համապատասխան: Վենետիկի հանձնաժողովը 2001թ. եզրակացությունում ընդգծում էր, որ 49 հոդվածի ընդհանուր դրույթը, ըստ որի Հանրապետության նախագահը պետք է ապահովի օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բնականոն գործունեությունը, չի կարող հիմք դիտվել նախագահի նորմաստեղծ գործունեության համար: 56 հոդվածը պետք է հստակ ձեւակերպվեր, որպեսզի կանխվեր Հանրապետության նախագա-

հի կողմից իր իշխանության չարաշահումը: Ուստի 56 հոդվածում պետք է ամրագրվեր, որ Հանրապետության նախագահը հրամանագրեր եւ կարգադրություններ է արձակում իր լիազորությունների իրականացման նպատակով:

Ղեռնես 2000թ. ապրիլին, երբ Վենետիկի հանձնաժողովի հետ սկսվեցին սահմանադրական բարեփոխումների աշխատանքները, եւ՛ հանձնաժողովը, եւ՛ հայկական կողմն այն կարծիքին էին, որ Հանրապետության նախագահն ունի նշանակման լայն լիազորություններ (մինչ փոփոխությունները՝ Սահմանադրության հոդված 55, մասեր 5, 8, 10, 11), եւ այդ գործընթացում պետք է ընդգրկել կառավարությանն ու խորհրդարանին: Հանձնաժողովը նաեւ նշել էր, որ քաղաքացիական ծառայողներ նշանակելու նախագահի լիազորությունը կարող է սահմանափակվել միայն բարձրաստիճան վարչակազմի պաշտոնյաների նշանակմամբ, սակայն փոփոխված Սահմանադրությունը 55 հոդվածի 5-րդ կետը քայլ է կատարում հակառակ ուղղությամբ՝ քաղաքացիական ծառայողների կատեգորիան փոխարինելով պետական ծառայողների շատ ավելի մեծ կատեգորիայով:

Որեւէ տրամաբանական հիմնավորում չունի մարզպետներին նշանակելու եւ ազատելու կարգի պահպանումը, ըստ որի Հանրապետության նախագահը վավերացնում է մարզպետների նշանակման եւ ազատման վերաբերյալ կառավարության որոշումները: Քանի որ մարզպետների հիմնական գործառույթը կառավարության տարածքային քաղաքականության իրականացումն է, իսկ Հանրապետության նախագահը կառավարության մաս չի կազմում, ապա վավերացման պահանջը հիմնավոր չէ: Եթե Հանրապետության նախագահը չվավերացնի մարզպետների նշանակման կամ ազատման վերաբերյալ կառավարության որոշումը, ապա Հանրապետության նախագահի այս լիազորությունը հատկապես վտանգավոր կարող է լինել «համակեցության» պայմաններում, քանի որ նոր կառավարությունը հնարավորություն չի ունենա իրագործել իր տարածքային քաղաքականությունը:

Փոփոխված Սահմանադրությունը հստակեցնում է Հանրապետության նախագահի անձեռնմխելիության հարցը (հոդված 56.1), սակայն լուրջ բացթողումներից մեկն այն է, որ Հանրապետության նախագահի իրավական պատասխանատվության հիմքերը սահմանափակվում են միայն պետական դավաճանությամբ կամ այլ ծանր հանցագործությամբ (հոդված 57): Քանի որ կիսանախագահական համակարգում երկրի նախագահը քաղաքական պատասխանատվություն չի կրում, արեւելաեվրոպական գրեթե բոլոր սահմանադրությունները, որպես նախագահի պաշտոնակության հիմք, նախատեսում են նաեւ Սահմանադրության խախտումը, որպեսզի ինչ-որ չափով մեղմվի նրա՝ քաղաքական մեծ իշխանության եւ քաղաքական անպատասխանատվության միջեւ առկա անհամապատասխանությունը:

Փոփոխված Սահմանադրությունում անդրադարձ չկա խորհրդարանի իրավասություններն անհարկի սահմանափակող 62 հոդվածի 3-րդ մասին, ըստ որի Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են միայն Սահմանադրությամբ: Նման սահմանափակումը հարիր չէ պառլամենտին, քանի որ ակնհայտ է, որ խորհրդարանը, որպես ժողովրդի ներկայացուցիչ, պետք է ժողովրդավարության սկզբունքներին համաձայն իրավասու լինի իր լիազորությունները սահմանել նաեւ օրենքով: Հաս-

կանալի է, որ լիազորություններ սահմանելիս օրենսդիրը կաշկանդված է Սահմանադրությամբ, այսինքն լիազորությունները չեն կարող հակասել Սահմանադրությանը: Եթե նման սահմանափակումը պահպանվում է, ապա վտանգ է առաջանում, որ նոր քաղաքական մարտահրավերների հետեւանքով խորհրդարանի լիազորությունների ընդլայնման անհրաժեշտության դեպքում դա կարող է իրականացվել միայն սահմանադրական փոփոխությունների միջոցով:

Փոփոխված Սահմանադրությունը պահպանում է հակախորհրդարանական մեկ այլ միտում եւս՝ Սահմանադրությամբ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների թվի սահմանափակումը (հոդ. 73, մաս 1): Այս դրույթը սահմանափակում է իր գործունեության ներքին կարգը ինքնուրույն սահմանելու ժողովրդական ներկայացուցչության իրավունքը: Հանձնաժողովների քանակի եւ դրանց ստեղծման նպատակների հարցում ժողովրդական ներկայացուցչությունը պետք է ունենա ինքնուրույն որոշում կայացնելու ազատություն, որպեսզի նա գործադիր իշխանության նկատմամբ հնարավորություն ունենա իրականացնել արդյունավետ վերահսկողություն: Փոփոխված Սահմանադրությունը, հետեւելով մինչ այդ գործող Սահմանադրությանը, սահմանում է մշտական հանձնաժողովների հիմնական գործառույթները, սակայն դրանց թվում չի նշում գլխավորներից մեկը՝ խորհրդարանական վերահսկողության իրականացումը: Գիշտ կլիներ, եթե այս գործառույթը հստակ ամրագրվեր Սահմանադրությունում կամ էլ մշտական հանձնաժողովների գործառույթների սահմանման հարցը վերապահվեր Ազգային ժողովի կանոնակարգին, ինչպես վարվել են բազմաթիվ ժողովրդավարական երկրներում:

Քանի որ փոփոխված Սահմանադրությունը երկրի քաղաքականության մշակման եւ իրականացման գործընթացում ուժեղացնում է խորհրդարանական մեծամասնության աջակցության վրա հենվող կառավարության դերը, եւ քաղաքական պայքարը հիմնականում ընթանալու է պառլամենտական մեծամասնության եւ փոքրամասնության միջեւ, ապա նպատակահարմար կլիներ Գերմանական Սահմանադրության 44 հոդվածի օրինակով ամրագրել փոքրամասնության իրավունքը՝ ստեղծելու քննիչ հանձնաժողովներ (Գերմանիայում այս իրավունքից օգտվում է պատգամավորների մեկ քառորդը): Բացի այդ, փոքրամասնության իրավունքների պաշտպանությանը լավագույնս կարող էր նպաստել նաեւ Խորվաթիայի Սահմանադրության 91 հոդվածի այն դրույթի ընդօրինակումը, ըստ որի քննիչ հանձնաժողովի նախագահը նշանակվում է պառլամենտի մեծամասնության կողմից՝ ընդդիմության պատգամավորների կազմից:

Փոփոխված Սահմանադրության 69 հոդվածն ընդհանրապես վերացրել է հերթական նստաշրջանների ժամկետների ամրագրումը եւ այն վերապահել օրենքին: Ավելի նպատակահարմար կլիներ պահպանել նստաշրջանների ժամկետի սահմանումը Սահմանադրությունում, ինչը բնորոշ է նաեւ բազմաթիվ այլ երկրների սահմանադրություններին: Քանի որ Ազգային ժողովի պրակտիկան ցույց տվեց, որ գործող Սահմանադրությամբ սահմանված ժամկետները բավական կարճ են, ապա ճիշտ կլիներ ամրագրել, որ Ազգային ժողովի հերթական նստաշրջանների տեւողությունը 9 կամ 10 ամիս է:

Կարելու փոփոխություն է կատարված 70 հոդվածում, ըստ որի «Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարում է Ազգային ժողովի նախագահը՝ Հանրապետության նախագահի, պատգամավորներ-

րի ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կամ կառավարության նախաձեռնությամբ: Արտահերթ նստաշրջանը կամ նիստն անցկացվում են նախաձեռնողի սահմանած օրակարգով եւ ժամկետում»: Այս փոփոխությամբ մի կողմից Չանրապետության նախագահն այլեւս որեւէ լիազորություն չունի արտահերթ նստաշրջան կամ նիստ հրավիրելու հարցում, իսկ մյուս կողմից՝ նա իրավունք է ստանում պահանջել արտահերթ նստաշրջանի կամ նիստի հրավիրում՝ իր կողմից առաջադրված հարցերը քննարկելու նպատակով:

Փոփոխված Սահմանադրության 74.1 հոդվածի 2 մասի ա) ենթակետի համաձայն՝ Ազգային ժողովը կարող է արձակվել, եթե խորհրդարանը կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի վերաբերյալ որոշում չի կայացնում հերթական նստաշրջանի երեք ամսվա ընթացքում: Նման ձեւակերպումը չափազանց անորոշ է: Նախ, անհասկանալի է, «որոշում» բառն իր մեջ ընդգրկո՞ւմ է ինչպես դրական, այնպես էլ բացասական որոշումները, թե՞ ոչ: Երկրորդ՝ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծ արտահայտությունն այլեւս չի հանդիպում այլ դրույթներում եւ բաց է մնում, թե խոսքն ինչ օրինագծերի մասին է, եւ կառավարությունն ինչ հիմքով կամ հաճախականությամբ կարող է անհետաձգելի ճանաչել այս կամ այն օրինագիծը:

Փոփոխված Սահմանադրությունը պահպանել է այն դրույթը, ըստ որի կառավարությունը կարող է սահմանել իր ներկայացրած օրենքների նախագծերի քննարկման հաջորդականությունը եւ պահանջել, որ դրանք քվեարկության դրվեն միայն իր համար ընդունելի ուղղումներով: Այս լիազորության առնչությամբ Վենետիկի հանձնաժողովը 2004թ. եզրակացության մեջ նշել էր, որ դրանով կառավարությունը կարող է որոշել, թե Ազգային ժողովն ինչպես իրականացնի իր օրենսդրական իրավասությունը եւ առաջարկել էր, որ այս դրույթը հանվի վերջնական տեքստից:

Փոփոխված Սահմանադրությունը, ինչպես եւ մինչ այդ, նախատեսում է, որ Չանրապետության նախագահի կողմից արտակարգ կամ ռազմական դրություն հայտարարելու ժամանակ Ազգային ժողովը կարող է չեղյալ հայտարարել ձեռնարկված միջոցառումների իրականացումը (հոդված 81 մաս 3): Սակայն Ազգային ժողովն իրավունք չունի վերացնելու արտակարգ կամ ռազմական դրության ռեժիմը, ինչը կարող է հանգեցնել Չանրապետության նախագահի եւ Ազգային ժողովի միջեւ կոնֆլիկտների: Ազգային ժողովին նման լիազորությամբ օժտելու անհրաժեշտությունն ընդգծված էր Վենետիկի հանձնաժողովի 2001թ. եզրակացությունում (CDL-INF(2001)17, կետ 45):

2001թ. նախագծի տրամաբանությամբ պետք է ընդլայնվին Ազգային ժողովի բացառիկ օրենսդրական կարգավորման ոլորտը եւ խորհրդարանի իրավասությունը: Եթե 2004թ. իր եզրակացության մեջ Վենետիկի հանձնաժողովն ավստասանքով փաստում էր, որ Ազգային ժողովի բացառիկ օրենսդրական իրավասությանը պատկանող հարցերի թիվը կրճատվել է (2001թ. նախագծում կար 37 կետ, իսկ 2004թ. օգոստոսի նախագծում՝ 18), ապա փոփոխված Սահմանադրության մեջ (հոդված 83.5) Ազգային ժողովն ունի ընդամենը 11 բացառիկ օրենսդրական իրավասություն:

Փոփոխված Սահմանադրությունում շարունակում է անտեսվել անկախ հանձնաժողովների հիմնախնդիրը, որի հետեւանքով դրանք շարունակում են մնալ հակասահմանադրական մարմիններ, քանի որ Սահմանադրության 2 հոդվածի 2-րդ մասի համապատասխան՝ պետական եւ

տեղական ինքնակառավարման մարմինները պետք է նախատեսված լինեն հենց Սահմանադրությամբ: Բացի այդ, Սահմանադրությունում Ազգային ժողովի լիազորությունների սպառիչ սահմանումը (62 հոդվածի 3 մաս) բացառում է Ազգային ժողովի որեւէ մասնակցություն անկախ հանձնաժողովների ձեւավորմանը: Փոփոխված Սահմանադրությունում միակ բացառությունը վերաբերում է Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովին (ՀՌԱՀ), որը պետք է ձեւավորվի Ազգային ժողովի եւ Հանրապետության նախագահի կողմից:

7-րդ` «Տեղական ինքնակառավարումը» գլխի վերաբերյալ

Փոփոխություններով մի շարք կարելու ճշտումներ են կատարվել Սահմանադրության 7-րդ գլխում, որն արդեն նվիրված է միայն տեղական ինքնակառավարմանը: Պետական կառավարմանը վերաբերող դրույթները տեղափոխվել են կառավարության մասին գլուխ: Փոփոխված Սահմանադրությունը հանել է ավագանու անդամների թվի անհարկի սահմանադրական սահմանափակումը, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետը սահմանել 4 տարի` 3 տարվա փոխարեն: Տեղական ինքնակառավարման մարմինները ստացել են Սահմանադրական դատարան դիմելու իրավունք` պետական մարմինների` իրենց սահմանադրական իրավունքները խախտող նորմատիվ ակտերի սահմանադրականությունը պարզելու հարցով (հոդված 101, մաս 1, կետ 5): Փոփոխված Սահմանադրության 107 հոդվածի 4-րդ մասի համաձայն, համայնքի անդամները կարող են ուղղակիորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը` համայնքային նշանակության հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով: Շատ կարելու են 106 հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի դրույթները համայնքի կողմից իրականացվող լիազորությունների ֆինանսավորման վերաբերյալ: 105.1 հոդվածը ամրագրել է այն կարելուրագույն սկզբունքը, որ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողը, բացառությամբ պետական կարիքների համար անհրաժեշտ հողի եւ ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատկանող հողերի, համայնքի սեփականությունն է: Սահմանադրական այս նորմի լիարժեք իրականացման համար անցումային դրույթներում, թերեւս, պետք էր նշել պետության կողմից համայնքներին հողը որպես սեփականություն փոխանցելու ժամկետները:

Փոփոխված Սահմանադրության տեղական ինքնակառավարմանը վերաբերող գլխում տեղ գտած թերությունների եւ բացթողումների հիմքում ընկած են հայեցակարգային բնույթի ոչ ճիշտ պատկերացումները` տեղական ինքնակառավարման` որպես ժողովրդավարության ինքնուրույն եւ ինքնավար համակարգի մասին: Ժողովրդավարության սկզբունքին անհարիր է 109 հոդվածը, որը պահպանել է համայնքի ընտրովի ղեկավարին կառավարության կողմից պաշտոնանկ անելու ինստիտուտը: Այս առնչությամբ Վենետիկի հանձնաժողովը 2004թ. եզրակացությունում ընդգծել է. «Այս լիազորության կիրառումը կարող է վտանգի ենթարկել տեղական ինքնակառավարման սկզբունքը, հատկապես, որ այլեւս չի պահանջվում, որ նախքան որոշում ընդունելը, կառավարությունը հարցումով դիմի Սահմանադրական դատարան»:

կան դատարան դիմելու վերաբերյալ պահանջը 2005 թ. հուլիսի 20-ի նախագիծը կատարել է, սակայն դրանով հիմնախնդիրը չի լուծվել: Ակնհայտ է, որ Վենետիկի հանձնաժողովի այդ եզրակացությունը փոխզիջումային բնույթ է կրում, քանի որ հանձնաժողովը նույն եզրակացությունում ԱԺԴ նախագծի առնչությամբ արտահայտվել էր Սահմանադրության 109 հոդվածն ընդհանրապես հանելու օգտին:

Հայաստանը, վավերացնելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, որպես պարտադիր դրույթ ընդունել է այն սկզբունքը, որ համայնքի ղեկավարը պետք է պատասխանատու լինի համայնքի ավագանու առջև, քանի որ համայնքի առաջնային եւ ներկայացուցչական մարմինն ավագանին է: Նման դրույթն անհրաժեշտ է ամրագրել Սահմանադրությունում եւ լուծել այն հարցը, թե ինչ է տեղի ունենում, երբ համայնքի ավագանին անվստահություն է հայտնում համայնքի ղեկավարին: Հաշվի առնելով, որ ինչպես համայնքի ավագանին, այնպես էլ համայնքի ղեկավարն ընտրվում են ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, նպատակահարմար կլիներ սահմանել, որ համայնքի ղեկավարին ավագանու կողմից անվստահություն հայտնելու դեպքում անցկացվում են համայնքի ավագանու եւ ղեկավարի միաժամանակյա ընտրություններ: Այս խնդրի լուծման մեկ այլ տարբերակ կարող էր լինել այն, որ ավագանուն իրավունք տրվեր նախաձեռնել համայնքի ղեկավարի պաշտոնանկություն՝ տեղական հանրաքվեի միջոցով:

Փոփոխված Սահմանադրությունը վերջապես հստակ սահմանել է Երեւանի կարգավիճակը՝ որպես համայնք: Ըստ 108 հոդվածի, Երեւանի քաղաքապետի ընտրությունը կարող է տեղի ունենալ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ընտրության հիման վրա: Սակայն հոդվածն անտեսում է Երեւանում տեղական ինքնակառավարման իրականացման մյուս հիմնախնդիրները, որոնցից կարեւորագույնն այն է, թե ինչ մակարդակներում է իրականացվելու տեղական ինքնակառավարումը: Ըստ էության, փոփոխված Սահմանադրությունը վերացնում է Երեւանի թաղային համայնքների սահմանադրական հիմքը եւ հետագայում դրանք կարող են վերացվել օրենքով: Նպատակահարմար կլիներ Երեւանի համար Սահմանադրությունում ամրագրել տեղական ինքնակառավարման երկու մակարդակ՝ համաքաղաքային եւ թաղային: Խնդիրների բաշխումը կարելի էր կատարել այնպես, որ քաղաքն իր մարմինների՝ ավագանու եւ քաղաքապետի միջոցով որոշումներ կայացներ «համաքաղաքային նշանակության» խնդիրների վերաբերյալ, իսկ թաղերը՝ ավագանու եւ թաղապետի միջոցով՝ «թաղային նշանակության» խնդիրների վերաբերյալ: Բացի այդ, կարելի էր նախատեսել, որ որոշ համաքաղաքային խնդիրների իրականացումը վերապահվեր թաղերին՝ քաղաքացիների հետ անմիջական կապը պահպանելու համար:

Փոփոխված Սահմանադրությունն ամրագրել է միջհամայնքային միավորումների ստեղծման հնարավորությունը, սակայն այն չի մանրամասնել բավարար չափով:

Փոփոխված Սահմանադրության 108.1 հոդվածի դրույթները համայնքի մարմինների գործունեության նկատմամբ հսկողության (իրավական եւ մասնագիտական հսկողություն) վերաբերյալ հստակ չեն եւ նույնպես մանրամասնելու կարիք ունենին:

Քանի որ այսօր Հայաստանի տարածքի շուրջ 40 տոկոսն ընդգրկված

չէ որեւէ համայնքի մեջ, ապա Սահմանադրութեանը անհրաժեշտ էր ամրագրել, որ տեղական ինքնակառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

2. Այլ ռաժնավորումներ ընդհանուր առմամբ «Կ» ընդհանուր ռաժնավորումներում և «Կ» ընդհանուր ռաժնավորումներում

Դառնալով Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ եւ վավերացնելով 1949 թվականի մայիսի 5-ին Լոնդոնում ստորագրված Եվրոպայի խորհրդի կանոնադրությունը (30-ը դեկտեմբերի, 2000 թվական) ու «Սարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան (2002 թվականի մարտի 20), որի առաջին արձանագրության 3-րդ հոդվածի համաձայն մասնակից պետությունները պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ խելամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում ստանձնեց այդուհետ անցկացվող ընտրությունները համապատասխանեցնել Եվրոպայի խորհրդի կողմից առաջադրվող պահանջներին:

Եվրոպայի խորհրդի՝ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) կողմից ընդունված «Ընտրական իրավահարաբերություններում լավ գործելակերպի կանոնագիրքը» (ընդունվել է 52-րդ նիստում, Վենետիկ 18-19 հոկտեմբեր, 2002 թվական, հավանության է արժանացել Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում 2003 թվականին) սահմանում է ժողովրդավարական ընտրությունների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի չափորոշիչները, որոնց էլ պետք է համապատասխանեն անդամ երկրներում անցկացվող ընտրությունները:

Վերը նշված փաստաթղթերի ստորագրումից հետո Հայաստանում անցկացվող ընտրությունների լեգիտիմությունն ու դրանց համապատասխանությունը միջազգային չափորոշիչներին սկսեցին գնահատվել՝ հիմք ընդունելով առավելապես այս փաստաթղթերը:

Եվրոպայի խորհրդի անդամ դառնալուց հետո առաջին իսկ՝ 2003 թվականի նախագահական եւ խորհրդարանական ընտրությունները Եւ խորհրդարանական վեհաժողովի կողմից գնահատվեցին որպես ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներին չհամապատասխանող (*սեւ՝ նաեւ ԵԽԽՎ 1361 (2004) եւ 1374 (2004) բանաձեւերը*): Այս գնահատականը հնչեց նաեւ ԵԱՀԿ դիտորդական առաքելության զեկույցում:

Հայաստանի Հանրապետությունում միջազգային չափանիշներին համապատասխան ընտրությունների անցկացմանը խոչընդոտող հիմնական քաղաքական երեւոյթներն ու իրավական դրոյթներն են.

- Հայաստանի Հանրապետությունում բացակայում է միջազգային չափանիշներին համապատասխան ընտրություններ անցկացնելու իշխանությունների կամքը:

- ՀՀ-ում բացակայում են ժողովրդավարական ավանդույթները, ձեւավորման փուլում են գտնվում քաղաքացիական հասարակությունը, բազմակուսակցական համակարգը, չկա կայուն օրենսդրական բազա, պե-

տությունից անկախ զանգվածային լրատվության միջոցների գոյությունը հռչակված է եւ սահմանված օրենքներով, սակայն նրանք (հատկապես հեռարձակվող ՁԼՄ-ների) գործնականում կախված են իշխանություններից:

- ՀՀ-ում ընտրությունների արդյունքների կեղծման պատճառով ընտրությունները չեն դառնում մեծամասնության կամքի արտահայտման, քաղաքական հակասությունների լուծման եւ քաղաքական էլիտայի ձեւավորման միջոց, տեղի չի ունենում իշխանությունների լեգիտիմացում:

- Հայաստանում անցկացված ընտրությունների արդյունքների արդար լինելը (բացառությամբ 1990 թվականի խորհրդարանական եւ 1991 թվականի նախագահական ընտրությունների) չի ճանաչվել ոչ շահագրգիռ կողմերի, ոչ էլ հասարակության կողմից, այդ պատճառով ՀՀ-ում ընտրությունները ոչ միայն չեն ապահովում քաղաքական կայունություն, այլ, ընդհակառակը, դառնում են ներքաղաքական հակամարտությունների սրման պատճառ:

- Ընտրությունների արդյունքների պարբերաբար կեղծմամբ Հայաստանի Հանրապետությունում ձեւավորված քաղաքական ռեժիմը բնութագրվում է որպես նոմենկլատուրային ժողովրդավարություն, այսինքն՝ սահմանափակ հնարավորությունների ժողովրդավարություն, որի պայմաններում սահմանափակվում են բոլոր այն իրավունքները, որոնց իրականացումը կարող է բացառել իշխանությունների ինքնավերարտադրությունը:

- Կեղծված ընտրություններով իշխանության են գալիս անհայտ ու կասկածելի անցյալ ունեցող մարդիկ, քաղաքական ուժեր, որոնք շատ քիչ առնչություն ունեն հասարակության հավաքական կամքի հետ:

- Ընտրությունների արդյունքների վրա վճռորոշ ազդեցություն են ունենում ոչ այնքան ընտրողների հավաքական կամքը, որքան՝ վարչական եւ ֆինանսական ռեսուրսները:

- Ընտրությունները Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտից վեր են ածվել առանձին մարդկանց կամ դրանց խմբերի անձնական հետաքրքրություններն ու շահերը սպասարկող ինստիտուտի:

- Քաղաքական կուսակցությունների չկայացվածության պայմաններում, ընտրապայքարը վեր է ածվում անհատների պայքարի, գրեթե բացակայում է պայքարն ու բանավեճը հիմնական արժեքների եւ զարգացման այլընտրանքային ուղիների շուրջ:

- Ընտրությունների ընթացքում հանցագործություն կատարած անձինք մնում են անպատիժ: Անգամ այն դեպքում, երբ հայտնի է հանցագործություն կատարած անձը եւ ներկայացվում են ապացույցներ՝ դրանք մնում են անարձագանք: 2003 թվականի եւ նախագահական, եւ խորհրդարանական ընտրությունների հաջորդ օրը «Հայկական ժամանակ» եւ «Առավոտ» թերթերը հրապարակեցին մի պատկառելի ցանկ այնպիսի ընտրախախտումների, որոնցից շատերն ուղղակի հանցակազմ էին պարունակում, սակայն դրանցից որեւէ մեկի առնչությամբ քրեական գործ չհարուցվեց: Վարչական տույժերի ենթարկված անձինք առավելապես ընդդիմության ներկայացուցիչներն էին: Նույնիսկ միջազգային կազմակերպությունների հորդորներն ու ընդդիմության պահանջը՝ պատասխանատվության ենթարկելու ընտրախախտումներ թույլ տված անձանց (ինչը կարող էր մեղմել ինչպես ներքին քաղաքական լարվածությունը, այնպես էլ այդ կազմակերպությունների բացասական գնահատականները), առ այսօր մնացել են անպատասխան: Հասարակական գիտակցության մեջ ընտրական իրավունքի դեմ կատարված հանցագործությունները՝

քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելը, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելը, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելը, հանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելը կամ հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքներն ակնհայտ սխալ հաստատելը, քվեատուփի հափշտակելը, ինչպես նաև՝ որեւէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը, կեղծ տվյալներ հայտնելու, կեղծ փաստաթուղթ ներկայացնելու կամ որեւէ այլ եղանակով մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը, ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելը, ինչպես նաև՝ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը դեռևս չեն ընկալվում որպես հանցագործություններ, եւ այդ հանցագործությունները կատարած անձինք համարժեք իրավական եւ հասարակական վերաբերմունքի չեն արժանանում:

Հայաստանի Հանրապետությունում ազատ եւ արդար ընտրությունների անցկացմանը խոչընդոտող գործոններից մեկն էլ անկայուն ընտրական օրենսդրությունն է: 1999 թվականին ընդունված ընտրական օրենսգրքում այս տարիների ընթացքում կատարվել են 100-ից ավելի փոփոխություններ: Ուշագրավ է, որ այդ փոփոխությունները միշտ կատարվում են հատկապես ընտրությունների նախաշեմին:

Եվրոպայի խորհրդի կողմից սահմանված չափանիշներին համապատասխան ընտրություններ անցկացնելու համար ընտրական օրենսդրության մեջ նախ եւ առաջ անհրաժեշտ է կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք միտված կլինեն ապահովելու ընտրական հանձնաժողովների անաչառությունը, արհեստավարժությունը, իսկ նրանց աշխատանքը կդարձնեն ավելի թափանցիկ ու հրապարակային:

- Ընտրական հանձնաժողովների ձեւավորման նախկին (մինչեւ «Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 19.05.05թ. օրենքի ընդունումը) կարգի դեպքում («Ընտրական օրենսգիրք», գլուխ 8), գործադիր իշխանությունը, վերջինիս փաստացի ղեկավար Հանրապետության նախագահի գլխավորությամբ, մեծապես կողմնակալ ազդեցություն էր ունենում ընտրական հանձնաժողովների աշխատանքի վրա: Երաշխավորված չէր անկախ, անկողմնակալ, արհեստավարժ ընտրական հանձնաժողովների գործունեությունը: 2003 թվականին անցկացված թե նախագահական եւ թե խորհրդարանական ընտրությունների ժամանակ ընտրական հանձնաժողովների նախագահները, գրեթե առանց բացառության, Հանրապետության նախագահի կամ ներկայումս իշխող կոալիցիայի կուսակցությունների կողմից նշանակված անդամներից էին: Ընտրական հանձնաժողովները պետք է լինեն հավասարակշռված, անկողմնակալ եւ արհեստավարժ: Ընտրական հանձնաժողովներում պետք է ներկայացված լինեն Ազգային ժողովի բոլոր քաղաքական ուժերը, սակայն այն հաշվով, որպեսզի որեւէ մեկը գե-

րիշխող դեր չունենա, քաղաքական ընդդիմությունն ու իշխանությունները ներկայացված լինեն հավասարապես, իսկ Ազգային ժողովում չներկայացված, սակայն ընտրություններին մասնակցող կուսակցությունները ընտրական հանձնաժողովներում պետք է ունենան խորհրդակցական ձայնի իրավունքով հանձնաժողովի անդամներ: Ընտրական հանձնաժողովների հավասարակշռվածությունն ու անկողմնակալությունն ապահովելու նպատակով կարող է կիրառվել ընտրական հանձնաժողովների (եւ ընտրատարածքային, եւ տեղամասային) նախագահներին, տեղակալներին եւ քարտուղարներին վիճակահանությամբ որոշելու կարգը:

2005 թվականի մայիսի 19-ին «Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքով ոչ միայն չլուծվեցին այս խնդիրները, այլեւ այդ հարաբերություններին տրվեցին հակասահմանադրական կարգավորումներ:

Այդ փոփոխություններով սահմանվեց ընտրական հանձնաժողովների կազմավորման հետեւյալ կարգը. ԿԸԴ-ը կազմավորվում է ԱԺ-ում խմբակցություն ունեցող յուրաքանչյուր կուսակցության (դաշինքի) կողմից նշանակված մեկ անդամից, Զանրապետության նախագահի նշանակած մեկ անդամից, Ազգային ժողովում գործող պատգամավորական խմբի (իսկ Ազգային ժողովի հաջորդ ընտրություններից սկսված՝ դատարանների նախագահների խորհրդի կողմից ԶԶ ընդհանուր իրավասության դատարանների դատավորների թվից նշանակված) կողմից նշանակված մեկ անդամից, վճռաբեկ դատարանի կողմից նշանակված վճռաբեկ դատարանի մեկ դատավորից (հողված 35), իսկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամները նշանակվում են ԿԸԴ-ի անդամների կողմից: Վճռաբեկ դատարանի եւ դատարանների նախագահների խորհրդի կողմից նշանակված անդամները ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամներին նշանակում են ընդհանուր իրավասության դատարանների դատավորների թվից:

Հանձնաժողովների ձեւավորման սահմանված կարգը ինչպես եւ հանձնաժողովների ձեւավորման նախորդ կարգերը, չի ապահովում ընտրական հանձնաժողովների հավասարակշռությունն ու անկողմնակալությունը, իսկ հանձնաժողովներում դատավորներ ընդգրկելու մասով ուղղակիորեն հակասում են Հայաստանի Զանրապետության Սահմանադրության 98 հոդվածին, համաձայն որի «Դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամը չեն կարող ... զբաղեցնել իրենց պարտականությունների հետ չկապված պաշտոն...»: Ջարմանալի է, որ հանձնաժողովների ձեւավորման նման փոփոխությունը Վենետիկի հանձնաժողովի եւ ՄԻԺԳ-ի փորձագետները գնահատում են որպես «բարելավում, քանզի այն մեծացնում է քաղաքական պլուրալիզմը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի եւ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ձեւավորման գործում» (Ստրասբուրգ, Վարչավա 13.05.2005, Վենետիկի հանձնաժողովի եւ ՄԻԺԳ-ի կարծիք N 310/2004): Վենետիկի հանձնաժողովի եւ ՄԻԺԳ-ի փորձագետները, թերեւս, կարող էին չնկատել դատավորներին ընտրական հանձնաժողովներում ընդգրկելու հակասությունը Հայաստանի Զանրապետության Սահմանադրությանը, սակայն առավել տարակուսելի է այն, որ Վենետիկի հանձնաժողովի անդամը հաշվի չի առնում Եվրոպայի Խորհրդի եւ իր՝ Վենետիկի հանձնաժողովի արտահայտած մտահոգությունները Հայաստանում դատական իշխանության կախյալ վիճակի վերաբերյալ: Վենե-

տիկի հանձնաժողովը սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ 2004թ. դեկտեմբերի 6-ի միջանկյալ կարծիքում հստակ նշվում է, որ «անկախ եւ անկողմնակալ դատական իշխանության հաստատման եւ գործունեության սահմանադրական երաշխիքների ամրագրումը Հայաստանի սահմանադրական բարեփոխումների առանցքային խնդիրներից մեկն է ճանաչվել», այսինքն, Հայաստանում դեռեւս հաստատված չէ անկախ եւ անկողմնակալ դատական իշխանություն: Ուստի գործադիր իշխանությունից կախվածության մեջ գտնվող դատական իշխանության ներգրավումը ընտրական հանձնաժողովներում չի կարող գնահատվել որպես «դրական քայլ՝ քաղաքական պլուրալիզմի ավելի մեծ մակարդակի հասնելու համար»:

- Հանձնաժողովների ձեւավորման նման կարգի պայմաններում 2005 թվականի աշնանը կազմակերպված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ուժերի հարաբերակցությունը լավագույն դեպքում 3-6 էր, վատագույն դեպքում՝ 2-7 հոգուտ իշխանությունների:

Եթե նույնիսկ հաշվի չառնենք վերը նշված հակասահմանադրականությունն ու ընտրական հանձնաժողովներում ուժերի հարաբերակցությունը, այնուամենայնիվ, դատավորներին ընտրական հանձնաժողովներում ընդգրկելու դրույթը կարող է անելանելի վիճակներ ստեղծել: Սահմանված կարգի համաձայն՝ ընտրական հանձնաժողովներում ընդհանուր առմամբ ընդգրկված են լինելու 82 դատավորներ, ինչը փաստացի կկազմի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների մոտ 50-60 տոկոսը եւ կարող է ընտրությունների ընթացքում դատական համակարգը կազմալուծող գործոն հանդիսանալ:

Փոփոխությունները տեսական հավանականություն են ստեղծում նույնիսկ այն վիճակի համար, երբ ԿԸՀ-ի բոլոր անդամները կլինեն վճռաբեկ դատարանի դատավորներ, իսկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամները ընդհանուր իրավասության դատարանների դատավորներ: Այդ պարագայում ՀՀ ընդհանուր իրավասության դատավորների ողջ կազմն անգամ բավարար չի կարող լինել կենտրոնական եւ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները համալրելու համար:

- «Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2005 թվականի մայիսի 19-ի օրենքով փոփոխություն է կատարվել նաեւ Ընտրական օրենսգրքի 35 հոդվածի 3-րդ կետում, համաձայն որի, ԿԸՀ-ի կազմը սահմանվում է ՀՀ նախագահի հրամանագրով. պարզ չէ՝ Հանրապետության նախագահը իրավունք կունենա՞ չհաստատելու այս կամ այն սուբյեկտի կողմից ներկայացված թեկնածուին, թե՞ ոչ:

Ընդունելի չէ այն դրույթը, համաձայն որի, նախագահական ընտրությունների ժամանակ, քվեարկությանը նախորդող 20 օրվա ընթացքում ԿԸՀ անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում, եթե թափուր մնացած տեղերի թիվն ավելին է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի 1/3-ից, այդ տեղերը լրացվում են ՀՀ Նախագահի կողմից այլ ոչ թե հենց այդ անդամին նշանակված սուբյեկտի կողմից (հոդված 38):

Այն պնդումը, որ ընտրական հանձնաժողովներում դատավորների ընդգրկումը կբարձրացնի ընտրական հանձնաժողովների աշխատանքների պրոֆեսիոնալիզմը նույնպես չարդարացավ: Երեւանի Քանաքեռ-Զեյթուն համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամների ընտրություններ

րի արդյունքները, որոնցից առաջինը թիվ երկու ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ճանաչվել էր անվավեր, իսկ երկրորդը մասամբ անվավեր, բողոքարկվեց դատարան եւ բեկանվեց դատարանի կողմից: ԸԸՀ-ի կողմից այս որոշումների ընդունմանը մասնակցել էր նաեւ հանձնաժողովի դատավոր անդամը, որը այս որոշումների վերաբերյալ որեւէ հատուկ կարծիք չէր ներկայացրել եւ նույնիսկ կողմ էր քվեարկել:

- Ընտրական իրավունքի իրականացումը ապահովելու հարցում անգնահատելի է ընտրական ցուցակների դերը: Ինչպես նախկին, այնպես էլ 2005 աշնանը կազմակերպված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակները, մեղմ ասած, պատշաճ մակարդակի չէին, ինչը հազարավոր մարդկանց փաստացի զրկում էր ընտրություններին մասնակցելու հնարավորությունից:

«Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2005 թվականի մայիսի 19-ի օրենքով սահմանվեց ընտրողների ցուցակների կազմման այլ կարգ, (*սեւ` ԸՕ 9-14 գլուխների նոր խմբագրությունը*): Սահմանված կարգը առաջին հայացքից առաջընթացի տպավորություն է ստեղծում, սակայն գործնականում մի շարք խնդիրներ է առաջացնում:

Խնդրահարույց եւ մինչեւ վերջ պարզ չէ ընտրողների ցուցակների կազմման կարգը, եթե դրանք կազմվում են ըստ մարզերի եւ համայնքների, ապա պարզ չէ թե արտասահմանում հաշվառված ընտրական իրավունք ունեցող անձինք ինչպես են ընդգրկվելու այդ ցուցակում (հոդված 9):

Զինվորականների եւ կալանավորվածների ցուցակների ոչ հրապարակային, փակ լինելը (հոդված 13) ընտրական գործընթացների հրապարակայնության խախտում է: Ըստ էության զինվորական մասերում կազմվող ընտրողների ցուցակները դառնում են անվերահսկելի, եւ կարող են, նվազագույնը, անվստահության մթնոլորտ ստեղծել: Անհասկանալի է, թե արդյոք այդ ցուցակներում ընդգրկված ընտրողները ընդգրկված են լինելու ընտրողների ազգային գրանցամատյանում, թե՞ ոչ. եթե լինելու են, ապա ամրագրված հրապարակայնությունը չի գործելու, եթե չեն լինելու, ապա առկախ է մնում, թե ինչ տվյալների հիման վրա է քվեարկության նախորդ օրը ԿԸՀ-ն հրապարակելու ընտրողների ընդհանուր թիվը, եթե այդ թվում ընդգրկված են լինելու նաեւ զինվորականներն ու կալանավորվածները, ապա գրանցամատյանում եղած ընտրողների թվի եւ ԿԸՀ-ի կողմից հրապարակված ընտրողների ընդհանուր թվի տարբերությունը կկազմեն հենց զինվորականներն ու կալանավորվածները, ուստի այդ ցուցակների փակ լինելու դրույթը այս պարագայում եւս կգործի միայն մասամբ եւ կկորցնի իր իմաստը: Զինվորական ընտրողների ցուցակների փակ լինելու պարագայում, մասնավորապես զինվորականների մի քանի ցուցակներում ընդգրկվելու եւ մի քանի անգամ քվեարկելու նկատմամբ հսկողություն իրականացնելը դառնում է գրեթե անհնարին:

- Չնայած մինչեւ «Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2005 թ. մայիսի 19-ի օրենքի ընդունումը եւս վստահված անձանց իրավունքների որեւէ սահմանափակում չէր թույլատրվում, այնուամենայնիվ 2003 թվականին անցկացված ընտրությունների ժամանակ բազմաթիվ էին ընդդիմադիր թեկնածուների վստահված անձանց ընտրական տեղամասից դուրս հանելու դեպքերը: Իսկ այն դեպքերում, երբ բանը չէր հասնում վստահված անձանց դուրս

հրավիրելուն, հանձնաժողովի աշխատանքներին նրանց մասնակցությունը հավասարեցվում էր նվազագույնի, նրանց արգելվում էր ծանոթանալ ընտրական փաստաթղթերին, այդ թվում՝ նաեւ քվեարկված քվեաթերթիկներին:

«Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2005 թվականի մայիսի 19-ի օրենքով որոշակի հստակություն մտցվեց վստահված անձ-հանձնաժողով հարաբերություններում, ինչի արդյունքում կարծում ենք, վերը նշված երեւոյթները կբացառվեն: Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն վստահված անձինք իրավունք ստացան, չմիջամտելով հանձնաժողովի անդամի աշխատանքներին, ֆիզիկապես ներկա գտնվելու հանձնաժողովի՝ ընտրողների գրանցում իրականացնող, քվեատուփը հսկող անդամների կողքին եւ հետեւելու նրանց աշխատանքներին. իսկ քվեարկության արդյունքները ամփոփելիս ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որեւէ մեկի ներկայությամբ, ուն կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու քվեարկած քվեաթերթիկներին եւ դրանցում կատարված նշումներին, ներկա գտնվելու քվեաթերթիկների հաշվարկմանը եւ արդյունքների ամփոփմանը:

Որպես վստահված անձանց իրավունքների իրականացման երաշխիք սահմանված է. «Վստահված անձի իրավունքների որեւէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները, իրավունք չունեն վստահված անձանց դուրս հանելու քվեարկության սենյակից կամ ցանկացած այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա գտնվելուց, բացառությամբ նրանց ձերբակալելու կամ կալանավորելու դեպքերի»:

- Ոչ պատշաճ ընտրական վարչարարության հիմնական պատճառներից մեկը Հայաստանում շարունակում է մնալ ընտրական հանձնաժողովներում ընդգրկված անձանց ընտրական օրենսդրությանը վատ տիրապետելը: Ընտրական օրենսդրության ուսուցումը վերջինիս ճիշտ կիրառման, հետեւաբար՝ ընտրական իրավունքի պատշաճ իրականացումը ապահովելու նախապայման է:

Ընտրական իրավունքի ոլորտում համապատասխան գիտելիքների մասին սերտիֆիկատ ունենալը պետք է պարտադիր նախապայման լինի տվյալ անձին ընտրական հանձնաժողովներում ընդգրկելու համար:

«ՀՀ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (19.05.05թ.) օրենքի համաձայն (հոդված 34) ընտրական հանձնաժողովների անդամ կարող են դառնալ ԿԸՀ-ի կողմից սահմանված կարգով մասնագիտական դասընթացներ անցած եւ որակավորման վկայական ունեցող անձինք: Առաջին հայացքից իր առաջադիմական բնույթով հանդերձ, գործնականում, երբ օրենքով սահմանված չեն ուսուցում անցկացնելու եւ որակավորման վկայականներ տալու չափորոշիչները, այս դրույթները կարող են ծառայել որպես ընդդիմադիր կուսակցությունների առավել ակտիվ ներկայացուցիչներին ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու հնարավորությունից զրկելու գործիք:

- «ՀՀ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (19.05.05 թ.) օրենքի մի շարք դրույթներ ուղղակիորեն հակասում են ՀՀ այլ օրենքների: Մասնավորապես, ընտրական հանձնաժողովի տարբեր որոշումներ անմիջապես վերաքննիչ դատարան բողո-

քարկելը (հոդված 40, կետեր 3 եւ 10): Վերջինս հակասում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին: Նման պարագաներում Ազգային ժողովի կանոնակարգը (հոդված 47) պահանջում է, որպեսզի փոփոխությունները ներկայացվեն փաթեթով, ինչը չի կատարվել: Ըստ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածի 3-րդ մասի. «Միեւնույն մարմնի նոր ընդունած իրավական ակտը չպետք է հակասի նախկինում ընդունված եւ ուժի մեջ մտած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին: Միեւնույն մարմնի ընդունած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջեւ հակասությունների դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը»: Ուստի ակնհայտ է, որ եթե վերը նշված օրենքներում համապատասխան փոփոխություններ չկատարվեն ապա այդ դրույթները չեն գործի:

- «ՀՀ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (19.05.05թ.) օրենքով փոխվել են նաեւ ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների եւ անգործության դեմ բերված բողոքների քննարկման ընթացակարգերը: Մինչ այս փոփոխությունների ընդունումը, այդ բողոքների քննարկման համար, հաշվի առնելով ընտրական իրավունքի առանձնահատկությունները, մասնավորապես նրա անվերականգնելի լինելը, սահմանվում էր բողոքների քննարկման կարճ 5-օրյա ժամկետ, իսկ որոշ դեպքերում՝ պահանջվում էր դրանք քննարկել անհապաղ: Օրենքով կատարված փոփոխությունների համաձայն, ընտրական հանձնաժողովներում դիմումները (բողոքները) եւ առաջարկությունները քննարկվում եւ պատասխանվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, բացառությամբ սույն օրենսգրքով սահմանված դեպքերի: Կարգավորման այս պայմաններում, վստահված անձին տեղամասային ընտրական հանձնաժողովում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը չտալու մասին բողոքը կարող է քննարկվել ասենք 29 օր հետո, երբ ընտրական բոլոր գործընթացներն ավարտված են:

- «ՀՀ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (19.05.05թ.) օրենքի 30 հոդվածով ՀՀ Ընտրական օրենսգրքում ավելացված 40¹ հոդվածում սահմանված դիմումների եւ առաջարկությունների քննարկման կարգը, (հոդված 40¹, մաս 3) ոչ միայն նպաստավոր պայմաններ չի ստեղծում այդ դիմումների պատշաճ քննարկման համար, այլ հակասում է ինչպես իրավական պետությունում հանրային վեճերի քննարկմանը ներկայացվող պահանջներին, մասնավորապես՝ ի պաշտոնե գործը քննելու սկզբունքին, այնպես էլ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում ամրագրված՝ ձեւական պահանջների չարաչափման արգելքի սկզբունքին: Դրույթն այն մասին է, որ ընտրական հանձնաժողովներում ընդունվում, մուտքագրվում եւ քննարկվում են միայն տվյալ ընտրական հանձնաժողովին հասցեագրված դիմումները (բողոքները) եւ առաջարկությունները: Դիմումը պետք է ստորագրված լինի դիմողի կողմից, պարունակի նրա անունը, ազգանունը, բնակության հասցեն, տրման ամսաթիվը, ամիսը եւ տարեթիվը: Դիմումատուն պետք է հստակ սահմանի իր պահանջը, բերի հիմնավորումներ, իսկ հնարավոր ապացույցները կցի դիմումին: Առանց նշված տեղեկությունների՝ դիմումները եւ (կամ) դիմումատուի վերաբերյալ կեղծ տվյալներ պարունակող դիմումները համարվում են անստորագիր եւ չեն քննարկվում:

- «ՀՀ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (19.05.05թ.) օրենքով Ընտրական օրենսգրքում ավելացվեց նոր՝ 40² հոդված՝ «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների վերահաշվարկման կարգը» (պետք է լինեն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում, տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկման կարգը), համաձայն որի, վերահաշվարկի գործողությունները ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում սկսում են քվեարկությունից երկու օր հետո, ժամը 9:00-ից: Վերահաշվարկ իրականացնելիս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը աշխատում է առանց հանգստյան օրերի ժամը 9:00-ից մինչև 18:00, եթե հանձնաժողովի կողմից աշխատաժամանակը երկարաձգելու մասին որոշում չի ընդունվում, իսկ քվեարկության արդյունքների վերահաշվարկը կատարվում է ըստ գրանցված դիմումների հերթականության եւ ավարտվում է քվեարկությունից հետո հինգերորդ օրը՝ ժամը 14:00: Սա տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքի վրա պատշաճ հսկողություն իրականացնելու նպաստավոր պայմաններ չի ապահովում: Սահմանված ժամանակահատվածում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը կարող է լավագույն դեպքում ստուգել 5-6 ընտրական տեղամասի արդյունքներ: Որեւէ բարդություն չի պահանջում ապահովելու, որպեսզի այդ 5-6-ը լինեն հատկապես այն տեղամասերը, որտեղ խախտումներ չկան, իսկ մյուսները կմնան առանց ստուգման, եւ այդ պայմաններում օրենքի որեւէ խախտում ի հայտ չի գա:

- Անհասկանալի է Ընտրական օրենսգրքի 62 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում սահմանված անճշտությունների որոշման կարգը, մասնավորապես կապված այն դրույթի հետ, համաձայն որի. «եթե քվեատուլի վավեր եւ անվավեր քվեաթերթիկների թվի գումարը փոքր է կամ հավասար ընտրողների ցուցակում ստորագրությունների թվին, ապա երկրորդ անճշտության չափը հավասար է 0-ի»: Նման վիճակը խոսում է այն մասին, որ կամ քվեաթերթիկներ են ինչ-որ փուլում անհետացել քվեատուլից, կամ ընտրողների ցուցակում ավելորդ ստորագրություններ են դրվել, երկուսի դեպքում էլ գործ ունենք ընտրությունների արդյունքների վրա ազդող խախտումների հետ, որը պետք է արձանագրվի որպես անճշտության չափ:

-Շարունակում է խնդրահարույց մնալ Ազգային ժողովի պատգամավորների եւ ՀՀ նախագահի թեկնածուների առաջադրման եւ գրանցման կարգը: Թեպետ «ՀՀ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (19.05.05թ.) օրենքով (օրենքի 59 հոդվածով Օրենսգրքի 99 հոդվածի 8-րդ կետում կատարված փոփոխությունը) սահմանվեց կուսակցությունների դաշինքների կողմից Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուներ առաջադրելու դրույթը, սակայն խնդիրներ դեռ կան: Վերջինիս բացակայությունն ըստ էության, խոչընդոտում էր նախընտրական դաշինքների ձեւավորմանը եւ մեծամասնական ընտրակարգով դաշինքի անդամ կուսակցությունների միասնական թիմով հանդես գալը:

«Ընտրական օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» 19.05.05 թվականի օրենքով ընդհանրապես հանվեց թեկնածուների եւ նախընտրական ցուցակների առաջադրումը պաշտպանելու համար ստորագրությունների հավաքման ինստիտուտը: Առաջին ընթերցմամբ ընդունված տարբերակում այդ ստորագրություններն առա-

ջարկվում էր փոխարինել բարձր ընտրագրավներով. ՀՀ Նախագահի թեկնածուի գրավն առաջարկվում էր դարձնել նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկ, համամասնական ընտրակարգով նախընտրական ցուցակինը՝ նվազագույն աշխատավարձի 5000-ապատիկ եւ մեծամասնական ընտրակարգով առաջադրվող թեկնածուինը՝ 200-ապատիկ: Սակայն հետագայում այն հիմնավորման ճնշման ներքո, որ այդ չափի գրավները, ոչ այլ ինչ են, քան գույքային ցենզեր, դրանք օրինագծից հանվեցին, սակայն չվերականգնվեց նաեւ առաջադրումները պաշտպանելու համար ստորագրությունների հավաքման ինստիտուտը: Թեկնածուների առաջադրման նման կարգի պայմաններում թեկնածուների մեծ թիվ կազմելը եւ իրական ընտրությունները խոչընդոտելը կարող են լայն տարածում ստանալ:

- Հատկապես 2003 թվականի ՀՀ նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների ժամանակ ակնհայտ էր հավասարության սկզբունքի խախտումը, որը դրսևորվել է թեկնածուներից մեկի եւ կուսակցություններից մի քանիսի օգտին պետական ռեսուրսների օգտագործմամբ:

«ՀՀ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (19.05.05թ.) օրենքով այդ հարցում որոշակի հստակություն մտցվեց: Սահմանվեց, որ քաղաքական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող, պետական ծառայող հանդիսացող թեկնածուները նախընտրական քարոզչությունն իրականացնում են ընդհանուր հիմունքներով, սակայն վերջիններիս համար սահմանված են նաեւ որոշակի սահմանափակումներ. մասնավորապես, արգելվում է նախընտրական քարոզչության իրականացումը պաշտոնական պարտականությունները կատարելիս, կամ պաշտոնական դիրքի ցանկացած չարաշահումը ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար, նախընտրական քարոզչության նպատակով իրենց ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված տարածքների, տրանսպորտային եւ կապի միջոցների, նյութական ու մարդկային ռեսուրսների օգտագործումը, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող միջոցառումների, իսկ զանգվածային լրատվության միջոցներով այս թեկնածուների գործունեության լուսաբանումն արգելվում է, բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված դեպքերի, պաշտոնական այցերի եւ ընդունելությունների, ինչպես նաեւ տարերային աղետների ընթացքում վերջիններիս իրականացրած, ձեռնարկվող միջոցառումների: Սակայն այս դրույթի արդյունավետությունն առավելապես կախված է այս նորմի կիրառումից:

- Ընտրական իրավունքի հավասարության սկզբունքի խախտում պետք է դիտարկել ՀՀ ընտրողներին պայմանականորեն երկու խմբի բաժանելը, որոնցից մեկը՝ այն է՝ զինծառայողները եւ քվեարկության օրը արտասահմանում գտնվողները, զրկված են տեղական ինքնակառավարման մարմինների եւ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցելու իրավունքից: Ստեղծվում է մի վիճակ, երբ ընտրողների մի մասը ԱԺ միեւնույն ընտրության ժամանակ ունի մեկ ձայն, իսկ մյուսները՝ երկու:

- ՀՀ ընտրական օրենսդրության մեջ դեռեւս վիճահարույց է մնում փաստացի համընդհանուր եւ հավասար ընտրական իրավունքի ապա-

հովման հարցը: Այլընտրանքային քվեարկության բոլոր ձեւերի բացակայության պարագայում տասնյակ հազարավոր ընտրողներ, որոնք օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով չեն կարող քվեարկության օրը ներկայանալ ընտրական տեղանաս եւ քվեարկել, գործնականում զրկվում են իրենց ընտրական իրավունքի իրականացման հնարավորությունից:

Հավասարության սկզբունքի խախտում պետք է համարել ընտրատարածքների ձեւավորման սահմանված կարգը:

Ընտրական օրենսգրքի 17¹ հոդվածով ընտրատարածքներ ձեւավորելիս, չի բացառվում, որ կազմավորված պայմանական երկու ընտրատարածքների ընտրողների թվի տարբերությունը լինի մինչեւ 20, իսկ բացառիկ դեպքերում նույնիսկ 30 տոկոս:

Այս հոդվածը որեւէ կերպ չի սահմանում ընտրատարածքների ձեւավորման ժամկետները հետագա ընտրությունների ժամանակ՝ սահմանափակվելով միայն փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո ընտրատարածքի ձեւավորման ժամկետները սահմանելով: Ստացվում է, որ այս կամ այն ընտրատարածքում ընտրողների թվի ցանկացած փոփոխության պարագայում, ընտրատարածքների սահմանները, առանց Ընտրական օրենսգրքի փոփոխության հնարավոր չի լինելու փոփոխել: Նման պայմաններում տեսականորեն չի բացառվում, որ այս կամ այն ընտրատարածքն ընդգրկի պայմանական մեկ այլ ընտրատարածքի ընտրողների թվից ոչ թե 20 կամ 30, այլ նույնիսկ 100 տոկոսով ավելի ընտրողներ:

- 2003թ. ընտրությունների ժամանակ ընտրակեղծիքների մի ստվար խումբը կապված էր քվեաթերթիկների անօրինական օգտագործման հետ: Քվեարկությունից արդեն օրեր առաջ անօրինական կերպով տպագրված քվեաթերթիկները հայտնվել էին շրջանառության մեջ:

Նման վիճակներից ձերբազատվելու նպատակով կարելի է կիրառել պաշտպանական միջոցներ ունեցող քվեաթերթիկներ:

Ընտրական օրենսգրքի փոփոխություններով (19.05.05թ.) նման փորձ կատարվեց, սակայն այն իր տրամանաբական ավարտին չհասցվեց: Ընտրական օրենսգրքի 49¹ հոդվածի համաձայն.

«Քվեաթերթիկը պետք է լինի դակված (պերֆորացված), պարունակի տպագրատան անվանումը եւ ծանուցում՝ քվեաթերթիկի լրացման կարգի մասին: Քվեաթերթիկները պետք է պատրաստված լինեն անթափանց թղթից:

Քվեաթերթիկի հատման գծից վերել՝ ելունդի վրա, նշվում է քվեաթերթիկի հերթական համարը.....»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քվեաթերթիկների ելունդները քվեաթերթիկից անջատվում են մինչեւ քվեաթերթիկն ընտրողին հանձնելը, քվեաթերթիկների համարակալման ինստիտուտը գրեթե ոչ մի վերահսկողական գործառույթ չի իրականացնում:

- «ՀՀ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» (19.05.05թ.) օրենքով, փոփոխվեց նաեւ քվեաթերթիկը լրացնելու եւ կնքելու կարգը (հոդված 57): Եթե նախկին կանոնակարգումների համաձայն՝ քվեաթերթիկը հանձնաժողովի անդամի կողմից կնքվում էր մինչեւ քվեարկության խցիկ մտնելը, այսինքն մինչեւ քվեարկելը, ապա նոր կանոնակարգման համաձայն քվեաթերթիկը կնքվում է քվեաթերթիկում նշում կատարելուց հետո: 2005 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ «Ընտրությունը քոնն է» հասարակական կազմակերպության կողմից արձանագրվեց, որ հենց այս փոփոխության պատճառով գրեթե զանգվածաբար խախտվում է քվեարկու-

թյան գաղտնիությունը, հանձնաժողովի քվեաթերթիկները կնքող անդամները քվեաթերթիկները կնքելիս ստուգում են նաեւ քվեարկությունը:

- Ընտրությունների ժամանակ նկատվող բազմակի քվեարկության դեպքերի կանխման նպատակով իմաստ ունի ընտրողների մատներին քվեարկությունից հետո դնել որոշ ժամանակ չջնջվող նշան. այս դրույթը թեպետ Ընտրական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին օրինագծի առաջին ընթերցմամբ ընդունված տարբերակում կար, սակայն այն վերջնական տեքստից հանվեց:

- Հատկապես 2003 ընտրությունների ընթացքում ակնհայտ դարձան ֆինանսական միջոցների վճռորոշ ազդեցությունն ու այդ միջոցներն ընտրակաշառքի ձեւով բաժանելը: Այս փաստերի առնչությամբ անձանց պատասխանատվության ենթարկելն ուղղակիորեն բխում է իշխանությունների կամքից: Թեկնածուների ֆինանսական ծախսերի վրա հսկողություն իրականացնող ընտրական հանձնաժողովներից անկախ մարմնի առկայությունը պատշաճ մեխանիզմների պարագայում կբարելավի վիճակը:



Հայաստանի Հանրապետությունում հանրաքվեի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Ընտրական օրենսգրքով, ինչպես նաեւ 2001 թվականի սեպտեմբերի 12-ին ընդունված «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով: Այս օրենքում վերջին փոփոխությունները կատարվել են 2005 թվականի հոկտեմբերի 28-ին:

Ընտրական օրենսդրությանն ու ընտրությունների վրա իշխանությունների վճռորոշ ազդեցությանը վերաբերող վերը շարադրված բոլոր հանգամանքները հավասարապես տարածվում են նաեւ հանրաքվեի վրա: Ավելին, եթե յուրաքանչյուր ընտրությունից հետո իշխանությունները քվեարկության նոխազ են դարձնում ընտրական օրենսդրությունը եւ հասարակության մեջ առկա դժգոհությունները մեղմելու նպատակով փորձ են անում փոքրիշատե բարելավել ընտրական օրենսդրությունը, ապա հանրաքվեի օրենսդրության վերաբերյալ դա ասել չի կարելի:

Ի տարբերություն ՀՀ ընտրական օրենսդրության, հանրաքվեի մասին ՀՀ օրենքը չի երաշխավորում Հանրային հեռուստատեսությամբ եւ ռադիոյով անվճար քարոզչություն կատարելու իրավունքը, ինչպես նաեւ Ընտրական օրենսգրքով վստահված անձանց վերապահված մի շարք իրավունքներ (հանրաքվեի ժամանակ ըստ էության վստահված անձանց վերապահված գործառույթները կատարում են դիտորդները)՝ հանձնաժողովի քվեաթերթիկ հատկացնող եւ քվեատուփը հսկող անդամի կողքին կանգնելը եւ նրանց աշխատանքներին հետեւելը, քվեարկած քվեաթերթիկներին ծանոթանալը եւ այլն:

2005 թվականի նոյեմբերի 27-ին անցկացված ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու հանրաքվեի ընթացքում ՀՀ-ում նախընթաց տարիներին քվեարկությունների ու ընտրությունների կազմակերպման ու անցկացման ընթացքում տեղ գտած բոլոր բացասական երեւույթները (բացառությամբ թերեւս ընտրակաշառք բաժանելուց, որի անհրաժեշտությունը չկար) ունեցան իրենց վառ դրսեւորումը:

Հանրաքվեն նշանակվեց եւ անցկացվեց քաղաքական առումով բավականին լարված մթնոլորտում: Քաղաքական ընդդիմությունը դեռ վաղուց հայտարարել էր սահմանադրական հանրաքվեն «վստահության հանրաքվեի» վերածելու իր մտադրության մասին: Այս իսկ պատճառով

քաղաքական իշխանությունների եւ ընդդիմության համար այդ հանրաքվեն վերածվեց իշխանությունը պահելու (ամրապնդելու) եւ իշխանությունը վերցնելու շուրջ կազմակերպված մի միջոցառման: Նախընտրական քարոզչության փուլում մասնագիտական քարոզարշավն իր տեղը զիջել էր միմյանց գործողություններին քաղաքական գնահատականներ տալուն:

Իշխանությունները, ինչպես եւ նախորդ բոլոր ընտրությունների ժամանակ, գործադրում էին իրենց տրամադրության տակ առկա վարչական բոլոր լծակները՝ հանրաքվեի «ոչ»-ի քարոզարշավը խոչընդոտելու համար: «Ոչ» քարոզող ընդդիմադիր կուսակցությունների մի շարք լիդերների հետ փակված էին ինչպես Հանրային հեռուստաընկերության, այնպես էլ մյուս հեռուստաընկերությունների, ԲՈՒՀ-երի ու այլ հաստատությունների դռները եւ դա այն դեպքում, երբ «այո» քարոզողների համար ոչ միայն բաց էին այդ դռները, այլ օգտագործվում էր ողջ վարչական ներուժը:

Ինչ վերաբերում է քարոզարշավի լուսաբանմանը, ապա հատկապես հեռուստաընկերություններով այն ընթանում էր ակնհայտ միակողմանի:

«Ոչ»-ի քարոզչությունը ընթանում էր հիմնականում մարզերում եւ Երեւանում բնակչության հետ հանդիպումներ կազմակերպելու միջոցով, սակայն այդ հանդիպումները եւս առանց միջամտության չէին անցնում: «Ոչ» քարոզողների ավտոմեքենաների տուգանային հրապարակում հայտնվելը քարոզարշավի անբաժան տարր էր դարձել:

Ընդդիմադիր կուսակցություններն ի սկզբանե կոչ էին անում «ոչ» քվեարկել հանրաքվեի դրված նախագծին, որպես հիմնական փաստարկ բերելով այն ոչ լեգիտիմ իշխանությունների կողմից հանրաքվեի դրված լինելու հանգամանքը, սակայն քվեարկության նախօրյակին ընդդիմության համար, ըստ էության, պարզ դարձավ, որ ինքն ի վիճակի չի լինելու քվեարկությունից հետո ընտրական տեղամասերում ապահովել քվեաթերթիկների ճիշտ հաշվարկը եւ կոչ արեց բոյկոտել հանրաքվեն: Քվեարկությանը նախորդող օրերին շրջանառվում էին լուրեր, որ հանձնաժողովների ընդդիմադիր կուսակցությունների կողմից նշանակված անդամները տեղերում համաձայնել են համագործակցել հանձնաժողովի մյուս անդամների հետ: Սրան հետեւեց ընդդիմադիր կուսակցությունների որոշումները՝ բոյկոտել նաեւ հանձնաժողովների աշխատանքները:

ՀՀ գլխավոր դատախազի հայտարարությունն այն մասին, որ հանձնաժողովի աշխատանքները բոյկոտողները կենթարկվեն պատասխանատվության, այդ թվում քրեական, ըստ էության հետեւանք չունեցավ: Ընդդիմադիր կուսակցությունների կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների բացարձակ մեծամասնությունը քվեարկության օրը բոյկոտեց հանձնաժողովի աշխատանքները:

Ընդդիմադիր կուսակցությունները, բոյկոտելով հանձնաժողովի աշխատանքները, հնարավորություն չունեցան հենց հանձնաժողովներում հսկողություն իրականացնել եւ կանխել ընտրախախտումները: Եթե վերջինիս հավելում ենք նաեւ այն, որ եվրոպական կառույցներից հանրաքվեի ընթացքում կարճաժամկետ դիտորդական առաքելություն էին իրականացնում ընդամենը 17 դիտորդներ (ՀՀ իշխանությունները որեւէ փաստարկված հիմնավորում չբերեցին ԵԱՀԿ-ին դիտորդական առաքելություն իրականացնելու հրավեր չուղարկելու համար), ապա պարզ է դառնում, որ ընտրախախտումների համար բավականին պարարտ հող էր նախապատրաստված: Հանձնաժողովներում հսկողություն իրականացնողները միայն ընդդիմադիր կուսակցությունների դիտորդներն էին:

Ընդդիմությունը կազմավորեց հանրաքվեի ընթացքին հետևող կենտրոն, որը տեղերից պետք է ստանար տեղեկություններ քվեարկության մասնակիցների վերաբերյալ եւ հրապարակեր: Քվեարկությունից հետո, այս կենտրոնի հրապարակած տվյալներով, քվեարկության մասնակիցների թիվը չի անցնում 300-400 հազարը, սակայն այդ տեղեկության հավաքման եղանակի վերաբերյալ ոչինչ չասվեց:

Հանրապետության նախագահը քվեարկությունը կատարեց բաց, ինչը ընտրական օրենսգրքի եւ ընտրական իրավունքի միջազգային չափորոշիչների խախտում է:

Հանրաքվեի քվեարկությունը ընթանում էր աննախադեպ ցածր մասնակցության պայմաններում: Առօրյա դիտարկմամբ անգամ պարզ էր, որ մասսայական անտարբերություն կա հանրաքվեի նկատմամբ: Տեղամասեր ներկայացած ընտրողները եւս փաստում են, որ քվեարկությունները ընթացել են գրեթե դատարկ տեղամասային կենտրոններում: Այսուհանդերձ ԿԸՀ-ը արձանագրեց ըստ էության աննախադեպ մասնակցություն՝ 1.514.307, որոնցից «Այո» էին քվեարկել 1.411.711, «Ոչ»՝ 82.018 ընտրողներ:

Բնականաբար մասնակցության նման թիվն արժանահավատ չէր կարող լինել անկախ իրավական ընթացակարգերով դրանք ապացուցելուց: Հասարակական գիտակցության մեջ քվեարկության, հետեւաբար հանրաքվեի արդյունքների կեղծված լինելը կասկած գրեթե չի հարուցում:

Հանրաքվեին հաջորդած ժամանակաշրջանն աննախադեպ էր այն առումով, որ իշխանական կոալիցիայի անդամ կուսակցության ներկայացուցիչներն անգամ խուսափում էին քվեարկություններն ազատ ու արդար որակելուց, իսկ «Օրինաց երկիր» կուսակցության ղեկավար, Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանն անգամ բարձրաձայնեց քվեարկության ընթացքում լցոնումներ եւ այլ խախտումներ կատարելու մասին:

Եվրոպայի խորհրդի դիտորդական առաքելության անդամները հայտարարեցին քվեարկությունը խախտումներով անցկացնելու, այդ թվում լցոնումների փաստերի մասին:

Քվեարկությանը հաջորդեցին ընդդիմության կազմակերպած հանրահավաքները, որոնք շարունակվում էին մինչեւ 2005թ. դեկտեմբերի 16-ը, սակայն այդ հանրահավաքների մասնակիցների թիվը չէր գերազանցում 4-5 հազարը: Ընդդիմությունը հայտարարեց սահմանադրական ճանապարհով չգնալու իր ցանկության վերաբերյալ եւ հանրաքվեի արդյունքները չբողոքարկեց Սահմանադրական դատարան, մի գուցե եւ Ազգային ժողովի պատգամավորների մեկ հինգերորդի (բողոքարկելու համար անհրաժեշտ) ձայները չունենալու պատճառով:

3. 3 յ 3 ի 3 ի 3 Յ μ 3 ñ ÷ áĚ áŸŸ»ñ

Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության կազմավորման իրավական հիմքերը դրվեցին ՀՀ 1995թ. Սահմանադրությամբ: Համաձայն դրա՝ ՀՀ-ում գործում է ընդհանուր իրավասության եռաստիճան դատական համակարգ եւ Սահմանադրական դատարանը: Սահմանադրությամբ հռչակվեցին դատարանների անկախության երաշխիքները: Մասնավորապես՝ «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա» (հ. 5), «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան», (հ. 91), «Դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամը անփոփոխելի են», «Արդարադատություն իրականացնելիս՝ դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամը անկախ են եւ ենթարկվում են միայն օրենքին» (հ. 97):

Սակայն, միաժամանակ, 1995 թվականին Սահմանադրությամբ ամրագրվեց, որ արդարադատության խորհուրդը գլխավորում է ՀՀ նախագահը, իսկ արդարադատության նախարարը եւ գլխավոր դատախազը խորհրդի փոխնախագահներն են: Արդարադատության խորհրդի կազմի մեջ էին մտնում նաեւ Հանրապետության նախագահի կողմից 5 տարի ժամկետով նշանակված 14 անդամ (9 դատավոր՝ ընտրված դատավորների ընդհանուր ժողովի ընտրած 27 թեկնածուներից, 3 դատախազ, 2 իրավաբան գիտնական): Արդարադատության խորհրդին վերապահվեցին դատավորների նշանակման, գործող դատավորների լիազորությունները դադարեցնելու հարցում ՀՀ նախագահին առաջարկություններ անելու, գործող դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորություններ: Արդյունքում՝ դատարաններն իրականում անկախ չեն գործադիր իշխանությունից:³

Արդարադատության արդյունավետությունն ընդհանուր առմամբ գնահատելու համար պետք է հաշվի առնել բազմաթիվ գործոններ:

2004թ. *Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Կենսրոնական եւ Արեւելյան Եվրոպական իրավական նախաձեռնության (ABA/CEELI)* կողմից իրականացված հետազոտությունների արդյունքներով, 30 այդպիսի գործոնների անկախ փորձագիտական հետազոտության հիման վրա, նշակվել է ՀՀ դատական համակարգի ներկա վիճակի գնահատականը: Փորձաքննության արդյունքում 30 գործոնից 13-ը գնահատվել է «բացասական», 15 գործոն՝ «չեզոք» եւ ընդամենը 2-ը՝ «դրական»:⁴ Բացասական գնահատական ստացած գործոններից են՝ դատավորների ընտրու-

³ Դատական բարեփոխումների ինդեքսը Հայաստանի համար. 2004 դեկտեմբեր. ABA CEELI. 2-րդ հատոր, 2005թ., էջ.էջ. 54, 58 Judicial Reform Index for Armenia. December 2004. ABA CEELI. Volume II., 2005, 30, 33 p.p. Տես նաեւ՝ <http://www.abanet.org/ceeli/publications/jri/home.html> ինտերնետային կայքում:

թյան/նշանակման գործընթացը, դատավորների ծառայողական առաջ-խաղացման օբյեկտիվ չափանիշները, դատական որոշումները եւ ապօ-րինի ներգործությունները, դատական գործերի բաշխումը, դատավորնե-րի աշխատավարձի համարժեքությունը: Ընդ որում, մի շարք չափանիշ-ներով (դատարանների կողմից օրենսդրության վերանայում, դատարան-ների վերահսկողությունը վարչական պրակտիկայի նկատմամբ, դատա-վորի անձեռնմխելիությունը պաշտոնական գործունեության ժամանակ) 2002թ. համեմատ 2004 թվականին գնահատման ինդեքսները ետընթաց են ունեցել. դրական գնահատականը դարձել է չեզոք, իսկ չեզոք գնահա-տականը՝ բացասական:

2001թ. հունվարի 25-ին դառնալով եւս լիիրավ անդամ՝ Հայաստանը ստանձնել է պարտավորություն՝ «դատաիրավական համակարգի լրիվ անկախությունը երաշխավորելու համար իրականացնել դատաիրավա-կան համակարգի համալիր բարեփոխում», «անդամակցություն ձեռք բե-րելուց հետո երեք տարվա ընթացքում բարեփոխել արդարադատության խորհուրդը՝ նրա անկախության ընդլայնման նպատակով», «անդամակ-ցությունից հետո երկու տարվա ընթացքում ապահովել սահմանադրա-կան դատարան դիմելու իրավունքը՝ նաեւ կառավարության, գլխավոր դատախազի, բոլոր ատյանների դատարանների եւ, հատուկ դեպքերում՝ անհատների համար»:⁵

Այս պարտավորությունների իրականացման համար անհրաժեշտ էր փոփոխություններ կատարել Սահմանադրության մեջ: Սահմանադրու-թյունում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը 2003թ. դր-վեց հանրաքվեի, սակայն չհավաքեց անհրաժեշտ ձայներ:

2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով Սահմանադրությունում փոփո-խություններ կատարվեցին: Որոշ քայլեր արվեցին իշխանությունների տարանջատման եւ գործադիր իշխանությունից դատարանների անկա-խության ապահովման ուղղությամբ: Մասնավորապես՝

1. փոխվել է Սահմանադրության 94-րդ հոդվածը, արդյունքում՝ դատա-րանների անկախության երաշխավորը ոչ թե Հանրապետության նախա-գահն է, այլ Սահմանադրությունը եւ օրենքները,

2. փոխվել են դատավորների նշանակման/լիազորությունների դադա-րեցման գործում կարելորագույն դեր ունեցող մարմնի՝ արդարադատու-թյան խորհրդի կազմը եւ լիազորությունները:

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում արդարադատու-թյան խորհուրդը չի գլխավորելու Հանրապետության նախագահը: Արդա-րադատության խորհրդի նիստերը վարելու է վճռաբեկ դատարանի նա-խագահը՝ առանց քվեարկության իրավունքի (94.1 հոդված): Արդարա-դատության խորհրդի կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետու-թյան դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկու-թյամբ հինգ տարի ժամկետով ընտրված ինը դատավորներ, Հանրապե-տության նախագահի եւ Ազգային ժողովի կողմից նշանակված երկուա-կան իրավաբան-գիտնական: Սահմանադրական փոփոխությունների անցումային դրույթներով արդարադատության խորհրդի կազմում շա-

⁴ Դատական բարեփոխումների ինդեքսը Հայաստանի համար. 2004 ղեկտեմբեր. ABA CEELI. 2-րդ հատոր, 2005թ., էջ 19, Judicial Reform Index for Armenia. December 2004. ABA CEELI. Volume II., 2005, 7 p. Տես նաեւ՝ on the web <http://www.abanet.org/ceeli/publications/jri/home.html> ինտերնետային կայքում:

⁵ Եվրոպայի խորհրդին անդամակցելու Հայաստանի դիմումի վերաբերյալ ԵԽԽՎ համար 221 կարծիք (28 հունիսի, 2000 թ.):

րունակում են մնալ միայն արդարադատության խորհրդի գործող դատավոր եւ իրավաբան գիտնական անդամները (մինչեւ իրենց լիազորությունների ավարտը): Ազգային ժողովը նոր անդամների (2 իրավաբան գիտնական) նշանակումները պետք է կատարի մինչ 2006թ. մարտի 9-ը:

Արդարադատության խորհուրդը (2005թ. հանրաքվեով փոփոխված Սահմանադրության 95-րդ հոդված) այսուհետ՝

- ինքնուրույն է կազմելու եւ ՀՀ նախագահի հաստատմանը ներկայացնելու դատավորների թեկնածությունների եւ ծառայողական առաջխաղացման ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները,

- եզրակացություն է սալու վերաբերյալ, առաջին ասյանի եւ մասնագիտացված դատարանների դատավորների ներկայացված թեկնածությունների վերաբերյալ:

Մինչ փոփոխությունները սահմանված էր, որ նշված դատավորների թեկնածությունները առաջարկվում են արդարադատության նախարարի կողմից, փոփոխությունների արդյունքում Սահմանադրությամբ ամրագրված չէ առաջարկող սուբյեկտը:

Սակայն պահպանվել է Սահմանադրության մեջ 1995թ. ամրագրված այն դրույթը, ըստ որի արդարադատության խորհրդի առաջարկած դատավորների լիազորությունները դադարեցնում կամ առաջարկված թեկնածուին դատավոր է նշանակում ՀՀ նախագահը: Այսինքն, վերջնական որոշում կայացնողը նախագահին է եւ սահմանված չէ, թե ինչ կարող է անել արդարադատության խորհուրդը, եթե նախագահը դատավոր չի նշանակում իրենց առաջարկած թեկնածուին:

Սահմանադրությունում կատարված վերոնշյալ փոփոխությունները, դրական քայլ լինելով հանդերձ, անուամենայնիվ, չեն կարող բավարար համարվել դատական իշխանության ինստիտուցիոնալ անկախությունը երաշխավորելու համար:

Արդարադատության արդյունավետության վրա իր ազդեցությունը թողնում է նաեւ արդարադատության մատչելիության աստիճանը:

Քրեական եւ քաղաքացիական գործերով քաղաքացիներն ունեն դատարան դիմելու լայն իրավական հնարավորություն: Սահմանադրական փոփոխություններով հանվել է նաեւ օրինական ուժի մեջ մտած վճիռները, դատավճիռները եւ որոշումները վճարել դատարան միայն գլխավոր դատախազի, նրա տեղակալների կամ հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների միջոցով բողոքարկելու պահանջը:

Պրակտիկայում, սակայն, արդարադատության մատչելիության խնդիրներ ծագում են բնակչության տնտեսական ոչ բարվոք վիճակի պատճառով:

Մատչելիության ապահովման ֆինանսական մեխանիզմներից ՀՀ օրենսդրությամբ ներկայումս ամրագրված են երկուսը.

1. դատական ծախսերի գծով որոշ արտոնություններ⁶,

2. որոշակի դեպքերում անվճար իրավաբանական օգնություն ստանալու քաղաքացիների իրավունքը:

Անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է հիմնականում քրեական գործերով: Քաղաքացիական գործերով անվճար իրավաբա-

⁶ ՀՀ 1998թ. Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70 հոդվ, ինչպես նաեւ՝ ՀՀ 1997թ. Պետական տուրքի մասին օրենքի 21-22 հոդվածներ:

նական օգնություն տրամադրվում է Քաղաքացիական օրենսգրքի երկու հոդվածներին վերաբերվող գործերով: Քաղաքացիական գործերը կազմում են դատարաններում քննվող գործերի 90 տոկոսը: Երկրի բնակչության հիմնական մասը տնտեսական դժվարությունների պատճառով չի կարողանում վճարել իրավաբանական ծառայությունների համար:

Անհրաժեշտ է փաստել, որ ՀՀ-ում առկա էին արդարադատության մատչելիության հետ կապված այլ խնդիրներ եւս: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիները եւ մարդու իրավունքների պաշտպանը Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ստացան միայն 2005թ. սահմանադրական փոփոխություններից հետո:

2005թ. Սահմանադրական փոփոխությունների արդյունքում (Սահմանադրության 101 հոդված) «Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել`

... 6) յուրաքանչյուր ոք` կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշպանության բոլոր միջոցները եւ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

Քաղաքացիները սահմանադրական դատարան դիմելու իրավունքը կկարողանան իրականացնել 2006թ. հուլիսի 1-ից (փոփոխված Սահմանադրության հոդված 116):

Սահմանադրական դատարան դիմելու իրավունք են ստացել նաեւ դատարանները` «իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով»:

4. ԵՅ Կ՞՞ ՆՅ Ի 3 Ա՛»՞՞ ԱաՕա՛ի Կ՛»՞՞ »՞՞»՞՞ ԱՅ ՞՞ Ի 3 ԿՕ 3 1/2 Ի Ի»ՕՅ Բ3 ՞՞

Ը ստ ԶԶ փոփոխված Սահմանադրության՝ «Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք» (հոդված 29):

Մինչ 2004թ. ապրիլ ընդունված չէր երթերի եւ ցույցերի մասին օրենք: Չկային հանրահավաքների, երթերի, ցույցերի անցկացմանը վերաբերող կարգեր, եւ ուղղակիորեն գործում էր հանրահավաքներ անցկացնելու ազատությանը վերաբերող սահմանադրական նորմը: Սակայն Երեւանի քաղաքապետարանը, հիմնվելով ԶԶ նախագահի՝ «Երեւան քաղաքում պետական կառավարման մասին» 1997թ. հրամանագրի վրա (որը այդպիսի լիազորություն չի վերապահում) արտոնում կան չէր թույլատրում հանրահավաքների անցկացումը:

2004թ. ընթացքում ընդդիմության նախաձեռնած 6 հանրահավաքից 5-ի դիմումները մերժվել են: Մերժման հիմնավորումներում, մասնավորապես, Երեւանի քաղաքապետի 01/03-3331h գրությամբ ձեւակերպված է.

«... հաշվի առնելով Երեւան ֆաղափի «Կենտրոն» թաղային համայնքի ավագանու 01.04.04 հրավիրված արտահերթ նիստում Երեւանի ֆաղափադեսին ուղղված ուղերձը Կենտրոն համայնքի տարածքում հանրահավաքների, երթերի եւ ցույցերի արտոնման հարցում հնարավորինս ձեռնդրահ մնալու մասին, ս/թ մայիսի 21-ին ժամը 19.00-ին Մատենադարանի տարածքում հանրահավաքի անցկացումը զսնում ենք ոչ նդատակահարմար...»:

2003-2004թ.թ. ընդդիմության անցկացրած ցույցերին ու հանրահավաքներին հետեւում էին զանգվածային ձերբակալությունները: Հանրահավաքների մասնակիցները ձերբակալվում էին չարտոնված հանրահավաքի, երթի, ցույցի մասնակցելու, հանրահավաքների սահմանված կարգը խախտելու համար եւ առանց փաստաբանի ներկայության, փակ դռների հետեւում, ընթացակարգային խախտումներով ընթացող դատավարություններով ենթարկվում վարչական պատասխանատվության:

Ազատ տեղաշարժի իրավունքը եւս Սահմանադրությամբ երաշխավորված է: Սակայն հանրահավաքների օրերին փակվում էին մարզեր-Երեւան ճանապարհները, խափանվում էր երթելեկությունը, մարդիկ չէին կարողանում հասնել իրենց աշխատավայր կամ վերադառնալ տուն: Քաղաքացիներին Երեւան՝ հանրահավաքի տեղափոխած վարորդները ահաբեկվում էին:

Մասնավորապես՝ ոստիկանություն բերման են ենթարկվել Նվեր Բարսեղյանը (Վարդենիսից, հանել են նրա ավտոբուսի համարանիշները), Կարեն Բայբուրդյանը (Մալաթիա-Սեբասիա համայնքի բնակիչ): Մասիսի բնակիչ, վարորդ Վազգեն Աբրահամյանը ենթարկվել է վարչական տույժի, Նոր Հաճընից մի վարորդի մեքենան տարվել է տուգանային հրադարակ, իսկ իմր ենթարկվել է վարչական տույժի:

Երբ քաղաքացիները փորձում էին իրականացնել ազատ տեղաշարժվելու իրենց իրավունքը, հրահրվում էին անկարգություններ, այնուհետև՝ հարուցվում քրեական գործեր:

Յերթական անգամ Արմավիրի մայրուղին փակելու ժամանակ զանգվածային անկարգություններ կատարելու դատարանով ֆրեական գործ հարուցվեց Կառլոս Չարությունյանի, Վաչագան Չարությունյանի, Ազատ Գրիգորյանի, Նահադեա Թամանյանի (Էջմիածնի բնակիչ) նկատմամբ եւ նրանց ներկայացվեց ֆրեական մեղադրանք՝ զանգվածային անկարգություններ ռակմամբ (ՀՀ ՔՕ հ.206.3):

Այս ամենի մասին բազմաթիվ փաստեր կան ինչպես հայաստանյան մամուլում, այնպես էլ Չայաստանի եւ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների զեկույցներում ու հայտարարություններում⁷:

ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը, ի պատասխան Սահմանադրական դատարանի պնդման⁸, ըստ որի հանրահավաքների մասնակիցների նկատմամբ վարչական կալանքների կիրառումը չի համապատասխանում իրավական պետության չափանիշներին, 2004թ. ապրիլի 25-ին պարզաբանել է⁹, որ երթերի, ցույցերի կազմակերպման ու անցկացման կարգը սահմանվել է «ԽՍՀՄ-ում ժողովների, միտինգների, փողոցային երթերի եւ ցույցերի կազմակերպման ու անցկացման կարգի մասին» 28.10.88թ. օրենքով:

Նշենք, որ նման օրենք չկա: 1988թ. հոկտեմբերի 28-ին ընդունվել է «ԽՍՀՄ-ում ժողովների, միտինգների, փողոցային երթերի եւ ցույցերի կազմակերպման ու անցկացման կարգի մասին» ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը¹⁰: ՀՀ Գերագույն խորհուրդը 1991թ. սեպտեմբերի 25-ին հատուկ օրենք ընդունեց օրենսդրական որոշակտեր մինչեւ նոր օրենսգրքի ընդունումը ուժի մեջ թողնելու մասին: Այդ ցանկում բացակայում է վերոհիշյալ նորմատիվ ակտը: Բացի այդ, ԱՊՀ ստեղծման պայմանագրի (8 դեկտեմբերի, 1991 թ.) 11-րդ հոդվածի համաձայն, անդամ պետությունների տարածքում չեն գործում երրորդ պետությունների, ներառյալ ԽՍՀՄ-ի նորմերը:

ԵւսԽՎ-ն արտահերթ կարգով քննարկեց ՀՀ քաղաքական իրավիճակը եւ 2004թ. ապրիլի 28-ին ընդունած իր 1374 բանաձեւում (փաստաթուղթ 10163) պարտավորեցրեց Չայաստանին ձեռնարկել բոլոր հնարավոր քայլերը՝ օրենսդրորեն եւ գործնականում խաղաղ հանրահավաքների իրավունքը ապահովելու եւ չարդարացված սահմանափակումներից զերծ մնալու համար:¹¹

2004 ապրիլի 27-ին ընդունվեց եւ մայիսի 22-ին ուժի մեջ մտավ «ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» օրենքը, որի վերաբերյալ ԵւսԽՎ տվել էր «խիստ սահմանափակող» բնորոշումը: Դեռ մինչ ընդունումը օրենքի նախագիծն «անընդունելի, եվրոպական չափանիշներին չհամապատասխանող» էին համարել

⁷ ԵւսԽՎ 1361 (2004) բանաձեւ, 27 հունվարի 2004թ., փաստ. 10027, ԵւսԽՎ 1374 (2004) բանաձեւը, 28 ապրիլի 2004թ., փաստ. 10163, ԱՄՆ Պետքարտուղարության խոսնակ Ռ.Բաուչերի հայտարարությունը (ապրիլ 2004թ.), «Դիտորդ» 2003 N 3-4, «Դիտորդ» 2004, N1-2:

⁸ ՀՀ ՍԴ որոշում ՍԴՈ 412, 16 ապրիլի 2003թ.:

⁹ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշում թիվ 51:

¹⁰ Ведомости Верховного совета СССР, 1989, N31, ст.504.

¹¹ Փաստաթուղթ 10163, կետ 9/բ.:

ԵԱՅԿ-Ը¹², Վենետիկի հանձնաժողովի փորձագետները (CDL(2004)022), իսկ ԵԽԽՎ-ն հորդորել էր այն «համապատասխանեցնել ԵԽ սկզբունքներին եւ չափանիշներին» (ԵԽԽՎ 1361 բանաձեւ, կետ 15, 27 հունվարի 2004թ., փաստաթուղթ 10027):

Այդ օրենքը հայեցակարգային առումով ոչ թե հանրահավաքների ազատության իրավունքի երաշխիքները ամրապնդող, այլ պետական լիազոր մարմինների իրավասությունները սահմանող եւ հրապարակային միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը սահմանափակող բնույթ ուներ.

1. Օրենքի 2-րդ, 10-րդ, 12-րդ հոդվածների համաձայն՝ զանգվածային միջոցառումներ, որպիսիք համարվում են ընդամենը 100 մասնակից ունեցողները, կարող են անցկացվել միայն լիազոր մարմնին առնվազն 3 օր առաջ գրավոր իրազեկելուց հետո: Դա անհնար է դարձնում 100-ից ավելի մասնակիցներով բողոքի ակցիա կազմակերպելը որեւէ հրատապ, անակնկալ ծագած հարցի կապակցությամբ:

2. Միջազգային չափորոշիչները, ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածը (մինչ 2005թ. սահմանադրական փոփոխությունները՝ 48-րդ հոդվածը) սպառնիչ կերպով սահմանել են, թե ինչ հիմքերով կարող են սահմանափակվել հիմնական իրավունքներն ու ազատությունները: Մինչդեռ, օրենքը սահմանում է հանրահավաքներն արգելելու նոր, լայնածավալ հիմքեր: Համաձայն օրենքի 13 հոդվածի՝ զանգվածային հրապարակային միջոցառում անցկացնելու մասին իրազեկումը քննարկող մարմինները, Երեւանում քաղաքապետը, մարզերում՝ համայնքի ղեկավարը, կարող են *արգելել* զանգվածային հրապարակային միջոցառման անցկացումը.

- եթե «միեւնույն ժամանակ միեւնույն վայրում մեկ այլ միջոցառում է նախատեսվում, որը բացառում է առաջինի անցկացումը»: Միջոցառումների միաժամանակյա անցկացման հնարավորությունների գնահատականը փաստորեն թողնված է լիազոր մարմնի կամքին, առանց հստակեցնելու «բացառել» հասկացությունը,

- եթե «առկա են հավաստի տվյալներ, որ միջոցառման անցկացումը իրական վտանգ է սպառնում անձանց կյանքին կամ առողջությանը»: Հստակեցված չէ «հավաստի տվյալներ» հասկացությունը կամ վտանգի աստիճանը: Ըստ միջազգային չափանիշների՝ ենթադրությունների վրա հենվելն ընդունելի չի համարվում: Ուրիշներին անհարմարություն պատճառելը չպետք է մեկնաբանել որպես իրավիճակ, որում ցույցը դադարում է խաղաղ լինելուց,

- «ՀՀ կառավարության սահմանած պետական, հատուկ, կարելորագույն նշանակության օբյեկտների, մշակութային ու մարզական համալիրների (դրանցում այլ միջոցառումների անցկացման դեպքում) տարածքներում եւ դրանցից 150 մետրից պակաս հեռավորության վրա»: ՀՀ կառավարության «Հատուկ, կարելորագույն եւ պատմամշակութային նշանակության օբյեկտների պետական պահպանության մասին» որոշմամբ այդպիսի օբյեկտներ են համարվում Երեւանի կենտրոնում տեղակայված վարչական շենքերը, ինչն անհնար է դարձնում Երեւանի կենտրոնում միջոցառումներ անցկացնելը,

¹² ԵԱՅԿ ԺՅՄԻԳ-ի եզրակացությունը «ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերյալ (2004թ. ապրիլի 4): Պատրաստվել է Բիրմինգեմի համալսարանի պրոֆեսոր Ջերեմի ՄաքԲրայդի կողմից:

- «մշակութային ու մարզական համալիրներն են այդ տարածքներից 150 մետրից պակաս հեռավորության վրա այլ միջոցառումների անցկացման դեպքում»: Պարզ չէ, թե ինչպես է իրագելու մը քննարկող մարմինը նախօրոք իմանալու «այլ միջոցառումների մասին», քանի որ տվյալ միջոցառումների անցկացման համար իրագելու պարտադիր չէ: Ինչու՞ է գերապատվությունը տրվում մշակութային եւ մարզական համալիրների տարածքներում եւ այդ տարածքներից 150 մետրից պակաս հեռավորության վրա անցկացվող միջոցառումներին եւ ոչ թե հավաքների ազատության սահմանադրական իրավունքին,

- «անցկացվող երթի պատճառով կկազմալուծվի տվյալ բնակավայրի կամ միջպետական ճանապարհների երթեւեկությունը»: Ըստ միջազգային չափանիշների միայն այն հանգամանքը, որ անցկացվող հանրահավաքը կամ երթը կարող է կազմալուծել ճանապարհային երթեւեկությունը, չպետք է հիմք լինի այդ միջոցառման արգելման կամ դադարեցման համար: Ոստիկանության ուղղակի պարտավորությունն է աշխատանքի արդյունավետ մեթոդներով հաղթահարել խնդիրը: Երթեւեկության ընթացքը խախտելու չափանիշը ԵԱՀԿ-ն գնահատել է «չափազանց աղոտ», իսկ միջոցառման հարկադիր դադարեցման համար առկա միջոցները «ոչ հստակ»:¹³

Վենետիկի հանձնաժողովն իր վաթսուներորդ նստաշրջանում (Վենետիկ, հոկտեմբեր 8-9, 2004թ.) կարծիք է հայտնել (CDL-AD(2004)039), (CDL(2004)42), որ «ժողովներ, հավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը չի համապատասխանում այն ընդհանուր պահանջին, ըստ որի՝ հատկապես հավաքների իրավունքին նվիրված օրենքները պետք է բավարարվեն պետական մարմինների կողմից թույլատրելի միջամտության օրենսդրական հիմքերը սահմանելով: Բացի այդ, օրենքը սահմանում է միջոցառումների սահմանափակումների ոչ պատշաճ թույլատրելի հիմքեր»:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը 2004թ. հոկտեմբերին ընդունած 1405(2004) բանաձեւում կոչ արեց Հայաստանի իշխանություններին «2005թ. մարտից ոչ ուշ փոփոխություններ կատարել օրենքում, որպեսզի այն համապատասխանի Եվրոպայի խորհրդի չափանիշներին՝ գործնականում ապահովելու ժողովների ազատությունը»:

Նախապատրաստվեց «ժողովներ, հավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ: Այն փորձաքննության է ենթարկվել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի¹⁴ եւ Վենետիկի հանձնաժողովի¹⁵ կողմից, որոնց կարծիքները համընկնում են: Այս երկու մարմինները կարծիք են հայտնել, որ «ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առաջարկվող փոփոխությունների նախագծով նախատեսվում են որոշակի դրական տեղաշարժեր, այնուհանդերձ, սահմանափակումները շարունակում են խիստ ծանր մնալ, եւ խորհուրդ է տրվում այս ուղղությամբ լրացուցիչ քայլեր ձեռնարկել»:

¹³ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի եզրակացությունը «ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերյալ (2004թ. ապրիլի 4):

¹⁴ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԳԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ «ԺՈՂՈՎՆԵՐ, ՀԱՆՐԱՀԱՎԱՔՆԵՐ, ԵՐԹԵՐ ԵՎ ԳՈՒՅՑԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՀԱՐԱՎԻՑ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ», Վարչակազմ, 9 փետրվարի, 2005 եզրակացություն. ASSEMBLY – ARM/001/2005 (IU):

¹⁵ Կարծիք No 290 / 2004 CDL(2005)018 ընդունված Վենետիկի հանձնաժողովի լիազուրկ նիստում, Ստրասբուրգ, 8-ը փետրվարի 2005թ.:

Վեներտիկի հանձնաժողովը (Ստրասբուրգ, 8-ը փետրվարի 2005թ. կարծիք N 290/2004 CDL(2005)018) կոչ է արել փոխել սահմանափակումների (օրենքի 9-րդ հոդված) անընդունելի երկար ցուցակը:

2005թ. հոկտեմբերի 3-ին «ժողովներ, հավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքը որոշակի փոփոխություններով ընդունվեց:

Չնայած որոշ բարելավումներին, օրենքի ընդհանուր հայեցակարգը չի փոխվել: Այն շարունակում է կրել ոչ թե հանրահավաքների ազատության երաշխիքներն ամրապնդող, այլ հրապարակային միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը սահմանափակող բնույթ:

Մասնավորապես, եթե մինչ օրենքի փոփոխությունները հրապարակային միջոցառումները որոշ տարածքներում պարտադիր արգելվում էին, ապա կատարված փոփոխություններով՝ պարտադիր արգելքը տարածվում է միայն զորամասերի, պաշտպանական նշանակության օբյեկտների, ՔԿՀ-երի, նախնական կալանքի վայրերի տարածքներից 150 մետրից պակաս հեռավորության վրա: Օրենքում նշված մյուս վայրերում հրապարակային միջոցառումը լիազոր մարմնի կողմից «կարող է արգելվել», այսինքն կարող է նաեւ չարգելվել:

Փոփոխություններով (հ.6) կամուրջների վրա, թունելներում, ստորերկրյա վայրերում, վտանգավոր շինություններում, շինհրապարակներում հրապարակային միջոցառումների անցկացումն արգելելու համար լրացուցիչ նախապայմաններ են դրվել՝ «եթե վտանգված են հանրային անվտանգությունը, մասնակիցների եւ այլոց առողջությունը ...»:

Դրական փոփոխություն է այն, որ եթե ոչ զանգվածային միջոցառումը ինքնաբուխ վերածվել է զանգվածայինի, այն կարող է անցկացվել առանց իրազեկման:

Պահպանվել են զանգվածային հրապարակային միջոցառման արգելման վերը նշված հետեւյալ հիմքերը՝ միեւնույն վայրում միաժամանակյա միջոցառումների անցկացման անհնարինությունը, հավաստի տվյալների առկայությունն այն մասին, որ «միջոցառման անցկացումը իրական վտանգ է սպառնում անձաց կյանքին կամ առողջությանը»:

Եթե նախկինում արգելվում էր պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքային տարածքներում եւ ՀՀ կառավարության սահմանած պետական, հատուկ, կարեւորագույն նշանակության օբյեկտների¹⁶ տարածքներում եւ դրանցից 150 մետրից պակաս հեռավորության վրա հրապարակային զանգվածային միջոցառումների անցկացումը, ապա փոփոխություններով սահմանվել է այն վայրերի ցանկը, որտեղ կարող է արգելվել հրապարակային զանգվածային միջոցառման անցկացումը: Այդ ցանկում պետական մարմիններից ընդգրկված է միայն ՀՀ նախագահի նստավայրը, որից այնքան հեռավորության վրա կարող է արգելվել զանգվածային միջոցառման անցկացումը, որքան ոստիկանությունն անհրաժեշտ կհամարի անվտանգության նկատառումներով:

Եթե մինչ օրենքի փոփոխությունները մշակութային, մարզական համալիրների (դրանցում այլ միջոցառումների անցկացման դեպքում) տա-

¹⁶ ՀՀ կառավարության «Հատուկ, կարեւորագույն եւ պատմամշակութային նշանակության օբյեկտների պետական պահպանության մասին» որոշմամբ այդպիսի օբյեկտներ են համարվում Երեւանի կենտրոնում տեղակայված վարչական շենքերը:

րածքներուն եւ դրանցից 150 մետրից պակաս հեռավորության վրա, հրապարակային զանգվածային միջոցառման անցկացումն արգելվում էր, ապա այժմ դրանց անցկացումը կարող է միայն սահմանափակվել եւ այն էլ բացառապէս մշակութային, մարզական համալիրների տարածքում: Սակայն «սահմանափակվել» տերմինը օրենքում հստակեցված չէ եւ սահմանափակման ձեւը թողնված է լիազոր մարմնի հայեցողությանը:

Հանվել են զանգվածային հրապարակային միջոցառման արգելման հետեւյալ հիմքերը. «եթէ անցկացվող երթի պատճառով կկազմալուծվի տվյալ բնակավայրի կամ միջպետական ճանապարհների երթելակայանը» եւ «եթէ նշված վայրի անմիջական մոտակայքում նույն օրը, նույն ժամին տեղի է ունենալու կազմակերպիչի ընդդիմադիր անձանց կողմից անցկացվող զանգվածային հրապարակային մեկ ուրիշ միջոցառում, եւ առկա են հավաստի տվյալներ ընդդիմադիր ուժերի ընդհարման իրական վտանգի վերաբերյալ»:

2004թ. դեկտեմբերի 24-ին փոփոխություններ են կատարվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ եւ ՀՀ Քրեական օրենսգրքում, այնուհետեւ 2005թ. հոկտեմբերի 4-ին՝ կրկին ՀՀ Քրեական օրենսգրքում: Արդյունքում *frեսկանացվել է* օրենքով սահմանված կարգի խախտմամբ հրապարակային միջոցառում կազմակերպելը, անցկացնելը եւ օրենքով սահմանված կարգի խախտմամբ հրապարակային միջոցառումը դադարեցնելու վերաբերյալ որոշման պահանջներին չենթարկվելու ուղղված կոչեր անելը:¹⁷ Իսկ ՀՀ Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի գործողությունը, որով քրեական պատասխանատվություն էր սահմանվում հասարակական կարգը խախտող խմբային այնպիսի գործողություններ կազմակերպելու կամ դրանց ակտիվորեն մասնակցելու համար, որոնք «առաջացրել են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, կապի կազմակերպությունների կամ տրանսպորտի աշխատանքի խանգարում, եւ զուգորդված են իշխանության ներկայացուցիչների օրինական պահանջներին բացահայտորեն չինազանդվելու հետ, եթէ բացակայում են ավելի ծանր հանցագործության հատկանիշներ» դադարեցվել է:

Այս նորմերը եւս արժանացել են ԵԱՀԿ եւ Վեներտիկի հանձնաժողովի քննադատությանը: Վերջիններս կասկածելի են համարել այս դրույթների համատեղելիությունը օրինականության սկզբունքի հետ, որը քրեական իրավունքում հիմնարար է եւ արգելում է օրենքի կամայական կիրառումը: Նրանք քրեական պատասխանատվության սահմանումը հնարավոր են համարել միայն այն դեպքում, երբ ցույցին մասնակցող անձը բռնություն է գործադրում կամ ֆիզիկական վնաս է պատճառում: Իր CDL(2005)018 կարծիքում Վեներտիկի հանձնաժողովը նշել է, որ դա ՀՀ Քրեական օրենսգրքի եւ Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի վերոնշյալ փոփոխությունների հետ միասին հիմք կհանդիսանա, որ «արգելվեն այն ցույցերի կազմակերպումն ու անցկացումը, որոնք պետք է փաստացիորեն թուլատրվեն»:

Օրենքի գործողության մեջ մտնելուց հետո (22.05.04թ.) Երեւանի քաղաքապետը կարող է միայն ի գիտություն ընդունել հանրահավաքի անցկացումը կամ արգելել այն օրենքով սահմանված հիմքերով: Այս դրույթը քաղաքապետարանի կողմից յուրահատուկ մեկնաբանություն է ստացել:

¹⁷ ՀՀ Քրեական օրենսգրքի 225-րդ հոդված:

Այսպես՝ քաղաքապետարանի «Ձանգվածային հրապարակային միջոցառման անցկացումն արգելելու մասին» 01.06.2004-ի 05/1 որոշման մեջ նշված է. «Քննարկելով քաղաքացիներ Կորյուն Առաքելյանի, Ալբերտ Բազեյանի, Վիկտոր Դալլաքյանի եւ այլոց 31.05.2004թ. իրազեկումը եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ դատախազական մարմիններում հարուցված են քրեական գործեր, կապված նախկինում անցկացված հանրահավաքների հետ, ինչպես նաեւ ղեկավարվելով «ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով եւ Երեւանի քաղաքապետի 17.05.2004թ հ.856-Ա որոշմամբ. Արգելել քաղաքացիներ Կորյուն Առաքելյանին, Ալբերտ Բազեյանին, Վիկտոր Դալլաքյանին եւ այլոց ս/թ հունիսի 4-ին ժամը 18.00-ից մինչեւ 21.00-ն Մատենադարանին հարակից տարածքում անցկացնել հանրահավաք»:

Չի արգելվել միայն 2004թ. հունիսի 16-ի հանրահավաքը (հունիսի 11-15-ը Երեւանում էր ԵԽ մոնիտորինգի հանձնաժողովի համազեկուցողը):

2005 թվականին, մինչ սահմանադրական հանրաքվեն, ի տարբերություն 2004-ի, հանրահավաքներ եւ երթեր քիչ են անցկացվել: Սակայն անցկացվածները զուգորդվել են իշխանությունների կողմից կամայական գործողություններով, ոստիկանական հետապնդումներով:

Մի շարք հասարակական կազմակերպություններ դիմել էին ֆաղափառության իրազեկելով ի տաճառանություն «Ա1+» հեռուստաալիսի 2005 թ. ադրիլի 2-ին երթ անցկացնելու մասին: Քաղաքապետարանն արգելել է երթի անցակցումը: Այնուամենայնիվ, երթը եւ հանրահավաքը կայացան, սակայն ղեկավարողների աշխատակիցները ժողովարանին հրապարակաբար «Ա1+»-ին ղեկավարող մեքենան, որի մեջ ղեկավարներ էին, բարձրախոսներ եւ այլ սեխնիկա:

2005 թվականի ադրիլի 20-ին Սեւան ֆաղափում «Նոր ժամանակներ» կուսակցության ղեկավար Արամ Կարապետյանի հետ սեւանցիների հանդիպումն ավարտվեց միջադեպով: Հանրահավաքը սեղի իշխանությունների կողմից արժանվել էր, սակայն միջոցառումից 20 րոպե առաջ մշակույթի ղեկավարը, որտեղ ղեկավար էր սեղի ունենար հավաքը, հոսանքազրկվեց: Հանրահավաքի ժամանակ, որը ստիպված անց է կացվել մշակույթի ղեկավարի մոտ, ոստիկանները եւ ֆաղափացիական հազուսներով այլ մարդիկ ֆաճուկ են սկսել հանրահավաքի մասնակիցների հետ: Քաճուկը սեւել է 15-20 րոպե, որից հետո, ականատեսների վկայությամբ, հանրահավաքը խանգարողներից մեկը կրակել է մասնակիցների վրա: Ոստիկանական ղեկավարին վնասվածքով հիվանդանոց է տեղափոխվել «Նոր ժամանակներ» կուսակցության երիտասարդական թեւի անդամ, ԵՊՀ ուսանող Գարեգին Պետրոսյանը:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների հետ կապված զանգվածային միջոցառումների ժամանակ (մասնավորապես՝ Հրազդանի ֆաղափացի ընտրությունների հետ կապված Հրազդանի վարչական շենքի դիմաց 2005թ. հոկտեմբերի 9-ին կազմակերպված հանրահավաքը) կիրառվել է էլեկտրոնային, ծեծի եւ ենթարկվել հանրահավաքի մասնակիցները:

«Հանրապետություն» կուսակցությանը՝ իր համագումարին նախորդող մարզային հանդիպումներ անցկացնելու համար շենքեր չեն սրանադրվել:

2005թ. նոյեմբերի 2-ին Թալիսում ՀԺԿ նախագահ Սեփան Դեմիրճյանի հետ բնակիչների հանդիպման համար սրանադրվել է փոքր դահլիճ, որի դռները հետագայում ոստիկանները փակել են՝ սեղեր չլինելու ղեկավարողներին:

բանությամբ: Հավաքը սեղափոխվել է դահլիճից դուրս: Ուսիկանության սարածային բաժնի ղեկը, հիմնավորելով, որ «դրսում հանրահավաք անելու թույլատրություն չկա», լուսանկարներ է վերադառնալ դահլիճ:

«Ժառանգություն» կուսակցությունն իրազեկել է Երևանի ֆաղափաթե-սարանին 2005թ. նոյեմբերի 25-ին Ազատության հրապարակում ժամը 15.00-ին «Քաղաքացիական ժողով» անցկացնելու մասին: Քաղաքաթե-սարանն արգելել է միջոցառումը՝ լուսանկարներով, որ նույն վայրում նույն ժամին սկսվելու է համերգ՝ ղոռ աստղերի մասնակցությամբ:

2005 թ. նոյեմբերի 23-ին Երևանի ֆաղափաթե-սարանն ի գիտություն է ընդունել «Հանրապետություն» կուսակցության՝ նոյեմբերի 27-ին, 28-ին, 29-ին Երևանում, Սասնադարանի մերձակա հրապարակում հանրահա-վաք անցկացնելու իրազեկումը: Սակայն հետ Երևանի ֆաղափաթե-սարանը նոյեմբերի 28-ի ուժ երեկոյան չեղյալ է հայտարարել նոյեմբերի 29-ի հանրահավաքի վերաբերյալ իրազեկումը «ի գիտություն» ընդունելու մա-սին իր որոշումը: Ըստ ֆաղափաթե-սարանի կազմակերպչական բաժնի ղե-կի սեղակալ Իրինա Գրիգորյանի, նման որոշման լուսանկարներ ընդդիմության նոյեմբերի 27-ի հայտարարությունն է այն մասին, որ մտադիր չեն իշխանու-թյունների դեմ ղոռ վարել իրավական դաժնում: Քաղաքաթե-սարանի որոշման մեջ հղում է արված «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույց-եր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին, որը, սակայն, թույլ-ս-վությունը չեղյալ համարելու կարգ չի նախատեսում: Ըստ այդ հոդվածի՝ իրազեկման ֆնանսական արդյունքում զանգվածային հրապարակային մի-ջոցառումը կարող է արգելվել, եթե առկա են հավաստի սվյալներ, որ միջո-ցառման անցկացումն իրական վստահ է սղառնում անձաց կյանքին կամ առողջությանը:

Սահմանադրական փոխոխությունների նոյեմբերի 27-ի հանրավեկի դեմ կազմակերպված բողոքի ակցիաների մասնակիցներին ուսիկանները կր-կին սկսել են ծեծել, բռնությամբ նսեցնելով մեքենաները՝ սարել անհայտ ուղղությամբ, սեղափոխել ուսիկանական բաժանմունքներ, չեն թույլատ-րել հանդիղում փաստաբանների հետ, մի ֆանի ժամ ղաիելուց հետո՝ կազ-մելով արձանագրություններ «չարտնված ցույցին մասնակցելու մասին», ազատ են արձակել, կանգնեցրել են ընդդիմության կազմակերպած ավտո-երթին մասնակցող մեքենաները, ծեծել վարորդներին, մեքենաները սարել տուգանային հրապարակ:

2005 թ. դեկտեմբերի 2-ին ընդդիմության հանրահավաք ֆաղափաթե-սարանի կողմից արգելվել է՝ լուսանկարներով, որ այդ օրը Երևա-նում է լինելու Ռուսաստանի Դաժնության վարչաղես Սիխայիլ Ֆրաղկովը:

Ընդդիմության կազմակերպած այլ միջոցառումների օրերին եւս խաղիս-վել է ֆաղաքացիների ազատ սեղաքարժի իրավունքը: 2005 թ. նոյեմբերի 4-ին Կոսայի մարզի Ալափարս, Սղակ եւ Արզաքան գյուղերի խաղմերուկնե-րում սեղի ուսիկանությունը կանգնեցնում եւ ետ էր ուղարկում Չարենցա-վան մտնող մեքենաները: 2005 թ. նոյեմբերի 11-ին Չոկունի գյուղում ընդդի-մության հետ հարակից բնակավայրերից հանդիղման եկող մեքենաներից ուսիկանությունն իջեցրել է մարդկանց, մեքենաները սարել տուգանային հրապարակ: 2005 թ. նոյեմբերի 1-ին փակվել են գյուղերից դեղի թալին բերող ճանաղարհները:

Հանրահավաքների եւ ազատ տեղաղարժի իրավունքի իրականա-ցումն ապահովելու համար անհրաժեղտ են՝

1. «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» օրենքի փոփոխություններ՝ միջազգային չափարոշիչներին համապատասխան, մասնավորապես.

- առաջին հերթին հայեցակարգային առումով փոփոխել օրենքը՝ այն դարձնելով հանրահավաքների ազատության իրավունքի երաշխիքներն ամրապնդող օրենք,

- վերացնել հրապարակային միջոցառման կազմակերպման եւ անցկացման սահմանափակումները, դրանք նախատեսելով միայն հատուկ դեպքերում (արտակարգ իրավիճակ եւ ռազմական դրություն),

- պետական լիազոր մարմինների օրենքի կամայական մեկնաբանությունները բացառելու համար հանրահավաքներին վերաբերող բոլոր կարգերը սահմանել օրենքով:

2. Բացառել հանրահավաքների կազմակերպիչների եւ մասնակիցների նկատմամբ վարչական կամ քրեական պատասխանատվությունը:

3. ՀՀ նախագահի նստավայրի մոտ հանրահավաքներ, երթեր, ցույցեր անցկացնելու արգելքը հանել:

4. Պատասխանատվության ենթարկել քաղաքացիների ազատ տեղաշարժին խոչընդոտած ոստիկաններին:

5. Է՝ ԳՅԻ՝Յ Կ. ԳՃԿ՝Պ՝Յ ԿՄՅ ՊԻ՝Յ ԸԿԿ՝Ի »Պ՝Մ՝ՆԱՃԿՆ

Հայաստանի Հանրապետությունը 1991թ. անկախացումից հետո խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի կանխարգելման ուղղությամբ կատարել է հետեւյալ քայլերը. միացել է ՄԱԿ-ի Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին (1991թ.), խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիային (1993թ.), Սարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային (2002թ.), խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիային եւ դրա թիվ 1 եւ 2 արձանագրություններին (2002թ.)՝ այդպիսով հաստատելով խոշտանգումները եւ մարդու արժանապատվության նսեմացումը մերժելու իր պատրաստակամությունն ու դրանք կանխելու եւ արգելելու, դրանց դեմ պայքար մղելու որոշակի պարտավորություններ է ստանձնել: ՀՀ փոփոխված Սահմանադրության 17-րդ հոդվածը (մինչ 2005թ. սահմանադրական փոփոխությունները՝ 19-րդ հոդվածը) արգելում է անձին խոշտանգումների, դաժան կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի եւ պատժի ենթարկելը, իսկ 22 հոդվածով (մինչ 2005թ. սահմանադրական փոփոխությունները՝ 42-րդ հոդվածով)՝ «Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը»:

Եվրոպայի խորհրդին անդամակցության կապակցությամբ Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման ժամանակացույցում հստակ նշված է. «Անհապաղ (այսինքն՝ 2001թ. հունվարի 25-ից անմիջապես հետո-խմբ.) ստեղծել Եվրոպայի խորհրդի նորմերին համապատասխան շարունակական վերահսկողության ընթացակարգ՝ ձերբակալության դեպքում, նախնական կալանքի վայրերում, բանտերում եւ բանակում վատ (անմարդկային եւ դաժան) վերաբերմունքի վերաբերյալ բողոքների վերահսկման համար եւ ապահովել, որպեսզի նման վերաբերմունքի համար պատասխանատուները պատժվեն գործող օրենքի համաձայն»: Սակայն այդ պարտավորությունը դեռեւս կատարված չէ:

Կալանավայրերի համակարգը, ներառյալ նախաքննչական մեկուսարանները, ներքին գործերի նախարարության եւ ազգային անվտանգության նախարարության ենթակայությունից արդարադատության նախարարության ենթակայությանը փոխանցելու գործընթացը, որը եւս անդամակցության պարտավորությունների շարքում էր, ավարտվեց 2003թ. հունվարին: Ընդունվեցին քրեակատարողական համակարգի բարելավման համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտեր («Ձերբակալվածներին եւ կալանավորվածներին պահելու մասին» ՀՀ օրենքը (6.02.02թ.), «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքը (15.12.03թ.), «Քրեակատարողական օրենսգիրքը» (24.12.04թ.): Ըստ

վերջինի, «Դատավճռի հիման վրա ազատությունից զրկված ոչ մի անձ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ոչ մի հանգամանք չի կարող հիմք ծառայել խոշտանգումները կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժն արդարացնելու համար» (հոդված 6):

2004 թվականին Եվրոպայի խորհրդի կտտանքների կանխարգելման կոմիտեն հրապարակել է Հայաստանին վերաբերող առաջին զեկույցը, որը հիմնված է 2002 թվականին Հայաստան կատարած այցելության արդյունքների վրա:

Ձեկույցում նշվում է, որ այդ այցի ընթացքում կոմիտեի ներկայացուցիչները ձեռք են բերել բազմաթիվ արժանահավատ տեղեկություններ, որ ձերբակալված անձինք մեկուսարաններում արժանանում են ոչ պատշաճ վերաբերմունքի: Ուտքերով, բռունցքներով եւ պինդ առարկաներով ծեծն ու այլ խոշտանգումներ իրականացվում են ոստիկանական հարցաքննությունների ժամանակ (ոստիկանության օպերատիվ աշխատակիցների կողմից)՝ խոստովանություն եւ այլ տեղեկություններ կորզելու համար: Որոշ դեպքերում այդ անձանց բժշկական ստուգումների արձանագրությունները՝ նախնական կալանքի վայր նրանց ժամանման պահին, պարունակում էին արված հայտարարություններին համապատասխանող վնասվածքներ ցույց տվող գրանցումներ: Ձեկույցում նշվում է, որ խոշտանգումների վերաբերյալ տեղեկություններ են ստացվել նաեւ ՀՀ նախագահին առընթեր գործող (մինչ 2004թ.) Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից:

«Ձերբակալվածներին եւ կալանավորվածներին պահելու մասին» օրենքի 47-րդ հոդվածով սահմանվում է արդարադատության նախարարության (այսուհետ՝ ԱՆ) կողմից հասարակական դիտորդական խմբի ձեւավորում: 2004թ. մայիսի 14-ին ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերի՝ 11 անձից կազմված հասարակական դիտորդների խմբի անդամները վկայագրեր ստացան: Խմբում ընդգրկվել են մի շարք հասարակական, այդ թվում՝ իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչներ, խմբի կազմում է նաեւ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ներկայացուցիչը: Խումբը ստեղծվել է ԱՆ նախարարի հրամանով՝ «Ձերբակալվածներին եւ կալանավորվածներին պահելու մասին» ՀՀ օրենքի, «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգի» դրույթների համաձայն: Մասնավորապես, ըստ փաստաթղթերի, խումբը՝ կալանավորվածներին պահելու վայրերում գտնվող անձանց իրավունքների եւ ազատությունների պահպանման խնդիրներով զբաղվող վերահսկող մարմին է: Կարգի համաձայն՝ խմբի անդամներն իրավասու են անարգել այցելել քրեակատարողական հիմնարկներ, ծանոթանալ տարաբնույթ փաստաթղթերի բովանդակությանը (նաեւ, կալանավորված անձի համաձայնությամբ, նրա անձնական գործերին եւ գրագրությանը, բացի գաղտնի փաստաթղթերից), հիմնարկի իրավիճակին, ինչպես նաեւ՝ հանդիպել կալանավորված անձանց: Խմբում անդամներն ընդգրկվում են 3 տարի ժամկետով:

Խումբը, ինչպես նաեւ մի շարք հասարակական կազմակերպություններ, մոնիտորինգներ անցկացրեցին քրեակատարողական հիմնարկներ

րուն: Արձանագրվեց, որ տարբեր միջազգային կազմակերպությունների աջակցությամբ կատարվել են քրեակատարողական հիմնարկների բարեփոխումներ եւ վերանորոգման աշխատանքներ: «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում, Կարմիր խաչի ֆինանսական աջակցությամբ, կառուցվել է տուբերկուլյոզով հիվանդների առանձին մասնաշենք, 2004թ. վերակառուցվել է վիրահատարանը, բուժական եւ թերապեւտիկ բաժանմունքը: Վերակառուցվել է «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկը, որի պայմանները համապատասխանում են միջազգային չափանիշներին: «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում վերանորոգվել են մի շարք խցեր, եւ նախկին գետնափոր պատժախցերն այլեւս չեն գործածվում: Որպես պահման անմարդկային պայմանների օրինակ կարելի է նշել Վանաձորի քրեակատարողական մեկուսարանը, որտեղ խցերի խոնավությունը սահմանվածից մի քանի անգամ բարձր է, խոնավությունից պատերը քայքայված են: ՀՀ կառավարության որոշմամբ Վանաձորի մեկուսարանը պետք է տեղափոխվեր այլ շենք, սակայն, ինչպես բացատրում են մեկուսարանի աշխատակիցները, ֆինանսական միջոցների բացակայության պատճառով այդ աշխատանքները չեն կատարվում: 2005թ. պետական բյուջեից միջոցներ են հատկացվել Վանաձորի քրեակատարողական մեկուսարանի նոր շենքի կառուցման համար (այժմ շենքի կառուցումը ընթացքի մեջ է):

Քրեակատարողական հիմնարկներում հիմնականում անբավարար է բուժսպասարկումը: Հիմնարկները հագեցած չեն բժշկական սարքավորումներով եւ դեղորայքով, կալանավորներին հաճախ տրվում է ժամկետանց դեղորայք: Պատշաճ մակարդակի վրա չէ կալանավորների բժշկական հետազոտումը եւ վնասվածքների արձանագրումը: Անբավարար է հոգեբանական ծառայությունը: Գորիսի քրեակատարողական հիմնարկում ընդհանրապես բացակայում է հոգեբանական ծառայությունը: Այստեղ 2004 թվականին գրանցվել է ինքնասպանության երկու դեպք: Անբավարար է դատապարտյալներին սնունդով ապահովումը, հարցումները ցույց են տվել, որ հնարավորություն ունեցողներն օգտվում են հարազատների բերած սննդից: Հաճախ կալանավորները զրկված են մտով կերակուրից: Հարցումները ցույց են տալիս, որ մեկուսարաններում այլեւս խոշտանգումներ չեն կատարվում, սակայն կալանավորվածների շուրջ 60 տոկոսը ասել է, որ իրենց ծեծել են ձերբակալման ժամանակ կամ ոստիկանական բաժանմունքներում: Սակայն մեկուսարանների ընդունման մատյաններում վնասվածքները կամ չեն արձանագրվում, կամ արձանագրվում են մակերեսորեն: Կալանավորների տեղեկատվության իրավունքը սահմանափակ է, կալանավայրերը չեն ստանում թերթեր ու ամսագրեր, եւ տեղեկատվության հիմնական աղբյուրը ոչ բոլոր խցերում առկա հեռուստացույցն է, որը տրամադրում են բանտարկյալների հարազատները: Կալանավայրերի գրադարաններն աղքատիկ են, հնացած գրքերով, տարիներ ի վեր չեն համալրվում նորերով:

Հայաստանում խոշտանգումները հիմնականում կիրառվում են ոչ այնքան կասկածյալին կամ մեղադրյալին պատժելու, որքան ինքնախոստովանական ցուցմունքներ կորզելու նպատակով: Հետագայում դատարաններն էլ մեծամասամբ հենվում են մեղադրանք առաջադրող մարմնի ներկայացրած ապացույցների վրա, ուր դարձյալ հիմնական կետը մեղադրյալների ինքնախոստովանական ցուցմունքներն են: Դիտարկում-

ները ցույց են տալիս, որ դատավարությունների ընթացքում մեղադրյալների մոտ 80 տոկոսը հրաժարվում է նախաքննության ժամանակ տված իր ցուցմունքներից՝ պատճառաբանելով, որ դրանք տվել է խոշտանգումների եւ բռնությունների ազդեցությամբ: Սակայն մեղադրյալների այդ հայտարարությունները մնում են անհետեւանք, եւ խոշտանգումներ ու բռնություններ գործադրողները քրեական պատասխանատվության չեն ենթարկվում: Նախաքննական մարմիններում գործադրված, նույնիսկ մահվան ելքով, բռնարարքների դեպքերում միշտ չէ, որ քրեական գործեր են հարուցվում: Հարուցված գործերով էլ հազվադեպ է, որ հանցագործության մեղավորները համապատասխան պատիժ են ստանում: Գործերի մի մասը կարճվում է հանցակազմի բացակայության կամ հանցավորների չբացահայտվելու հիմնավորմամբ, լավագույն դեպքում՝ բռնարարները մեղադրվում են իշխանազանցության կամ պաշտոնի չարաշահման մեջ:

Լոռու մարզի Սարատվկա գյուղի բնակիչ, 23-ամյա նախադատ Արմեն Պողոսյանը 1999-ին սղանության մեղադրանքով դատադատվել էր 15 տարվա ազատազրկման եւ իրական հանցագործի փոխարեն 5 տարի 6 ամիս անցկացրել բանտում: Դատարանը հենվել էր միայն ինֆորմացիոնական ցուցմունքների վրա, որոնք կորզվել էին դաժան խոցանգումների միջոցով: Տարիներ անց իրական հանցագործը, նմանափոխ մեկ այլ հանցանքի համար (անչափահասի բռնաբարություն եւ սղանություն) բռնվելով, խոստովանեց ոչ միայն վերջին հանցանքը, այլեւ 99-ին կատարածը: Դրանից հետո ՀՀ վճռաբեկ դատարանը 2004-ի ապրիլի 2-ին արդարացրեց Ա. Պողոսյանին, նրան ընդունեց գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը (Արմենի դատադատվելու ժամանակ նույնպես նա էր գլխավոր դատախազը) եւ նրան նվիրելով «Կոմս Սոնեթ Քրիստ» գիրքը, ազատ արձակեց: Այդ օրերին նաեւ հայտարարեցին, որ ֆրեական գործ է հարուցվել. բոլոր մեղավորները ղեկ է հայտնաբերվեն եւ դատվեն: Դրանից անցել է մոտ երկու տարի, սակայն մեղավորները դեռ չեն դատվել:

Խոշտանգումները որպես քաղաքական հանդուժումների համար պատիժ կիրառվում են Հայաստանի ներքաղաքական լարվածությունների ժամանակ: Այսպես.

2004 թ. ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերը, երբ իրավադատները գրհեցին ՀԺԿ, «Հանրադատություն» եւ «Ազգային միաբանություն» կուսակցությունների գրասենյակների վրա եւ ձեռքակալեցին մեծ թվով մարդկանց, բռնություններ եւ մարդկային արժանադատությունը նվաստացնող վերաբերմունք է ցուցաբերվել նաեւ կանանց նկատմամբ: Հասկալիս դաժան ծեծի են ենթարկվել Անի Կիրակոսյանը, Վարդուհի Շահբազյանը, Գայանե Առուղյանը, մարդկային արժանադատությունը նստնացնող վերաբերմունքի են ենթարկվել Նաիրա Աղաբաբյանը, Գոհար Կուռազյանը, Անի Խաչատրյանը եւ այլ¹⁸:

Արժապատի 45-ամյա բնակիչ, մանկավարժ-դասնաբան, ՀԺԿ վարչության անդամ Գրիգոր Վիրաբյանին 2004 թ. ապրիլի 23-ին ընդդիմության հանրահավաքներին մասնակցելու համար ոստիկանները տարել են Արժապատի ոստիկանատուն, հինգ ժամ ծեծելուց հետո զգել են մեկուսարան,

¹⁸ Նաիրա Մամիկոնյան «Հերթը հասավ կանանց»:-«Առավոտ», 2004, 22 ապրիլի:

իսկ ամրիլի 24-ին շատօգնության մեքենայով օտար էն հիվանդանոց, որտեղ բժիշկները նրան վիրահատել են հեռացնելով ձախ ամորձին: Սակայն ֆրեական գործ հարուցվեց ոչ թե նրան մարմնական ծանր վնասվածքներ հասցրած ոսկեկանների ու ֆնիչների նկատմամբ, թեև նա դիմել է եւ վարչապետին, եւ գլխավոր դատախազին, եւ ՀՀ ու Արարատի մարզի ոսկեկանապետներին, այլ իր նկատմամբ, որ ինֆուրմացիայով հարվածել է ոսկեկանին (մեղադրանք է առաջադրվել ՔՕ 316-րդ հոդվածի 3-րդ մասով՝ «իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն»), որով նրան ստառնում էր 5-10 տարվա ազատազրկում)¹⁹:

2006 թ. մայիսի 26-ին Երեւանի Կենտրոն եւ Նոր-Սարաւո համայնքների առաջին ասյանի դատարանը (դատաւոր՝ Պարգեւ Օհանյան) վճռեց մեկուկես տարով ազատազրկել 24-ամյա ՀԺԿ անդամ Էդգար Առաքելյանին՝ ամրիլի լույս 13-ի գիշերը Բաղրամյան դղիւտայում իրավադատներին եւ ցուցարարներին ընդհարման ժամանակ ոսկեկանի գլխին հանֆային ջրի դատարկ լիւսասիկ շոով հարվածելու համար: Է.Առաքելյանի հայտարարությունն այն մասին, որ նախաֆննության ընթացքում իրավադատները իրեն «ծեծում-ստանում էին մինչեւ ուշաթափության ասիճան եւ ցուցմունք կորզում» դատարանը հաւովի չառավ, հաւովի չառավ նաեւ այն, որ Է.Առաքելյանի մարմնական վնասվածքների ու նվաստացումների հետքերը տեսել եւ արձանագրել են ԵԽ-ի եւ Կարմիր խաչի ներկայացուցիչները:

Քրեակատարողական հիմնարկները արդարադատության նախարարությանը փոխանցելուց եւ հասարակական դիտորդական խմբի ստեղծումից հետո տպավորություն կար, որ քրեակատարողական հիմնարկներում խոշտանգումները նվազել են: Սակայն հասարակական դիտորդների խմբի անդամները 2005թ. մայիս-օգոստոս ամիսներին այցելություններ են կատարել «Նուբարաշեն» ՔԿՀ, որի ընթացքում բացահայտվել են կալանավորված անձանց իրավունքների խախտման փաստեր:

2005 թվականի մայիսի 4-ին ՀՀ ԱՆ ՔԿՎ հասարակական դիտորդական խումբը ստացել է ահազանգ այն մասին, որ, Նուբարաշեն ՔԿՀ-ում տաիվող ցմաի ազատազրկման դատադարսված Մ. Ե.-ն ենթարկվել է բռնության:

Նույն օրը դիտորդական խմբի անդամներ Միֆայել Արամյանը, Արման Դանիելյանը եւ Միֆայել Բաղդասարյանը հանդիմել են «Նուբարաշեն» ՔԿՀ տետին, անվանագության գծով տետի տեղակալին, սոցիալ-հոգեբանական ծառայության տետին, բուժծառայության տետին եւ դատադարսվածին: Հիմնարկի տետը հանդիմման ժամանակ հաստատել է իր որոշմամբ Մ. Ե.-ի նկատմամբ հատուկ միջոց (ռետինե մահակ) կիրառելու փաստը, ֆանի որ վերջինս դիմադրություն է ցույց տվել ՔԿՀ աշխատակցին:

Դատադարսյալի հետ հանդիմման ընթացքում տարզվել է, որ դատադարսյալը եղել է ձեռնաշղթաներով, երբ նրա նկատմամբ գործադրվել է ֆիզիկական ուժ:

Հանդիմումներից տարզվել է նաեւ, որ հիմնարկի սոցիալ-հոգեբանական ծառայության աշխատակիցները թե մինչ միջադետղը, թե դրանից հետո ոչ մի հանդիմում չեն ունեցել դատադարսյալի հետ եւ որեւէ աշխատանք նրա հետ չեն իրականացրել:

Հիմնարկի բուժծառայության տետի խոսքերով, միջադետղից հետո Մ.Ե.-ին ցույց է տրվել բուժօգնություն (տրվել է ցավազրկող դետորայֆ), սակայն

¹⁹ «Իրական բռնացողներն անպատիժ են», «Պատասխանատվության է ենթարկվում ձեծվածը», «Առավոտ», 2004, 18 ապրիլի:

usացված մարմնական վնասվածքների վերաբերյալ արձանագրություն չի կազմվել: Նրա խոսքերով, ազատագրվածների՝ ՔԿՅ-ում զսնվելու ժամանակ usացած եւ նրանց մարմնի վրա հայտնաբերված վնասվածքների մասին բժշկական արձանագրություն երբեւէ չի կազմվում:

Արձանագրած փաստերի հիման վրա խոսմբը հանգել է այն եզրակացութեան, որ ձեռնաճղթաներով դատադատարյալը չէր կարող ցուցաբերել այն-դիսի դիմադրություն, որը սաստելու նդատակով անհրաժեշտ էր կիրառել նման վնասվածքների հանգեցնող հարկադրանք:

Խոսմբը դիմել է արդարադատութեան նախարարին եւ գլխավոր դատախազին՝ տեղի ունեցած բռնութեան փաստի վերաբերյալ համադատաստիսան միջոցներ ձեռնարկելու, այդ թվում՝ անհատաղ դատարբժշկական փորձաքննություն անցկացնելու խնդրանքով:

Արդարադատութեան նախարարութեան կողմից դեմքը գնահատվեց որ-դեա համաչափութեան սահմաններում ուժի կիրառում:

Այս դեպքից հետո 2005 թ. օգոստոսի 18-ին դիտորդական խմբի նախագահ Թեմիկ Խալափյանը եւ խմբի անդամ Սիբայել Արամյանը ահագանգի հիման վրա այցելելով «Նուբարաշեն» ՔԿՅ՝ արձանագրել են մեկ այլ միջադեպ:

«Նուբարաշեն» ՔԿՅ-ում դահվում էր «Յիվանդանոց դատադատարյալների համար» ՔԿՅ-ում հսկիչների կողմից ծեծի ենթարկված կալանավոր Ա. Ա.-ն: Վերջինս, «Նուբարաշեն» ՔԿՅ-ում հանդիդդելով խմբի անդամներին, առանձնագրույցի ժամանակ դնդել է, որ հսկիչներն իրեն ծեծել են ռեշինե մահակով եւ երկաթյա ամրանով: Տուժողի գլխին եւ մարմնի այլ մասերում դիտորդները տեսել են խոշանգման հետքեր:

Այդ ժամանակ հարեւան սենյակից լսելով ձայներ՝ խմբի անդամ Սիբայել Արամյանը մոտենալով այդ սենյակի դռանը, տեսել, թե ինչդեա ՔԿՅ առխատակիցները ոտքերով ծեծում են մեկ այլ կալանավորի: Մ. Արամյանը փորձել է տեղեկանալ, թե ինչ է կատարվում: Դա խիստ դժգոհութեամբ է ընդունել հիմնարկի անվտանգութեան ծառայութեան ավագ մասնագետ Վ. Օհանյանը եւ դահանջել է չխառնվել ու հեռանալ հիմնարկից: ՔԿՅ դեա՝ Արամ Սարգսյանը, խոստացել է ծառայողական բնություն անցկացնել եւ գրավոր դատաստիսանել, ինչի մասին մինչ այժմ խմբին տեղեկատվություն չի տրվել:

2005 թ. օգոստոսի 19-ին հացադուլ հայտարարած Ռ. Ա.-ի հետ հանդիդդումից առաջ «Նուբարաշեն» ՔԿՅ-ի դեա Արամ Սարգսյանը հայտնել է խմբի անդամներ Սիբայել Բաղդասարյանին եւ Արթուր Սաբունցին, որ թույլ չի տալիս լուսանկարել: Ավելին, այցելութեան ավարտից հետո հիմնարկի դեա-ը դիտորդներին հնարավորություն չի տրվել նաեւ ծանոթանալ կալանավորված անձանց (Ռ. Ա., Մ. Ա. եւ Ա. Ձ.) առողջութեան մասին բժշկական փա-տերին, չնայած ՔԿՅ դեաի մոտ կար կալանավորների գրավոր համաձայնութեանը:

Այսպիսով, դեռեւս վաղ է ասել, որ քրեակատարողական հիմնարկներում խոշտանգումներ չեն կիրառվում: Փաստերի սակավությունը ոչ թե խոշտանգումների բացակայութեամբ, այլ, թերեւս, այդ մասին հայտնելուց խուսափելով կարելի է բացատրել:

2004թ. Եվրախորհրդի կտտանքների կանխարգելման կոմիտեն հորդորել է Յայատանին ակտիվ գործողություններ կատարել խոշտանգումների կիրառումը հաղթահարելու համար:

ՀՀ կառավարությունը եւս կոմիտեին ուղղած զեկույցի վերաբերյալ իր պատասխանի մեջ նշել է, որ ջանքեր է գործադրում ոստիկանների ուսուցման մակարդակը բարձրացնելու ուղղությամբ, իսկ քրեակատարողական հիմնարկներում 2001-2003թ.թ. ընթացքում արձանագրվել է սահմանված կարգի խախտման ընդամենը 17 դեպք (ի դեպ այս թիվը վկայում է ոչ թե դեպքերի սակավության, այլ բողոքարկման ընթացակարգերի անկատարության մասին), որոնց քննության ընթացքում 12 ծառայողներ ենթարկվել են կարգապահական տույժերի, 5-ը՝ ազատվել աշխատանքից:

Իրավիճակի շտկման համար անհրաժեշտ են անհետաձգելի եւ ինտենսիվ գործողություններ: Մասնավորապես.

1. Դատավարական պրակտիկայի փոփոխություն, այդ թվում՝

- կիրառել քրեական օրենսդրության համապատասխան դրույթները, որոնց համաձայն խոշտանգումների մասին մեղադրյալի հայտարարության դեպքում դատարանը պետք է անմիջապես պահանջի հետաքննություն իրականացնել,

- հրաժարվել ինքնախոստովանական ցուցմունքները որպես հիմնական ապացույց ընդունելու պրակտիկայից:

2. Խոշտանգումների փաստերով ոստիկանության աշխատակիցների նկատմամբ քրեական օրենսդրությամբ նախատեսված պատժի կիրառում:

3. «Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի եւ պատժի կանխարգելման մասին» եվրոպական կոնվենցիայի 22 հոդվածով սահմանված կարգով հայտարարություն կատարել այն մասին, որ Հայաստանը ճանաչում է «Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեի» իրավասությունը՝ ստանալու եւ քննելու այն անձանց անհատական դիմումները, ովքեր գտնում են, որ տեղի է ունեցել վերոնշյալ կոնվենցիայի խախտում:

4. Քրեական օրենսդրության բարեփոխում, այդ թվում՝

- քրեական դատավարության օրենսգրքի՝ կասկածյալի, մեղադրյալի, վկայի հարցաքննությանը վերաբերող դրույթների լրացում եւ փոփոխություն՝ սահմանելով ոստիկանության կողմից հարցաքննության վարման սպառիչ կանոնակարգ:

5. Ոստիկանության աշխատակիցների վերապատրաստում եւ նոր նշանակման ժամանակ պրոֆեսիոնալիզմի եւ միջազգային չափանիշներին տիրապետելու պահանջների կիրառում:

6. Հասարակական կազմակերպությունների համար ոստիկանական բաժանմունքների թափանցիկության բարձրացում:

7. Միանալ ՄԱԿ-ի Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրությանը:

8. Դատապարտված անձանց վիճակի առնչությամբ հասարակական վերահսկողության ինստիտուտի ապահովում:

9. Ընդլայնել քրեակատարողական հիմնարկներում արդեն հասարակական վերահսկողություն իրականացնող՝ հասարակական դիտորդական խմբի լիազորությունները, դրանք տարածելով նաեւ ոստիկանության բաժանմունքների եւ ժամանակավոր պահման մեկուսարանների վրա:

6. ՅՅ ը ձձՁՁ ի ձձձձ»ՁՁ 3 ԲԻ 3 ԿՇ ՇԿԵԻ ՉԻ ձձԱԾՅ Ծ ԵԻ 3 ԿձՁ

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի անհրաժեշտությունը Հայաստանում հասունացել էր դեռ 90-ական թվականներին, սակայն ՀՀ իշխանությունները 1995թ. ընդունված Սահմանադրության մեջ չներառեցին Մարդու իրավունքների պաշտպանի մասին հոդված, իսկ հետագայում, վկայակոչելով Սահմանադրությունը, ձեռնպահ մնացին պաշտպանի մասին օրենք ընդունելուց:

2001 թ. հունվարի 25-ին, Հայաստանը, դառնալով Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ, ԵԽԽՎ թիվ 221 (28 հունիսի, 2000թ.) կարծիքի համաձայն, ստանձնեց՝ մինչ 2001թ. հուլիսի 25-ը օմբուդսմենի մասին օրենք ընդունելու պարտավորություն: Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, ըստ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 20.12.1993թ-ի բանաձեռով ընդունված՝ ազգային հիմնարկների կարգավիճակին վերաբերող սկզբունքների (Փարիզյան սկզբունքներ), անկախ խորհրդարանական ինստիտուտ է: Անկախության երաշխիքներից է խորհրդարանի կողմից պաշտպանի նշանակումը, անկախ գործելու հնարավորությունների ապահովումը:

2001թ. ՀՀ արդարադատության նախարարությունը մշակեց «Օմբուդսմենի մասին» օրենքի նախագիծը, որն ի թիվս այլ թերությունների, օմբուդսմենի նշանակումը վերապահում էր ՀՀ նախագահին: Նախագիծը քննադատության արժանացավ Հայաստանի մի շարք իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների կողմից: Եվրոպայի խորհուրդը համաձայնեց, որ պարտավորության կատարումը հետաձգվի մինչև փոփոխված Սահմանադրության ընդունումը:

Սակայն 2002թ. վերջերին ԱԺ մի խումբ պատգամավորներ շրջանառության մեջ դրեցին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի մի նոր նախագիծ, որի 27-րդ հոդվածի համաձայն, մինչև սահմանադրական փոփոխությունների ընդունումը մարդու իրավունքների պաշտպանին նշանակում է նախագահը:

2003թ. մայիսի 25-ին հանրաքվեի դրված սահմանադրական փոփոխությունների նախագիծը չստացավ անհրաժեշտ թվով ձայներ:

2003 թ. սեպտեմբերի 2-3-ին Ազգային ժողովում տեղի ունեցան «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի նախագծի աշխատանքային քննարկումներ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի, ԵԽ-ի, ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) եւ հայաստանյան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ըստ օրենքի նախագիծը ներկայացնողների, ՀՀ Սահմանադրության 62 հոդվածը, սպառնիչ սահմանելով Ազգային ժողովի լիազորությունները, հնարավորություն չի ընձեռում, որ պաշտպանին նշանակի Ազգային ժողովը, ինչի պատճառով այդ լիազորությունը վերապահվել է ՀՀ նախագահին: Օրինագծում նա-

խատեսվում էր, որ սահմանադրական փոփոխություններից հետո դադարեցվելու են Պաշտպանի լիազորությունները եւ Ազգային ժողովը ընտրելու է նոր Պաշտպան:

Կային նաեւ տեսակետներ, որ ՀՀ Սահմանադրության 62 հոդվածը սահմանում է Ազգային ժողովի, բայց ոչ ԱԺ պատգամավորների լիազորությունների սպառնիչ ցանկը, ուստի եւ՝ կարելի է նախատեսել, որ պատգամավորների ձայների որոշակի քվե ստացած անձը միայն նախագահի հրամանագրով նշանակվի Պաշտպան:

2003 թ. սեպտեմբերի 3-ին ԵԽ Նախարարների կոմիտեի մոնիտորինգի խմբի (հայտնի է «Ազոյի խումբ» անվամբ) ներկայացրած զեկույցում մասնավորապես նշվում էր, որ վերջին 18 ամիսներին Հայաստանում պարտավորությունների կատարման ընթացքը դանդաղում է: Տարբերակելով այն պարտավորությունները, որոնք կապված են սահմանադրական բարեփոխումների հետ՝ խումբը ՀՀ իշխանություններին առաջարկում էր գտնել գործնական անցումային լուծումներ:

Անհրաժեշտ է հիշատակել, որ Ազոյի ղեկավարած խումբը եւս իր առաջարկների մեջ նշել էր, որ ՀՀ Սահմանադրությունը չի բացառում խորհրդարանի կողմից օմբուդսմենի նշանակման հնարավորությունը. Ազգային ժողովը մարդու իրավունքների պաշտպանի անձի շուրջ կարող է գալ համաձայնության, եւ ՀՀ նախագահի ստորագրությունը նշանակման փաստաթղթում լինի ձեւական:

2003 թ. սեպտեմբերին Ազգային ժողովը՝ հաշվի չառնելով միջազգային եւ հայաստանյան փորձագետների առաջարկները, երկրորդ ընթերցմամբ ընդունեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրինագիծը՝ ԵԽ բացասական գնահատականներից խուսափելու պատճառաբանությամբ:

Հայաստանյան 15 կազմակերպություններ հանդես եկան օմբուդսմենի ինստիտուտի ստեղծման այս գործընթացը ժամանակավրեպ որակող հայտարարությամբ:²⁰

2003 թ. հոկտեմբերի 21-ին Ազգային ժողովն ամբողջությամբ ընդունեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը, որը ՀՀ նախագահը ստորագրեց 2003 թ. նոյեմբերի 11-ին, եւ այն ուժի մեջ մտավ 2004 թ. հունվարի 1-ին:

Ըստ օրենքի, Պաշտպանը՝ մինչ սահմանադրական փոփոխությունները, նշանակվում է ՀՀ նախագահի կողմից՝ Ազգային ժողովի պատգամավորական խմբերի եւ խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո: Սակայն ՀՀ նախագահը առանց Ազգային ժողովի պատգամավորական խմբերի եւ խմբակցությունների հետ խորհրդակցելու, 2004թ. փետրվարի 19-ին նշանակեց Մարդու իրավունքների պաշտպանին:

Օրենքի 22-րդ հոդվածը նախատեսում է, որ պաշտպանի տեղակալը նշանակվում է *դաճճդանի առաջարկությամբ*, նույն մարմնի կողմից եւ նույն կարգով, ինչ եւ Պաշտպանը: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Լարիսա Ալավերդյանը նախագահին առաջարկեց տեղակալ նշանակել իր նախընտրած թեկնածուին, սակայն նախագահն առաջարկեց ներկայացնել մեկ ուրիշ՝ իր իսկ (նախագահի) կողմից առաջարկված թեկնածուին: Նախագահն իր կողմից առաջարկված թեկնածուին, պաշտպանի կողմից առաջարկվելուց հետո, նշանակեց պաշտպանի տեղակալ:

²⁰ Տես «Առավոտ», 2003, 3 սեպտեմբեր

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքը պարունակում է մի շարք դրույթներ, որոնք սահմանափակում են Պաշտպանի գործունեության հնարավորությունները: Մասնավորապես «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետը բացառում է դատական մարմինների եւ դատավորների դեմ ներկայացված բողոքների քննումը պաշտպանի կողմից: Այսինքն, Պաշտպանը զրկվում է այնպիսի անձանց օգնելու հնարավորությունից, ում նկատմամբ խախտվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով եւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքը: Պաշտպանը չի կարողանա արձագանքել դատական վարույթներում անպատեհ ձգձգումների կամ դատապաշտպանի իրավունքի մերժման խնդիրներին: Արդար դատաքննության իրավունքը հիմնարար իրավունք է ու բոլոր մյուս իրավունքների եւ ազատությունների իրականացման նախապայման: Այսպիսով, Պաշտպանի հսկողության ոլորտից դուրս է մնում իշխանության երեք թելերից մեկը:

Ըստ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի՝ «Ուրիշի իրավունքների պաշտպանության նպատակով պաշտպանին կարող են դիմել միայն այդ անձանց ներկայացուցիչները, ինչպես նաեւ մահացած անձանց ընտանիքների անդամներն ու ժառանգները» (հոդված 8): Այս դրույթը Պաշտպանին հնարավորություն չի տալիս երրորդ կողմի (օրինակ՝ իրավապաշտպան ՀԿ-ների) դիմումի հիման վրա իրականացնել մարդու իրավունքների պաշտպանություն:

ՀՀ իշխանությունները փորձ արեցին քաղաքացիական ծառայության ոլորտ ներգրավել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը: Դրան դեմ հանդես եկավ Մարդու իրավունքների պաշտպանը: Այս նախաձեռնության իրականացմամբ, փաստորեն, պաշտպանը վերջնականորեն կախյալ կդառնար գործադիր իշխանությունից ու վերահսկելի: Սակայն, նշենք, որ հայտնի չէ, թե մինչ այժմ ինչ չափանիշներով եւ կարգով է ձեւավորվել Պաշտպանի աշխատակազմը:

2005թ. փետրվարի 10-ին կառավարության նիստում քննարկվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքում փոփոխություն կատարելու վերաբերյալ օրինագիծը, ըստ որի, մասնավորապես, օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Պաշտպանն իրավասու չէ միջամտել դատական վարույթին» նախադասությունից հետո առաջարկվեց հանել հետեւյալ պարբերությունը՝ «Նա կարող է տեղեկություններ պահանջել դատաքննության մեջ գտնվող ցանկացած գործի մասին եւ առաջարկներ ներկայացնել դատարան՝ երաշխավորելով քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ միջազգային իրավունքի նորմերով նախատեսված դատավարության իրավունքի պատշաճ ի կատար ածումը»: Ազգային ժողովը մերժեց նախագիծը: Ապրիլին ՀՀ նախագահը դիմեց Սահմանադրական դատարան վիճարկելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը՝ գտնելով, որ Պաշտպանի՝ դատարաններից տեղեկություններ պահանջելու եւ դատարաններին առաջարկներ ներկայացնելու իրավունքը պայմանավորված չէ անկախ եւ անկողմնակալ արդարադատություն իրականացնելու անհրաժեշտությամբ եւ միջամտություն է դատական իշխանության գործառնություններին:

ՀՀ Սահմանադրական դատարանը բավարարեց դիմումատուի պահանջը եւ որոշեց, որ վերը նշված կետը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը: Սակայն սահմանադրական դատարանի որոշման համաձայն այնուամենայնիվ պաշտպանն իրավասու է դատարաններից տեղեկություններ ստանալ, եւ նրա «այդ իրավունքը ենթակա է բավարարման, եթե դա չի առնչվում կոնկրետ գործով արդարադատության իրականացմանը, չի վերաբերում դատարանի վարույթում գտնվող գործի քննության նյութական եւ դատավարական բնույթի հարցերին»:

2005թ. մայիսի 26-ին ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) խարդախության մեղադրանքով ձերբակալեց պաշտպանի աշխատակազմի գիտավերլուծական բաժնի աշխատակից, պաշտպանի փորձագիտական խորհրդի քարտուղար Սերոբ Անտինյանին, որն, ըստ ԱԱԾ-ի, բնակիչների բողոքին ընթացք չտալու համար 300 ԱՄՆ դոլար կաշառք է վերցրել այն ռեստորանատիրոջից, որի՝ բնակելի շենքի տակ գտնվող բար-ռեստորանի աղմուկը խանգարում էր բնակիչների հանգիստը: Նույն երեկո Հայաստանի հանրային հեռուստատեսությունը ցուցադրեց փողը վերցնելու պահը եւ ձերբակալությունը, որ նկարահանել էր ԱԱԾ-ն:

Ձերբակալության գիշերը ԱԱԾ աշխատակիցները, առանց պաշտպանին տեղյակ պահելու եւ օրենքով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու, ներխուժել են նրա գրասենյակ ու առգրավել համակարգիչը, որտեղ պահվում են գրասենյակի տեղեկատվությունները եւ քաղաքացիների կոնֆիդենցիալ բողոքները:

Հետագայում համակարգիչը վերադարձվել է:

Սերոբ Անտինյանը խարդախության մեղադրանքով դատապարտվել է 1,5 տարի ազատազրկման եւ պատժի 1/3-ը կրելով ազատվել:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի 19-րդ եւ 27-րդ հոդվածների 1-ին կետերի համաձայն՝ Պաշտպանն իր լիազորությունների ողջ ժամկետի ընթացքում օժտված է անձեռնմխելիությամբ: Նրա նկատմամբ քրեական հետապնդում չի կարող հարուցվել առանց Հայաստանի Հանրապետության նախագահի (օրենքի անցումային դրույթների համաձայն) համաձայնության: Պաշտպանի անձեռնմխելիությունը տարածվում է նաեւ նրա նամակագրության, Պաշտպանի օգտագործած կապի միջոցների, ինչպես նաեւ նրան պատկանող փաստաթղթերի վրա:

2005 թ. մայիսի 30-ին ԱԱԾ երկու աշխատակից, գնալով «Ռայթ իրավաբանական խումբ» փաստաբանական ՍՊԸ եւ ներկայանալով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցներ՝ պահանջել են բողոքատուների վերաբերյալ տվյալներ: Ըստ Պաշտպանի՝ ԱԱԾ աշխատակիցներին հետաքրքրել են երկու քաղաքացիների գործերի վերաբերյալ տեղեկություններ, որոնք դիմել են նաեւ իրեն:

Պաշտպանին ուղղված նամակում ԱԱԾ-ն հայտնում է, որ քրեական գործ է հարուցվել «Ռայթ իրավաբանական խմբի» նախագահ Վահե Գրիգորյանի դեմ:

2005 թ. հունիսի 3-ին մամուլում տեղեկատվություն է տարածվել («Իրավունք», 03/06/2005), որ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին մոտ կանգնած աղբյուրի համաձայն, պաշտպանը նախագահին նամակ է հղել, ուր հայտնում է, թե վերջերս ԱԱԾ աշխատակիցները սկսել են գաղտնալսել գրասենյակի հեռախոսներն ու տարածքը եւ հետեւել աշխատակազմի աշխատակիցներին:

2005թ. ապրիլին Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակեց 2004թ. ընթացքում (մարտ-դեկտեմբեր) ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության եւ երկրում մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույցը (համաձայն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի):

Ըստ տարեկան զեկույցի՝ Պաշտպանին հասցեագրված 1294 գրավոր դիմում-բողոքների ուսումնասիրման եւ հետազոտման արդյունքներով՝ քննարկման են ընդունվել 471-ը:

Քննարկման ընդունված 471 բողոքներից ավարտվել է 245 բողոքների հետազոտումը, այդ թվում՝

1. քննարկման արդյունքներով ներկայացվել է առաջարկություն - 93

2. քննարկումը դադարեցվել է՝

- դատարան դիմելու հետ կապված - 33,

- մարդու իրավունքների խախտման կամ լուրջ վնասակարության դեպքում - 110,

- դիմումատուի լուրջ վնասակարության կամ լուրջ վնասակարության վնասակարության հետ - 9:

Դրական արդյունքով է ավարտվել - 85:

Ձեկույցում ներկայացված մարդու իրավունքների բազմաթիվ ոտնահարումների շարքում առանձնանում են երկուսը: Առաջին՝ 2004 թվականի գարնանը նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրաժարականի պահանջով ընդդիմության կազմակերպած ցույցերի ընթացքում եղած օրինախախտումների եւ ոստիկանությունում հանրահավաքի մասնակիցների նկատմամբ խոշտանգումների դեպքերն են :

Ձեկույցն արձանագրում է, որ խախտվել են մարդկանց ազատ տեղաշարժման, երթեր եւ ցույցեր անելու իրավունքները: Խախտվել է նաեւ դատարաններում ցուցարարներին դատելիս նրանց արդար դատաքննության իրավունքը: Որպես միավորումներ կազմելու եւ դրանց անդամակցելու իրավունքի խախտում է դիտվում 2004թ. ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերը ոստիկանության ներխուժումը ընդդիմադիր «Արդարություն» դաշինքի գրասենյակ եւ գույքը վնասելը: Ձեկույցում ընդարձակ ներկայացված է Գրիշա Վիրաբյանի պատմությունը, որը ոստիկանությունում խոշտանգումների է ենթարկվել (*սեա՝ սույն զեկույցի 5-րդ գլխում*):

Երկրորդ դեպքն առնչվում է Երեւանի Հյուսիսային եւ Գլխավոր պողոտաների կառուցման ընթացքում մարդկանց սեփականության իրավունքի ոտնահարումներին: Պաշտպանի գրասենյակը հետեւողականորեն պաշտպանում է իրացվող տարածքների բնակիչների իրավունքները:

Տարեկան զեկույցը քննադատվեց ՀՀ արդարադատության նախարարի, գլխավոր դատախազության եւ վճռաբեկ դատարանի նախագահի կողմից: Մասնավորապես, նշվում էր, որ «զեկույցի մի շարք դրվագներ հիմնավորված չեն, փաստական տվյալները որոշ դեպքերում թվացյալ են, օրենքի մեկնաբանությունները ստույգ չեն եւ մի շարք հարցադրումների սպառնալից պատասխաններն արդեն օրենսդրորեն առկա են»: Քննադատությունները պարունակվում էին նաեւ վերաբերյալ արտահայտություններ:

Տարեկան զեկույցից 6 ամիս չանցած՝ Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակեց արտահերթ զեկույց, որը վերնագրված էր «Սեփականության, արդար դատաքննության եւ դատական պաշտպանության իրավունքների խախտումների մասին»: Դրանում, դարձյալ բերվում էին տարեկան զեկույցում արձանագրված խախտումները, որոնք չէին վերացվել: 24 էջից կազմված զեկույցում նշվում էր, որ այն պատրաստվել է՝ նկատի ունենալով, որ քաղաքացիների նշված իրավունքի, դրա հետ կապված արդար դատաքննության եւ դատական պաշտպանության իրավունքների խախտումները ոչ միայն չեն վերացվել եւ դրանց վերացմանն ուղղված միջոցներ չեն ձեռնարկվում, այլեւ շարունակվում են, ուստի անհրաժեշտություն է առաջացել կրկին անդրադառնալ այդ խնդրին՝ իշխանություններին եւ հանրությանն ուղղված հատուկ զեկույցով:

Ձեկույցում, հիմնվելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Հայաստանի Սահմանադրության, քաղաքացիական, հողային, բնակարանային օրենսգրքերի եւ սահմանադրական դատարանի որոշման վրա՝ Պաշտպանը մանրամասն ներկայացնում է բոլոր օրինախախտումները եւ մարդու իրավունքի ոտնահարումները, որ կատարվել են Երեւանի կենտրոնի կառուցապատման ընթացքում:

Նաեւ արձանագրված է, որ Պաշտպանի ուսումնասիրած դեպքերում դատարանները չեն պաշտպանում քաղաքացիներին եւ չեն վերականգնում նրանց խախտված իրավունքները: Խախտվում է արդար դատաքննությունն ապահովելու միջոցով դատական պաշտպանությունն ստանալու քաղաքացիների իրավունքը:

Եզրափակելով՝ մարդու իրավունքների պաշտպանը նշում էր, որ զեկույցը մի փորձ է ՀՀ իշխանության բոլոր օղակների ուշադրությունը եւս մեկ անգամ հրավիրելու մարդու իրավունքների ճանաչման անհրաժեշտության վրա:

2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով ՀՀ սահմանադրական փոփոխություններն ընդունելուց հետո Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնավարման ժամկետը լրանում է 2006թ. հունվարի 5-ին (սահմանադրական փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո՝ 30-րդ օրը): Պաշտպանի լիազորությունները դադարում են լիազորությունների ժամկետը լրանալուն հաջորդող օրվանից: Նոր նշանակում պետք է կատարվի լիազորությունների դադարեցման օրվանից մեկ ամսվա ընթացքում: Այսպիսով, օրենսդրությունը կարող է պատճառ դառնալ մի իրավիճակի, երբ մի ամբողջ ամիս (իսկ նոր Պաշտպանի ընտրությունը ձգձգվելու դեպքում՝ ավելի երկար ժամանակ) ՀՀ քաղաքացիները զրկված կլինեն իրենց իրավունքների՝ Սահմանադրությամբ ամրագրված պաշտպանի ինստիտուտից:

Փոփոխված Սահմանադրության 83.1 հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-րդով՝ 6 տարի ժամկետով ընտրում է Մարդու իրավունքների պաշտպան: Ըստ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի՝ «*մարդու իրավունքների դատաքննման նշանակում է Ազգային ժողովը՝ դատաքննությունների ընդհանուր թվի ձայների 3/5-ից ավելիով՝ ՀՀ Նախագահի եւ Ազգային ժողովի դատաքննությունների առնվազն 1/5-ի կողմից առաջարկված թեկնածուներից*»:

Մարդու իրավունքների պաշտպան կարող է ընտրվել հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող անձը, ով համապատասխան

նում է պատգամավորին ներկայացվող պահանջներին: Պաշտպանը օժտվում է պատգամավորի համար սահմանված անձեռնմխելությամբ: Սահմանադրության 100-րդ, 101-րդ հոդվածների համաձայն մարդու իրավունքների պաշտպանը ՅՅ օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների՝ Սահմանադրության 2-րդ գլխի (Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները) դրույթներին համապատասխանության հարցերով կարող է դիմել Սահմանադրական դատարան:

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի կայացման՝ պաշտպանի անկախության, նյութատեխնիկական, ֆինանսական պայմանների ապահովման համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» եւ «ՅՅ պետական բյուջեի» մասին օրենքներում: Մասնավորապես անրագրել, որ պաշտպանի գրասենյակի բյուջեն սահմանվում է պետական բյուջեի առանձին տողով՝ այն չափով, ինչ չափով ներկայացվում է պաշտպանի կողմից (այսպիսի նորմ, որպես անկախության երաշխիք, սահմանված է Սահմանադրական դատարանի վերաբերյալ): Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքում անրագրել պաշտպանի իրավասությունը՝ ձեւավորելու իր աշխատակազմը եւ փորձագիտական խորհուրդը՝ հրապարակայնության, պրոֆեսիոնալիզմի, մրցակցության սկզբունքների հիման վրա:

Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով Պաշտպանի թեկնածությունը առաջարկելու իրավունքը վերապահել միայն պատգամավորների 1/5-րդին:

7. Ե Օ՝Շ³ 1/2 ի áõÃîäÝ »õï ããÝ³ ի³ Ý ի³ 1/3 ի »ã áõÃîäÝ»ñ

Ե վրոպայի խորհրդին անդամակցելիս Հայաստանի ստանձնած պարտավորություններից էր նաեւ՝ «ապահովել բոլոր եկեղեցիների եւ կրոնական համայնքների, հատկապես «ոչ ավանդական» որակվողների, առանց խտրականության գործունեության ծավալումը»:

Հայաստանի Հանրապետության «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքն ընդունվել է 1991թ. հունիսի 17-ին՝ հիմք ունենալով ԽՍՀՄ 1990-ի նույնանուն օրենքը: Դրանից հետո այն երկու անգամ՝ 1997թ. եւ 2001թ. փոփոխվեց եւ լրացվեց:

Խորհրդային օրենքին ավելացված 17-րդ հոդվածի գ կետը ազդարարում է, որ «պետությունը չի խոչընդոտում ազգային եկեղեցու (Հայ Առաքելական եկեղեցու - խմբ.) մենաշնորհի հանդիսացող հետեւյալ առաքելությունների իրագործմանը» (ինա՝ մյուսներին արգելվում է) եւ նշվում են մենաշնորհներ, որոնք այս կամ այն չափով հակասում են մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային փաստաթղթերին, ՀՀ փոփոխված Սահմանադրության 8.1, 26 եւ 27 հոդվածներին, նույն օրենքի մյուս դրույթներին, ՀՀ տարբեր օրենքներին եւ իրավական ակտերին: Սակայն, չնայած այդ հակասություններին, հաճախ այդ դրույթները հիմք են հանդիսանում արդարադատության նախարարությունում գրանցված որոշ կրոնական կազմակերպություններ գործունեությունը սահմանափակելու համար: Սասնավորապես խոչընդոտվում է կրոնական արարողությունների համար տարածք վարձելը: Եղել են դեպքեր, երբ դահլիճների ադմինիստրացիաները տարածք չտրամադրելը պատճառաբանել են այն բանով, որ իրավապահ մարմինները կարող են հետազայում իրենց անհանգստացնել: Մարզերի որոշ համայնքապետեր կրոնական համայնքների ղեկավարներին խնդրել են դադարեցնել գործունեությունը այն պատճառաբանությամբ, որ անվտանգության մարմիններից ստացել են համապատասխան կարգադրություններ:

Ազգային եկեղեցու մենաշնորհ է համարվում «կառուցել նոր եկեղեցիներ, գործող դարձնել իրեն պատկանող պատմական հուշարձան-եկեղեցիները՝ ինչպես հավատացյալների խնդրանքով, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ, բարեգործական եւ բարեխնամ գործունեություն ծավալել», ինչը հակասում է հենց նույն օրենքի 7-րդ հոդվածի ժ կետին, որը ուղղակիորեն նշում է, որ կրոնական կազմակերպություններն իրավունք ունեն «գբաղվել բարեգործությամբ, ինչպես նաեւ հրապարակային, այդ թվում նաեւ ՁԼՍ-ների միջոցով քարոզելը»:

ՀՀ ԱԺ-ը 1997թ. սեպտեմբերի 10-ին ընդունել է «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքը, ըստ որի գրանցման համար նախկին 50 հավատացյալի փոխարեն պահանջվում է 200 անդամի առկայություն: Այս դրույթն ավելի խիստ է խորհրդային օրենքի պահանջներից, որը նախատեսում էր 10 անդամի առկայություն:

2001թ. ապրիլի 3-ին եւս ՀՀ ԱԺ-ն ընդունել է «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» եւ «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի 1-ին հոդվածով փոփոխվում է 1991թ. ընդունված օրենքի 14-րդ հոդվածը եւ այսուհետեւ «կրոնական համայնքը կամ կազմակերպությունը իրավաբանական անձ է ճանաչվում պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից»: Գրանցման համար կրոնական կազմակերպությունը կրոնի գործերով պետական լիազորված մարմնից պետք է ներկայացնի փորձագիտական եզրակացություն:

Մինչ 2004 թվականը «Եհովայի վկաներ» կազմակերպությանը մերժում էին պետական գրանցում տալուց, ինչը հիմնականում պատճառաբանվում էր կազմակերպության անդամների բանակում ծառայելուց հրաժարվելով: 2003թ. դեկտեմբերի 17-ին «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքն ընդունվեց: Ըստ գրանցման նոր կանոնակարգի, 2004 թվականին աշնանը, երկրորդ փորձից հետո, «Եհովայի վկաներ» կազմակերպությունը ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցվել է:

ՀՀ փոփոխված Սահմանադրության մեջ (8.1 հոդված) ավելացվել է հետեւյալ դրույթը՝ «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում»:

Այդ ավելացումը կարող է շահարկվել այլ կրոնների գործունեության սահմանափակման համար: Ավելին՝ այդ սահմանափակումները, հիմնված Հայ Առաքելական եկեղեցու «բացառիկ առաքելության» վրա, կարող են արդեն արտահայտվել կրոնական կազմակերպությունների մասին ապագա օրենքում:

Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեից արդեն մի քանի օր անց Հայաստանի հանրային հեռուստատեսության եթերում «մեր ազգը պառակտող» կրոնական կազմակերպությունների գործունեությունը սահմանափակելու պահանջներ հնչեցին, եւ այդ պահանջները հիմնվում էին Սահմանադրության հիշյալ դրույթի վրա:

Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր կրոնի հարցերով խորհրդի նիստը (ՀՀ վարչապետի մասնակցությամբ) 2004-ի դեկտեմբերի 28-ին ընդունել էր «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» նոր օրենքի նախագծի սկզբունքները, որոնք պետք է ուղենիշ հանդիսանան ՀՀ կառավարության ազգային փոքրամասնությունների եւ կրոնական հարցերով վարչության կողմից մշակվող նոր օրինագծի համար: Այդ «սկզբունքները» շատ դեպքերում ավելի էին սահմանափակելու կրոնական կազմակերպությունների գործունեությունը, խստացնելու էին գրանցման համար անհրաժեշտ չափորոշիչները եւ առհասարակ կարող էին մարդու իրավունքների մի շարք հիմնարար սկզբունքների կոպիտ խախտման պատճառ հանդիսանալ: Սակայն վերջին շրջանում իրավիճակը փոխվել է: Այդ սկզբունքները ըստ էության մի կողմ են դրվել, իսկ ՀՀ կառավարության ազգային փոքրամասնությունների եւ կրոնի գործերով վարչությունը, որը պատասխանատու է նոր օրինագծի մշակման համար, սկսել է աշխատել հրապարակային եւ բաց: Հիշյալ վարչության պետ Հրանուշ Խառատյանի նախաձեռնությամբ ստեղծվել է

աշխատանքային խումբ, որի աշխատանքներին մասնակցելու համար հրավիրվել են շահագրգիռ կողմերը, այդ թվում նաև գրանցված կրոնական կազմակերպությունների եւ ՀԿ-ների ներկայացուցիչները: Սակայն կրոնական կազմակերպությունները խիստ պասիվ դիրք են գրավել:

«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոն ՀԿ-ն ՀՀ կառավարության ազգային փոքրամասնությունների եւ կրոնի գործերով վարչության պետ Հրանուշ Խառատյանի մասնակցությամբ կազմակերպել է նոր օրենքի նախագծի սկզբունքային հատվածների բաց քննարկումներ, որին մասնակցել են տարբեր կրոնական եւ շահագրգիռ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Այդ թեմայով Հայկական երկրորդ հեռուստատալիքի եթերով կազմակերպվել է հեռուստատեսային կլոր սեղանների շարք, որոնց մասնակցել են Հայաստանի մի շարք կրոնական համայնքների առաջնորդներ, Հայ առաքելական եկեղեցու պատասխանատուներ, անկախ փորձագետներ եւ պետական պաշտոնյաներ:

1992-1995թթ-ի ընթացքում Հայաստանում տեղի էին ունեցել հարձակումներ կրոնական կազմակերպությունների գրասենյակների վրա, որոնց ընթացքում տարբեր համայնքների անդամներ ստացել էին մարմնական վնասվածքներ: 1995 թվականից հետո նման հարձակումներ չեն գրանցվել: Սակայն բազմաթիվ են դեպքերը, երբ տարբեր կրոնական կազմակերպությունների անդամները, ինչպես նաև ղեկավարները բազմիցս ահազանգել են ու ահազանգում են, որ որոշակի ճնշումների են ենթարկվում պետական կառույցների կողմից: Տիպիկ դեպքերից մեկը. 2005 թվականի հունվար ամսին Լոռու մարզի Թումանյանի գյուղապետը տեղացի ավետարանչականներին ասել է, որ մարզպետարանից իրեն հրահանգ է տրված **արգելել** տեղի ավետարանչականների համայնքի գործունեությունը: Նա ասել է, որ հրահանգ տվողներից են եղել նաև մարզի պետական անվտանգության աշխատակիցները: Նշենք, որ Հայ ավետարանչական եկեղեցին Հայ Առաքելական եկեղեցու հետ սերտորեն համագործակցում է: Մյուս գրանցված եկեղեցիների ներկայացուցիչները նույնպես կարող են բազմաթիվ նման դեպքեր վկայել:

Հայաստանի պաշտոնական եւ իշխանական մամուլում եւ հեռուստաալիքներով պարբերաբար անհանդուրժողականության, անգամ բռնության կոչեր են հնչում կրոնական այլ համայնքների նկատմամբ: Մասնավորապես, Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ 2005 թ. օգոստոս ամսին կազմակերպվել էր թոք-շոու, որտեղ «բանավեճի» երկու կողմերը ներկայացնում էին հիմնականում մեկ տեսակետ, այն է՝ բոլոր կրոնական այլ կազմակերպությունները, բացի Հայ Առաքելական եկեղեցուց, պառակտում են ազգային միասնությունը եւ Հայաստանի ապագայի համար վտանգ են ներկայացնում: Այլ տեսակետները Հանրային հեռուստատեսության եթերում բացակայում են: Դեռեւս չի եղել դեպք, որ ի խախտումն ՀՀ օրենքների եւ միջազգային կոնվենցիաների՝ անհանդուրժողականության եւ բռնության կոչեր անողները պատասխանատվության ենթարկվեն: Կրոնական անհանդուրժողականության ելույթներով հաճախ հանդես են գալիս պետական պաշտոնյաները:

տոնական փաստաթղթերում եւ կնիքներում: Օրենքի 8-րդ հոդվածը «ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնատիպությունը պահպանելու նպատակով աջակցում եւ զարգացնում է նրանց համար պայմանների ստեղծումը...»: Քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածը երկրի քաղաքացիների եւ ոչ քաղաքացիների համար երաշխավորում է իրենց գործերով դատավարությունների անվճար թարգմանությունը:

Առայժմ չի ընդունվել ազգային եւ էթնիկ փոքրամասնությունների մասին օրենք, թեւ 2003թ. սկսած տարբեր ոչ կառավարական կազմակերպություններ եւ կուսակցություններ բարձրացնում են նման օրենքի մշակման եւ ընդունման հարցը: Այսպես, ԱԺ Հանրապետական կուսակցության եւ Հայ Հեղափոխական Դաշնակցության խմբակցությունների անդամ երկու պատգամավորներ հայտարարություն են արել այն մասին, որ իրենց կուսակցությունները զբաղված են ազգային փոքրամասնությունների մասին օրինագծի մշակումով: Այդ հայտարարությունները տեղ գտան «Ազգային փոքրամասնությունների իրավունքները Հայաստանում: Հայաստանի հեռանկարները Եվրոպայի խորհուրդ մտնելուց հետո» սեմինարում, որը կազմակերպել էր Ազգային եւ ռազմավարական հետազոտությունների կենտրոնը 2003թ. հուլիսի 17-ին: Հայտնի է, որ Միգրացիայի եւ փախստականների հարցերի վարչությունը մշակել է օրենքի երկու նախագիծ: Դրանցից մեկը մերժվել է փոքրամասնությունների կողմից, իսկ երկրորդը հետ է վերցվել առանց քննարկման²¹: Ներկայումս մշակվել է եւս մի օրինագիծ, որը սկսած 2004թ. հոկտեմբերից քննարկվում է ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ: ՀՀ կառավարության ազգային եւ կրոնական փոքրամասնությունների հարցերի վարչությունն այս օրինագիծը քննարկելու նպատակով կազմակերպել է մի շարք կլոր սեղաններ:

Ըստ 2001 թվականի մարդահամարի տվյալների, էթնիկ փոքրամասնությունները կազմում են հանրապետության բնակչության ընդհանուր թվի 2,2 տոկոսը: Այդ թիվը ներառում է 11 էթնիկ համայնք. ասորիներ, եզդիներ, քրդեր, ռուսներ, հույներ, մոլդկաններ, հրեաներ, լեհեր, ուկրաինացիներ, վրացիներ եւ գերմանացիներ: Առավել հոծ խմբերը եզդիներն են (40620), քրդերը (1519), ռուսները (14660) եւ ասորիները (3409)²²: Նշված համայնքների մեծ մասը Հայաստանում է հայտնվել 19-րդ դարի սկզբին, երբ Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո որոշակի տեղաշարժեր եղան²³: Բոլոր էթնիկական խմբերը երկրում եւ մայրաքաղաքում ապրում են հատվածաբար: Չկա մի մի որեւէ մարզ կամ վարչական միավոր, որն ամբողջությամբ բնակեցված լինի որեւէ փոքրամասնության ներկայացուցիչներով: Առանձին բնակելի վայրերում՝ գյուղերում, նրանք կամ խառը բնակչության մի մասն են կազմում, կամ բնակչության մեծամասնությունը:

Երկրի ազգային փոքրամասնությունները չունեն իրենց կուսակցությունները եւ Ազգային ժողովում ներկայացված չեն: Սակայն ազգային փոքրամասնությունները ներկայացված են տեղական ինքնակառավարման մարմիններում՝ իբրեւ գյուղապետեր (օրինակ Վերին Դվին գյուղում

²¹ Տեղեկությունը ստացել ենք ՀՀ կառավարության ազգային եւ կրոնական փոքրամասնությունների հարցերի վարչության ղեկավար Հրանուշ Խառատյանից:

²² Table3 De Jure Population (Urban, Rural) by Ethnicity, Sex and Educational Attainment in *The Results of the Census of the Republic of Armenia* (Yerevan 2001) p. 360-363.

²³ G. Asatryan, V. Arakelova *The Ethnic Minorities of Armenia* (Caucasian Center for Iranian Studies, Yerevan 2002) p. 5-17.

գյուղապետը ասորի է, Ամրե Թագա գյուղում՝ եզդի եւ այլն): 2004թ. ապրիլին ՀՀ կառավարությունը շենք հատկացրեց ազգային փոքրամասնությունների մշակութային միջոցառումների համար: Բացի դրանից, ՀՀ կառավարությունը 2005թ. բյուջեում գումար էր նախատեսել (ավելի քան 100 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամ) Հայաստանի ազգային եւ էթնիկ փոքրամասնությունների կենտրոնի վերանորոգման համար²⁴: Կառավարության աղբյուրներից հայտնի է, որ տարեկան 10 000 000 դրամ (մոտ 19880 ամերիկյան դոլար) է հատկացվում ազգային փոքրամասնությունների ոչ կառավարական կազմակերպություններին, որոնք ուղղվում են նրանց ծրագրերի իրականացմանը²⁵: Ազգային փոքրամասնություններն իրենց մայրենի լեզվի ուսուցման իրավունքն իրականացնելիս հակազդեցությունների չեն հանդիպում: Էթնիկ փոքրամասնությունները կարող են Հայաստանի Հանրապետության հանրակրթական միջնակարգ դպրոցներում սովորել իրենց մայրենի լեզուն եւ այդ լեզվով կրթություն ստանալ: Օրինակ՝ ասորերենը դասավանդվում է 3 գյուղերում՝ Դվինում, Դիմիտրովում, Արզնիում: Սակայն գրեթե բոլոր ազգային փոքրամասնությունների համար առկա են եւ մասնագետների, եւ կրթական ծրագրերի պատրաստման խնդիրներ: Առավել լավ պայմաններում է գտնվում ռուսակայն համայնքը, քանի որ ուսումնական նյութերը ստանում է Ռուսաստանից, որտեղ պատրաստվում են նաեւ անհրաժեշտ մասնագետներ²⁶:

Կան զանգվածային լրատվության միջոցներ, որոնք էթնիկ համայնքներին հնարավորություն են տալիս իրականացնելու իրենց տեղեկատվության ազատության իրավունքը: Եզդիները, քրդերը, ուկրաինացիները, ռուսները, հույներն ունեն իրենց մայրենի լեզվով լույս տեսնող թերթեր²⁷: 2005 թվականի նոյեմբերի 7-ին Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը «Ար Ռադիո Ինտերկոնտինենտալ» ռադիոընկերությանը Ծաղկահովիտ քաղաքի տարածքում 106.0 մզհ հաճախությամբ հեռարձակում իրականացնելու արտոնագիր (լիցենզիա) տրամադրեց: Ելնելով այն բանից, որ Ծաղկահովիտում եւ հարակից բնակավայրերում ապրում են նաեւ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ, իր մրցութային առաջարկում ռադիոընկերությունը նախատեսել է հաղորդումներ պատրաստել եւ հեռարձակել նաեւ ազգային փոքրամասնությունների մասին եւ նրանց համար:

2004 թվականի ընթացքում Հայաստանի էթնիկ խմբերի առնչությամբ նկատվել է հիմնախնդիրների երկու խումբ: Որոշ լարում գոյություն ունի եզդիների էթնոկոնֆեսիոնալ խմբի ճանաչման առնչությամբ, որոնք խոսում են նույն լեզվով, ինչ քրդերը եւ էթնիկ առանձին խումբ են ներկայացնում: Այս կապակցությամբ ինչպես ամբողջ 2004 թվականի ընթացքում, այնպես էլ նախորդ տարիներին բավական լարված բանավեճեր են տեղի ունեցել թե քրդերի եւ թե եզդիների շրջանում: Սակայն Հայաստանի կառավարությունը չեզոք դիրք է բռնել՝ ցանկանալով, որ տվյալ խմբերն իրենք հանդուրժողականության եւ փոխըմբռնման պայմաններում որոշում կայացնեն²⁸:

²⁴ Այս տեղեկատվության աղբյուրը Ազգային եւ կրոնական փոքրամասնությունների հարցերի վարչությունն է:

²⁵ ՀՀ կառավարության ազգային եւ կրոնական փոքրամասնությունների հարցերի վարչության մշակած «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծի ուղեկցող փաստաթուղթ «Հիմքեր»:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Պետությունը մասնակի ֆինանսավորում է եզդիների հայերեն «Լալիշ», քրդերի քրդերեն «Ոյա Թագա», ուկրաինական «Դնիպր» եւ մի շարք այլ թերթերի հրատարակությունը:

²⁸ Շ. Խաչատրյան, *Հայաստանի եզդիների ինֆունությունը* : -Դիտորդ, 2005, թիվ 8, էջ 7-14:

2004թ. ընթացքում երկու էթնիկ համայնքների ներկայացուցիչներ հայտարարեցին իրենց նկատմամբ կատարված խտրականությունների մասին: Այսպես, 2004թ. սեպտեմբերի 24-ին տեղական իշխանությունները հրաժարվել են օգնություն տրամադրել Դիմիտրովո գյուղին, որտեղ բնակչության զգալի մասը ասորիներ են: Ըստ ասորական երիտասարդական «Աշուր» կենտրոնի ղեկավար, ՀՀ նախագահի աշխատակազմին կից ազգային փոքրամասնությունների հարցերի համակարգող խորհրդի անդամ Իրինա Գասպարյանի՝ այդ գյուղում խտրականություններ են կատարվել վարչական պաշտոնների նշանակումների ընթացքում²⁹: Սակայն տեղական իշխանություններին մեղադրում են առհասարակ ամբողջ բնակչության նկատմամբ նման խախտումների համար, անկախ բնակչության էթնիկ ծագումից: Երկրորդ դեպքը վերաբերում է հրեական համայնքի ներկայացուցիչներին, որոնք մեղադրում են ԱԼՍ հեռուստատալիքին եւ «Հայ-արիական միաբանությանը», մասնավորապես, դրա ղեկավար Արմեն Ավետիսյանին՝ հակահրեական տրամադրություններ ստեղծելու մեջ³⁰: 2005թ. հունվարին հրապարակված ԱՄՆ Պետդեպարտամենտի՝ տարբեր երկրներում հակասեմիտիզմի դրսևորումների վերաբերյալ զեկույցում նշված է Հայաստանում եւս նման տրամադրությունների առկայության մասին՝ հիշատակելով ԱԼՍ հեռուստակայանը եւ «Հայ-արիական միաբանությունը»³¹: Բայց, թեւ հիշյալ կազմակերպությունների եւ մանավանդ «Հայ-արիական միաբանության» կողմից որոշակի ելույթներ եղել են³², առայժմ հասարակության մեջ հակասեմիտական տրամադրություններ չեն նկատվում: «Հայ-արիական միաբանության» ազդեցությունն աննշան է, եւ նրա տեսակետը բնավ հասարակական կարծիքի լայն սպեկտր չի ներկայացնում: Տվյալ հիմնախնդիրը կարող է սրվել այն դեպքում, երբ նման ելույթները կամ նման տրամադրությունների գոյության մասին հայտարարությունները հակասեմիտիզմը խթանող դեր կատարեն: Հարկ է լրջորեն մոտենալ հիմնախնդիրին եւ անհապաղ արձագանքել առհասարակ Հայաստանի որեւէ էթնիկ խմբի դեմ ելույթներին: Ուշագրավ է այն իրողությունը, որ Արմեն Ավետիսյանը հրապարակային կերպով, բռնություն գործադրելու սպառնալիքով ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելու համար (ՀՀ Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի երկրորդ մասի հատկանիշներով) քրեական պատասխանատվության կանչվեց ոչ թե հիշյալ հայտարարություններից, այլ ԱՄՆ Պետդեպարտամենտի զեկույցից հետո: 2005 թ. հունվարի 24-ին Ա.Ավետիսյանը ձերբակալվեց Երեւան քաղաքի դատախազությունում, նույն օրը Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը նրան նախնական կալանքի ենթարկելու սանկցիա տվեց: Արմեն Ավետիսյանի դատավարությունը տեղի ունեցավ 2005 թվականի մարտին: Նա դատապարտվեց 3 տարի պայմանական ազատազրկման եւ հենց դատարանի դահլիճից ազատ արձակվեց:

Հայաստանում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության կարելու քայլ էր նրանց վերաբերող օրինագծի մշակման աշխատանքների երկրորդ փուլի սկսվելը՝ 2005 թվականի աշնանը:

²⁹ *Assyrians In Armenia Allege Discrimination* on Radio Free Europe/ Radio Liberty <<http://www.rferl.org/newsline/2004/09/2-tca/tca-270904.asp>> 2004-09-27.

³⁰ Հայ-հրեական նոր սկանդալ:- «Հայկական ժամանակ», 2004, 13 նոյեմբերի:

³¹ Բոլոր երգերը երգել էինք:-«Հայկական ժամանակ», 2005, 13 հունվ.:

³² Եթե մի երկրում կա հրեական համայնք,երկրի կայունությունը վտանգված է:-«Իրավունք», 2004, 27 նոյեմբ.:

Օրինագիծը քննարկվել է շահագրգիռ նախարարություններում եւ գերատեսչություններում, միաժամանակ փորձաքննության է ենթարկվել միջազգային կազմակերպություններում: Հիմնականում դրական եզրակացություն է ստացվել ազգային փոքրամասնությունների եվրոպական կենտրոնից, ինչպես նաեւ՝ բարձր է գնահատվել շվեդական հելսինկյան կոմիտեի կողմից: Վերջինիս փորձագետի մեկնաբանություններում գրված է, թե «օրինագիծը բավականին մանրամասն է եւ անհստակություններ չունի»:

Ազգային փոքրամասնությունների մասին օրինագիծը կարելուր փաստաթուղթ է, որ ընդունվելուց հետո «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիային եւ Տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիային լիովին համահունչ կերաշխավորի Հայաստանի ազգային փոքրամասնությունների ինքնատիպության պահպանումն ու զարգացումը:

9. ² ԱՅԻՆ ԿՅՆՈՒՄԻ 3 ³ ԵՅ ԱՇԼԱԾ

Յայաստանում ալընտրանքային ծառայության մասին լուրջ քննարկումները սկսվեցին Եվրոպայի խորհրդին Յայաստանի անդամակցությունից հետո (2001թ.)³³, որի կապակցությամբ ստանձնած պարտավորություններից մեկը 3 տարվա ընթացքում այլընտրանքային ծառայության մասին օրենքի ընդունումն էր եւ մինչ այդ խղճի եւ համոզմունքների պատճառով զինծառայությունից խուսափելու համար ազատագրկման դատապարտված անձանց ազատ արձակումը: Սակայն այդ 3 տարիների ընթացքում մինչ 2004թ, Յայաստանում համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվողների (որոնք միայն «Եհովայի վկաներ» կրոնական համայնքի անդամներ էին, եւ որոնց թիվը հասնում էր 100-150-ի) մեծ մասը դատարարվել է ազատագրկման: 2003թ. օգոստոսի սկզբներով «Եհովայի վկաներ» կրոնական համայնքի 33 անդամներ, որոնք հրաժարվել էին զինվորական ծառայությունից կրոնական օրհանգիծներով, արդեն կալանավորված էին, եւս 25-ը (40 հազար զորակոչիկներից) ձերբակալված:

Երկու տարվա ձգձգումներից հետո մշակվեց «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքի նախագիծ, որը նախատեսում էր միայն այլընտրանքային զինվորական ծառայություն, միայն ՀՀ-ում գրանցված կրոնական կազմակերպությունների անդամների համար, այն էլ՝ երկար ժամկետով, ինչը եւս կողմից համարվեց պատժիչ բնույթ ունեցող: Այդ նախագիծը չէր լուծում հավատքի պատճառով զինծառայությունից խուսափող հիմնական խմբի՝ «Եհովայի վկաներ» կրոնական համայնքի հարցը: Այս մոտեցումն արժանացավ հասարակական կազմակերպությունների եւ եւս-ի քննադատությանը:³⁴ Որոշ փոփոխություններից հետո 2003թ. դեկտեմբերի 17-ին «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքն ընդունվեց: Եթե ՀՀ-ում չգրանցված կրոնական կազմակերպությունների անդամներին եւս թույլատրվեց անցնել այլընտրանքային ծառայություն, ծառայության ժամկետները մի փոքր մեղմվեցին, ապա մի շարք խնդրահարույց դրույթներ չփոփոխվեցին: Օրենքում այդպես էլ «այլընտրանքային քաղաքացիական ծառայություն» չնախատեսվեց: Մասնավորապես, օրենքը նախատեսում է այլընտրանքային ծառայության երկու տեսակ՝ այլընտրանքային զինվորական ծառայություն՝ ՀՀ զինված ուժերում եւ այլընտրանքային աշխատանքային ծառայություն՝ ՀՀ զինված ուժերից դուրս: Զինվորական այլընտրանքային ծառայության համար նախատեսվում է 36, այլընտրանքային աշխատանքային ծառայության համար՝ 42 ամիս՝ այն դեպքում, երբ պարտադիր զինվորական ծառայության ժամկետը 24 ամիս է: Օրենքում պահպանվեցին նաեւ միջազգային չափանիշներին հակասող դրույթներ, համաձայն որոնց այլընտրանքային ծառա-

³³ Մանրամասն՝ «Դիտորդ», 2002, թիվ 3, էջ 10:

³⁴ Մեր այլընտրանքը չի ընդունվում եւս-ի կողմից: «Առավոտ», 2003, 29 հոկտ.: Նույնի՝ Նույն տեղում, 30 հոկտ.: «Նոր փորձաքար պետական անվտանգության համար»: «Ազգ», 2003, 30 հոկտ.:

յության զորակոչի անցկացման աշխատանքներն իրականացնում եւ վերահսկվում են պարտադիր զինվորական ժամկետային ծառայության զորակոչի անցկացման հարցերով զբաղվող նույն մարմինները: Բացի այդ՝ այլընտրանքային ծառայողը պետք է կրի համազգեստ, որի ձեւը սահմանում է ՀՀ կառավարությունը: Այլընտրանքային ծառայություն անցածները չեն կարող աշխատանքի անցնել գործունեության այն բոլոր ոլորտներում, որոնք կապված են զենք կրելու, պահպանելու եւ օգտագործելու իրավունքի հետ:

«Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը ուժի մեջ մտավ 2004թ. հուլիսի 1-ից: Ըստ օրենքի՝ զորակոչի ենթակա անձը պետք է մինչ հերթական զորակոչին նախորդող *մարտի* կամ *սեպտեմբերի* մեկը դիմում ներկայացնի իր բնակության վայրի զինվորական կոմիսարիատ՝ դիմումում նշելով, թե ինչպիսի այլընտրանքային ծառայություն է ցանկանում անցնել եւ հիմնավորի, թե ինչու:

«Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ եւ 16-րդ հոդվածի 3-րդ մասերի համաձայն 2004թ. հունիսի 25-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «Այլընտրանքային ծառայություն անցնելու վայրերի ցանկը եւ այլընտրանքային ծառայողի համազգեստի ձեւը ու կրելու կարգը հաստատելու մասին» N 940-Ն որոշումը, համաձայն որի՝ այլընտրանքային զինվորական ծառայողներն իրենց ծառայությունն անցնելու են ՀՀ զինված ուժերի զորամիավորումների **առանձնացված** ստորաբաժանումներում՝ որպես զինվոր (Սյունիք, Գեղարքունիք, Տավուշ), այլընտրանքային աշխատանքային ծառայությունն անցկացվելու է ՀՀ առողջապահության ու աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունների ենթակայության տակ գործող կազմակերպություններում՝ որպես սանիտար (հոգեբուժարան, հաշմանդամների տուն-ինտերնատներ, ծերանոցներ, հոգեբուժական եւ նյարդահոգեբուժական հիվանդանոցներ, «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոց):

2004թ. աշնանային զորակոչի ընթացքում զինվորական կոմիսարիատներում այլընտրանքային ծառայության հավակնող զորակոչման ենթակա քաղաքացիներին ոչ միայն տեղեկություն չի տրվել այլընտրանքային ծառայության հնարավորությունների մասին, այլեւ շատ դեպքերում զինկոմիսարիատի պաշտոնատար անձինք բավարար իրազեկ չեն եղել, թե ինչ է իրենից ներկայացնում տվյալ ծառայությունը, թե տվյալ ծառայության համար զորակոչվածներն ինչ վայրերում եւ ինչպես պետք է ծառայությունն անցնեն³⁵:

Ձինծառայությունից խուսափելու վերաբերյալ դատավճիռների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2003թ. դեկտեմբերի 17-ին օրենքի ընդունումից հետո, երբ այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններն էին կատարվում, այլընտրանքային ծառայության հավակնողները շարունակում էին կալանավորվել եւ դատապարտվել ազատազրկման: *Արմավիրի մարզի առաջին ասյանի դատարանը Արսակ Սահյանի գործով իր N 48203003 2004թ. հունվարի 26-ի դատավճռով ամրագրել է, որ զինծառայությունից խուսափելը կրոնական հանդուժման հետ կապված է, որ զինծառայությունից խուսափելը կրոնական հանդուժման հետ կապված է, որ զինծառայությունից խուսափելը կրոնական հանդուժման հետ կապված է, որ զինծառայությունից խուսափելը կրոնական հանդուժման հետ կապված է, որ զինծառայությունից խուսափելը կրոնական հանդուժման հետ կապված է:*

³⁵ Մանրամասն տես «Պիտորդ», 2004, թիվ 4, էջ 14:

2004թ. սեպտեմբերի 20-ի դրությամբ «Եհովայի վկաներ» համայնքի 8 անդամներ դասադարձվել են ազատազրկման եւ զսնվում են Կոչի, Նուրա-րաբենի ֆրեակասարողական հիմնարկներում:³⁶ Այս 8 անձինք եւս առջեւ Հայաստանի պարտավորությունների համաձայն պետք է ազատ արձակ-վեին, նրանց պետք է այլընտրանքային ծառայություն անցնելու մասին տեղեկություն եւ համապատասխան հնարավորություն տրվեր:

Նոր Քրեական օրենսգրքի 327 հոդվածի 1 կետով ժամկետային զինվորա-կան ծառայության հերթական զորակոչից խուսափելը ... լիցենզիայով և սու-զանով՝ նվազագույն աշխատավարձի 300-500-ադրամով, կամ՝ կա-լանով առավելագույնը 2 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առա-վելագույնը 2 ամիս ժամկետով՝ նախկին 3 ամիս փոխարեն: Սակայն եթե նախկինում դասարանները չէին կիրառում առավելագույն լիցենզիայի, առաջին նոր Քրեական օրենսգրքի ընդունումից հետո դասարանները սկսեցին կիրառել հիմնականում **առավելագույն լիցենզիայի** (2 ամիս ազա-տազրկում): Եթե նույնիսկ առաջին անգամի դասարանը նշանակում է մեղմ լիցենզիա, հիմնականում ազատազրկման ժամկետները երկարացվում են վե-րաբերյալ դասարանի կողմից՝ լիցենզիայից զրկվածությամբ, որ «լիցենզիա չի հա-մապատասխանում կասարված հանցանքի ծանուցմանը» եւ «նվազ խիստ լիցենզիա չի կարող առաջարկել լիցենզիայի նշանակումը»³⁷: Ազատազրկման դասադարձված Եհովայի վկա 8 անձանցից չորսը ստացել են 2 ամիս, 3-ը՝ 1.5 ամիս, մեկը՝ 1 ամիս: Եվ միայն մեկը՝ Ստեփան Երեմյանը, զինծառա-յությունից խուսափելու համար (ՔՕ հ.327/1) լիցենզիա է 300.000 դրամ սուզանով:

Պատժը կրելուց հետո շատերը զորակոչվում էին եւ զինծառայությունից կրկին հրաժարվելու դեմքում՝ երկրորդ անգամ դասադարձվում ազա-տազրկման: Ինչը խախտում է նույն հանցագործության համար **երկրորդ անգամ լիցենզիա** արգելող ֆրեակասարողական հիմնարկում հանրաճանաչ սկզբունքը եւ ՀՀ ՔՕ 10 հոդվածը:³⁸

Նշենք, որ եւս բանաձեւերի համաձայն Ազգային ժողովը պետք է փո-փոխեր օրենքը՝ վերացնելով անհամապատասխանությունը միջազգա-յին չափանիշներին եւ սահմանելով, որ այլընտրանքային աշխատանքա-յին ծառայությունը պետք է վերահսկվի քաղաքացիական մարմնի կող-մից: Նույն քաղաքացիական մարմնին անհրաժեշտության դեպքում պետք է հոգա նաեւ ծառայողների բժշկական կարիքները:

2004թ. նոյեմբերի 22-ին «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարվեցին փոփոխություններ: Սակայն այլընտրանքային ծառայության ժամկետների, անցնելու կարգի, վայրերի, կազմակերպող եւ վերահսկող մարմինների հետ կապված խնդիրները չլուծվեցին: Դեռ ավե-լին էթե 2003թ. դեկտեմբերի 17-ին ընդունված օրենքում նախատեսվում էր, որ այլընտրանքային ծառայողը ցանկացած պահի կարող է անցնել պարտադիր զինվորական ծառայության, իսկ պարտադիր զինվորական ծառայությունից այլընտրանքային անցնելու մասին նշված չէր, ապա փո-փոխություններով ուղղակի արգելվել է պարտադիր զինվորական ծառա-յություն անցնողին փոխադրվել այլընտրանքային ծառայության:

³⁶ Ընդ որում կրոնական համոզմունքների պատճառով զինծառայությունից հրաժարված Արամ Մանուկյանը դատապարտվել է 2 տարվա ազատազրկման, երբ Այլընտրանքային ծառայության մասին օրենքն արդեն ու-ժի մեջ էր մտել:

³⁷ ՀՀ քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանի N Զ-94/04 2004թ. դատավճիռը Արամ Մա-նուկյանի գործով, ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի N 48203003 2004թ. հունվարի 26-ի դա-տավճիռը Արտակ Սախյանի գործով եւ այլն:

³⁸ Մանրամասն տես «Դիտորդ», 2004, թիվ 4, էջ 16::

Օրենքի 24 հոդվածով նախատեսվում էր մինչ օրենքի ուժի մեջ մտնելը՝ 2004թ. հունիսի 1-ը, ընդունել այլընտրանքային աշխատանքային ծառայողի եւ նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովությունը եւ այլընտրանքային աշխատանքային ծառայողի պատասխանատվությունը սահմանող օրենքները: Սակայն դրանք այդպես էլ չընդունվեցին: «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքում 2004թ. նոյեմբերի 22-ին կատարված փոփոխություններով եւ լրացումներով նախատեսվեց, որ (հ.հ. 21, 22) այլընտրանքային աշխատանքային ծառայողների եւ նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովությունը (ներառյալ՝ աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետեւանքով հաշմանդամ ճանաչվելու կամ մահանալու դեպքում) իրականացվում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Այլընտրանքային զինվորական ծառայողներն իրենց կատարած իրավախախտումների եւ հանցագործությունների համար պատասխանատվություն են կրում պարտադիր զինվորական ծառայության զինծառայողներին հավասար՝ օրենքով սահմանված կարգով, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայողները՝ ընդհանուր հիմունքներով՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2004 թ. աշնանային զորակոչի ընթացքում այլընտրանքային ծառայության համար դիմած «Եհովայի վկաներ» կազմակերպության 22 անդամներ եւ մեկ մոլոկան ծառայության ուղարկվեցին վերոնշյալ հաստատությունները: Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության՝ այլընտրանքային ծառայության համար դիմած քաղաքացիներից միայն մեկն է ընտրել այլընտրանքային զինվորական ծառայություն, մյուսները՝ դիմել են այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու համար: Կառավարության որոշմամբ 2004թ. աշնանային զորակոչի համար նախատեսվել էր այլընտրանքային ծառայության 349 տեղ: Նրանցից 300-ը կարող էին անցնել այլընտրանքային զինվորական ծառայություն, իսկ 49-ը՝ այլընտրանքային աշխատանքային ծառայություն: Ըստ ՀՀ կառավարության որոշման՝ վերջիններիս վերահսկողությունը տեղերում անմիջականորեն դրված է համապատասխան հիմնարկների ղեկավարների վրա: Այսինքն՝ կարելի է ասել, որ ծառայության ընթացքն առաջին հերթին պայմանավորվում է տվյալ հիմնարկի ղեկավարի՝ այլընտրանքային ծառայություն նախընտրող անձանց նկատմամբ վերաբերմունքով:

Հայաստանի Հելսինկյան կոմիտեն այլընտրանքային ծառայության անցկացման ինը հաստատություններից, 4-ում՝ Վարդենիսի եւ Գյումրիի հոգեբուժական հիվանդանոցներում, «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցում եւ Նորքի տուն-ինտերնատում անցկացրել է մոնիտորինգ: 22 այլընտրանքային ծառայողներից հետազոտությանը մասնակցել է 13-ը: Անցկացվել են անհատական մանրակրկիտ հարցազրույցներ հիմնարկների ներկայացուցիչների եւ այլընտրանքային ծառայողների հետ: Մոնիտորինգի արդյունքում ստեղծվել է այն տպավորությունը, որ կառավարությունը ծառայության վայրերն ընտրել է հապշտապ, առանց համապատասխան ուսումնասիրությունների՝ հաշվի չառնելով տվյալ հիմնարկներում այլընտրանքային աշխատանքային ծառայության անցկացման նպատակահարմարությունը:

Այլընտրանքային աշխատանքային ծառայություն իրականացնող հարցված 13 անձանցից 11-ի դեպքում առաջին եւ հիմնական խնդիրը կապված է եղել սանիտարի աշխատանքի պարտականությունների կատարման հետ: Նման խնդիր չի արձանագրվել միայն «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցում, որտեղ երկու ծառայողները գոհ են եղել իրենց աշխատանքից: Նրանք պարզապես չեն կատարել սանիտարի աշխատանքը: Հիվանդանոցի գլխավոր բժիշկ Արա Ասոյանը տեղեկացրել է, որ տղաները կատարում են տարբեր աշխատանքներ. մասնակցում են շինարարության, բազաներից դեղորայք ստանալու, ձյուն մաքրելու, ծանր հիվանդներից տեղափոխելու աշխատանքներին, սակայն իրենք նրանց չեն հանձնարարում զուգարան կամ հիվանդի տակը մաքրել: Գլխավոր բժշկի խոսքերը հաստատեցին հիվանդանոցում ծառայություն անցնող երկու երիտասարդները: Նրանց միակ դժգոհությունը կապված էր ծառայության երկար ժամկետի եւ իրենց կրոնական համայնքի ժողովներին մասնակցելու հնարավորության բացակայության հետ:

Վարդենիսում ծառայողներից մեկն ասել է, որ, պայմաններից ելնելով, մի պահ զղջացել է, որոշել է հրաժարվել: Սակայն, հետո շարունակել է ծառայությունը: Հարցված 13 ծառայողներից միայն մեկն է նախապես տեղեկացված եղել, որ պետք է սանիտարի աշխատանք կատարի: Մնացած 12-ն ասել են, որ իրենց հայտնել են, թե պետք է աշխատեն տվյալ հիմնարկներում, բայց պարտականության մասին ոչինչ չի ասվել:

Վարդենիսի հոգեբուժական հիվանդանոցում այլընտրանքային աշխատանքային ծառայությունն անցնող 8 ծառայողները հարցման ժամանակ հայտնել են, որ սկզբում զինվորական կոմիսարիատում ասել են, թե արժանապատվությունը նսեմացնող որեւէ աշխատանքներ չեն կատարելու, բայց այստեղ գալուց 2 օր հետո զինկոմիսարը եկել ու ծանոթացրել է կառավարության որոշմանը, ըստ որի՝ նրանք սանիտարի աշխատանք պետք է կատարեն՝ իր բոլոր բաղադրիչներով, նաեւ մաքրեն զուգարանները եւ դիակ հարդարեն: Ծառայողները հրաժարվել են այդ աշխատանքներից: Տնօրինությունը կանչել է ռազմական ոստիկանության եւ զինդատախազության ներկայացուցիչներին, որոնք մշտական վերահսկողություն են իրականացրել: Վերջիններս ծառայողներին հայտնել են, որ այդ աշխատանքներից հրաժարվելու դեպքում ծառայողները կենթարկվեն քրեական պատասխանատվության «Ձինծառայության մասին» օրենքի 364-րդ հոդվածով: Հելսինկյան կոմիտեի մոնիտորինգային խմբի 2005 թ. փետրվար-մարտ ամիսներին կատարած ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Վարդենիսի հոգեբուժական հիվանդանոցում այլընտրանքային ծառայություն անցնողները հետեւել են բաժանմունքի սանիտարական վիճակին, հարդարել հիվանդների անկողինները, լվացել հատակը: Սակայն զուգարան դեռ չեն մաքրել եւ դիակ չեն հարդարել: Ծառայողները բողոքել են վերահսկողություն իրականացնող մարմիններից: Բացի հիմնարկի ղեկավարությունից, նրանց անընդհատ վերահսկել են ՀՀ պաշտպանության նախարարության մի քանի կառույցներ՝ տարածքային ռազմական ոստիկանությունը, դատախազությունը եւ զինկոմիսարիատը:

Հարցվածները հիմնականում չեն ունեցել կապի միջոցներից օգտվելու հնարավորություն՝ մի դեպքում զանգահարելը թանկ է արժեցել, ուրիշ դեպքում՝ կապ չի եղել, որոշ տեղերում էլ չի թույլատրվել: Թերթեր չեն ստացվել: Հիմնականում չի եղել նաեւ հեռուստացույց: Իսկ Վարդենիսում ծառայողներին արգելել են կարդալ իրենց կրոնական գրականությունը, վերցրել են նաեւ Աստվածաշունչը:

Ըստ հարցումների արդյունքների՝ բարվոք վիճակում չեն նաեւ սանիտարահիգիենիկ՝ լողանալու, անկողնային սպիտակեղենը լվանալու եւ փոխելու պայմանները: Ծառայողներն իրենք են վաճել իրենց անկողնային սպիտակեղենը, սնվել ծառայության վայրերի ճաշարաններում՝ հիվանդների եւ ծերերի համար նախատեսված սննդակարգով:

Ծառայության հինգերորդ ամսում՝ 2005թ, մայիսին, այլընտրանքային ծառայություն անցնող բոլոր քաղաքացիները հրաժարվել են ծառայությունը շարունակելուց: Նրանք հայտարարել են, որ ծառայությունն անբողջությամբ այլընտրանքային չէ եւ վերահսկվում է պաշտպանության նախախարության կողմից: Նրանց նկատմամբ հարուցված են քրեական գործեր:

13 «Եհովայի վկաները» եւ մոլոկանն արդեն դատապարտվել են տարբեր ժամկետների ազատազրկման՝ դասալքության եւ ծառայության վայրը ինքնական լքելու մեղադրանքներով (2-3,6 տարի): Հովհաննես Ասլանյանը մահացել է ավտովթարից՝ իր դատին մեկնելու ճանապարհին: Ութ հոգու նախապես մեղադրում էին կազմակերպված դասալքության մեջ, որի համար նախատեսվում է 4-10 տարվա ազատազրկում: Նրանց գործը սկզբում վարել է զինվորական դատախազությունը, ապա՝ քաղաքացիականը: Նրանցից 4-ը արդեն դատապարտվել են 3-ական տարվա ազատազրկման՝ ծառայության վայրը ինքնական լքելու մեղադրանքով:

Եվս 19 «Եհովայի վկաներ»՝ Հայաստանից եւ մեկը՝ Ղարաբաղից դատապարտվել են ազատազրկման՝ հերթական զինվորական զորակոչից խուսափելու համար՝ տարբեր ժամկետներով (1-4 տարի): Հովհաննես Խաչատրյանը գտնվում է մեկուսարանում, նրա դատը դեռ չի ավարտվել:

2005թ. գարնանային զորակոչին այլընտրանքային ծառայություն անցնելու դիմումներ չեն եղել:

Ապահովելու համար, որ ԵԽ-ի պահանջով ընդունված «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը մեզանում գործի մարդասիրության եւ հանդուրժողականության հենքի վրա, ծառայի իր նպատակին, եւ ընդունելի լինի թե իշխանությունների, թե հանրության համար, անհրաժեշտ է «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում եւ ՀՀ կառավարության «Այլընտրանքային ծառայություն անցնելու վայրերի ցանկը եւ այլընտրանքային ծառայողի համազգեստի ձեւը ու կրելու կարգը հաստատելու մասին» N 940-Ն որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարել: Մասնավորապես.

1. աշխատանքային ծառայությունը վերածել իրապես քաղաքացիական ծառայության՝ դրա վերահսկողության իրականացման իրավասությունը վերապահելով ոչ ռազմական գերատեսչություններին,

2. սահմանել քաղաքացիական ծառայության ավելի կրճատ ժամկետ,

3. ծառայողների բուժօգնության խնդիրների լուծման պարտականությունը դնել սովորական քաղաքացիական բուժփիմնարկների վրա,

4. վերացնել զինվորական համազգեստ կրելու այլընտրանքային ծառայողի պարտավորությունը,

5. այլընտրանքային ծառայություն անցնելու վայրերի ցանկը սահմանելիս հաշվի առնել տվյալ ծառայությունն անցնող անձանց մասնագիտական հմտությունները եւ համապատասխան հաստատությունների պահանջումներն ու յուրահատկությունները:

10. ²ÝÓÝ³ İ³ Ýıı Û É»ñÇå³ ßıå³ ÝáoÃÛ Ý ı »ñ μ»ñ Ëúñ»Ye¹ ãöÃıäı

Անձնական կյանքի պաշտպանության իրավունքը համընդհանուր ճանաչում գտած իրավունքներից մեկն է: Անհատները պետք է համոզված լինեն, որ իրենց անձնական տվյալների հետ պատշաճ կերպով են վարվում: Անձնական տվյալները ներառում են մարդու ինքնությունը բացահայտող՝ կառավարական գերատեսչությունների տրամադրության տակ գտնվող տեղեկությունները: Պետության քաղաքացիների անձնական տվյալների հավաքման, պահպանման եւ տնօրինման վերաբերյալ կառավարության գործունեությունը առաջացնում է բազմաթիվ խնդիրներ:

Հաշվի առնելով հասարակության աճող անհանգստությունը ինչպես կառավարական, այնպես էլ բիզնեսի ոլորտում անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ, Եվրոպայի խորհուրդն ընդունել է «Անձնական տվյալների ավտոմատ մշակման ժամանակ անհատների պաշտպանության վերաբերյալ» թիվ 108 Կոնվենցիան (1981): Կոնվենցիան սահմանում է այն հիմնական սկզբունքները, որոնք պետք է ընդունվեն անդամ պետությունների կողմից՝ հանրային եւ մասնավոր տվյալների բազայում զետեղված անձնական տվյալների մշակման ժամանակ: Կոնվենցիայի կարելուրագույն տարրերից են կողմերի պարտավորությունները՝ անձնական տվյալների պաշտպանության նպատակով համապատասխան միջոցներ ապահովելու եւ ներքին օրենքի դրույթների խախտման դեպքերում անհրաժեշտ պատժամիջոցներ ու հատուցումներ նախատեսելու, ինչպես դա սահմանված է Կոնվենցիայում: Հաշվի առնելով Կոնվենցիան ստորագրած երկրներում համապատասխան վերահսկիչ մարմնի ստեղծման կարելուրությունը՝ Եվրոպայի խորհուրդը մշակեց Կոնվենցիայի Լրացուցիչ արձանագրությունը, որը հաստատեցին Կոնվենցիային միացած բոլոր պետությունները: Արձանագրությունը նաեւ անդրադառնում է անձնական տվյալների տարածմանը երկրի սահմաններից դուրս: Հայաստանը չի ստորագրել Եվրոպայի պետությունների մեծամասնության կողմից ստորագրված եւ վավերացված այս կարելուրագույն միջազգային փաստաթուղթը:

Չնայած այն փաստին, որ Հայաստանի Հանրապետությունը չի վավերացրել Եվրոպայի խորհրդի թիվ 108 կոնվենցիան, երկրի Ազգային ժողովը 2003 թ. ընդունեց «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքը: Ընդհանուր առմամբ սույն օրենքը համապատասխանում է Կոնվենցիայում ամրագրված սկզբունքներին: Սակայն Հայաստանի օրենդրության մեջ կան որոշ բացթողումներ, որոնք թուլացնում են հանրային եւ մասնավոր տվյալների բազայում զետեղված համապատասխան անձնական տվյալների պաշտպանությունը: Այսպես, Կոնվենցիայի 10 հոդվածին չի համապատասխանում այն, որ օրենքում բացակայում է «*համադասախան դասժամիջոցների եւ հատուցումների կիրառումը ներքին օրենքի դրույթների խախտման դեպքում, ըստ սվյալների դաստիարակության հիմնական սկզ-*

բունճների»: Չնայած «Անհատական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը պաշտոնապես հայտարարում է, որ անհատի կողմից օրենքի խախտումը նախատեսում է պատասխանատվություն այդ խախտման համար, տվյալների պաշտպանության վերաբերյալ գործող օրենքը դեռ չի նախատեսում քրեական պատժամիջոցների կիրառում: Կարելի է ենթադրել, որ պաշտոնյաների կողմից սույն օրենքի դրույթների խախտման դեպքերում կձեռնարկվեն կարգապահական միջոցներ, սակայն պատասխանատվության համապատասխան միջոցներ նախատեսված չեն առևտրական կամ հասարակական կազմակերպությունների անձնակազմի, ինչպես նաև՝ ֆիզիկական անձանց կողմից դրանք խախտելու դեպքում: Ակնհայտ է, որ կարգապահական միջոցները չեն կարող դիտվել որպես քաղաքացիների անձնական կյանքի պաշտպանության ձեւ:

Երկու կարեւոր խնդիրները՝ վերահսկիչ մարմնի ստեղծումը եւ անձնական տվյալների տարածումը երկրի սահմաններից դուրս, Հայաստանի օրենսդրությունում համապատասխան ձեւակերպում չեն ստացել: Չնայած օրենքը սահմանում է տվյալների պաշտպանության վերահսկիչ մարմին, այն վերջինիս չի օժտում վերահսկիչ գործառույթներով եւ հասարակական կամ մասնավոր կազմակերպությունների կողմից անձնական տվյալների օգտագործումը վերահսկելու պատասխանատվությամբ: «Անհատական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը չունի անձնական տվյալներն արտասահման ուղարկելու վերաբերյալ առանձին բաժին: Օրենքի համաձայն, անձնական տվյալների արտասահման ուղարկելու կարգը պետք է քննարկվի միջազգային պայմանագրերում կամ էլ 6 հոդվածին համաձայն, այն է՝ տվյալների ուղարկումն արտասահման պետք է իրականացվի անձնական տվյալներ տրամադրող սուբյեկտի համաձայնությամբ: Օրենքը մանրամասնորեն չի սահմանում այն պայմանները եւ ընթացակարգը, որոնք թույլտվություն են շնորհում ուղարկելու անձնական տվյալները երրորդ երկրների սուբյեկտներին, այն չի սահմանում նաև վերահսկիչ մարմնի պատասխանատվությունը՝ այդպիսի թույլտվությունը ստուգելու եւ շնորհելու համար: Դա նույնպես պետք է դիտվի որպես եվրոպական չափանիշների խախտում եւ քաղաքացիների անձնական կյանքի պաշտպանության ոչ համարժեք մակարդակի ապահովում՝ Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի համատեքստում:

11. 1 «Օ» 3 ii áǾǾŸ Ý »ǾĒ áèùϚ 3 1/2 i áǾǾŸ Ý μŸ3 . 3 í 3 é

2001 թվականի հունվարի 25-ին Եվրոպայի խորհրդի անդամ դառնալով՝ Հայաստանը տեղեկատվության եւ խոսքի ազատության բնագավառին առնչվող երկու հիմնական պարտավորություն էր վերցրել.

- ա) մեկ տարվա ընթացքում ընդունել ՁԼՄ-ների մասին նոր օրենք
- բ) ազգային հեռուստաալիքը վերակազմավորել հանրայինի, որի ղեկավարումը կիրականացվի անկախ վարչական խորհրդի կողմից:

Թեպետ 2000 թվականի հոկտեմբերի 9-ին ընդունված «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքով ստեղծվել է Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը, սակայն պարտավորության երկրորդ մասը՝ նրա ղեկավարումը անկախ վարչական մարմնի կողմից, կարելի է ասել չի կատարվել (*այդ մասին ավելի մանրամասն՝ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին ՀՀ օրենքը եւ տրակտիկան» բաժնում*) որովհետեւ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ձեւավորվում է Հանրապետության նախագահի կողմից: Իշխանությունները միշտ պատճառաբանում էին, թե նման խորհուրդ ձեւավորելու իրավասություն, ըստ Սահմանադրության, ուրիշ որեւէ մարմին չունի: Նույն պատճառաբանությունն էր բերվում նաեւ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի ձեւավորումը ՀՀ նախագահի իրավասությանը թողնելով, եւ ասվում էր, թե Սահմանադրության փոփոխություններով հիշյալ խնդիրները պիտի լուծվեն:

2005 թվականին շրջանառության մեջ դրվեց ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը, որի՝ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված տարբերակում հեռարձակման ոլորտը կարգավորող մարմնի անդամներին պիտի նշանակեր ԱԺ-ը՝ Հանրապետության նախագահի ներկայացմամբ: Ընդ որում, խոսքը միայն մեկ մարմնի մասին էր: Այնուհետեւ՝ լրագրողական կազմակերպությունների բողոքից եւ Վեներտիկի հանձնաժողովի հետ քննարկումներից հետո Սահմանադրության նախագծի (ապա եւ հանրաքվեով ընդունված Սահմանադրության փոփոխությունների) համապատասխան հոդվածը (83.2) ստացավ հետեւյալ ձեւակերպումը.

«Հեռարձակվող լրացվության միջոցների ազատության, անկախության եւ բազմազանության աղահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին, որի անդամների կեսը վեց տարի ժամկետով ընտրվում է Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը նշանակվում է Հանրապետության նախագահի կողմից՝

վեց սարի ժամկետով: Ազգային ժողովն այդ մարմնի անդամներին ընտրում է դատազանավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»:

Այս սահմանման մեջ Երեւանի մամուլի ակումբի (ԵՄԱ) փորձագետները վիճահարույց են համարում՝

Ա) մարմնի ստեղծման նպատակը (**Չեռարձակվող լրացվության միջոցների ազատության, անկախության եւ բազմազանության ադապտացիան**). առաջին հերթին ոչ թե մարմինն է ստեղծվում նշված նպատակներով, այլ մարմնի անկախությունն ու ազատությունը ապահովելու համար պիտի սահմանվեր նրա նշանակման կարգը:

Բ) Չողվածը խոսում է միայն մեկ մարմնի մասին, մինչդեռ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի բանաձեւերում միշտ խոսք է գնացել կարգավորող մարմինների մասին, նկատի առնելով նաեւ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը: Եվ թեպետ լրագրողական կազմակերպությունները բազմաթիվ քննարկումների ժամանակ նշել են, որ եթե Սահմանադրությունը համապատասխան կարգ է սահմանում, ապա դա պետք է վերաբերի երկու կարգավորող մարմիններին, փոփոխությունների հեղինակները մնացին անդրդվելի:

Գ) Չեռարձակման բնագավառը կարգավորող մարմնի ձեւավորման այն կարգը, որ սահմանում է Սահմանադրությունը, արդեն իսկ կադապարների մեջ է դնում «Չեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում ապագայում կատարելիք հնարավոր փոփոխությունները եւ չի ապահովելու այդ մարմնի անկախությունը:

Դ) Թեպետ, ըստ ԵԽԽԿ **1405 (2004)** բանաձեւի, «Չեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարելիք փոփոխություններից հետո պետք է փոխվի Չեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կազմը, փոփոխված Սահմանադրության անցումային դրույթները նախատեսում են (Չողված 117, կետ 11)՝ **«83.2 հողվածով նախատեսված անկախ մարմնի անդամները շարունակում են դատազանավարել մինչեւ «Չեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքով սահմանված իրենց լիազորությունների ժամկետի ավարտը: Նրանց դատազանավարության ժամկետը լրանալու կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքերում թափուր տեղերը լրացվում են հաջորդաբար Ազգային ժողովի եւ Հանրադատության Նախագահի կողմից»:**

Խոսքի եւ տեղեկատվության ազատությանն է վերաբերում Սահմանադրության փոփոխությունների 27 հողվածը, որում ասված է՝

«Չողված 27. Յուրաքանչյուր ով ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ով ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ դեպքում սահմաններից:

Լրացված միջոցների եւ սեղեկացվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

Պետությունը երաշխավորում է սեղեկացվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունն առաջարկող անկախ հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության առկայությունը եւ գործունեությունը:»

Փոփոխված Սահմանադրության այս իրավունքը, որոշ այլ իրավունքների եւ ազատությունների հետ, կարող է սահմանափակվել ***«միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում դեմական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարեփրկի, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, դատվի եւ բարի համբավի պաշտպանության համար»*** (հոդված 43): Այդ իրավունքներն ու ազատությունները կարող են նաեւ ***«օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արակարգ դրության ժամանակ՝ արակարգ իրավիճակներում դարսավորություններից շեղվելու վերաբերյալ սահմանած միջազգային դարսավորությունների շրջանակներում»*** (հոդված 44):

Հայաստանյան յոթ լրագրողական հասարակական կազմակերպություններ խորհրդարանում առաջին ընթերցմամբ ընդունված նախագծում մի շարք փոփոխություններ առաջարկեցին: Մասնավորապես, առաջարկվում էր Սահմանադրությամբ արգելել գրաքննության ցանկացած դրսեւորում: Առաջարկությունը բխում էր այն իրողությունից, որ ոչ վաղ անցյալում գրաքննության մարմիններ ունեցած երկրներում, ինչպիսին նաեւ Հայաստանն է, դեռեւս պահպանվում է թաքնված գրաքննության տարրեր կիրառելու վտանգը: Սահմանադրության մեջ գրաքննության ցանկացած ձեւն արգելելու մասին դրույթը կերաշխավորեր դրա թաքնված դրսեւորումների երեւան գալը զանազան օրենքներում: Սակայն այդպիսի դրույթ Սահմանադրության փոփոխությունների մեջ չներառվեց:

Այսպիսով՝ փոփոխված Սահմանադրությունը չի լուծում ՁԼՍ ոլորտին առնչվող երկու գլխավոր խնդիրը՝ սահմանադրորեն չի ամրագրում գրաքննության բացառումը եւ չի ապահովում հեռարձակման բնագավառը կարգավորող երկու մարմինների անկախությունը:

Քանի որ սահմանադրական փոփոխություններն անմիջականորեն առնչվում են նաեւ ընտրական օրենսդրությանը, վերլուծենք նաեւ այստեղ կատարված փոփոխությունները:

Խոսքի եւ տեղեկատվության ազատությունն ընտրությունների եւ հանրաքվեների ժամանակ

Ընտրությունների եւ հանրաքվեների ժամանակ տեղեկատվության ազատությանը վերաբերող դրույթներ կան եւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում, եւ Ընտրական օրենսգրքում, եւ «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում: Այսպես, «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածն ասում է.

«Հանրաքվեների եւ ընտրությունների փարոզչությանը նախորդող ու դրանց անցկացման ժամանակաշրջանում հեռուստառադիոհաղոր-

դումները հեռարձակվում են ընտրությունների ու հանրավեճների մասին օրենսդրությանը համադասասխան:

Նշված ժամանակահատվածում արգելվում է հեռուստառադիոընկերությունների կողմից հեռարձակել ֆաղափական կամ այլ ֆարոզական նյութ՝ սեղեկասվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների ՏԵՄԲՎ: Նման հաղորդումների սփռումը հեռուստատեսությամբ ղեկ է ուղեկցվի էկրանի վրա ղարսադիր անընդմեջ լուսագրով՝ «ֆաղափական գովազդ» կամ «նախընտրական ֆարոզական հաղորդում», իսկ ռադիոսփռման դեղում՝ յուրաքանչյուր հաղորդման ընթացքում, ոչ ղակաս, ֆան երեք անգամ, ղեկ է հիշեցվի դրա մասին:

Հանրավեճների եւ ընտրությունների ֆարոզչության ժամանակաշրջանում հեռուստառադիոընկերությունները հրաղարակավ հայնում են վճարովի ֆաղափական գովազդի ու ֆարոզական այլ հաղորդումների՝ իրենց եթերաժամի արժեքը: Ցանկացողները վճարովի եթերաժամից օգսվում են ղայմանագրային կարգով եւ հավասար ղայմաններով»:

2005 թվականի մայիսի 19-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքով համարյա ամբողջովին խմբագրվել է Օրենսգրքի՝ նախընտրական քարոզչությանը վերաբերող 20-րդ՝ «Նախընտրական ֆարոզչությունը զանգվածային լրատվության միջոցներով» հողվածը: Այսպես, եթե մինչեւ փոփոխությունները ԸՕ-ի 20 հողվածը պարզապես սահմանում էր, թե «Հանրային ռադիոյից եւ հանրային հեռուստատեսությունից Հանրաղեսության Նախագահի թեկնածուներին եւ Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրական ցուցակներ առաղարած կուսակցություններին անվճար եթերաժամ սրամադրելու կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը», ապա փոփոխություններից հետո այս դրույթը խմբագրվել է՝

«Հանրային ռադիոյից եւ հանրային հեռուստատեսությունից Հանրաղեսության Նախագահի թեկնածուներին եւ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշիններին) անվճար եթերաժամ սրամադրելու կարգը եւ ժամանակացույցը յուրաքանչյուր համաղեսական ընտրության համար սահմանում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկեթի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում» եւ ավելացել է նոր դրույթ՝ «Հանրային հեռուստաընկերությունը եւ հանրային ռադիոն ղարսավոր են հավասար ղայմաններ աղահողել ընտրություններին մասնակցող բոլոր թեկնածուների եւ կուսակցությունների (կուսակցությունների դաշինների) համար: Հանրային հեռուստաընկերությամբ եւ հանրային ռադիոյով հեռարձակող լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինների կողմից իրականացվող նախընտրական ֆարոզարժավի վերաբերյալ ղեկ է ներկայացվի անկողմնակալ եւ գնահատականներից գերծ սեղեկասվություն՝ աղահողվելով արղար ու հավասար ղայմանների աղահղանումը:

Ընտրություններին մասնակցող թեկնածուի, կուսակցության կամ կուսակցությունների դաշինի կողմից միջոցառումներ չկազմակեր-

դելը կամ այդ միջոցառումների մասին տեղեկատվության բացակայությունը հիմք չի կարող հանդիսանալ ընտրությունների մյուս մասնակիցների ֆարոգարավի մասին զանգվածային լրատվության միջոցներով համադասասխան տեղեկություններ չհրատարակելու համար»: Ընդ որում այս դրույթը եւ նույն հոդվածի 4-րդ կետի պահանջը, ըստ որի **«Յամադեսական ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 10 օր հետո, դեռ է հրատարակվի հանրային ռադիոյով եւ հանրային հեռուստաընկերությամբ վճարովի եթերաժամի յուրաքանչյուր րոպեի գինը: Նախընտրական ֆարոգչության փուլում այդ գինը չի կարող փոփոխվել»**, տարածվում են նաեւ այլ (անկախ սեփականության ձեւից) հեռուստառադիոընկերությունների վրա (նույն հոդվածի 5-րդ կետ): Փոփոխություններով ավելացել է եւս մեկ կետ, ըստ որի **«Թերթերը եւ ամսագրերը, անկախ նրանց հիմնադիրներից, բացառությամբ կուսակցության կողմից հիմնադրված թերթերի եւ ամսագրերի, նախընտրական ֆարոգչական նյութեր հրատարակելիս դարձվոր են ատյահովել հավասար դայմաններ»:**

ԵՄԱ փորձագետների գնահատմամբ այս փոփոխություններն առաջադիմական քայլ են: Սակայն քանի դեռ դրանցից հետո համապետական ընտրություններ չեն կայացել, դժվար է գնահատել դրանց կիրառման արդյունավետությունը: Համենայն դեպս՝ 2003 թվականի երկու ընտրություններում (նախագահական եւ խարիրդարանական) լուսաբանման համաչափությունը, ըստ Երեւանի մամուլի ակումբի իրականացրած մոնիտորինգի, չէր պահպանվում: Հատկապես հեռուստալրատվական թողարկումներում, գործող նախագահի (2003թ. նախագահական ընտրություններում) եւ իշխանական կուսակցությունների քարոզարշավի լուսաբանմանը զգալիորեն ավելի շատ եթերաժամանակ էր հատկացվում:

2003 թվականի (ինչպես եւ դրան նախորդած համարյա բոլոր) ընտրությունների լուսաբանման ժամանակ խնդրահարույց էր մնում թեկնածուների (եւ նախագահի, եւ պատգամավորության թեկնածուների) պաշտոնական գործունեության լուսաբանումը: Նման լուսաբանումները լրատվական ծրագրերով դիտվում էին իբրեւ անուղղակի քարոզչության դրսեւորումներ: 2005 թվականի մայիսի 19-ի օրենքով Ընտրական օրենսգիրքը լրացվել է 22¹ հոդվածով: Այն ամբողջությամբ վերաբերում է քաղաքական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող, պետական, քաղաքացիական, տեղական ինքնակառավարման մարմինների ծառայող հանդիսացող թեկնածուների նախընտրական քարոզչության սահմանափակումներին, իսկ դրա 3) կետը՝ վերը նշված խնդրին: Ըստ այդ կետի՝

«Արգելվում է զանգվածային լրատվության միջոցներով այս (քաղաքական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող, պետական, քաղաքացիական, տեղական ինքնակառավարման մարմինների ծառայող հանդիսացող - խմբ.) թեկնածուների գործունեության լուսաբանումը, բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված դեմքերի, դաւսոնական այցերի եւ ընդունելությունների, ինչպես նաեւ տարերային աղետների ընթացքում վերջիններիս իրականացրած, ձեռնարկվող միջոցառումների»:

Անդրադառնանք հանրաքվեների ժամանակ խոսքի ազատությանը: «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 12.09.2001 թ., օրենքում փոփոխություններ են կատարվել 31.03.2003թ. և 28.09.2005թ.) 20-րդ հոդվածը վերաբերում է հանրաքվեի քարոզչությանը: Ըստ այդ հոդվածի, քարոզչությունը սկսվում է **«Հանրաքվե անցկացնելու մասին Հանրադատության Նախագահի հրամանագրի դաժնունակ հրատարակման օրվանից և ավարտվում փետրվարից մեկ օր առաջ»** և **«կարող է կատարվել զանգվածային լրատվության միջոցներով, հրատարակային ֆարոզչական միջոցառումների ձեռով (ժողովներ, հանդիպումներ, հրատարակային ֆննարկումներ, բանավեճեր, հանրահավաքներ, երթեր և ցույցեր), տրամադրված նյութեր հրատարակելու, ծայրահանգված և նկարահանված նյութեր տարածելու միջոցով»:**

Հանրաքվեի մասին ՀՀ օրենքը նաև նշում է այն անձանց, ովքեր չեն կարող քարոզչություն կատարել, ընդ որում, 28.09.2005 թվականի օրենքով այդ դրույթում էական փոփոխություններ են կատարվել: Այսպես, եթե մինչ փոփոխությունները քարոզչություն չէին կարող կատարել **«դատարանի և սեղանի ինֆակառավարման մարմինները, ինչպես նաև դրանց աշխատակիցներն իրենց աշխատանքային դատարանությունները կատարելիս»**, ապա այժմ՝ **«դատարանի և սեղանի ինֆակառավարման մարմինները, ինչպես նաև դրանց աշխատակիցները, բացառությամբ ֆաղափական և հայեցողական դաժնունակ զբաղեցնողների, իրենց աշխատանքային դատարանությունները կատարելիս»:**

Սակայն օրենքը որևէ ձեռով չի անդրադառնում հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ կողմ և դեմ կարծիքներ ունեցողներին ՁԼՄ-ներից օգտվելու հավասարությանը, ինչպես դա առկա է Ընտրական օրենսգրքում: Կա ընդամենը մեկ դրույթ, ըստ որի՝ **«Պետությունը երաշխավորում է հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ ֆարոզչության ազատ իրականացումը»:**

Երեւանի մամուլի ակումբը 2005 թվականի նոյեմբերի 5-ից 25-ը իրականացրեց ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի նոյեմբերի 27-ի հանրաքվեի՝ ՁԼՄ-ներում քարոզչության մոնիտորինգ:

Ըստ մոնիտորինգի եզրակացության՝ Հայաստանի հեռուստաընկերությունները չկատարեցին «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը. հանրաքվեի դրված հարցի քարոզչության համար վճարովի եթերաժամի սակագներ չհայտարարեցին և ընդհանրապես վճարովի եթերաժամ չտրամադրեցին: Եվ թեպետ հետազոտված թերթերը և հեռուստաընկերությունները քանակական առումով բավականին ուշադրության էին արժանացրել հանրաքվեի թեման, նրանց մեծամասնությունը հավատարիմ չեղավ լուսաբանման անաչառության և բազմակարծության սկզբունքին և հասարակությանը սահմանադրական փոփոխությունների էության մասին հավաստի և իրազեկ տեղեկատվությամբ չապահովեց (մոնիտորինգի արդյունքների մասին՝ հավելված 7):

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ընդունվեց 2003 թվականի սեպտեմբերի 23-ին եւ գործողության մեջ մտավ նույն թվականի նոյեմբերի 14-ից:

Օրենքը բաղկացած է 15 հոդվածից, որոնք վերաբերում են տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներին, տեղեկությունների գրանցմանը, դասակարգմանը եւ պահպանմանը, տեղեկատվության մատչելիության եւ հրապարակայնության ապահովմանը, տեղեկատվության ազատության սահմանափակումներին, հարցումներ կայացնելու եւ քննարկելու կարգին, տեղեկությունների տրամադրման պայմաններին, տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերին, տեղեկատվության ազատության խախտման համար պատասխանատվությանը եւ այլն:

Այս օրենքով առաջին անգամ Հայաստանում տեղեկություններ փնտրելու եւ ստանալու մարդկանց սահմանադրական իրավունքը ապահովվում է միջազգային մոտ չափանիշներով: Օրենքի առավելություններից է, որ հստակեցվել են այն կառույցները, որոնց վերաբերում են տվյալ օրենքով նախատեսված պարտականությունները: Դրանք են՝ *«... տեղեկություններ ունեցող մեծական եւ տեղական ինֆակառավարման մարմիններ, մեծական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց ղառսնասար անձինք»* (հոդված 3): Այսպիսով, օրենսդրության մեջ առաջին անգամ մտցվեց *«հանրային նշանակության կազմակերպություն» հասկացությունը, որը օրենքի նույն հոդվածում սահմանված է իբրեւ «աղբյուրային շուկայում մենաձեռն կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաեւ առողջադատության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցալական աղահովության, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ եւ կառի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ մեծական կազմակերպություններ»:*

Օրենքի 7-րդ հոդվածը, որը փորձագետների կարծիքով կարելու էր օրենքից է, վերնագրված է «Տեղեկությունների մատչելիության եւ հրապարակայնության ապահովումը»: Այն նախ՝ սահմանում է. *«Տեղեկատվություն սնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում եւ հրատարակում է իր կողմից տեղեկություն սալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում»:* Հոդվածի երկրորդ կետը պարտադրում է տեղեկություն տնօրինողին անհապաղ հրապարակելու կամ այլ մատչելի ձեւով հանրությանը տեղեկացնելու իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական կամ հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը:

Այս հոդվածի 3-րդ կետը թվարկում է այն տեղեկությունները եւ դրանցում կատարված փոփոխությունները, որոնք տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է հրապարակել առնվազն տարին մեկ անգամ (դրանք 13-ն են):

Օրենքն ինքն է սահմանում տեղեկատվություն ստանալու համար հարցումը ներկայացնելու եւ քննարկելու կարգը (հոդված 9) եւ ոչ թե այդ

կարգի սահմանումը թողնում է տվյալ մարմնին կամ կառավարությանը: Ընդ որում՝ հողվածն ունի մի կարելու դրույթ, որը վերացնում է տեղեկություններ ստանալու նախկինում առկա խոչընդոտներից մեկը. դրույթը ձեւակերպված է այսպես՝ «Դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը» (հողված 9, կետ 4), ինչը համահունչ է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ» Rec(2002)2 հանձնարարականի պահանջներին: Հանձնարարականի V բաժնի առաջին կետն այդպես էլ ձեւակերպում է.«Պաշտոնական փաստաթուղթ հայցողը պարտավորված չպետք է լինի հիմնավորելու պաշտոնական փաստաթղթին հասու դառնալու իր ցանկությունը»:

Օրենքի հողված 10-ը անդրադառնում է տեղեկությունները տրամադրելու պայմաններին, նշելով, որ տեղեկությունների հրապարակման համար գանձում չի կատարվում բանավոր հարցումներին պատասխանելիս, մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություններ տրամադրելիս, տեղեկությունն էլեկտրոնային փոստով տրամադրելիս եւ այլն: Հողվածը նշում է նաեւ, որ այն դեպքում, երբ տեղեկատվության տրամադրման համար գումար է գանձվում, ապա այդ գումարը չի կարող գերազանցել տրամադրման համար անհրաժեշտ ծախսերը:

Եվ, վերջապես՝ օրենքի 8-րդ հողվածը վերաբերում է տեղեկատվության ազատության սահմանափակումներին, որոնք համապատասխանում են միջազգային չափանիշներին, այդ թվում ԵԽՆԿ Rec(2002)2 հանձնարարականի պահանջներին:

Առայժմ կառավարությունը չի կատարել այս օրենքի՝ 5-րդ եւ 10-րդ հողվածների պահանջները եւ չի ընդունել տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման եւ պահպանման, ինչպես նաեւ՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգերը: «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ը պատրաստել է դրանց նախագծերը եւ ուղարկել շահագրգիռ բոլոր կազմակերպություններին, այդ թվում եւ կառավարություն:

Օրենքը նոր էր գործողության մեջ դրվել, երբ 2004 թվականին դրա շուրջ ծավալվեցին մտահոգիչ իրադարձություններ: Կառավարությունում պատրաստվեց այս օրենքի փոփոխությունների մի նախագիծ, որն ընդունվելու դեպքում, դեռ նոր-նոր գործողության մեջ դրված օրենքը նշանակալիորեն կտուժեր: Բարեբախտաբար այդ նախագիծն այժմ ըստ էության սառեցված է եւ չի դրվել շրջանառության մեջ:

Սակայն այս օրենքի գործողության կարճ ժամանակաշրջանում արդեն դրա խախտումներ են գրանցվել:

Այսպես, «Հեռախոսի լրագրողներ» ՀԿ-ը դիմել էր Երեւանի ֆաղաֆաթեսարանի խնդրելով լրագրողական հեռախոսության համար իրենց տրամադրել Օդեսայի եւ Բալեշի ղեկավարած թատրոնի շրջակայքի կանաչ տարածքում հողահանգումների վերաբերյալ 1997-2003 թվականներին ֆաղաֆաթեսարանի ընդունած որոշումների տեղեկությունները: Քաղաֆաթեսարանի բազմաթիվ մեծումներից հետո կազմակերպությունը դիմեց դատարան: Առաջին աստիճանի դատարանում, այնուհետեւ վերաքննիչ դատարանում հայցը չբավարարվելուց հետո, «Հեռախոսի լրագրողներ» ընկերակցությունը դիմեց վճարել դատարան, որը գործը բեկանեց եւ լրացուցիչ փնտրության ու-

դարկեց վերաֆննիչ դասարան (նոր կազմով ֆննելու), որն արդեն դասավորեց ֆաղաֆաղեցարանին՝ սրամադրել տահանջվող սեղեկասվությունը: Քաղաֆաղեցարանն իր հերթին այս վճիռը բողոքարկեց վճռաբեկ դասարան, վերջինս (2005 թվականի փետրվարի 10-ին) վճիռը թողեց անփոփոխ՝ այդպիսով ֆաղաֆաղեցարանին դասարկելով սրամադրել անհրաժեշտ սեղեկասվությունը: Ասացվում է, որ «Տեղեկասվության ազատության մասին» օրենքի դարգագույն դասակարգությունը կատարելու համար ֆաղաֆաղեցարանին հարկ էր անցնել մեկ տարի ձգվող բազմաթիվ դասավարությունների միջով: Ընդ որում՝ դասավճռից հետո էլ ֆաղաֆաղեցարանը ձգձգում էր սվյալների սրամադրումը, մինչեւ որ կազմակերպությունը դիմեց դասական ակտերի հարկադիր կատարողին, եւ միայն դրանից հետո ֆաղաֆաղեցարանը դասարատակարարություն հայտնեց սրամադրելու սեղեկասվությունը, սակայն 2005 թվականի վերջին դեռեւս չէր սրամադրել:

Համանման դեղք է գրանցվել նաեւ Վանաձորում, որի ֆաղաֆաղեցարանը նույնպես հրաժարվել էր Հելսինկյան ֆաղաֆաղեցարանի ասամբլեայի Վանաձորի գրասենյակին սրամադրել ֆաղաֆաղեցարանի եւ ավագանու 2002-2003 թվականների որոշումների դասճենները:

Հիշյալ երկու գործերի մանրամասներին կարելի ծանոթանալ Երեւանի մամուլի ակումբի եւ Խոսի ազատության դատարանի կոմիտեի՝ «ՀՀ-ում խոսի ազատության վիճակի մասին» տարեկան հաշվետվության մեջ՝ ԵՄԱ ինտերնետային էջում՝ www.ypc.am, ինչպես նաեւ ԵՄԱ շաբաթական սեղեկագրի թողարկումներում:



Պաշտոնական հրապարակումներն ու պաշտոնական հաղորդակցումը կարգավորող իրավական համակարգն օրենսդրության ավելի լայն դաշտի մի մասն է, որն ապահովում է քաղաքացիների տեղեկատվություն փնտրելու, ստանալու եւ հաղորդելու իրավունքը³⁹, ըստ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային պայմանագրի (19 հոդված) եւ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (10 հոդված):

Հաշվի առնելով քաղաքացիների՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու եւ տարածելու իրավունքը եւ տեղեկատվական տեխնոլոգիաները դիտելով որպես կառավարության ձեռքում արդյունավետ մի գործիք՝ եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ընդունել է «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ» Rec (2002)2 Հանձնարարականը՝ անդամ պետություններին: Rec (2002)2 Հանձնարարականը սահմանում է քաղաքացիների տեղեկատվական իրավունքների իրագործման հիմնական սկզբունքները եւ շարադրում է ազգային օրենսդրությունների համապատասխան բաժինների համար նախատեսված ընդհանուր մեթոդաբանությունը: Rec (2002)2 Հանձնարարականի կարեւոր մաս են այն պարբերությունները, որոնք նկարագրում են պաշտոնական փաստաթղթերի համար դիմելու եւ դիմումին պատասխանելու սկզբունքները:

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը չի ընդգրկում հատուկ դրույթներ, որոնք վերաբերում են

³⁹ Այս համատեքստում տեղեկատվություն փնտրելու, ստանալու եւ տարածելու մարդու հանընդհանուր իրավունքները նույնպես դիտվելու են որպես տեղեկատվական իրավունքներ:

տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմանը՝ պաշտոնական տեղեկատվությունից օգտվելու կամ դրա համար դիմելու նպատակով, բացառությամբ օրենքի 7-րդ հոդվածի 5. կետի, ըստ որի «...տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձևով, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում՝ նաև դրանով»: Իրականում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը սահմանափակվում է նախարարությունների վեբ-կայքերում որոշ պաշտոնական տեղեկությունների հրապարակմամբ: Նախարարությունների պաշտոնական վեբ-կայքերը միշտ չէ, որ տրամադրում են ամբողջական տեղեկատվություն, որը «Տեղեկատվության ազատության մասին» գործող օրենքին համաձայն պետք է հրապարակվի պարտադիր կարգով:

Հայաստանի Հանրապետությունը չունի հասարակական կառավարման ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ միջազգային հատուկ պարտավորություններ, եւ չի կարելի ասել, թե Հայաստանի տեղեկատվական հասարակության վերաբերյալ քաղաքականությունը հետեւում է եվրոպական երկրներում ընդունված չափանիշներին: Ի տարբերություն եվրոպական շատ երկրների, Հայաստանը դեռ չունի տեղեկատվական հասարակության զարգացման ռազմավարություն եւ էլեկտրոնային կառավարման զարգացմանն ուղղված գործողությունների պլան: Միեւնույն ժամանակ, Հայաստանի հասարակական կառավարման ոլորտում կան տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման որոշ դրական օրինակներ, սակայն դրանք ավելի շուտ բացառություններ են, քան ընդհանուր միտում: Հասարակական հաղորդակցման այդպիսի միջոցները սովորաբար միջազգային կազմակերպությունների եւ արտասահմանյան դոնորների, ինչպես նաև քաղաքացիական կազմակերպությունների ջանքերի արդյունք են: Ինչպես տեղեկատվության մատչելիության դեպքում, Հայաստանի Հանրապետությունը չունի պաշտոնական պարտավորություններ նաև տեղեկատվական հասարակության զարգացման եւ էլեկտրոնային կառավարման ոլորտում: Սակայն հասարակական կառավարման ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը եվրոպայի քաղաքական մշակույթի կարելորագույն տարրն է, եւ այն երկրները, որոնք հավակնում են եվրոպական հասարակության հետ մերձեցմանը, պետք է համապատասխանեն եվրոպայում ընդունված հասարակական կառավարման չափանիշներին:

«Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը

Ինչպես արդեն նշեցինք, ԵԽ անդամ ընդունվելիս Հայաստանը պարտավորություն էր ստանձնել մեկ տարվա ընթացքում ընդունել ՁԼՍ-ների մասին նոր օրենք: Բանն այն է, որ «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ առաջին օրենքն ընդունվել էր 1991 թվականին:

Նոր օրենքը, որի նախագիծը շրջանառության մեջ դրվեց 2002 թվականի հունվարից, սկզբում շատ ավելի հետադիմական էր, քան գործող օրենքը: Լրագրողներն ու հասարակական կազմակերպությունները մերժեցին դրա առաջին տարբերակը՝ իրավամբ նշելով, որ նախագծի այդ տեսքով ընդունումը հղի է Հայաստանում գրաքննություն հաստատելու եւ ազատ խոսքը ճնշելու վտանգներով: Նախագիծն այդ տեսքով այդպես էլ խորհրդարան չմտավ: Կառավարությունը մի քանի անգամ վերամշա-

կեց այն, սակայն ամեն անգամ պահպանում էր որոշ հիմնական դրույթներ, որոնք անընդունելի էին լրագրողական հանրության համար: Սակայն խորհրդարանական ընտրություններից (2003թ.) հետո վերաբերմունքը նախագծի նկատմամբ կարծես թե փոխվեց. եւ նախագծի հեղինակները, եւ խորհրդարանական համապատասխան հանձնաժողովը պատրաստակամություն հայտնեցին լսելու եւ հաշվի առնելու բոլոր առաջարկությունները, որոնք միտված կլինեին այն բարեփոխելուն եւ միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն:

Այս ընթացքում Երեւանի մամուլի ակումբը, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն, Հայաստանի «Ինտերնյուսը», Հայաստանի ժուռնալիստների միությունը համագործակցեցին օրինագծի հեղինակների եւ խորհրդարանական հանձնաժողովի հետ եւ ի վերջո այն ստացավ ընդունելի տեսք, թեպետ դրանում փոփոխությունների անհրաժեշտություն դեռ կա: Օրենքն ընդունվեց 2003 թվականի դեկտեմբերի 13-ին:

Անդրադառնանք օրենքի հիմնական դրույթներին:

Նախ՝ օրենքը սահմանում է «Ջանգվածային լրատվություն» եւ «Ջանգվածային լրատվության միջոց» հասկացությունները (սահմանման մեջ վիճահարույց է մնում միայն ցանցային լրատվության միջոցների հարցը), այնուհետեւ՝ 4-րդ հոդվածով տալիս է լրատվության ոլորտում խոսքի ազատության ապահովման երաշխիքները:

«1. Լրատվական գործունեություն իրականացնողները եւ լրագրողները գործում են ազատեմ` իրավահավասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության եւ բազմակարծության սկզբունքների հիման վրա:

Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որդես հասարակական դարձ կատարող անձ, դաժժանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2. Լրատվության միջոցները թողարկվում եւ սարածվում են առանց նախնական կամ ընթացիկ դեմական գրանցման, լիցենզավորման, դեմական կամ որեւէ այլ մարմնում հայտարարագրման կամ որեւէ մարմնի ծանուցելու:

Հեռուստառադիոհեռարձակման լիցենզավորումն իրականացվում է հեռուստատեսության եւ ռադիոյի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համադասասխան:

3. Արգելվում է՝

ա) գրաֆնությունը.

բ) որեւէ Տեղեկատվություն սարածելուն կամ այն սարածելուց հրաժարվելուն նդատակառուղիված կամ դրան հանգեցնող հարկադրանք լրատվական գործունեություն իրականացնողի եւ լրագրողի նկատմամբ.

գ) լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը.

դ) խտրականությունը լրատվության համար անհրաժեշտ սարքավորումների եւ նյութերի ֆադաֆացիական շրջանառությունում.

ե) ցանկացած, այդ թվում՝ այլ երկրներում թողարկված եւ սարածված լրատվության միջոցներից օգտվելու՝ անձի իրավունքի սահմանափակումը»:

Օրենքի այս հոդվածից առանձնացնենք երկու դրույթ՝ ա) « Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ», եւ բ) «արգելվում է ...: Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը»: Ավելացնենք, որ ՀՀ Քրեական օրենսգիրքն ունի լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ հոդված: Ահա այն՝

«Հոդված 164. Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը

1. Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ նրան սեղեկություններ սարածելուն կամ սարածելուց հրաժարվելուն հարկադրելը՝

դրասժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնադասիկից հարյուրհիսնադասիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարվել են ղեկավարող անձնի կողմից՝

դրասժվում են ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի դրամական գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա»:

Մենք այս հարցը մանրամասնում ենք, քանի որ նոր օրենքն ընդունվելուց հետո՝ 2004 թվականին արձանագրվել են լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու մի քանի արտառոց դեպքեր:

Այսօր, 2004 թվականի ապրիլի 5-ին Առաջին փուլում նշանակությունը խոչընդոտել է «Հայկական ժամանակ» օրաթերթի թղթակից Հայկ Գեւորգյանին լուսանկարել նշանակության կողմից փակված Առաջին-Երեւան մայրուղին (ժամ. - մայրուղին փակվել էր, որպեսզի ընդդիմության միջինգի մեկնողները չկարողանային երեւան հասնել), այնուհետեւ բաժանմունք է տարել: Ըստ Հայկ Գեւորգյանի՝ նշանակության բաժանմունքում իր հետ մեկ ժամ «դաստիարակչական զրույց» են ունեցել:

Նույն ապրիլի 5-ին լրագրողների նկատմամբ աննախադեռ բռնություններ իրականացվեցին Երեւանում՝ ընդդիմության հանրահավաքի ժամանակ, ընդ որում՝ լրագրողների վրա հարձակումները, օղորտների խցիկներն ու լուսանկարչական ադապտները ջարդելը կատարվում էր նշանակության աչքի առջեւ, որոնցից եւ ոչ մեկը չմիջամեց: Այդ միջադեռի ժամանակ ջարդվել են «Կենտրոն» եւ «Հայ ԹՎ» մասնավոր եւ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունների սեսիոնները, իսկվել է «Շանթ» հեռուստաընկերության սեսերիզը, ջարդուխուրդ են արվել «Հեթ» էլեկտրոնային թերթի թղթակից Օնիկ Գրիգորյանի, «Առավոտ» օրաթերթի թղթակից Աննա Իսրայելյանի, «Հայկական ժամանակ» օրաթերթի թղթակից Հայկ Գեւորգյանի լուսանկարչական ադապտները, իսկ լրագրողները ենթարկվել են նաեւ ֆիզիկական բռնությունների: Միայն հասարակական բուռն բողոքից հետո այս փաստով րեական գործ հարուցվեց, այն էլ միայն երկու

հոգու նկատմամբ, որոնք հետագայում դասարանի վճռով դասադասվեցին 100 հազար դրամ տուգանքի: Այս դեպքում արձանագրվեց էր նրանով, որ ֆրեական գործը հարուցվել էր ոչ թե Քրեական օրենսգրքի 164՝ «Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը» հոդվածով, այլ 185՝ «Գուլմեր դիտարկությանը ոչնչացնելը կամ վնասելը» հոդվածով, ընդ որում նշանակվեց հոդվածով նախատեսված ամենամեղմ տասնիժր:

Էլ ավելի արձանագրվեց էին 2004 թվականի ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերը կատարված իրադարձությունները, երբ ընդդիմության հանրահավաքը լուսաբանող լրագրողները հարձակման ենթարկվեցին հենց ոստիկանների կողմից: Այդ գիշեր ծեծի են ենթարկվել «Հայկական ժամանակ» օրաթերթի թղթակիցներ Հայկ Գեւորգյանը եւ Ավետիս Բարաջանյանը, ռուսական «Առաջին ալիք» հեռուստաընկերության օդերասնուհի Լեւոն Գրիգորյանը եւ «Չորրորդ իշխանություն» թերթի լրագրող Սիեր Ղալեչյանը: Ընդ որում ըստ Հայկ Գեւորգյանի իր լուսանկարչական ադաբասը խլել է անձամբ ՀՀ ոստիկանապետի սեղակալ Հովհաննես Վարյանը, իսկ ոստիկանները նրա ներկայությամբ են ծեծել իրեն: Ավելի սահմանակցուցիչ է ռուսական «Առաջին ալիք» հեռուստաընկերության օդերասնուհի Լեւոն Գրիգորյանի դատմանը, որ տղազրկել է ԵՄԱ էլեկտրոնային սեղեկագրում (սես՝ *Еженедельный электронный бюллетень ЕПК, ноябрь 12-18, 2004*): Չնայած բարձրագույն հասարակական աղմուկին, հայաստանյան եւ միջազգային հասարակական կազմակերպությունների բազմաթիվ բողոքներին, այս իրադարձությունների առթիվ ֆրեական գործ չհարուցվեց, անգամ ծառայողական հետաքննություն չկատարվեց:

Լրագրողների մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու հաջորդ դեպքում արձանագրվեց 2004 թվականի օգոստոսի 24-ին: Այդ օրը «Առավոտ» օրաթերթի թղթակից Աննա Իսրայելյանը եւ «Ֆոտոլուր» գործակալության լուսանկարիչ Մխիթար Խաչատրյանը Ծաղկաձորում կառուցվող ամառանոցների մասին սեղեկություններ հավաքելիս հարձակման ենթարկվեցին ոմն Գագիկ Ստեփանյանի կողմից (մանրամասները սես՝ Երեւանի մամուլի ակումբի եւ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի՝ «ՀՀ-ում խոսքի ազատության վիճակի մասին» 2004 թվականի հաշվետվության մեջ՝ ԵՄԱ ինտերնետային էջում՝ www.ypc.am): Այս փաստով մեղանում առաջին անգամ ֆրեական գործ հարուցվեց Քրեական օրենսգրքի 164 («Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը») հոդվածով եւ հոկտեմբերի 11-ի դատավճռով մեղավոր անձը դասադասվեց վեց ամսվա ազատազրկման: ԵՄԱ գնահատմամբ տասնիժր չափազանց մեղմ էր, մանավանդ, որ օրենքը նրան վաղաժամկետ ազատվելու հնարավորություն էր տալիս: Այս սղասելիքներն արդարացան, արդեն հոկտեմբերի 26-ին լրագրողների դեմ բռնություն կիրառած անձը վաղաժամկետ ազատվեց:

Քրեական օրենսգրքի 164 հոդվածը կիրառվեց նաեւ «Հայկական ժամանակ» օրաթերթի թղթակից Արման Գալոյանի դեմ 2004թ. սեպտեմբերի 23-ին Երեւանի շուկաներից մեկի տարածքում բռնություն գործադրած անձի՝ Արմեն Վարդանյանի նկատմամբ: Վերջինս դասադասվեց մեկ տարի ուղղիչ աշխատանքների՝ աշխատավարձի 20 տոկոսի գանձմամբ՝ հոգու տեսական բյուջեի:

«Ձանգվածային լրատվության մասին» օրենքում ուժեղացված է տեղեկատվության աղբյուրների պաշտպանությանը վերաբերող դրույթը

(հոդված 5): Ձեւակերպված է, որ լրագրողից եւ լրատվամիջոցից տեղեկատվության աղբյուրի բացահայտում կարող է պահանջել միայն դատարանը, այն էլ միայն ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման նպատակով, ինչպես նաեւ նշվել են այն պայմանները, որոնց առկայության դեպքում կարող է պահանջվել բացահայտումը («հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակական շահագրգռվածությունը, եւ սպառված են հասարակության շահերի պաշտպանության այլընտրանքային միջոցները»), ինչպես նաեւ, լրագրողական կազմակերպությունների պահանջով, ավելացված է դրույթ այն մասին, որ այդ դեպքում լրագրողը կարող է պահանջել դատական փակ նիստ: Այսուհանդերձ, կամ այս հոդվածը պետք է համապատասխանեցվի Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու լրագրողների իրավունքի վերաբերյալ» R(2000)7 հանձնարարականին, կամ այդ հանձնարարականի ոգով փոփոխություններ պիտի կատարվեն այլ օրենքներում, մասնավոր, որ, ինչպես ցույց տվեց պրակտիկան, այս դրույթը հակասության մեջ է ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 86 հոդվածի հետ, որը լրագրողներին չի ներառում այն անձանց ցանկում, ովքեր չեն կարող կանչվել իբրեւ վկա եւ հարցաքննվել: Այս հարցն առաջին անգամ ուշադրության արժանացավ, երբ «Հետաքննող լրագրողներ» ՀԿ նախագահ Էդիկ Բաղդասարյանը հրավիրվեց Երեւանի Կենտրոն համայնքի ոստիկանություն, ուր նրանից պահանջեցին բացահայտել մի քանի հրապարակումներում առկա տեղեկությունների աղբյուրները: ԵՄԱ-ն կարծում է, որ խնդիրը պետք է լուծել Քրեական դատավարության օրենսգրքի 86 հոդվածում փոփոխություն անելով եւ լրագրողներին՝ տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու մասով ներառել այն անձանց ցանկում, ովքեր չեն կարող կանչվել իբրեւ վկա եւ հարցաքննվել:

«Ձանգվածային լրատվության մասին» օրենքի 6-րդ հոդվածը վերաբերում է լրագրողների հավատարմագրմանը, 7-րդ հոդվածը՝ լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի սահմանափակումներին: Ըստ այդ հոդվածի առաջին կետի՝ **«Արգելվում է օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաեւ այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը»:**

Այստեղ անհստակ է «օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող» ձեւակերպումը: Լրագրողական կազմակերպությունները բազմիցս պնդել են, որ օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող տեղեկատվության համար պատասխանատու է գաղտնիքը կրող անձը: Իսկ եթե այն հայտնի է դարձել լրագրողին, ապա հրապարակել կամ չհրապարակելը լրագրողի եւ տվյալ լրատվամիջոցի բարոյական խնդիրն է: Ավելացնենք, որ օրենքի 9-րդ՝ «Լրատվական գործունեություն իրականացնողի պատասխանատվությունը» հոդվածը որոշակի պաշտպանություն նախատեսում է գաղտնիք հրապարակելու պարագայում. **«Օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող տեղեկատվության տարածման համար լրատվական գործունեություն իրականացնողը տասախանասվության ենթակա չէ, եթե այդ տեղեկատվությունը նա**

ծեռք չի բերել օրենքով արգելված եղանակով կամ ակնհայտ չի եղել, որ այն օրենքով սահմանված կարգով գաղտնի է համարվել:

Եթե լրացվական գործունեություն իրականացնողը սարածել է այն-դիպի սեղեկացվություն, որի՝ օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվելն ակնհայտ է եղել, սակայն այդ սեղեկացվության սարածումը բխել է հանրային շահերի դաշտանության անհրաժեշտությունից, ադա նա դաշտասխանացվության ենթակա չէ»:

Հերքման եւ պատասխանի իրավունքը սահմանող 8-րդ հոդվածում նշված է, որ հերքում կամ պատասխան կարելի է պահանջել մեկ ամսվա ընթացքում՝ հաշված այն տեղեկատվության տարածման օրվանից, որին վերաբերում է հերքումը, իսկ հերքումը կամ պատասխանը պետք է հրապարակվեն մեկշաբաթյա ժամկետում: Նշված է նաեւ, որ հերքումը պետք է վերաբերի միայն փաստական անճշտություններին: Սահմանված են նաեւ դեպքերը, երբ կարելի է մերժել հերքման կամ պատասխանի հրապարակումը:

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը եւ պրակտիկան

Ինչպես նշեցինք Եւ առջեւ Հայաստանի պարտավորությունը նախատեսում էր «ազգային հեռուստաալիքը վերակազմավորել հանրայինի, որի ղեկավարումը կիրականացվի անկախ վարչական խորհրդի կողմից»: «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2000 թվականի հոկտեմբերի 9-ին, այսինքն՝ ՀՀ պարտավորությունների վերաբերյալ ԵւտԽՎ N 221 (2000թ. հունիսի 28) կարծիքն ընդունվելուց հետո, սակայն՝ մինչեւ Հայաստանի՝ Եւ լիիրավ անդամ դառնալը:

Օրենքը կարգավորում է եւ մասնավոր, եւ հանրային հեռարձակողների գործունեությունը: Գլխավոր բանավաճերի առարկան առ այսօր մնում են կարգավորող մարմինների՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի (որը կարգավորում եւ վերահսկում է մասնավոր հեռարձակման ոլորտը) ու Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի ձեւավորումը եւ լիազորությունները: Ըստ օրենքի եւ Հեռուստատեսության ու ռադիոյի ազգային հանձնաժողովը, եւ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ձեւավորում է ՀՀ նախագահը: Իբրեւ այդ մարմինների անկախության երաշխիք ընտրված է նրանց գործունեության ժամկետը, որի ընթացքում դրանց անդամների լիազորությունները չեն կարող դադարեցվել, բացառությամբ մի քանի դեպքերի (անդամի մահանալը, իր դիմումը եւ այլն): Սակայն բավարա՞ր է, արդյոք, սա կարգավորող մարմինների անկախությունն ապահովելու համար: Լրագրողական հանրության կարծիքով՝ ոչ: Այսպես՝ 2002-2005 թվականներին անցկացված հեռուստահեռարձակման արտոնագրման մրցույթները ցույց տվեցին, որ մտահոգությունները տեղին են. «Ա1+» հեռուստաընկերությունը մասնակցել է հեռուստահեռարձակման 9 եւ ռադիոհեռարձակման 2 մրցույթների եւ ամեն անգամ Հեռուստատեսության եւ ռադիոյի «անկախ» հանձնաժողովը նրան պարտվող է ճանաչել: «Ա1+» հեռուստաընկերությունն հանձնաժողովի գործնականում բոլոր որոշումները վիճարկել է ՀՀ դատական բոլոր ատյաններում, սակայն՝ ապարդյուն, եւ այժմ արդեն գործը գտնվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում:

Կարգավորող մարմինների անկախությունն այն խնդիրն է, որի վրա հատուկ ուշադրություն է դարձրել նաեւ Եվրոպայի խորհուրդը, որի Նախարարների կոմիտեի 2000 թվականի դեկտեմբերի 20-ի՝ «Յեռարձակման բնագավառը կարգավորող մարմինների անկախության եւ գործառույթների վերաբերյալ» (2000)23 հանձնարարականը հենց դրան է վերաբերում: Դրան անդրադարձել է նաեւ ԵԽ խորհրդարանական վեհաժողովը՝ 2004 թվականի երեք բանաձեւերում, որոնք վերաբերում էին Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարմանը: Այսպես, 1361 բանաձեւում (2004 թ. հունվարի 27) ասված է.

«Վեհաժողովը մատնանշում է, որ օրենսդրական մի շարք պարտավորություններ, ինչպիսիք են՝ տեղական կառավարման մարմինների առավել անկախությունը, անկախ օմբուդսմենի ներկայացումը, **հեռարձակման անկախ կանոնակարգող մարմնի ստեղծումը** (ընդգծումը - ԵՄԱ), Սահմանադրական դատարանի լիազորությունների փոփոխությունները եւ Սահմանադրական դատարանի առավել մատչելիության ապահովումը, արդարադատության խորհրդի բարեփոխումը եւ այլն, դեռեւս կախված են Հայաստանի Սահմանադրության վերանայումից »:

Նույն բանաձեւում այնուհետեւ նշված է.

«Ինչ վերաբերում է ազատ արտահայտվելու իրավունքին եւ լրատվամիջոցների բազմակարծության խնդրին, ապա Վեհաժողովը մտահոգված է Հայաստանում լսատեսողական լրատվամիջոցների ոլորտում տեղի ունեցող զարգացումների շուրջ եւ լուրջ կասկածներ է արտահայտում նաեւ էլեկտրոնային լրատվամիջոցների բազմակարծ լինելու վերաբերյալ, մասնավորապես ափսոսալով, որ գործող օրենքի անհստակության հետեւանքով Յեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովին բացահայտ ինքնահայեցողական լիազորություններ են տրված հեռարձակման թույլտվությունների տրամադրման ոլորտում, հատկապես A1+ հեռուստատեսային ալիքի կապակցությամբ: Այնուհանդերձ, Վեհաժողովը նկատի է առնում 2003թ. դեկտեմբերին զանգվածային լրատվամիջոցների մասին օրենքի ընդունումը եւ Ռադիոյի ու հեռուստատեսության մասին օրենքում փոփոխությունների կատարումը»:

2003 թվականի դեկտեմբերի 3-ին ՀՀ ազգային ժողովն ընդունեց «Յեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքը: Խնդիրն այն է, որ գործող օրենքը եւս մեկ անգամ փորձաքննության էր ենթարկվել Եվրոպայի խորհրդի կողմից: Փոփոխությունները, ըստ դրանք նախապատրաստած ԱԺ պատգամավորների հավաստիացումների, 2002 թվականի հուլիսի 26-ով թվագրված այդ եզրակացության հիման վրա են կազմվել: Սակայն ԵՄԱ վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձագետի հիմնական դիտողությունները հաշվի չեն առնվել: Նախ, փորձագետն ուշադրություն է դարձրել հատկապես երկու կարգավորող մարմինների՝ Յեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի ու Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի ձեւավորման կարգին: Մասնավորապես, փորձագետը նշում է, որ պետք է վարել հանձնաժողովի եւ խորհրդի անդամներին նշանակելու այնպիսի քաղաքականություն, որպեսզի ապահովվի նշանակումների թափանցիկությունը եւ այդ մարմիններն ազատ լինեն քաղաքական ազդեցություններից: Ընդամին, փորձագետը նաեւ նշում է, որ Ազգային հանձնաժողովի անդամների համար այդ աշխատանքը պետք է լինի իրենց հիմնականը:

Փորձագիտական եզրակացության այս դիտողությունները «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի հեղինակները հաշվի չեն առել: Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի թափուր տեղերի համալրման համար փոփոխություններով սահմանվեց հետեւյալ կարգը.

«Խորհրդում թափուր սեղի առկայության դեմում Խորհրդի նախագահն այդ մասին գրավոր սեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահին, որը մեկաբայա ժամկետում զանգվածային լրացվության միջոցներով հայտարարում է թափուր սեղի համալրման համար մրցույթ:

Խորհրդի անդամի թափուր սեղի համար թեկնածու կարող է առաջադրվել յուրաքանչյուր ո՛ր սույն օրենքի դրույթների համաձայն:

Թեկնածուների առաջադրման համար սահմանվում է առնվազն 10-օրյա ժամկետ:

Թեկնածուների վերաբերյալ սվյալները հրատարակվում են զանգվածային լրացվության միջոցներով:

Հայաստանի Հանրապետության Նախագահը, իր կողմից հաստատված մրցութային կարգի համաձայն, մրցութում հաղթողներից մեկին նշանակում է Խորհրդի անդամ: Այդ մասին սեղեկությունը՝ անհրաժեշտ հիմնավորմամբ, հրատարակվում է զանգվածային լրացվության միջոցներով»:

2005 թվականի հունվարին Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի թափուր տեղերի համար հայտարարվեց մրցույթ: Մրցութային հանձնաժողովի ղեկավար նշանակվեց... Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Ալեքսան Հարությունյանը: Ավելացնենք, որ ԵՄԱ-ն, Հայաստանի ժուռնալիստների միությունը, Հայաստանի «Ինտերնյուսը» եւ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն այդ մրցութը որակեցին իբրեւ ժողովրդավարական գործընթացների իմիտացիա: Մրցութի արդյունքներով հաղթողներ ճանաչվեցին եւ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամներ դարձան Ստեփան Պողոսյանը եւ Հենրիկ Հովհաննիսյանը, ովքեր մինչ այդ եւս զբաղեցնում էին նույն պաշտոնները:

Նույն ձեւակերպումներն են նաեւ Ազգային հանձնաժողովի վերաբերյալ.

«Ազգային հանձնաժողովում թափուր սեղի առկայության դեմում Ազգային հանձնաժողովի նախագահն այդ մասին գրավոր սեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահին, որը մեկաբայա ժամկետում զանգվածային լրացվության միջոցներով հայտարարում է թափուր սեղի համալրման համար մրցույթ:

Ազգային հանձնաժողովի անդամի թափուր սեղի համար թեկնածու կարող է առաջադրվել յուրաքանչյուր ո՛ր սույն օրենքի դրույթների համաձայն:

Թեկնածուների առաջադրման համար սահմանվում է առնվազն 10-օրյա ժամկետ:

Թեկնածուների վերաբերյալ սվյալները հրատարակվում են զանգվածային լրացվության միջոցներով:

Հայաստանի Հանրապետության Նախագահը, իր կողմից հաստատված մրցութային կարգի համաձայն, մրցություն հաղթողներից մեկին նշանակում է Ազգային հանձնաժողովի անդամ: Այդ մասին տեղեկությունը՝ անհրաժեշտ հիմնավորմամբ, հրատարակվում է զանգվածային լրատվության միջոցներով»:

Այս փոփոխությունները որել է նոր բան չեն տալիս եւ չեն համապատասխանում Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Հեռարձակման հանրային ծառայության անկախության երաշխավորման վերաբերյալ» R(96)10 եւ «Հեռարձակման բնագավառը կարգավորող մարմինների անկախության եւ գործառույթների վերաբերյալ» Reg (2000)23 հանձնարարականների պահանջներին, որովհետեւ մրցություն որել է մեկին հաղթող ճանաչելն ամեն դեպքում նախագահի կամ նրա նշանակած մրցութային հանձնաժողովի սուբյեկտիվ որոշմանն է մնում:

Կարգավորող մարմնի անկախ գործունեությանն անդրադարձել է նաեւ ԵԽԽԿ 1374 բանաձեւը (2004թ. ապրիլի 28).

«Ստեղծել արդար պայմաններ լրատվամիջոցների բնականոն գործառնության համար, հատկապես հեռուստաընկերություններին հեռարձակման արտոնագիր եւ մասնավորապես «Ա1+»-ին հեռուստաալիք տրամադրելու առնչությամբ»:

Ավելացնենք, որ «Ա1+» հեռուստաընկերությունը շարունակում է առանց հաճախականության մնալ եւ եթերից զուրկ է:

Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից անցկացված հեռուստառադիոհեռարձակման արտոնագրման մրցութների վերլուծություն է կատարել նաեւ Հայաստանի «Ինտերնյուս» ՀԿ-ը՝ իր «Հեռուստատեսության կարգավորումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Այդ վերլուծությունից մի հատված, որ առնչվում է մեր թեմային, բերենք ամբողջությամբ.

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի վերջին՝ 29.12.2003թ. փոփոխություններից հետո 50՝ «Արտոնագրատիրոջ ընտրությունը» հոդվածը լրացվել է երրորդ պարբերությամբ, համաձայն որի «Ազգային հանձնաժողովը պետք է պատշաճ կերպով հիմնավորի արտոնագրատիրոջն ընտրելու, արտոնագիր տալը մերժելու եւ արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումները»: Որպեսզի հստակ պատկերացում ունենանք թե ինչքանով է Հանձնաժողովի կողմից պահպանվում օրենքի նշված դրույթը, ուսումնասիրվել են ինչպես փոփոխություններից հետո ընդունված որոշումները, այնպես էլ մինչ այդ ընդունվածները:

Փոփոխություններից հետո արտոնագրատիրոջն ընտրելու մասին ընդունված որոշումները (հետագայում «ուշ ընդունված») էականորեն չեն տարբերվում մինչեւ 2004թ. հունվարը ընդունված որոշումներից (հետագայում «շուտ ընդունված»): Եթե շուտ ընդունված որոշումներում ուղղակի նշված է, որ *մրցութի արդյունքները հաշվի առնելով ընկերությունը ճանաչվել է լիցենզավորման մրցութի հաղթող*, ապա ուշ ընդունված որոշումներում այդ արտահայտությունն ընդլայնվել է եւ ձեւակերպված է

հետեւյալ կերպ՝ «հաշվի առնելով այն հանգամանքը, որ _____ ֆադաֆի սարածումը _____-րդ կադրուղով հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի մասնակից _____ ՍՊ ընկերության ներկայացրած մրցութային առաջարկը համադասասխանում է հեռուստատեսության եւ ռադիոյի մասին ՀՀ օրենսդրության դրույթներին եւ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի _____ թ. թիվ _____ որոշմամբ սահմանված մրցույթի դրույթներին՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը որոշում է _____ ընկերությանը ճանաչել լիցենզավորման մրցույթի հաղթող»:

Կարծում ենք, որ որոշումների նման ձեւակերպման դեպքում, Հանձնաժողովը չի կատարում «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 50 հոդվածի պահանջները, քանի որ լիցենզավորման մրցույթի հաղթող ճանաչվելու համար բավարար չէ այն հանգամանքը, որ մրցութային առաջարկը համապատասխանում է հեռուստատեսության եւ ռադիոյի մասին ՀՀ օրենսդրությանը: Չէ՞ որ հեռուստատեսության եւ ռադիոյի մասին ՀՀ օրենսդրությունը հստակ նշում է, որ հեռարձակման լիցենզիա տալու համար մասնակիցների միջեւ ընտրությունը կատարվում է, հաշվի առնելով՝

- ա/ սեփական արտադրության հաղորդումների գերակայությունը.
- բ/ հայրենական արտադրության հաղորդումների գերակայությունը.
- գ/ տեխնիկական եւ ֆինանսական հնարավորությունները.
- դ/ աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը:

Քանի որ, օրենքում եւ մրցութային Կարգում չորս ցուցանիշ է ամրագրված, ապա որոշումը հիմնավորելու համար Հանձնաժողովը պետք է անդրադառնա օրենքի յուրաքանչյուր պահանջին, հակառակ դեպքում Հանձնաժողովի որոշումը հիմնավորված համարվել չի կարող»⁴⁰:

Հայաստանի «Ինտերնյուս» ՀԿ նույն ուսումնասիրությունն անդրադարձել է նաեւ 19 հեռուստաընկերություններում «Գովազդի մասին» ՀՀ օրենքի պահպանմանը: Մեկ շաբաթվա մոնիտորինգով արձանագրվել են մեկ եթերային ժամի հաշվով գովազդի թույլատրելի ծավալի օրենսդրական պահանջի, ինչպես նաեւ՝ թունդ ալկոհոլային խմիչքների եւ ծխախոտի գովազդման արգելքի խախտումներ: Սակայն հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից նման խախտումների համար պատժամիջոցներ չեն կիրառվում կամ կիրառվում են ընտրողաբար:



Իբրեւ հետխորհրդային ժամանակաշրջանում հայկական լրատվամիջոցների հիմնական խնդիրներ նշվում էին քաղաքական-տնտեսական խմբերից նրանց ֆինանսական կախվածությունը եւ իբրեւ դրա հետեւանք՝ քաղաքականապես ծախու լինելը, հասարակության տեղեկատվական կարիքների նկատմամբ պատշաճ ուշադրության բացակայությունը: ՁԼՍ բնագավառում Եվրոպայի խորհրդի առջեւ ՀՀ պարտավորությունների կատարումը ենթադրում էր լրագրողների գործունեության ավելի մեծ ազատություն, կարելորագույն իրադարձությունների անաչառ, հասա-

⁴⁰ Մեջբերումը կատարված է, ըստ «Ինտերնյուսից» մեզ տրամադրված վերլուծության:

րակության շահերից բխող լուսաբանում ապահովող որոշակի իրավական մեխանիզմների սահմանում: Դա առաջին հերթին վերաբերում էր հեռարձակվող ՁԼՄ-ներին, որոնք բնակչության համար տեղեկատվության հիմնական աղբյուրն են: Հետևաբար, օրենսդրության բնագավառի պարտավորությունների անմիջական կատարման եւ բարեփոխած իրավական մեխանիզմների գործունեության գնահատականին զուգահեռ, սույն հետազոտությունը խնդիր ուներ նաեւ պարզել, թե որքանով են բարեփոխումներն ազդել ՁԼՄ-ների, առաջին հերթին՝ հեռարձակողների, բովանդակության վրա: Այդ նպատակով իրականացվեց առաջատար հեռուստաալիքների մոնիտորինգ: Առավել եւս, որ Հայաստանի ժամանակակից հեռուստատեսային լանդշաֆտը մեծամասամբ ձեւավորվել է երկրի՝ Եվրոպայի խորհրդի անդամ դառնալուց հետո եւ ԵԽ առջեւ ՀՀ ստանձնած պարտավորություններին համապատասխան ընդունված «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի, մասնավորապես՝ նրա գործնական կիրառման (պետական հեռարձակումը հանրայինի վերափոխելու եւ ռադիոհաճախությունների օգտագործման մրցույթների անցկացման) անմիջական ազդեցությամբ:

Մոնիտորինգը (*դրա մանրամասն արդյունքները՝ հավելված 5-ում*) իրականացրել է Երեւանի մամուլի ակումբը՝ 2005 թվականի փետրվարին: Այն ուներ երկու հիմնական խնդիր. բացահայտել առաջատար հեռարձակվող ՁԼՄ-ների կողմից հասարակության տեղեկատվական պահանջմունքների բավարարման մակարդակը եւ հեռուստատեսություն կարելորագույն հասարակական-քաղաքական հիմնախնդիրների վերաբերյալ տարբեր տեսակետների ներկայացվածության աստիճանը:

Մոնիտորինգից կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների. 1) Հայաստանի առաջատար հեռուստաալիքները, որոնք ինչպես սոցիոլոգիական հարցումների, այնպես էլ լսարանի ուսումնասիրման այլ մեթոդների արդյունքներով բնակչության համար տեղեկատվության հիմնական աղբյուր են, իրենց լրատվական թողարկումներում չեն լուսաբանում օրախնդիր թեմաների եւ իրադարձությունների նշանակալի մասը, դրանով իսկ սահմանափակելով տեղեկացված լինելու լսարանի իրավունքն ու անտեսելով նրա պահանջմունքները: 2) Ի տարբերություն երկրի քաղաքական ապագայի համար վճռորոշ ժամանակաշրջանների (տարբեր մակարդակների ընտրություններ, հանրաքվեներ), երբ, համաձայն ԵՄԱ նախորդ մոնիտորինգների արդյունքների, առաջատար հեռուստաալիքներն ակնհայտորեն պաշտպանում են գործող իշխանությունների ներկայացուցիչների շահերը, սույն հետազոտությունը չի արձանագրել եթերում այս կամ այն քաղաքական դիրքորոշումների գերակշռություն: 3) Միեւնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել առանցքային մի ամբողջ շարք հարցերի շուրջ առաջատար քաղաքական եւ հասարակական գործիչների տեսակետները ներկայացնելու՝ հեռուստաընկերությունների որոշակի պասիվությունը: Այդպիսով՝ հրապարակային քաղաքականության կուլտուրայի ձեւավորման մեջ ՁԼՄ-ների ավանդը դառնում է անբավարար: 4) Հետազոտված հեռուստաալիքների մեծամասնության վերլուծական ծրագրերը նույնպես բավարար չափով չեն նպաստում, որ լսարանը լավագույնս կողմնորոշվի տեղեկությունների հոսքում: 5) Մասնավորապես, միջազգային հիմնախնդիրները եւ սոցիալական հարցերը, որոնք ըստ վերջին տարիների բոլոր սոցիոլոգիական հարցումների ամենից շատ են հետաքրքրում լսարանին, հետազոտված ՁԼՄ-ների ծրագրային քաղա-

քականության մեջ գերակա չեն: 6) Միաժամանակ, հեռուստաալիքները մեծ ուշադրություն են դարձնում պետական մարմինների եւ երկրի բարձրագույն ղեկավարության, տվյալ հեռարձակող ընկերությունների վրա որոշակի ազդեցության լծակներ ունեցող քաղաքական գործիչների ու գործարարների ընթացիկ, ամենօրյա գործունեությանը: 7) Ինչպես ցույց տվեց մեկ այլ մոնիտորինգ, որ նույն ժամանակաշրջանում համատեղ իրականացնում էին Լոնդոնում տեղակայված Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտն ու Երեւանի մամուլի ակումբը, հեռարձակողները չափազանց հազվադեպ են անդրադառնում հայկական հասարակության սոցիալապես խոցելի խմբերի հիմնախնդիրներին: Այդ թեմաները լուսաբանվում են միայն տեղեկատվական առիթի դեպքում, ընդսմին, նշված խմբերի վերաբերյալ, որպես կանոն, լուսաբանվում են միայն պաշտոնական (այսինքն՝ պետական եւ միջազգային կառույցների) տեսակետները:

Ընդհանրացնելով ասվածը, կարելի է փաստել, որ Եվրոպայի խորհրդի առջեւ ստանձնած պարտավորությունների կատարման ժամանակաշրջանում Հայաստանում ձեւավորված հեռարձակվող ՁԼՄ-ների (այն դեպքում, երբ դրանց թիվը երեք միլիոնանոց բնակչությանը եւ փոքր տարածքով երկրի համար բավականին մեծ է) շուկան բավարար չափով չի արձագանքում բնակչության պահանջունքներին եւ երկրի հասարակական զարգացման խնդիրներին:

Ջրպարտության եւ վիրավորանքի ապաքրեականացում

2003 թվականին՝ Հայաստանի Հանրապետության նոր Քրեական օրենսգրքի նախագծի քննարկումների ժամանակ հասարակական եւ միջազգային բազմաթիվ կազմակերպություններ այս խնդրի շուրջ իրենց հստակ դիրքորոշումներն արտահայտեցին՝ պնդելով, որ զրպարտությունն ու վիրավորանքը պետք է ապաքրեականացվեն, այսուհանդերձ օրենսգրքի նախագծի հեղինակներն այդպես էլ չգնացին զիջումների: 2003 թ. հունիսի 17-ին Հայաստանում գործող 6 երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներ, 11 միջազգային կազմակերպություններ եւ տեղական ՀԿ-ներ նամակ հղեցին ՀՀ Աժ նախագահ Արթուր Բաղդասարյանին (պատճեններն ուղարկվեցին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին, վարչապետ Անդրանիկ Մարգարյանին, արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանին, իրավապահ մարմինների եւ դատական իշխանության բարձրագույն պաշտոնյաներին, ԱԺ պատգամավորներին, լրատվամիջոցներին): Նամակում կոչ էր արվում ապաքրեականացնել զրպարտությունն ու վիրավորանքը եւ դրա կարգավորումը տեղափոխել քաղաքացիական օրենսդրության ոլորտ:

Քրեական օրենսգրքի 135 («*Ձրմարտությունը*»), 136 («*Վիրավորանքը*») եւ 318 («*Իժխանության ներկայացուցչին վիրավորելը*») հոդվածները փոխելուն էր վերաբերում նաեւ ԵԽԽՎ 2004 թվականի հունվարի 27-ի 1361 բանաձեւի 16 ii կետը՝

(Վեհաժողովը) դիմում է Հայաստանի իժխանություններին սկսել Քրեական օրենսգրքի 135, 136 եւ 318 հոդվածներում փոփոխությունների կատարման աշխատանք մինչեւ 2004թ. մարտ ամիսը՝ Եվրոպայի խորհրդի փորձագետների հետ համագործակցությամբ՝ վիրավորանքի կամ զրմարտանքի համար բացառելով ազատագրկման ցանկացած հնարավորություն:

ՀՀ Ազգային ժողովը 2004 թվականի հունիսի 9-ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով փոփոխություններ են կատարվել նաեւ վերոհիշյալ երեք հոդվածներում: Ըստ ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի, փոփոխությունները գրապարտությունն ու վիրավորանքը ապաքրեականացնելու պահանջը բավարարելու փոխզիջումային տարբերակ են: Վերոհիշյալ հոդվածներն այժմ ձեւակերպված են այսպես.

Հոդված 135. Չրդարսությունը

1. Չրդարսությունը՝ ուրիշի դաշիվն ու արժանադասվությունը նվասացնող կամ բարի համբավն արասավորող ակնհայտ սուր սեղեկություններ սարածելը՝

դասժվում է սուզանով՝ նվազագույն աշխասավարձի հարյուրադաշիկից հինգհարյուրադաշիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախասեսված արարները, որոնք կասարվել են կրկին անգամ՝

դասժվում են սուզանով՝ նվազագույն աշխասավարձի երեհարյուրադաշիկից հազարադաշիկի չափով կամ ազասազրկմամբ՝ առավելագույնը մեկ սարի ժամկեսով:»:

Հոդված 136. Վիրավորանքը

1. Վիրավորանքը՝ ուրիշի դաշիվն ու արժանադասվությունն անդարկեւծ ձեւով սսորացնելը՝

դասժվում է սուզանով՝ նվազագույն աշխասավարձի հարյուրադաշիկից չորսհարյուրադաշիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են կրկին անգամ՝

պատժվում են տուզանքով՝ նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկից ութ հարյուրապատիկի չափով:

Հոդված 318. Իշխանության ներկայացուցչին վիրավորելը

1. Իշխանության ներկայացուցչին հրադարակայնորեն վիրավորելը՝ կադված նրա կողմից իր ծառայողական դարսականությունները կասարելու հեւ՝

դասժվում է սուզանով՝ նվազագույն աշխասավարձի հարյուրադաշիկից հինգհարյուրադաշիկի չափով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախասեսված արարները, որոնք կասարվել են կրկին անգամ՝

դասժվում են սուզանով՝ նվազագույն աշխասավարձի երեհարյուրադաշիկից հազարադաշիկի չափով, կամ ազասազրկմամբ՝ առավելագույնը մեկ սարի ժամկեսով:

Ըստ փոփոխությունների, եւ 135, եւ 136 հոդվածներից հանվել են երկրորդ մասերը, այսինքն՝ «հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ զանգվածային

լրատվության միջոցներով» զրպարտության եւ վիրավորանքի համար պատիժները: Փոխվել են նաեւ զրպարտության համար նախատեսված տուգանքի չափերը (նախկինում՝ նվազագույն աշխատավարձի 50-ից 150-ապատիկի փոխարեն՝ ՔրՕր-ի նոր խմբագրությամբ մեծացվել է մինչեւ 100-ից 500-ապատիկ) եւ վիրավորանքի համար նախատեսված տուգանքի չափերը (նախկինում՝ նվազագույն աշխատավարձի 100-ապատիկի փոխարեն՝ մեծացվել է մինչեւ 100-ից 400-ապատիկ): Բացի այդ, երկու հոդվածներից էլ հանվել են ուղղիչ աշխատանքների՝ «առավելագույնը մեկ տարի ժամկետով» (զրպարտության համար) եւ «առավելագույնը վեց ամիս ժամկետով» (վիրավորանքի համար) պատիժները: 318 հոդվածից նույնպես հանվել է երկրորդ մասը (հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ զանգվածային լրատվության միջոցներով իշխանության ներկայացուցչին վիրավորելու համար պատիժը): Իսկ առաջին մասից հանվել է 6 ամսով ուղղիչ աշխատանքների դատապարտելու պատժաչափը, սակայն մեծացվել են տուգանքները՝ հասնելով նվազագույն աշխատավարձի 100-ից 500-ապատիկի (նախկինում՝ 100-ից 200-ապատիկ):

Բացի այս, ըստ փոփոխությունների, 135, 136 եւ 318 հոդվածները լրացվել են արարքը կրկնվելու դեպքում պատիժներ նախատեսող դրույթներով: Ընդսմին, ոչ միայն տուգանքի չափերն են ավելանում, այլեւ զրպարտության (հ. 135) եւ իշխանության ներկայացուցչին վիրավորանքի (հ. 318) կրկնվելու դեպքում նախատեսվում է նաեւ ազատազրկում առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Փորձագետների կարծիքով այս փոփոխություններն ամբողջությամբ չեն լուծում խնդիրը, քանի որ հոդվածներն այսուհանդերձ մնում են քրեական օրենսգրքում եւ լրատվամիջոցներն ու լրագրողները կարող են դատապարտվել քրեական հոդվածներով: Ավելին՝ ԵԽԽՎ բանաձեւի մի պահանջը՝ **«վիրավորանքի կամ զրպարտանքի համար բացառել ազասազրկման ցանկացած հնարավորություն»**, ըստ էության ամբողջովին կատարված չէ, քանի որ 135 եւ 318 հոդվածների երկրորդ մասերում ազատազրկում, այնուամենայնիվ, նախատեսված է: Եվ թեպետ ԵԽԽՎ-ի 2004 թ. հոկտեմբերի 7-ի 1405 բանաձեւը այս փոփոխությունները դրական է որակել, Քրեական օրենսգրքից այդ հոդվածները հանելը մնում է օրախնդիր, քանի որ դրանք ընդհանուր բան չեն կարող ունենալ խոսքի ազատության հետ եւ չեն կարող արդարացվել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի երկրորդ մասով: Պետք է հիշեցնել նաեւ 2002 թվականի դեկտեմբերին ՄԱԿ-ի կարծիքների եւ խոսքի ազատության հատուկ զեկուցողի, ՋԼՄ-ների ազատության հարցերով ԵԱԶԿ ներկայացուցչի եւ Ամերիկյան պետությունների կազմակերպության խոսքի ազատության հատուկ զեկուցողի հանդիպումից հետո ընդունված հռչակագիրը, որում ասվում է. «Ջրպարտության համար քրեական պատասխանատվությունը խոսքի ազատության արդարացված սահմանափակում չէ: Ջրպարտության համար քրեական պատասխանատվության բոլոր օրենքները պետք է չեղյալ հայտարարվեն եւ անհրաժեշտության դեպքում փոխարինվեն քաղաքացիական պատասխանատվության համապատասխան օրենքներով»:



2005 թվականի մարտի 22-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը, որի 14-րդ հոդվածը վերնագրված է «Հակաահաբեկչական գործողության մասին տեղեկատվության սահմանափակումը»: Ըստ այդ հոդվածի.

Արգելվում է հակաահաբեկչական գործողության մասին այնպիսի տեղեկատվության արածումը, որը`

1) բացահայտում է հակաահաբեկչական գործողության իրականացման հասուկ տեխնիկական եղանակներն ու գործելակերպը.

2) կարող է խոչընդոտել հակաահաբեկչական գործողության իրականացմանը եւ վսանգ ստեղծել ֆաղափացիների կյանքի եւ առողջության համար.

3) ուղղված է ահաբեկչության ֆարոզչությանը կամ արդարացմանը.

4) տեղեկատվություն է տարունակում հակաահաբեկչական գործողությանը մասնակից ղեկավարող մարմինների, հասուկ ծառայությունների եւ ահաբեկչության դեմ դայարի` դրանց մասնագիտացված ստորաբաժանումների աշխատակիցների, ինչպես նաեւ այդ գործողության իրականացմանն աջակցություն ցուցաբերած անձանց մասին:

Ըստ ԵՄԱ փորձագետների գնահատման, նման ձեւակերպումները լայն մեկնաբանությունների հնարավորություն են ընձեռում ու կարող են խոսքի ազատության եւ տեղեկություններ ստանալու համար հերթական խոչընդոտը դառնալ:

2005 թվականի վերջից տեղեկատվության ազատ տարածմանը սկսեցին խոչընդոտել «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքը եւ դրա ընդունման հետ միաժամանակ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները: Ըստ դրանց տպագիր պարբերականների բաժանորդագրությամբ ու տարածմամբ զբաղվող մասնավոր կազմակերպությունների գործունեությունը պետք է լիցենզավորվի: Հարկային մարմինները, կամայականորեն մեկնաբանելով հիշյալ ակտերի դրույթները, սկսեցին այցելել այդ կազմակերպություններ եւ պահանջել, որ նրանք լիցենզավորեն իրենց գործունեությունը (իսկ լիցենզավորման վճարը 5 մլն դրամ է) եւ վճարեն տուգանքներ` առանց լիցենզիայի գործունեություն ծավալելու համար:

Đ í »É ³ Í Ý»ñ

ԻՅ ԻՆՅՆՅՆՅՆ 221 (2000)¹

ԹՅ ԻՆՅՆՅՆՅՆ ԻՆՅՆՅՆՅՆ ԻՆՅՆՅՆՅՆ ԻՆՅՆՅՆՅՆ
ԻՆՅՆՅՆՅՆ ԻՆՅՆՅՆՅՆ ԻՆՅՆՅՆՅՆ ԻՆՅՆՅՆՅՆ

1. Հայաստանի Հանրապետությունը դիմեց Եվրոպայի խորհրդի անդամակցության համար 1996թ. մարտի 7-ին: 1996թ. մայիսի 15-ին ընդունված ԹԻՎ (96) 21 որոշմամբ Նախարարների կոմիտեն խորհրդարանական վեհաժողովին հրավիրեց կարծիք հայտնել սույն խնդրանքի վերաբերյալ՝ համաձայն կանոնադրական ԹԻՎ 51 (30A) որոշման:

2. Հայաստանի խորհրդարանը Հատուկ հյուրի կարգավիճակ ձեռք բերեց Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում 1996թ. հունվարի 26-ին: Այս դիմումը քննարկվեց Եվրոպայի խորհրդի ընդլայնման վերաբերյալ 1994թ. ընդունված ԹԻՎ 1247 հանձնարարականի ընդունման լույսի ներքո, որում Վեհաժողովը մատնանշում էր, որ «Եվրոպայի հետ իրենց ունեցած մշակութային կապերի պարագային Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը հնարավորություն կունենան դիմել անդամակցության համար, եթե նրանք ակնհայտ մատնանշեն Եվրոպայի մաս համարվելու իրենց ցանկությունը»:

3. Վեհաժողովի պատվիրակությունները հետելել են 1998թ. մարտի Նախագահական եւ 1995թ. հուլիսի եւ 1999թ. մայիսի ընդհանուր ընտրություններին:

4. 1996թ. ի վեր Հայաստանը մասնակցություն է ցուցաբերել Եվրոպայի խորհրդի տարբեր գործունեություններին միջկառավարական համագործակցության եւ օժանդակության ծրագրերի, իսկ Վեհաժողովի ու նրա հանձնաժողովների աշխատանքներին՝ Հատուկ հյուրի կարգավիճակ ունեցող պատվիրակության միջոցով:

5. Հայաստանը Եվրոպայի խորհրդի մշակութային կոնվենցիայի, Եվրոպայի խորհրդի ազգային փոքրամասնությունների շրջանակային կոնվենցիայի ստորագրող կողմ է, Տարերային եւ տեխնոլոգիական աղետների կանխարգելման, նրանցից պաշտպանվածության եւ օգնության կազմակերպման մասին բաց մասնակի համաձայնագրի կողմ եւ Վենետիկյան հանձնաժողովի թեկնածու անդամ, որի հետ սերտ համագործակցություն է ծավալել: Վեհաժողովը նաեւ նկատի է առնում այն փաստը, որ Հայաստանը դիմում է ներկայացրել Հանձնման մասին Եվրոպական կոնվենցիային եւ Տարածքային համայնքների կանխախնայության մարմինների միջեւ անդրսահմանային համագործակցության Եվրոպական շրջանակային կոնվենցիային անդամակցության վերաբերյալ, նաեւ վերջերս ստորագրել է Եվրոպայի խորհրդի վեց այլ կոնվենցիաներ:

* 2 ԹՅ ԻՆՅՆՅՆՅՆ փաստաթղթերի (հավելվածներ 2, 3, 4) ոչ պաշտոնական թարգմանությունը մեզ է տրամադրել Հայաստանում Եվրոպայի խորհրդի տեղեկատվական գրասենյակը:

¹ Վեհաժողովի քննարկումը 2000թ. հունիսի 28-ին (21-րդ նստաշրջան) (տե՛ս փաստաթուղթ ԹԻՎ 8747, Քաղաքական հարցերով հանձնաժողովի զեկույցը. զեկուցող՝ պրն. Վոլչիկ, եւ փաստաթուղթ ԹԻՎ 8756, Իրավական հարցերի եւ մարդու իրավունքների հանձնաժողովի կարծիքը, զեկուցող՝ պրն. Սպինդելեզեր: *Stfusն ընդունվել է Վեհաժողովի կողմից 2000թ. հունիսի 28-ին (21-րդ նստաշրջանին):*

6. Վեհաժողովը համարում է, որ Հայաստանը շարժվում է դեպի ժողովրդավարական, բազմակարծ հասարակություն, որտեղ հարգում են մարդու իրավունքներն ու օրենքի գերիշխանությունը, եւ համաձայն Եվրոպայի խորհրդի Կանոնադրության 4-րդ հոդվածի, կարող է եւ ցանկություն ունի հետամուտ լինել ժողովրդավարական բարեփոխումների նախաձեռնմանը, որպեսզի իր ողջ օրենսդրությունը եւ գործառնությունները համապատասխանեցնի Եվրոպայի խորհրդի սկզբունքներին եւ չափանիշներին:

7. Վեհաժողովին խնդրելով կարծիք տրամադրել անդամակցության դիմումի վերաբերյալ, Նախարարների կոմիտեն վերստին նշեց, որ Եվրոպայի խորհրդի եւ Կովկասի երկրների միջեւ առավել սերտ փոխհարաբերությունները պահանջում են ոչ միայն էական ժողովրդավարական բարեփոխումներ, այլեւ հակամարտությունները խաղաղ ճանապարհով հանգուցալուծելու պատրաստակամություն:

8. Խորհրդարանական վեհաժողովը հավատում է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի անդամակցությունը կարող է նպաստել վստահության միջավայրին, որն անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հանգուցալուծման համար:

9. Վեհաժողովը համարում է, որ ԵԱՀԿ Մինսկի խումբն ամենաօպտիմալ կառույցն է հակամարտության խաղաղ կարգավորման բանակցությունների համար:

10. Վեհաժողովը նկատի է առնում Հայաստանի Նախագահի նամակը, որում վերջինը պարտավորվում է հարգել հրադադարի համաձայնությունը՝ նախքան հակամարտության վերջնական հանգուցալուծումը, եւ շարունակել խաղաղ բանակցության ճանապարհով հակամարտության կարգավորումը բոլոր ներգրավված կողմերի համար ընդունելի փոխզիջումներով:

11. Երկու երկրների նախագահների միջեւ հանդիպումների հաճախականությունն ավելացել է: Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի խորհրդարանների խոսնակները որոշել են տարածաշրջանային խորհրդարանական համագործակցություն ծավալել, որը կներառի մասնավորապես խորհրդարանների խոսնակների հանդիպումներ եւ խորհրդարանական սեմինարների անցկացում վերոնշյալ երեք երկրների մայրաքաղաքներում եւ Ստրասբուրգում: Տարածաշրջանում առաջին հանդիպումը, որն անցկացվեց Թբիլիսիում 1999թ. սեպտեմբերին, հնարավոր դարձրեց Հայաստանի եւ Ադրբեջանի խորհրդարանական պատվիրակությունների միջեւ ստեղծել լարվածության թուլացման եւ վստահության մթնոլորտ:

12. Վեհաժողովը կոչ է անում Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանություններին շարունակել երկխոսությունը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ հանգուցալուծման եւ տարածաշրջանային համագործակցության խթանման նպատակով:

13. Խորհրդարանական վեհաժողովը նկատի է առնում Հայաստանի նախագահի, Խորհրդարանի խոսնակի, Վարչապետի եւ խորհրդարանում ներկայացված քաղաքական կուսակցությունների նախագահների նամակները եւ նշում է, որ Հայաստանը ստանձնում է հետեւյալ պարտավորությունները՝

i. կոնվենցիաներ

ա. անդամակցություն ստանալու պահին ստորագրել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ) եւ նրան լրացնող Թիվ 2 եւ Թիվ 11 արձանագրությունները, ինչպես նաեւ Թիվ 1, 4, 6 եւ 7 արձանագրությունները.

բ. վավերացնել ՄԻԵԿ-ը եւ նրան լրացնող Թիվ 1, 4, 6 եւ 7 արձանագրությունները անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում.

գ. ստորագրել եւ վավերացնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիան եւ դրա արձանագրությունները անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում.

դ. ստորագրել եւ վավերացնել Տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում.

ե. ստորագրել եւ վավերացնել Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում.

զ. ստորագրել եւ վավերացնել անդամակցություն ձեռք բերելուց հետո երկու տարվա ընթացքում Տարածքային համայնքների կամ իշխանության մարմինների միջեւ անդրսահմանային համագործակցության եվրոպական շրջանակային կոնվենցիան եւ դրա լրացուցիչ արձանագրությունները, ինչպես նաեւ հանձնման, քրեական հարցերում փոխադարձ օժանդակության, հանցագործ գործունեությունից ստացված եկամուտների լվացման, որոնման, զավթման եւ բռնագրավման եւ բանտարկված անձանց փոխանցման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի կոնվենցիաները՝ միաժամանակ կիրառելով դրանցում առկա հիմնարար սկզբունքները.

է. ստորագրել Եվրոպական սոցիալական խարտիան անդամակցություն ձեռք բերելուց հետո երկու տարվա ընթացքում եւ վավերացնել այն անդամակցություն ձեռք բերելուց հետո երեք տարվա ընթացքում՝ ջանալով կիրառել խարտիայի սկզբունքներին համապատասխան քաղաքականություն.

ը. ստորագրել Եվրոպայի խորհրդի արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին գլխավոր համաձայնագիրը եւ համապատասխան արձանագրությունները անդամակցություն ձեռք բերելու պահին եւ վավերացնել դրանք անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում.

ii. հակամարտությունը Լեռնային Ղարաբաղում

ա. հետամուտ լինել այս հակամարտության միայն խաղաղ ճանապարհով հանգուցալուծմանը.

բ. օգտագործել Լեռնային Ղարաբաղի հայերի նկատմամբ ունեցած զգալի ներգործությունը հակամարտության հանգուցալուծմանը նպաստելու նպատակով.

գ. միջազգային եւ ներքին հակասությունները կարգավորել խաղաղ միջոցներով եւ միջազգային իրավունքի սկզբունքների համաձայն (պարտավորություն, որը պարտադիր է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների համար)՝ վճռականորեն մերժելով հարեւանների նկատմամբ ուժի սպառնալիքի որեւէ դրսեւորում:

iii. ներպետական օրենսդրություն

ա. անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում ընդունել Քրեական օրենսգրքի երկրորդ (հատուկ) մասը՝ *de jure* վերացնելով մահապատիժը եւ ապաքրեականացնելով փոխադարձ համաձայնությամբ միասեռ փոխհարաբերությունները չափահասների միջեւ:

բ. անդամակցություն ձեռք բերելուց հետո վեց ամսվա ընթացքում ընդունել օմբուդսմենի մասին օրենքը:

գ. անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում ընդունել նոր օրենք լրատվամիջոցների մասին:

դ. անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում ընդունել նոր օրենք քաղաքական կուսակցությունների մասին:

ե. անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում ընդունել նոր օրենք ոչ կառավարական կազմակերպությունների մասին:

զ. անդամակցություն ձեռք բերելուց հետո վեց ամսվա ընթացքում ընդունել օրենք Ներքին գործերի եւ Ազգային անվտանգության նախարարություններից բանտային համակարգի, այդ թվում նաեւ նախնական կալանքի վայրեր եւ աշխատանքային գաղութների նկատմամբ պարտականությունները (իրավասությունները) Արդարադատության նախարարությանը փոխանցելու մասին՝ դրանով ապահովելով համակարգի հանգամանալի բարեփոխումները եւ ապառազմականացումը, եւ երաշխավորել նշված օրենքի արդյունավետ կիրառումը՝ այն ընդունելուց հետո վեց ամսվա ընթացքում, բացառությամբ նախնական կալանքի վայրերի եւ աշխատանքային գաղութների արդյունավետ փոխանցման, ինչը պետք է կատարվի նշված օրենքի ընդունումից հետո մեկ տարվա ընթացքում:

է. անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում ընդունել օրենք քաղաքացիական ծառայության մասին:

ը. նախքան հաջորդ տեղական ընտրությունները փոփոխել տեղական իշխանությունների լիազորությունները կառավարող ներկա օրենսդրությունը, որպեսզի նրանց առավել մեծ պարտականություններ եւ անկախություն վերապահվի՝ այս ոլորտում Եվրոպայի տեղական եւ տարածքային իշխանությունների կոնգրեսի (ԵՏՏԻԿ) հանձնարարականների համաձայն:

թ. վերացնել ընտրական նոր օրենսգրքի թերությունները մինչեւ հաջորդ ընտրությունները՝ մասնավորապես ուշադրություն դարձնելով ընտրական հանձնաժողովների ընթացակարգային ասպեկտներին եւ ընտրամատյանների ստեղծման համար պատասխանատու իշխանությունների աշխատանքին:

iv. մարդու իրավունքներ

ա. դատաիրավական համակարգի համալիր բարեփոխում *inter alia* երաշխավորելու՝

- դատաիրավական համակարգի լրիվ անկախություն,
- քրեական դատավարություններում լրիվ եւ անմիջական մատչելիություն դատապաշտպանին (պարտադիր անչափահասների համար). անհրաժեշտության դեպքում ծախսերը պետք է հոգա պետությունը.

բ. երաշխավորել, որ բոլոր եկեղեցիները կամ կրոնական համայնքները, մասնավորապես նրանք, որոնց անվանում են «ոչ ավանդական», կարող են դավանել իրենց կրոնը առանց խտրականության.

գ. սերտ համագործակցել ՈԿԿ-ների հետ՝ երաշխավորելու բանտարկյալների եւ դատապարտվածների իրավունքների նկատմամբ հարգանքը.

դ. անդամակցության երեք տարիների ընթացքում ընդունել այլընտրանքային ծառայության մասին եվրոպական չափանիշներին համապատասխան օրենք եւ միեւնույն ժամանակ ներում շնորհել հանդուժմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունը մերժելու պատճառով ազատագրված կամ ուղղիչ աշխատանքի դատապարտված անձանց՝ նրանց հնարավորություն ընձեռելով ընտրություն կատարել չզինված ռազմական կամ այլընտրանքային քաղաքացիական ծառայության միջեւ, այլընտրանքային ծառայության մասին օրենքի ուժի մեջ մտնելուց հետո.

ե. պետական հեռուստակայանը դարձնել հանրային կայան, որը կկառավարի անկախ վարչական խորհուրդը.

v. պարտավորությունների մոնիտորինգը

ա. սերտ համագործակցել Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից իրենց ստանձնած պարտավորությունների կատարման՝ Վեհաժողովի հանձնաժողովի (Մոնիտորինգային հանձնաժողով) ստեղծման մասին Վեհաժողովի Թիվ 1115 (1997) որոշման կիրառման համատեքստում.

բ. սերտ համագործակցել մոնիտորինգային գործընթացին, որը սկսվել է համաձայն 1994թ. նոյեմբերի 10-ին (95-րդ նստաշրջանին) Նախարարների կոմիտեի ընդունած հայտարարագրի:

14. Խորհրդարանական վեհաժողովը մատնանշում է, որ Հայաստանը լիովին համաձայն է 13-րդ պարբերությունում սահմանված իր պարտավորությունների ընկալմանը եւ մեկնաբանությանը եւ նպատակ է հետապնդում՝

i. ապահովել, որ խորհրդարանը լրիվ տեղեկացված լինի 1999թ. հոկտեմբերի 27-ի դեպքերի հետաքննությանը՝ համաձայն գործող օրենսդրության.

ii. Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը շնորհել նաեւ Կառավարությանը, Դատախազությանը, բոլոր ատյանների դատարաններին եւ հատուկ դեպքերում նաեւ անհատներին, անդամակցություն ձեռք բերելուց հետո երկու տարվա ընթացքում.

iii. բարեփոխել Արդարադատության խորհուրդը՝ վերջինիս անկախությունը մեծացնելու նպատակով, անդամակցություն ձեռք բերելուց հետո երեք տարվա ընթացքում:

iv. անհապաղ հիմնել ոստիկանությունում, նախնական կալանքի վայրերում, բանտերում եւ բանակում վատ վերաբերմունքի մասին բողոքների գնահատման ընթացակարգ, որը համապատասխանում է Եվրոպայի խորհրդի չափանիշներին, եւ ապահովել, որ նման գործողություններում մեղավոր ճանաչվածները պատժվեն օրենքով:

v. կարգապահական գումարտակում գտնվելու ժամանակահատվածը առնվազն մասամբ համարել պարտադիր զինվորական ծառայության հատված եւ նախատեսել այդ ժամկետի կրճատման հնարավորությունը զինվորի լավ վարքի դրսեւորման դեպքում:

vi. հատուկ ուշադրություն դարձնել անտուն եւ օրինախախտ երեխաների ճակատագրին:

15. Այս պարտավորությունների հիման վրա, Վեհաժողովը կարծում է, որ համաձայն Եվրոպայի խորհրդի Կանոնադրության 4-րդ հոդվածի, Յայաստանը կարող է եւ պատրաստակամ է կատարելու Կանոնադրության 3-րդ Հոդվածի դրույթները, որոնք սահմանում են Եվրոպայի խորհրդի անդամակցության նախապայմանները. «Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի օրենքի գերակայության եւ իր իրավասության ներքո բոլոր անձանց՝ մարդու իրավունքներ եւ հիմնարար ազատություններ ունենալու սկզբունքները, ինչպես նաեւ պետք է անկեղծորեն եւ արդյունավետ համագործակցի (Եվրոպայի) խորհրդի նպատակների իրագործման համատեքստում»:

16. Այս պարտավորություններին համապատասխանություն ապահովելու նպատակով Վեհաժողովը որոշում է խիստ վերահսկել իրավիճակը Յայաստանում անդամակցություն ձեռք բերելու պահից անմիջապես հետո՝ համաձայն իր Թիվ 1115 (1997) որոշման:

17. Հասկանալով, որ վերը նշված պարտավորությունները հաստատուն են եւ կկատարվեն սահմանված ժամանակահատվածում՝ Վեհաժողովը Նախարարների կոմիտեին հանձնարարում է՝

i. հրավիրել Յայաստանին անդամակցել Եվրոպայի խորհրդին:

ii. Յայաստանին հատկացնել չորս տեղ խորհրդարանական վեհաժողովում:

18. Բացի այդ, Յայաստանին, որպես անդամ պետություն, իր պարտավորությունները կատարելու հարցում օգնելու նպատակով, Վեհաժողովը նաեւ առաջարկում է, որ Նախարարների կոմիտեն ընդլայնի Յայաստանի իշխանություններին իր աջակցությունը ժողովրդավարության զարգացման եւ ամրապնդման գործունեությունների շրջանակներում: Բացի այդ, Վեհաժողովն առաջարկում է, որ Եվրոպայի խորհրդի զարգացման բանկը օժանդակություն տրամադրի անհրաժեշտության դեպքում:

6. Այս կապակցությամբ Վեհաժողովը ողջունում է 2003թ. Քրեական օրենսգրքի ընդունումը, որն այլևս մահապատիժ չի նախատեսում. Վեհաժողովը նկատի է առնում Հայաստանի իշխանությունների հավաստիացումներն այն մասին, որ Քրեական օրենսգրքի գործողության մեջ դնելու մասին օրենքը, որն ընդունվել է Քրեական օրենսգրքի հետ միաժամանակ, չնայած պահպանել է մահապատիժը մի շարք լուրջ հանցագործությունների դեպքում, կորցրել է իր ուժը՝ Թիվ 6 արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո:

7. Վեհաժողովը նշում է, որ Նախագահի 2003թ. օգոստոսի հրամանագիրը, որով մահապատժի դատապարտված 42 անձանց դատավճիռը փոխարինվեց ցմահ բանտարկությամբ, խիստ բողոքներ առաջացրեց նրանցից մի քանիսի մոտ: Վեհաժողովը հավատացած է, որ այս խնդրին անհրաժեշտ է անդրադառնալ՝ ելնելով յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունից, եւ կոչ է անում համապատասխան իշխանություններին հնարավորինս արագ վերաքննել այն անձանց գործերը, ովքեր ներկայացրել են դատավճիռը վերանայելու կամ նոր դատավարություն անցկացնելու հայտեր:

8. Ինչ վերաբերում է ներպետական օրենսդրությանը, Վեհաժողովն ընդունում է, որ 2003թ. սեպտեմբերից ի վեր էական աշխատանքներ են տարվել օրենքների մշակման ոլորտում: Վեհաժողովը հատկապես ողջունում է նոր Քրեական օրենսգրքի, Օմբուդսմենի մասին օրենքի, Այլընտրանքային զինվորական ծառայության, Լրատվամիջոցների մասին եւ Ռադիոյի ու հեռուստատեսային հեռարձակման մասին օրենքների ընդունումը:

9. Վեհաժողովը մատնանշում է, որ օրենսդրական մի շարք պարտավորություններ, ինչպիսիք են՝ տեղական կառավարման մարմինների առավել անկախությունը, անկախ օմբուդսմենի ներկայացումը, հեռարձակման անկախ կանոնակարգող մարմնի ստեղծումը, Սահմանադրական դատարանի լիազորությունների փոփոխությունները եւ Սահմանադրական դատարանի առավել մատչելիության ապահովումը, Արդարադատության խորհրդի բարեփոխումը եւ այլն, դեռեւս կախված են Հայաստանի Սահմանադրության վերանայումից: Սահմանադրական փոփոխությունների ընդունման ձախողումը 2003թ. մայիսի հանրաքվեի ժամանակ հանգեցրեց վերոնշյալ հիմնարար բարեփոխումների հետաձգմանը, որոնցից շատերը պետք է կատարվեին հատուկ ժամանակային սահմաններում՝ համաձայն Եվրոպայի խորհուրդ Հայաստանի անդամակցության մասին Վեհաժողովի ներկայացրած կարծիքի. վերոհիշյալ ժամկետներն արդեն սպառվել են:

10. Վեհաժողովը համարում է, որ այս պարտականությունների կատարումը չպետք է այլևս հետաձգվի, եւ կոչ է անում Հայաստանի իշխանություններին արագացնել Սահմանադրության վերանայման գործընթացը: Վեհաժողովը նկատի է առնում իշխանությունների պատրաստակամությունը՝ ընդդիմադիր կուսակցություններին եւ քաղաքացիական հասարակությանն իրապես ներգրավել երկրի հաստատությունների ապագայի շուրջ քննարկումներին: Այնուհանդերձ, Վեհաժողովն ակնկալում է, որ Հայաստանի իշխանությունները կմշակեն մանրամասն ժամանակացույց եւ կհետեւեն դրան, եւ արագորեն կնախապատրաստեն Սահմանադրության մեջ կատարվելիք փոփոխությունների նախագիծը եւ մինչեւ 2004թ. ապրիլի վերջը դրանք կներկայացնեն Եվրոպայի խորհրդին փորձագիտության նպատակով, որպեսզի հանրաքվեն հնարավոր լինի անցկացնել հնարավորինս շուտ եւ ամեն դեպքում ոչ ուշ, քան 2005թ. հունիսը:

11. Վեհաժողովը նշում է, որ 2003թ. հոկտեմբերին ընդունված Օմբուդսմենի մասին օրենքով սահմանվում է, որ նախքան Սահմանադրության փոփոխությունների ընդունում Օմբուդսմեն պետք է նշանակվի Հանրապետության նախագահի կողմից: Վեհաժողովը բացահայտորեն վկայակոչում է իր Թիվ 1615 (2003) հանձնարարականը Օմբուդսմենի ինստիտուտի վերաբերյալ եւ վստահ է, որ նախատեսված նշանակման մեթոդը բավարար երաշխիքներ չի ապահովում օմբուդսմենի անկախության համար, մինչդեռ վերջինը պետք է ունենա քաղաքացիների լրիվ վստահությունը: Վեհաժողովը Հայաստանի իշխանություններին կոչ է անում ստեղծել թափանցիկ եւ վստահելի միջանկյալ ընթացակարգ, որը հնարավորություն կտա Հայաստանի Ազգային ժողովին, այդ թվում նաեւ ընդդիմադիր կուսակցություններին, քննելու եւ կարծիք հայտնելու թեկնածուների վերաբերյալ, միաժամանակ պաշտոնապես պահպանելով Նահագահի՝ հաջողակ թեկնածուին նշանակելու իրավունքը:

12. Ազատ եւ արդար ընտրությունների իրավունքի համատեքստում Վեհաժողովը չի կարող չարտահայտել իր մեծ հիասթափությունը 2003թ. մարտ եւ փետրվար ամիսների նախագահական եւ մայիսի խորհրդարանական ընտրությունների անցկացման կապակցությամբ, որոնց ընթացքում արձանագրվել են լուրջ խախտումներ եւ զանգվածային կեղծիքներ՝ հանգեցնելով միջազգային դատորդների այն եզրակացությանը, որ ընդհանուր առմամբ ընտրական գործընթացը չէր համապատասխանում միջազգային չափանիշներին: Վեհաժողովը Հայաստանի իշխանություններին կոչ է անում՝

i. Փոփոխել Ընտրական օրենսգիրքը՝ սերտորեն համագործակցելով Եվրոպայի խորհրդի եւ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի հետ, հատկապես այն դրույթների մշակման առումով, որոնք վերաբերում են ընտրական հանձնաժողովների կազմին, դիտորդների դերին եւ կարգավիճակին, ինչպես նաեւ ձայների հաշվման ու արդյունքների ամփոփման թափանցիկությանը:

ii. Հանգամանորեն հետաքննել ընտրական կեղծիքները եւ մինչեւ 2004թ. ավարտը վերջ դնել այն անձանց դատական անպատժելիությանը, ովքեր պատասխանատու են դրա համար:

13. Վեհաժողովն անհանգստացած է, որ դատական համակարգին եւ դատավորների անկախությանը վերաբերող հիմնարար բարեփոխումները դեռ չեն ավարտվել: Այն Հայաստանի իշխանություններին կոչ է անում՝

i. Մինչեւ 2004թ. ապրիլ ամիսը ներկայացնել վերոնշյալ բարեփոխումների արդյունավետ կիրառման հստակ ժամանակացույց.

ii. Ընդունել դատավորների կարգավիճակի մասին օրենքը, Արդարադատության խորհրդի մասին օրենքը եւ դատական համակարգի մասին օրենքը մինչեւ 2004թ. վերջը՝ հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի հանձնարարականներն ու փորձագետների կարծիքները.

14. Վեհաժողովին ցնցել է այն փաստը, որ Վարչական օրենսգրքով նախատեսված վարչական կալանքների կամայական կիրառման ամոթալի պրակտիկան դեռեւս շարունակվում է, ինչը միանգամայն անհամատեղելի է Վեհաժողովի 2002թ. սեպտեմբերի Թիվ 1304 բանաձեւի մեջ տեղ գտած խիստ ձեւակերպման հետ, ըստ որի Հայաստանի իշխանություններն այլեւս

չպետք է կիրառեն վերոնշյալ պրակտիկան: Վեհաժողովը դատապարտում է ավելի քան 270 մարդկանց՝ ընդդիմադիր կուսակցությունների անդամների, նրանց կողմնակիցների եւ պաշտոնակիւրների ձերբակալություններն ու դատապարտումը Նախագահական ընտրությունների երկու փուլերի միջեւ ընկած ժամանակահատվածում եւ երկրորդ փուլի ավարտին: Վեհաժողովն ակնկալում է, որ Հայաստանի իշխանությունները 2004թ. փետրվարին կքննարկեն Վարչական օրենսգրքում տեղ գտած վարչական կալանքների խնդիրը Եվրոպայի խորհրդի փորձագետների հետ համագործակցությամբ եւ մինչեւ 2004թ. ապրիլ ամիսը փոփոխությունների նախագծերը կուղարկեն Եվրոպայի խորհուրդ՝ փորձագիտական կարծիքի համար:

15. Վեհաժողովը դիմում է Հայաստանի իշխանություններին, Եվրոպայի խորհրդի հետ համագործակցությամբ, անմիջապես սկսել ուսումնասիրել հավասարակշռության սկզբունքի կիրառումը ժողովների եւ ցույցերի կազմակերպման ազատության եւ հասարակական կարգը հարգելու միջեւ, եւ ընդունել օրենք ցույցերի եւ հանրահավաքների մասին, որը լիովին կհամապատասխանի Եվրոպայի խորհրդի սկզբունքներին եւ չափանիշներին:

16. Ինչ վերաբերում է քրեական օրենսդրությանը, ապա Վեհաժողովը՝

i. տազնապած է այն փաստով, որ 2003թ. նոյեմբերի 5-ին Հայաստանի Ազգային ժողովն ընդունել է Քրեական օրենսգրքում փոփոխությունները՝ բացառելով համաներումը կամ պայմանական ազատ արձակումը այն անձանց համար, ովքեր դատապարտված են ցմահ բանտարկության, եւ մատնանշում է, որ այս դրույթներն ամբողջովին հակասում են պայմանական ազատ արձակման մասին Նախարարների կոմիտեի թիվ (2003)22 հանձնարարականին: Վեհաժողովը կոչ է անում Հայաստանի իշխանություններին անհապաղ անվավեր ճանաչել այդ դրույթները:

ii. դիմում է Հայաստանի իշխանություններին սկսել Քրեական օրենսգրքի 135, 136 եւ 318 հոդվածներում փոփոխությունների կատարման աշխատանքը մինչեւ 2004թ. մարտ ամիսը՝ Եվրոպայի խորհրդի փորձագետների հետ համագործակցությամբ՝ վիրավորանքի կամ զրպարտանքի համար բացառելով ազատազրկման ցանկացած հնարավորություն:

iii. կոչ է անում Հայաստանին անհապաղ նախաձեռնել Քրեական դատավարության օրենսգրքի վերանայումը՝ համագործակցելով Եվրոպայի խորհրդի փորձագետների հետ եւ պատշաճ ուշադրություն դարձնելով արդեն իսկ կատարված եւ կատարվելիք հանձնարարականներին:

17. Վեհաժողովն ակնկալում է, որ Հայաստանի իշխանությունները կշարունակեն ջանքեր գործադրել կալանավայրերի պայմանների բարելավման ուղղությամբ, ինչը ներառում է խոշտանգումների կանխարգելման կոմիտեի հանձնարարականների կիրառումը:

18. Վեհաժողովը նաեւ դիմում է իշխանություններին վճռական եւ առավել ակտիվ քայլեր ձեռնարկել՝ օրենքի հարկադիր կատարումն իրականացնող պաշտոնյաների անպատշաճ վարքի շտկման, հատկապես բռնության, վատ

վերաբերմունքի, կոռուպցիայի, կաշառակերության դրսևորումների առնչությամբ, որոնք դեռևս համատարած բնույթ են կրում: Վեհաժողովն ակնկալում է, որ իշխանությունները կվերանայեն Ոստիկանության մասին օրենքը մինչև 2004թ. մարտը՝ այն համապատասխանեցնելով Եվրոպայի խորհրդի հանձնարարականներին:

19. Ինչ վերաբերում է ազատ արտահայտվելու իրավունքին եւ լրատվամիջոցների բազմակարծության խնդրին, ապա Վեհաժողովը մտահոգված է Հայաստանում լսատեսողական լրատվամիջոցների ոլորտում տեղի ունեցող զարգացումների շուրջ եւ լուրջ կասկածներ է արտահայտում նաեւ էլեկտրոնային լրատվամիջոցների բազմակարծ լինելու վերաբերյալ, մասնավորապես ափսոսալով, որ գործող օրենքի անհստակության հետեւանքով Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովին բացահայտ ինքնահայեցողական լիազորություններ են տրված հեռարձակման թույլտվությունների տրամադրման ոլորտում, հատկապես A1+ հեռուստատեսային ալիքի կապակցությամբ: Այնուհանդերձ, Վեհաժողովը նկատի է առնում 2003թ. դեկտեմբերին զանգվածային լրատվամիջոցների մասին օրենքի ընդունումը եւ Ռադիոյի ու հեռուստատեսության մասին օրենքում փոփոխությունների կատարումը:

20. Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարմանը, Վեհաժողովը՝

i. նկատի է առնում Հայաստանում տեղական ժողովրդավարության վերաբերյալ Եվրոպայում տեղական եւ տարածքային իշխանությունների կոնգրեսի (ԵՏՏԻԿ) Թիվ 140 (2003) հանձնարարականը.

ii. ակնկալում է, որ Հայաստանի իշխանությունները մինչև 2004թ. ապրիլը կնշակեն եւ 2004թ. երկրորդ եռամսյակի վերջին կընդունեն Երեւանի կարգավիճակի մասին օրենքը, պետության տարածքային վարչարարության մասին օրենքը, մունիցիպալ ծառայողների մասին օրենքը եւ տեղական ինքնակառավարման մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքը՝ համագործակցելով ԵՏՏԻԿ-ի եւ Եվրոպայի խորհրդի փորձագետների հետ.

iii. Հայաստանի իշխանություններին դիմում է մինչև 2004թ. ապրիլ ամիսը ներկայացնել վերոնշյալ բարեփոխումների իրականացման առանձին հստակ ժամանակացույց:

21. Վեհաժողովը մտահոգված է Հայաստանում անհանդուրժելի մակարդակի հասնող կոռուպցիայի դրսևորումներով: Վեհաժողովն ակնկալում է, որ Հայաստանի իշխանություններն իսկապես կփոխեն իրենց վերաբերմունքը եւ կոռուպցիայի դեմ արդյունավետ գործողություններ ծավալելու իրական քաղաքական կամք կդրսևորեն, մասնավորապես՝

i. ողջունում է Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ երկրների խմբին (GRECO).

ii. ողջունում է Հայաստանի Կառավարության կողմից ազգային հակակոռուպցիոն ռազմավարության եւ դրա կիրառման գործողությունների ծրագրի ընդունումը, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի կարծիքը ստանալու նպատակով դրա ներկայացումը.

iii. առաջարկում է Հայաստանի իշխանություններին սերտ համագործակցել Եվրոպայի խորհրդի փորձագետների հետ.

iv. ակնկալում է, որ Հայաստանի իշխանությունները կմշակեն ժամանակակից եւ համապարփակ օրենք կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ.

v. ակնկալում է, որ Հայաստանի իշխանությունները կվավերացնեն Կոռուպցիայի վերաբերյալ քրեական իրավունքի կոնվենցիան եւ հնարավորինս արագ կստորագրեն եւ կվավերացնեն Կոռուպցիայի վերաբերյալ քաղաքացիական իրավունքի կոնվենցիան:

22. Վեհաժողովը ողջունում է այլընտրանքային զինվորական եւ քաղաքացիական ծառայության մասին օրենքի ընդունումը, որն ընդհանուր առմամբ համապատասխանում է Խորհրդարանական վեհաժողովի Թիվ 1518 (2001) հանձնարարականին՝ նվիրված Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի կիրառմանը: Սակայն Վեհաժողովը համարում է այլընտրանքային քաղաքացիական ծառայության ժամկետը, որը սահմանվել է 42 ամիս, անընդունելի եւ չափազանց երկար եւ դիմում է, որպեսզի օրենքը փոփոխության ենթարկվի այս կետով՝ կրճատելով ծառայության ժամկետը մինչեւ 36 ամիս, նախքան այն ուժի մեջ կմտնի 2004թ. հուլիսի 1-ին:

23. Վեհաժողովը մատնանշում է, որ Հայաստանը Եվրոպայի խորհրդում անդամակցություն ձեռք բերելով նախաձեռնել է ներում շնորհել այն բոլոր անձանց, ովքեր համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունը մերժելու արդյունքում դատապարտվել են ազատազրկման: Վեհաժողովը արտահայտում է իր վրդովմունքը այն փաստի կապակցությամբ, որ 20 կամ ավելի երիտասարդներ, ովքեր հրաժարվել են զինվորական ծառայությունից, դեռեւս գտնվում են բանտում: Ուստի այն պահանջում է, որ նշված երիտասարդներն անմիջապես ազատ արձակվեն նախագահի ներման հիման վրա, նախքան 2004 թ. հուլիսի 1-ին Այլընտրանքային քաղաքացիական ծառայության մասին օրենքի ուժի մեջ մտնելը:

24. Ինչ վերաբերում է կրոնի ազատությանը, Վեհաժողովը՝

i. մատնանշում է, որ չնայած ստանձնած պարտավորություններին եւ Վեհաժողովի բազմաթիվ կոչերին, Եհովայի վկաները դեռ չեն գրանցված որպես կրոնական կազմակերպություն: Վեհաժողովը դիմում է, որ գրանցումը կատարվի առանց հապաղման՝ վերջինների կանոնադրությունը գործող օրենսդրությանը համապատասխանեցնելուց հետո.

ii. ընդունում է Հայաստանի իշխանությունների հավաստիացումն այն մասին, որ Ներքին գործերի նախարարի Թիվ 551-A հրամանը, որը հանգեցնում է լուրջ խտրականության եւ համոզմունքների եւ կրոնի ազատության ոտնահարմանը, իրոք վերացվել է.

iii. դիմում է Հայաստանի իշխանություններին հիմնադրել իրապես անկախ մարմին, որը կներկայացնի Հայաստանի բոլոր կրոնական կազմակերպություններն ու համայնքները.

25. Վեհաժողովը նաեւ կոչ է անում Հայաստանի իշխանություններին, համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ համագործակ-

ցությամբ, արդյունավետ քայլեր ձեռնարկել՝ կանխելու կանանց եւ անչափահասների թրաֆիքինգը մարմնավաճառության նպատակով:

26. Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հանգուցալուծմանը, ապա Վեհաժողովը՝

i. նշում է, որ առաջընթաց չի արձանագրվել Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի գրավյալ տարածքների շուրջ հակամարտության կարգավորման նպատակով տարվող բանակցություններում.

ii. կոչ է անում Չայաստանի եւ Ադրբեջանի իշխանություններին հաճախակի դարձնել բարձրաստիճան շփումները՝ հնարավորինս շուտ խնդրի խաղաղ կարգավորման նպատակով.

iii. անհանգստացած է այն լուրջ միջադեպերով, որոնք տեղի են ունեցել 2003թ. հուլիս եւ օգոստոս ամիսներին հյուսիս-արեւելյան սահմանի շրջանում, որոնց ժամանակ գրանցվել է մահացության 15 դեպք:

27. Հիշեցնելով, որ Վեհաժողովի Թիվ 221 (2000) կարծիքը նկատի էր առնում, որ Չայաստանի եւ Ադրբեջանի համաժամանակյա անդամակցությունը կարող էր օգնել հաստատելու վստահության եւ լարվածության թուլացման մթնոլորտ, ինչն անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ հանգուցալուծման համար, եւ մատնանշելով Չայաստանի ու Ադրբեջանի իշխանություններին ուղղած կոչը՝ շարունակելու իրենց երկխոսությունը տարածաշրջանային համագործակցությամբ խթանելու այդ մթնոլորտը՝ Վեհաժողովը կոչ է անում Վեհաժողովի բյուրոյին անդրադառնալ այն խնդրին, թե ինչպես տարածաշրջանային խորհրդարանական երկխոսությունն ու համագործակցությունը, որն ընդգրկում է խորհրդարանների խոսակների եւ որն արդեն ստեղծվել էր, կարող է վերականգնվել եւ ընթացք ստանալ հնարավորինս արագ:

28. Վեհաժողովը գոհունակություն է արտահայտում Չայաստանի իշխանությունների հետ գերազանց համագործակցության, վերջինների արձագանքող վերաբերմունքի եւ շարունակական երկխոսության վերաբերյալ՝ կապված պարտավորությունների կատարման հետ:

29. Վեհաժողովն ընդունում է, որ Չայաստանը վերջերս զգալի ջանքեր է ներդրել իր ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ: Այնուհանդերձ, նկատի առնելով, թե որքան պարտավորություններ են դեռ ենթակա կատարման, հատկապես բազմակարծ ժողովրդավարության հաստատման ոլորտում, Վեհաժողովը որոշում է չավարտել ներկա մոնիտորինգային ընթացակարգը, քանի դեռ Չայաստանը հետագա էական առաջընթաց չի գրանցել չկատարված պարտավորությունների ոլորտում եւ ակնհայտորեն չի ապացուցել, որ ունակ է հաջորդ նախագահական եւ խորհրդարանական ընտրությունները կազմակերպել միջազգային ժողովրդավարական չափանիշներին համապատասխան:

° Ê Ê ì Â Ç 1374 (2004)¹ μ³ Ý³ Ó» Ծ Թ Թ ÷ ÷³ ÝÇ ÷ ÷³ ÝÓÝ³ Ի ă³ ñ³ Ի ăñăŃŃăđŸ»ŕÇ» օ ă³ ñ³ ì³ ÝăŃŃăđŸ»ŕÇ ì³ ì³ ņŮ³ Ý Ů³ èÇŸ

1. 2004թ. մարտ ամսվա վերջից սկսած Հայաստանում ընդդիմադիր ուժերը կազմակերպել էին մի շարք բողոքի ցույցեր՝ կոչ անելով անցկացնել «վստահության հանրաքվե» նախագահ Քոչարյանին: Նման հանրաքվեի հնարավորության մասին առաջին անգամ հիշատակել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը անցյալ տարվա փետրվար եւ մարտ ամիսների նախագահական ընտրություններից հետո: Հետագայում Սահմանադրական դատարանը պարզաբանեց իր առաջարկը, եւ ընդդիմության պահանջներն ու բողոքի ցույցերն իշխանությունները որակեցին որպես բռնի իշխանափոխության փորձ:

2. Չնայած հանրահավաքները հայտարարված էին, դրանք թույլատրված չէին իշխանությունների կողմից, որոնք սպառնում էին քրեական գործ հարուցել կազմակերպիչների դեմ: Ապրիլի 5-ի հանրահավաքից հետո գլխավոր դատախազը դատական գործ հարուցեց ընդդիմության որոշ ներկայացուցիչների դեմ՝ ընդդիմության կուսակցությունների հանրահավաքների կապակցությամբ, եւ շատ-շատերը ձերբակալվեցին: Նույն հանրահավաքի ժամանակ անհայտ անձինք ծեծի են ենթարկել մի քանի լրագրողների, մինչդեռ ներկա ոստիկանները ոչ մի գործողություն չեն ձեռնարկել:

3. Ապրիլի 9-ին, 10-ին եւ 12-ին Երեւանում տեղի ունեցան նոր հանրահավաքներ: Ապրիլի 13-ին՝ վաղ առավոտյան, օրինապահ մարմինները բռնությամբ ցրել են 2000-3000 ցուցարարների, ովքեր փորձում էին շարժվել դեպի նախագահ Քոչարյանի նստավայրը՝ պահանջելով վերջինիս հրաժարականը: Մեր տեղեկությունների համաձայն՝ ոստիկանները կիրառել են մահակներ, ջրցան մեքենաներ եւ արցունքաբեր գազ՝ արդյունքում պատճառելով տասնյակ վնասվածքներ: Ցուցարարներից շատերը ձերբակալվել են, այդ թվում Խորհրդարանի պատգամավորներ՝ ներառյալ Վեհաժողովի անդամներ, ընդ որում, կալանավայրում ոմանք ոչ պատշաճ վերաբերմունքի են արժանացել ոստիկանության կողմից: Անվտանգության ուժերը նաեւ ֆիզիկական ուժ են կիրառել ընդդիմության հանրահավաքը լուսաբանող որոշ լրագրողների նկատմամբ եւ ձերբակալել նրանց:

4. Հայաստանում իրավիճակը շարունակվում է շատ լարված մնալ. նոր բողոքի ցույցեր են նախատեսված ապրիլի 26-ից մայիսի 1-ը ընկած շաբաթվա ընթացքում: Մինչ այդ, իշխանությունների եւ ընդդիմության միջեւ երկխո-

¹ Վեհաժողովի քննարկումը 2004թ. ապրիլի 28-ին (13-րդ նստաշրջան) (տե՛ս փաստ. 10163, Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից պարտականությունների եւ պարտավորությունների կատարման հարցերով համձնաժողովի զեկույցը): Համազեկուցողներ՝ պրն. Անդրե եւ պրն. Յասկերնիա: Փաստաթուղթն ընդունվել է Վեհաժողովի կողմից 2004թ. ապրիլի 28-ին (13-րդ նստաշրջան):

սուբյան բավարար հիմքեր կարծես չկան, չնայած, որ որոշ առաջարկներ արվել են, եւ իշխող մեծամասնության որոշ անդամներ, մասնավորապես ՀՀ խորհրդարանի խոսնակը, սկսել են քննադատել հանրահավաքների բռնի կասեցումները:

5. Իշխանությունների գործելակերպի առնչությամբ՝ խորհրդարանական վեհաժողովը համարում է, որ Հայաստանի իշխանությունների գործողությունները հակասում են հունվար ամսին ընդունված ԵԽԽՎ ԹԻՎ 1361 (2004) բանաձեւում սահմանված հանձնարարականների տառին եւ ոգուն: ԵԽԽՎ-ն մասնավորապես մտահոգություն է հայտնել հետեւյալ փաստերի շուրջ.

ա. Ձերբակալությունները, այդ թվում Վարչական իրավախախտումների օրենսգրքի հիման վրա, անտեսել են վարչական կալանքի պրակտիկային անհապաղ վերջ տալու եւ այդ պրակտիկայի համար իրավական հիմք ծառայող Վարչական իրավախախտումների օրենսգրքը փոփոխելու պահանջը,

բ. Իշխանությունները հրաժարվել են արտոնել ընդդիմության հանրահավաքները Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով չթույլատրվող հիմքերով: Ավելին, ժողովներ, ցույցեր, երթեր եւ հանրահավաքներ անցկացնելու կարգի մասին նոր օրինագիծը, որն այժմ շրջանառության մեջ է խորհրդարանում, Վեներտիկի հանձնաժողովի փորձագետների կողմից գնահատվել է չափազանց սահմանափակող,

գ. Ինչպես տեղեկացվել է, վերջին իրադարձությունների ընթացքում ազատազրկված անձինք ենթարկվել են ոչ պատշաճ վերաբերմունքի ոստիկանության եւ անվտանգության ուժերի կողմից՝ չնայած Վեհաժողովի այն պահանջներին, որ վճռական եւ առավել ակտիվ քայլեր ձեռնարկվեն օրենքի հարկադիր կատարումն իրականացնող ծառայողների կողմից անպատշաճ վարքի շտկման ուղղությամբ,

դ. Ազատ արտահայտվելու իրավունքը շարունակվում է լրջորեն սահմանափակվել, եւ վերջին իրադարձությունների ընթացքում լրագրողների նկատմամբ բռնություններն իրականացվել են ոստիկանության եւ անվտանգության ծառայողների կողմից կամ ներկայությամբ:

6. Ընդդիմության գործելակերպի առնչությամբ՝ Վեհաժողովն ընդգծում է, որ ընդդիմությունը պետք է անի առավելագույնը՝ հետագա ցանկացած բռնությունից խուսափելու նպատակով:

7. «Վստահության հանրաքվե» անցկացնելու եւ նախագահ Քոչարյանի պաշտոնանկության պահանջների առնչությամբ՝ Վեհաժողովն ընդգծում է, որ.

ա. Ե՛վ նախագահական ընտրությունները, եւ՛ դրանց հաջորդող խորհրդարանական ընտրությունները անցյալ տարվա մայիսին խստորեն քննադատվել են միջազգային հանրության կողմից, այդ թվում Վեհաժողովի պատվիրակությունների կողմից: Ընդհանուր առմամբ ընտրական գործընթացը չէր համապատասխանում միջազգային չափանիշներին, եւ դիտարկված խախտումներից կարելի է մասնավորապես մատնանշել լրատվամիջոցների կողմնակալ լուսաբանումը, ընդդիմության վստահված անձանց եւ ընտրարշավն իրականացնող աշխատակազմի կալանավորումները, արդյունքների կեղծումը, դիտորդներին

ուղղված սպառնալիքները, ինչպես նաև ընդհանուր առմամբ ընտրական հանձնաժողովների ոչ պատշաճ պահվածքը:

բ. Չնայած որ կեղծիքները, անկախ դրանց ծավալից, վճռապես չփոխեցին ընտրությունների արդյունքները եւ վերջնական արդյունքներն անվավեր չդարձրին, Վեհաժողովը Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման մասին 2004թ. հունվարին ընդունած զեկույցում (Թիվ 1361 (2004) բանաձեւ) իր մեծ հիասթափությունն է արտահայտել ընտրությունների անցկացման կապակցությամբ եւ կոչ է արել հանգամանորեն հետաքննել ընտրակեղծիքները եւ վերջ դնել պատասխանատու անձանց անպատժելիությանը դատական մարմինների կողմից:

8. Միաժամանակ պնդելով, որ Հայաստանի իշխանությունները պետք է լիովին հետեւեն անցյալ տարվա խախտումներ ներառող ընտրությունների առնչությամբ իր ընդունած հանձնարարականները, Վեհաժողովը համարում է, որ ընդդիմությունը, լիիրավ օգտվելով խաղաղ հավաքների անցկացման սահմանադրական իրավունքից, միաժամանակ պետք է ձգտի իր նպատակներին հասնել սահմանադրության շրջանակներում:

9. Վեհաժողովը կոչ է անում Հայաստանի իշխանություններին՝

ա. Թույլ տալ խաղաղ հանրահավաքներ եւ զերծ մնալ հետագա այնպիսի գործողություններից, որոնք օրենսդրորեն կամ գործնականում կհանգեցնեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորվող հավաքների ազատության չարդարացված սահմանափակումների,

բ. Երաշխավորել ազատ տեղաշարժվելու իրավունքը Հայաստանում,

գ. Թափանցիկ եւ վստահելի ձեւով անհապաղ հետաքննել վերջին իրադարձությունների ընթացքում արձանագրված միջադեպերը եւ մարդու իրավունքների ոտնահարումները, այդ թվում լրագրողների եւ իրավապաշտպանների դեմ իրականացված բռնությունները, եւ Վեհաժողովին տեղեկացնել ստացված տվյալների եւ պատասխանատու անձանց հանդեպ հնարավոր դատական գործողությունների մասին,

դ. Անհապաղ ազատ արձակել հանրահավաքներում մասնակցելու համար կալանավորված անձանց եւ անհապաղ դադարեցնել վարչական կալանքների պրակտիկան եւ համապատասխանաբար փոփոխել վարչական իրավախախտումների օրենսգիրքը,

ե. Հաշվի առնել, որ ԵԽԽՎ անդամների անձեռնմխելիությունն ուժի մեջ է ամբողջ տարվա ընթացքում (ԵԽԽՎ Թիվ 1325 (2003) հանձնարարական) եւ Թիվ 1602 (2003) հանձնարարական), եւ Հայաստանի համապատասխան իշխանություններին հետեւաբար կոչ է անում հետագայում հնարավորինս արագ կերպով ԵԽԽՎ Նախագահին տեղեկացնել, երբ Վեհաժողովի հայ անդամները հետախուզվում կամ կալանավորվում են,

գ. Ստեղծել արդար պայմաններ լրատվամիջոցների բնականոն գործառնության համար, հատկապես հեռուստաընկերություններին հեռարձակման արտոնագիր եւ մասնավորապես Ա1+-ին հեռուստաալիք տրամադրելու առնչությամբ,

է. Մինչեւ 2004թ. նստաշրջանի բացումը Վեհաժողովին գրավոր հաշվետվություն ներկայացնել 9 ա-զ ենթակետերի կապակցությամբ իրականացված քայլերի շուրջ:

10. Վեհաժողովը կոչ է անում իշխանություններին եւ ընդդիմությանը զերծ մնալ ցանկացած այնպիսի քայլերից, որոնք կհանգեցնեն հետագա բռնությունների, ինչպես նաեւ երկխոսություն սկսել առանց որեւէ նախապայմանների՝ ներկա կոնֆլիկտը եվրոպայի խորհրդի չափանիշներին եւ եվրոպական ժողովրդավարական պրակտիկային համապատասխան լուծելու նպատակով:

11. Վեհաժողովը հավատացած է, որ վերջին իրադարձությունները առավել հրատապ դարձրին Հայաստանի ստանձնած պարտավորությունների եւ պարտականությունների ամբողջական եւ անվերապահ կատարման իր պահանջը: ԵԽԽՎ-ն որոշում է ցուցումներ տալ Նախարարների կոմիտեին իր համազեկուցողներին Հայաստան ուղարկելու կապակցությամբ՝ իրավիճակի, մասնավորապես 9 ա-զ ենթակետերով նախատեսված հանձնարարականների հետագա կատարման վերաբերյալ զեկույց պատրաստելու նպատակով հնարավորինս շուտ՝ ամեն դեպքում մինչեւ 2004թ. սեպտեմբերի նստաշրջանը: Եթե մինչեւ 2004թ. սեպտեմբերի նստաշրջանի բացումը 9 ա-զ ենթակետերի կապակցությամբ առաջընթաց չարձանագրվի, Վեհաժողովը որոշում է Կանոնակարգի 9-րդ կանոնի համաձայն քննարկել Հայաստանի պատվիրակության լիազորությունների հարցը:

° Ê Ê ì Â Ç 1405 (2004) µ³ Ý³ Ó» õ
 Թ Ծ ëi³ ÝÇëi³ ÝÓÝ³ Í ă³ ñ³ í áãõÃãõÝ»ñÇ»õ
 ă³ ñ³ ï³ ÝãõÃãõÝ»ñÇi³ ï³ ñ³ Ý Û³ ëÇÝ Â Ç 1361
 (2004) »õÃ Ç 1374 (2004) µ³ Ý³ Ó»õñÇi³ ï³ ñãõÃ

1. Հայաստանի ժողովրդավարական ապագան Վեհաժողովի բանավեճերի առարկա է դարձել 2004թ. հունվարի 27-ին եւ 2004թ. ապրիլի 28-ին, երբ երկիրը ձեռնարկել է հետագա բարեփոխումներ՝ հետեւելով 1361 (2004) եւ 1374 (2004) բանաձեւերին:

2. Խորհրդարանական Վեհաժողովն արտահայտում է իր գոհունակությունը Հայաստանի իշխանությունների հետ գերազանց համագործակցության կապակցությամբ, նրանց անաչառ վերաբերմունքի եւ պարտավորությունների ու պարտականությունների կատարման շուրջ շարունակական երկխոսության որակի համար:

3. Վեհաժողովը գոհունակությամբ նշում է, որ Հայաստանը կատարել է Թիվ 1374 (2004) բանաձեւի պարբերություն 9-ի ա-զ դրույթների կատարման շուրջ զեկույց ներկայացնելու պահանջը եւ նկատի է առնում, որ՝

ա. Իշխանությունները զերծ են մնացել հավաքների անցկացմանը միջամտելուց, ինչպես նաեւ, որ ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին օրենքի ուժի մեջ մտնելուց հետո իրավական հիմք է ստեղծվել դրանք միայն ժանուցման պարագայում անցկացնելու համար,

բ. Սահմանադրությունը երաշխավորում է ազատ տեղաշարժի իրավունքը, եւ օրենքները ապահովում են հասարակական կարգի պահպանումը,

գ. Վերջին դեպքերի ժամանակ արձանագրված միջադեպերի եւ մարդու իրավունքների ոտնահարումների, այդ թվում լրագրողների եւ իրավապաշտպանների վրա կատարված հարձակումների հետաքննություն է անցկացվել եւ Վեհաժողովին տեղեկատվություն է տրամադրվել լրագրողների նկատմամբ բռնարարքների համար պատասխանատու անձանց դեմ հարուցած դատական գործի վերաբերյալ,

1 Վեհաժողովի *Իննսուներորդի 2004թ. հոկտեմբերի 7-ին* (31-րդ նիստ) (տե՛ս փաստ. 10286, Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից պարտավորությունների եւ պարտականությունների կատարման հարցերով հանձնաժողովի (Մոնիտորինգի հանձնաժողով) զեկույցը): Համազեկուցողներ՝ պրն. Անդրե եւ պրն. Յասկեր-ճիա: Փաստաթուղթն ընդունվել է Վեհաժողովի կողմից 2004թ. հոկտեմբերի 7-ին (31-րդ նիստ):

դ. Հանրահավաքներին մասնակցելու պատճառով կալանված անձինք ազատ են արձակվել, եւ ակնկալվում է վարչական կալանքի պրակտիկայից հրաժարումը, քանի որ Վարչական իրավախախտումների մասին օրենսգիրքը փոփոխման գործընթացում է,

ե. Այս ժամանակահատվածում մեկ հաճախականություն ազատվել է առանց մրցույթի, միջկառավարական համաձայնության հիման վրա եւ Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին օրենքի շրջանակներում. խոսքը ռուսական «Կուլտուրա» հեռուստաալիքին վերահեռարձակման համար հատկացված հաճախականության մասին է,

զ. Իշխանությունները հաշվի են առել, որ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի անդամների անձեռնմխելիությունը վավեր է ամբողջ տարվա համար (Բանաձեւ թիվ1325 (2003) եւ Հանձնարարական թիվ1602 (2003)):

4. Չնայած Ադրբեջանի հետ միասին Լեռնային Ղարաբաղի իրավիճակի խաղաղ կարգավորմանը հասնելու մասին Հայաստանի հայտարարած ցանկությանը՝ Վեհաժողովը ստիպված է եզրակացնել, որ անցած տարվա ընթացքում շոշափելի առաջընթաց չի արձանագրվել ո՛չ երկու երկրների նախագահների միջեւ շարունակվող ուղղակի բանակցությունների, ո՛չ էլ Մինսկի խմբի մակարդակով:

5. Վեհաժողովը հիշատակում է, որ պահանջել էր 2003թ. ընտրությունների ընտրակեղծիքների մանրագնին քննություն եւ պատասխանատու անձանց դատական անպատժելիության վերացում: Այս առումով Վեհաժողովը համարում է, որ իշխանություններից չի ստացել համոզիչ պատասխան: Համոզված է սակայն, որ Ընտրական օրենսգրքի վերանայման ընթացքը շուտով կավարտվի՝ Վենետիկի հանձնաժողովի հանձնարարականներին համապատասխան:

6. Այն նշում է, որ օրենսդրական միջոցառումներ են ձեռնարկվել ծանր հանցագործությունների մեջ մեղադրվող բոլոր անձանց, այդ թվում՝ ցմահ բանտարկյալների, պայմանական ազատման մասին Քրեական օրենսգրքում դրույթ ներառելու ուղղությամբ:

7. Այն նշում է, որ որոշ պարտավորությունների լիարժեք կատարումը երաշխավորելու համար անհրաժեշտ սահմանադրական բարեփոխումների բնագավառում լուրջ առաջընթաց է արձանագրվել: Այն պահանջում է, որ իշխանություններն արագ պատրաստեն Սահմանադրական բարեփոխումների նախագիծ, 2004թ. այն ներկայացնեն Եվրոպայի խորհրդին՝ փորձագիտական գնահատման նպատակով, եւ կազմակերպեն հանրաքվե հնարավորինս շուտ եւ ամեն դեպքում ոչ ուշ, քան 2005թ. հունիսը:

8. Վեհաժողովը հաշվի է առնում դատական համակարգի եւ դատական անկախությանը վերաբերող հիմնական բարեփոխումների արդյունավետ իրականացման ժամանակացույցը, ինչպես նաեւ մինչեւ 2004թ. վերջը Դատավորների կարգավիճակի մասին օրենքի, Արդարադատության խորհրդի մասին օրենքի եւ Դատական համակարգի մասին օրենքի ընդունման մտադրությունը:

9. Վեհաժողովը նշում է, որ Ռադիոյի եւ հեռուստատեսության օրենքի վերջին փոփոխությունները պահանջում են, որ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը պետք է լրացուցիչ փաստարկներ ներկայացնի հեռարձակման արտոնագիր շնորհելիս՝ այդպիսով կանխելով կամայական որոշումների ընդունումը:

10. Սյուս պահանջների առնչությամբ, Վեհաժողովը նկատի է առնում այն քայլերը, որոնք ձեռնարկվել են՝

ա. Եվրոպայի խորհրդի փորձագետների համագործակցությամբ, վարչական կալանքին վերջ տալու նպատակով, Վարչական իրավասխատուների մասին օրենսգրքում ամրագրված վարչական կալանքի հարցի քննարկումը շարունակելու ուղղությամբ,

բ. Եվրոպայի խորհրդի եւ Վենետիկի հանձնաժողովի փորձագետների համագործակցությամբ՝ Հանրահավաքների եւ հավաքների մասին օրենք ընդունելու ուղղությամբ,

գ. ցմահ բանտարկյալներին պայմանական ազատ արձակման հնարավորություն ընձեռող դրույթ ներառելու նպատակով՝ Քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու ուղղությամբ,

դ. վիրավորանքի եւ զրպարտանքի համար ազատագրված ցանկացած հնարավորություն բացառելու նպատակով, Եվրոպայի խորհրդի փորձագետների համագործակցությամբ եւ պատշաճ ուշադրություն դարձնելով ներկայացված եւ ներկայացվելիք հանձնարարականներին, Քրեական օրենսգրքի 135, 136 եւ 318 հոդվածները վերանայելու ուղղությամբ,

ե. Եվրոպայի խորհրդի փորձագետների համագործակցությամբ՝ Ոստիկանության մասին օրենքը վերանայելու ուղղությամբ,

զ. Երեւան քաղաքի կարգավիճակի, տարածքային ինքնավարության, տեղական կառավարման մարմինների աշխատակազմի եւ տեղական ինքնակառավարման մասին օրենքներ ընդունելու ուղղությամբ,

է. Կոռուպցիայի դեմ պայքարելու եւ Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան ստորագրելու ուղղությամբ: Այն պահանջում է, որ այս Կոնվենցիան վավերացվի հնարավորինս կարճ ժամկետում,

ը. համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու պատճառով ազատագրված անձանց ներում շնորհելու եւ ազատելու ուղղությամբ:

11. Բացի այդ, Վեհաժողովն ակնկալում է արագ առաջընթաց հետեւյալ բնագավառներում՝

ա. Քրեական դատավարության օրենսգրքի վերանայում՝ Եվրոպայի խորհրդի չափանիշներին համապատասխան,

բ. Կալանավայրերի պայմանների բարելավումը. այդ առումով, խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական հանձնախմբի հանձնարարականների կատարումը,

գ. Հայաստանի լրատվական սեկտորում զարգացումները. այն ակնկալում է, որ Ռադիոյի եւ հեռուստատեսության մասին օրենքում վերջերս կատարված փոփոխությունների հիման վրա հնարավորինս շուտ կփոխվի Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կազմը եւ արդարացի պայմաններ կստեղծվեն հեռուստաընկերություններին, մասնավորապես Ա1+ հեռուստակայանին, հեռարձակման արտոնագրեր շնորհելիս,

դ. այլընտրանքային զինվորական ծառայության չափազանց երկար ժամկետը (42 ամիս),

ե. Եհովայի վկաների միության գրանցումը,

զ. Հայաստանի բոլոր կրոնական կազմակերպությունները եւ համայնքները ներկայացնող անկախ մարմնի ստեղծումը,

է. Թիվ 1374 (2004) բանաձեւի 9 դ կետի համաձայն՝ վարչական կալանքի պրակտիկայից հրաժարումը մինչեւ Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի վերանայումը,

ը. Ցույցերի եւ հանրահավաքների մասին օրենքի վերանայումը ոչ ուշ, քան 2005թ. մարտը՝ պրակտիկայում հավաքների ազատությունը երաշխավորելու նկատառումով օրենքը եվրոպական չափանիշներին ամբողջովին համապատասխանեցնելու նպատակով:

12. Վերոնշյալի լույսի ներքո Վեհաժողովը կոչ է անում Հայաստանի իշխանություններին շարունակել ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ Թիվ 1361 (2004) եւ Թիվ 1374 (2004) բանաձեւերով հաստատված մնացած պարտավորությունները եւ պարտականությունները կատարելու նպատակով:

II. ՕԱՍԻ ԱԾԱՍՊԻՎՈՐ ԸՆԴՈՒՄ

Մոնիտորինգի մեթոդալոգիան տարբեր էր՝ կախված հետազոտվող ծրագրերի/հաղորդումների տեսակից:

Ա. ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Լրատվական եւ լրատվական-վերլուծական ծրագրերի հետազոտության մեթոդալոգիան ներառում էր.

- հեռուստաընկերության լրատվական ծրագրի յուրաքանչյուր հիմնական թողարկման, յուրաքանչյուր լրատվական-վերլուծական ծրագրի հեռուստանյութերի (բացառությամբ եղանակի տեսության, առետրային գովազդի, այդ թվում՝ հայտարարությունների, հեռուստածրագրերի ծանուցումների եւ այլն) ընդհանուր քանակի հաշվարկը (բացարձակ թվերով),

- հեռուստաընկերության լրատվական ծրագրի յուրաքանչյուր հիմնական թողարկման, յուրաքանչյուր լրատվական-վերլուծական ծրագրի հեռուստանյութերի (բացառությամբ եղանակի տեսության, առետրային գովազդի, այդ թվում՝ հայտարարությունների, հեռուստածրագրերի ծանուցումների եւ այլն) ընդհանուր ժամանակային տեւողության հաշվարկը (վայրկյաններով),

- հաղորդման մեջ հեռուստանյութերի հաջորդականության արձանագրումը,
- յուրաքանչյուր հեռուստանյութի թեմատիկայի արձանագրումը,
- յուրաքանչյուր հեռուստանյութի տեւողության արձանագրումը (վայրկյաններով),

- ընդհանուր թեմաներով նյութերի խմբավորումը միատեսակ ձեւակերպման տակ (որոշակի դեպքերում բովանդակությամբ եւ նշանակությամբ մոտ նյութերը խմբավորվել են մեկ թեմայի մեջ),

- ընթացիկ, խորնիկայի բնույթ ունեցող եւ փորձագետների կողմից հրատապների թվում չնշված իրադարձությունների միավորումը ընդհանուր թեմատիկ բլոկներում (ՀՀ տնտեսության եւ ֆինանսների հարցեր, ՀՀ նախագահի եւ նրա աշխատակազմի ընթացիկ գործունեություն, ՀՀ-ում մշակույթի եւ գիտության բնագավառի իրադարձություններ եւ այլն):

Հեռուստանյութ է համարվել՝

Եթե՝ թեմատիկ, կառուցվածքային եւ ձեւավորման առումով առանձնացված միավորը, այսինքն.

ա. լրատվական ծրագրի առանձին սյուժեն,
բ. հաղորդավարական տեքստով փոխանցվող առանձին լրատվական հաղորդագրությունը,

գ. տարբեր թեմաներ/խնդիրներ շոշափող հաղորդման թեմատիկ առումով առանձնացված մասը (բաժինը, սյուժեն),

դ. տարբեր թեմաներ/խնդիրներ շոշափող հեռուստահարցազրույցի՝ թեմատիկ առումով առանձնացված հարցն ու դրա պատասխանը,

ե. հաղորդումը կամ հարցազրույցը, որը շոշափում էր մեկ թեմա/խնդիր, չի մասնատվել եւ դիտարկվել է իբրեւ միասնական նյութ,

զ. սյուժեների ծանուցումները դիտարկվել են իբրեւ այն նյութի մի մաս, որին վերաբերել են,

է. վերնագիրը (ենթավերնագիրը), լիդը, հաղորդավարական տեքստը, որոնք նախորդել են հեռուստասյուժեին (ռեպորտաժին եւ այլն), դիտարկվել են իբրեւ տվյալ սյուժեի (ռեպորտաժի եւ այլն) մաս:

Բ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

հասարակական-քաղաքական ծրագրերի հետազոտության մեթոդալուծական ներառում էր.

- հաղորդման հիմնական մասնակիցների արձանագրումը՝ նշելով յուրաքանչյուր մասնակցի անունը, ազգանունը, պաշտոնը (զբաղմունքը),
- հաղորդման մեջ քննարկվող թեմաների հաջորդականության արձանագրումը,
- հաղորդման թեմայի (թեմաների) արձանագրումը:

III. ԾՐԱԳՐԱՆԵՐԻ ԾՐԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ («Հ1») - Հանրային հեռուստառադիոընկերություն: Հիմնադրվել է 2001 թվականին: Ղեկավար մարմինը Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդն է: Օրական հեռարձակումը՝ 19 ժամ:

«Հ1»-ում դիտարկվել են՝ հիմնական լրատվական «**Հայլուր**» ծրագիրը եւ կիրակնօրյա «**360 աստիճան**» լրատվական-վերլուծական ծրագիրը, «**5-րդ անիվ**» հասարակական-քաղաքական հաղորդումը:

«Հայլուր» լրատվական ծրագիրը եթեր է հեռարձակվել շաբաթական 7 օր. երկուշաբթից-ուրբաթ՝ օրական 8 անգամ, շաբաթ օրերին՝ 3 անգամ, կիրակի օրերին՝ 1 անգամ: Դիտարկման առարկա են եղել «Հայլուրի» ժամը 21:00-ի հիմնական թողարկումները: Դիտարկվող ժամանակահատվածում եղել է 24 թողարկում: Մոնիտորինգի ողջ ընթացքում ընդհանուր առմամբ հետազոտվել է 592 նյութ, որոնց ընդհանուր տեւողությունը կազմել է 58716 վայրկյան:

«360 աստիճան» լրատվական-վերլուծական ծրագիրը եթեր էր հեռարձակվում շաբաթական մեկ անգամ (կիրակի), ժամը 20-ին: Դիտարկվող ժամանակաշրջանում եղել է «360 աստիճան»-ի 4 թողարկում: Մոնիտորինգի ողջ ընթացքում ընդհանուր առմամբ հետազոտվել է 26 նյութ, որոնց ընդհանուր տեւողությունը կազմել է 10825 վայրկյան:

«5-րդ անիվ» հասարակական-քաղաքական ծրագիրը (ժամը՝ «հյուր տալավարում») եթեր էր հեռարձակվում շաբաթական մեկ անգամ (երկուշաբթի), ժամը 22-ին: Դիտարկվող ժամանակաշրջանում եղել է «5-րդ անիվ»-ի 4 թողարկում:

«**ԱԼՄ**» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2000 թվականին: Հիմնադիրն է «ԱԼՄ հոլդինգ»-ի նախագահ Տիգրան Կարապետյանը: Օրական հեռարձակումը՝ 20 ժամ:

«ԱԼՄ»-ում դիտարկվել են՝ հիմնական լրատվական «**Օրեցօր**» ծրագիրը եւ դրա կիրակնօրյա լրատվական-վերլուծական թողարկումը, «**Հարցի արժեքը**» եւ «**Դիրքորոշում**» հասարակական-քաղաքական հաղորդումները:

«Օրեցօր» լրատվական ծրագիրը եթեր է հեռարձակվել շաբաթական 6 օր. (երկուշաբթիից-շաբաթ)՝ օրական 4 անգամ: Դիտարկման առարկա են եղել «Օրեցօրի» ժամը 20:00-ի հիմնական թողարկումները: Դիտարկվող ժամանակահատվածում եղել է 24 թողարկում: Մոնիտորինգի ողջ ընթացքում ընդհանուր առմամբ հետազոտվել է 309 նյութ, որոնց ընդհանուր տեւողությունը կազմել է 34068 վայրկյան:

«Օրեցօր»-ի կիրակնօրյա լրատվական-վերլուծական թողարկումը եթեր է հեռարձակվել շաբաթական մեկ օր, ժամը 17:00-ին: Դիտարկվող ժամանակաշրջանում եղել է դրա 4 թողարկում: Մոնիտորինգի ողջ ընթացքում ընդհանուր առմամբ հետազոտվել է 41 նյութ, որոնց ընդհանուր տեւողությունը կազմել է 6325 վայրկյան:

«Հարցի արժեքը» հասարակական-քաղաքական ծրագիրը (ժանրը՝ «հյուր տաղավարում») եթեր էր հեռարձակվում շաբաթական երկու անգամ (երեքշաբթի եւ շաբաթ), ժամը 21:30-ին: Դիտարկվող ժամանակաշրջանում եղել է «Հարցի արժեքի»-ի 8 թողարկում:

«Դիրքորոշում» հասարակական-քաղաքական ծրագիրը (ժանրը՝ «հյուր տաղավարում») եթեր էր հեռարձակվում շաբաթական մեկ օր (հինգշաբթի), ժամը 21:30-ին: Դիտարկվող ժամանակաշրջանում եղել է «Դիրքորոշման» 4 թողարկում:

«ԱՐՄԵՆԻԱ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998 թվականին: Հիմնադիրներն են՝ «Գաֆեսյան» ընտանեկան հիմնադրամը եւ «Սարգսյանների ընտանիք» հիմնադրամը: Օրական հեռարձակումը՝ 24 ժամ:

«Արմենիայում» դիտարկվել են՝ հիմնական լրատվական **«Ժամը»** եւ լրատվական-վերլուծական **«Էքսպրես»** ծրագրերը ու **«Իրականում»** հասարակական-քաղաքական հաղորդումը:

«Ժամը» լրատվական ծրագիրը եթեր է հեռարձակվել շաբաթական 7 օր. երկուշաբթիից-շաբաթ՝ օրական 6 անգամ, կիրակի օրերին՝ 1 անգամ: Դիտարկման առարկա են եղել «Ժամը» լրատվականի 20:30-ի հիմնական թողարկումները: Դիտարկվող ժամանակահատվածում եղել է 28 թողարկում: Մոնիտորինգի ողջ ընթացքում ընդհանուր առմամբ հետազոտվել է 267 նյութ, որոնց ընդհանուր տեւողությունը կազմել է 37909 վայրկյան:

«Էքսպրես» լրատվական-վերլուծական թողարկումը եթեր է հեռարձակվել շաբաթական 5 օր (երկուշաբթիից - ուրբաթ), ժամը 22:40-ին: Դիտարկվող ժամանակաշրջանում եղել է դրա 20 թողարկում: Մոնիտորինգի ողջ ընթացքում ընդհանուր առմամբ հետազոտվել է 388 նյութ, որոնց ընդհանուր տեւողությունը կազմել է 29597 վայրկյան:

«Իրականում» հասարակական-քաղաքական ծրագիրը (ժանրը՝ «հյուր տաղավարում») եթեր էր հեռարձակվում շաբաթական 5 օր (երկուշաբթիից - հինգշաբթի, շաբաթ), ժամը 19:30-ին: Դիտարկվող ժամանակաշրջանում եղել է դրա 20 թողարկում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՄՏԱԿԻՔ («Հ2») - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998 թվականին: Հիմնադիրները մասնավոր անձինք են: Օրական հեռարձակումը՝ 18 ժամ:

«Հ2»-ում դիտարկվել են՝ հիմնական լրատվական **«Լրաբեր»** ծրագիրը, լրատվական-վերլուծական **«Կիրակնօրյա լրաբեր»** ու **«Շաբաթօրյա ռեպորտաժ»** ծրագրերը, **«Խոսքի իրավունք»** ու **«Օջախ»** հասարակական-քաղաքական հաղորդումները, ինչպես նաեւ՝ հասարակական-քաղաքական **«Չորրորդ ստուղիա»** - ն:

«Լրաբեր» լրատվական ծրագիրը եթեր է հեռարձակվել շաբաթական 6 օր. երկուշաբթի՝ օրական 3 անգամ, երեքշաբթիից շաբաթ՝ օրական 5 անգամ: Դիտարկման առարկա են եղել «Լրաբերի» ժամը 23:00-ի հիմնական թողարկումները: Դիտարկվող ժամանակահատվածում եղել է 24 թողարկում: Սոնիտորինգի ողջ ընթացքում ընդհանուր առմամբ հետազոտվել է 434 նյութ, որոնց ընդհանուր տեւողությունը կազմել է 45403 վայրկյան:

«Կիրակնօրյա լրաբեր» լրատվական-վերլուծական թողարկումը եթեր է հեռարձակվել շաբաթական 1 անգամ, ժամը 21:00-ին: Դիտարկվող ժամանակաշրջանում եղել է «Կիրակնօրյա լրաբեր»-ի 4 թողարկում: Սոնիտորինգի ողջ ընթացքում ընդհանուր առմամբ հետազոտվել է 24 նյութ, որոնց ընդհանուր տեւողությունը կազմել է 5713 վայրկյան:

«Շաբաթօրյա ռեպորտաժ» լրատվական-վերլուծական թողարկումը եթեր է հեռարձակվել շաբաթական 1 անգամ, ժամը 20:40-ին: Դիտարկվող ժամանակաշրջանում եղել է «Շաբաթօրյա ռեպորտաժ»-ի 4 թեմատիկ թողարկում, որոնց ընդհանուր տեւողությունը կազմել է 3660 վայրկյան:

«Խոսքի իրավունք» հասարակական-քաղաքական ծրագիրը (ժամը՝ «հյուր տաղավարում») եթեր էր հեռարձակվում շաբաթական 1 անգամ (կիրակի), ժամը 21:30-ին: Դիտարկվող ժամանակաշրջանում եղել է դրա 2 թողարկում:

«Օջախ» հասարակական-քաղաքական ծրագիրը (ժամը՝ «թոք-շոու») եթեր էր հեռարձակվում շաբաթական 1 անգամ (ուրբաթ), ժամը 21:30-ին: Դիտարկվող ժամանակաշրջանում եղել է դրա 4 թողարկում:

«Չորրորդ ստուդիա»-ն եթեր էր հեռարձակվում իբրև «Լրաբերի» եւ «Կիրակնօրյա լրաբեր»-ի հասարակական-քաղաքական հատված (ժամը՝ «հյուր տաղավարում»): Դիտարկվող ժամանակաշրջանում եղել է դրա 4 թողարկում:

«ՇԱՆԹ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1994 թվականին: Հիմնադիր՝ Արթուր Եզեկյան: Օրական հեռարձակումը՝ 19 ժամ:

«Շանթում» դիտարկվել են՝ հիմնական լրատվական **«Հորիզոն»** ծրագիրը, **«Հեռանկար»** ու **«Երկրորդ հայացք»** հասարակական-քաղաքական հաղորդումները:

«Հորիզոն» լրատվական ծրագիրը եթեր է հեռարձակվել շաբաթական 6 օր (երկուշաբթիից - շաբաթ), օրական 8 անգամ: Դիտարկման առարկա են եղել «Հորիզոնի» ժամը 22:00-ի հիմնական թողարկումները: Դիտարկվող ժամանակահատվածում եղել է 24 թողարկում: Սոնիտորինգի ողջ ընթացքում ընդհանուր առմամբ հետազոտվել է 325 նյութ, որոնց ընդհանուր տեւողությունը կազմել է 47892 վայրկյան:

«Հեռանկար» հասարակական-քաղաքական ծրագիրը (ժամը՝ «հյուր տաղավարում») եթեր էր հեռարձակվում շաբաթական 5 օր (երկուշաբթիից - ուրբաթ), ժամը 23:00-ին: Դիտարկվող ժամանակաշրջանում եղել է դրա 20 թողարկում:

«Երկրորդ հայացք» հասարակական-քաղաքական ծրագիրը (ժամը՝ «թոք-շոու») եթեր էր հեռարձակվում շաբաթական 1 անգամ (կիրակի), ժամը 22:45-ին: Դիտարկվող ժամանակաշրջանում եղել է դրա 4 թողարկում:

IV. օ à ð Ò² ¶Æ²Í² Û Ð² ð ò à ð Ø

Առաջատար հեռարձակվող ՁԼՍ-ների կողմից հասարակության տեղեկատվական պահանջմունքները բավարարելու մակարդակը պարզելու համար, հեռուստաալիքների մոնիտորինգին զուգահեռ 2005 թվականի փետր-

վարի 1-ից մինչև փետրվարի 28-ը տարբեր ոլորտների ներկայացուցիչների շրջանում իրականացվել է փորձագիտական հարցում:

Հարցմանը մասնակցել է 10 մարդ.

Լեւոն Բարսեղյան - Լրագրողների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ,

Կարեն Բեքարյան - «Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպության ղեկավար,

Նինա Կելորկովա - Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի «Սոցիալ-մշակութային սերվիս եւ տուրիզմ» ֆակուլտետի ղեկան,

Մարինա Գրիգորյան - ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար,

Ստեփան Գրիգորյան - Գլոբալացման եւ տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի ղեկավար,

Կարինե Խողիկյան - դրամատուրգ, հրապարակախոս, ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ,

Իդա Մարտիրոսյան - «Քաղաքական մոդելավորում» տեղեկատվական-վերլուծական կենտրոնի տնօրեն, Հայաստանի Քրիստոնեա-դեմոկրատական միության փոխնախագահ,

Աշոտ Մելիքյան - Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ,

Իգաբելա Սարգսյան - «Երիտասարդությունը հանուն ժողովրդավարության» հասարակական կազմակերպության համանախագահ,

Արթուր Սաքունց - Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար, «Քաղաքացիական նախաձեռնություն» թերթի խմբագիր:

Պայմանականորեն «փորձագետներ» անվանված մարդկանց խմբի ընտրությունը կատարվել է այն անձանց թվից, ովքեր իրենց մասնագիտական գործունեության բերումով ուշադրությամբ հետեւում են ՁԼՄ-ներին եւ ներկայացնում են, հիմնականում, հումանիտար-հասարակական բնագավառը: Դրանց թվում կան ինչպես ոչ կառավարական կազմակերպությունների, այնպես էլ պետական հատվածի ներկայացուցիչներ, ովքեր, ընդամին, անմիջականորեն կապված չեն Հայաստանի քաղաքական թատերաբեմի գլխավոր գործիչների շրջանակի հետ: Որոշակի չափով հաշվի է առնվել նաեւ սեռային (5 տղամարդ եւ 5 կին), տարիքային (21-50 տարեկան) եւ աշխարհագրական (Երեւան, Գյումրի, Վանաձոր) հավասարակշռությունը:

Փորձագետները հետեւում էին աշխարհում եւ Հայաստանում կատարվող իրադարձություններին եւ պատասխանում էին **«Անցյալ շաբաթվա որ երեք իրադարձություններն են ձեր կարծիքով ամենակարեւորները եղել»** հարցին:

Յուրաքանչյուր փորձագետ իրադարձության (թեմայի) առաջնայնությունը գնահատում էր 3-1 սանդղակով: Հեռուստաալիքներով իրադարձության լուսաբանման հետ համեմատելու համար հիմք էր ընդունվում փորձագետների նշած յուրաքանչյուր թեմայի գումարային միավորը:

Փորձագետների կողմից իբրեւ առավել հրատապ նշված իրադարձությունների/թեմաների ձեւակերպումները, համադրելի դարձնելու համար, համապատասխանեցվել են հեռուստաալիքների մոնիտորինգի ժամանակ

արծանագրված իրադարձությունների/թեմաների ձեւակերպումներին (որոշակի դեպքերում բովանդակությամբ եւ նշանակությամբ մոտ նյութերը խմբավորվել են մեկ թեմայի մեջ):

V. Ծ ԵՊՍՊ ԾԱԵՕԱՍԱԷ ՆԾԱԵՄՂԱԵՐԻ Օ ԱԾՕՉ ՂՐԻ ՍՐ ԾԱԵԲ ԾՈՉ ՍԻՐ Ե ԱՆԵԱՂԱԵ Ս

Համադրելի նյութ ստանալու համար փորձագետների հարցման արդյունքներն ու յուրաքանչյուր հեռուստաալիքի լրատվական, լրատվական-վերլուծական եւ հասարակական-քաղաքական հաղորդումների մոնիտորինգի տվյալներն ամփոփվում էին ամեն շաբաթ:

VI. Ծ ԵՊՍՊ ԾԱԵՕԱՍԱԷ ՆԾԱԵՄՂԱԵՐԻ Օ ԱԾՕՉ - ՂՐԻ ՍՐ ԾԱԵԲ ԾՈՉ ՍԻՐ Ե ԱՆԵԱՂԱԵ Ս ԻՆՏԵՆՍԻՎ ՕՆԻ

Ստորեւ ներկայացվում է փորձագետների հարցման եւ յուրաքանչյուր հեռուստաալիքի մոնիտորինգի արդյունքների համառոտ համեմատական վերլուծությունը՝ շաբաթական կտրվածքով:

1-6 ՓԵՏՐՎԱՐԻ, 2005 թ.

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ

Փետրվարի 1-ից 6-ի ընթացքում փորձագետներն ընդհանուր առմամբ նշել են 17 իրադարձություն, որոնցից առաջին հնգյակում են՝

1. Վրաստանի վարչապետ Ջուրաբ Ժվանիայի մահն ու դրան հաջորդած իրադարձությունները (25 միավոր),
2. ԵԱՀԿ փաստահավաք առաքելության այցը Լեռնային Ղարաբաղի շրջակա գրավյալ տարածքներ (7 միավոր),
3. Խորհրդարանական ընտրություններն Իրաքում եւ հետընտրական իրավիճակը (5 միավոր),
4. ԵՆԽՎ Լեռնային Ղարաբաղի հարցով զեկուցող Դեւիդ Աթկինսոնի զեկույցը եւ դրա արձագանքները (3 միավոր),
5. ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի հայտարարությունն այն մասին, որ Ամերիկան չի պատրաստվում հարվածել Իրանին (3 միավոր):

Փորձագետների իբրեւ առաջնային նշած մյուս իրադարձությունները հավաքել են 2-ից 1 միավոր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՍԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Հայլուր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումներում եւ «360 աստիճան» լրատվական-վերլուծական ծրագրում փետրվարի 1-ից 6-ը առավել մեծ ուշադրության արժանացել է այն թեման, որը փորձագետները նշել էին իբրեւ գլխավոր «Վրաստանի վարչապետ Ջուրաբ Ժվանիայի մահն ու դրան հաջորդած իրադարձությունները»: Դրան հատկացվել է 1301 վայրկյան:

Փորձագետների կարծիքով շաբաթվա երկրորդ եւ երրորդ թեմաները՝ «ԵԱԿ փաստահավաք առաքելության այցը Լեռնային Ղարաբաղի շրջակա գրավյալ տարածքներ» եւ «Խորհրդարանական ընտրություններն Իրաքում եւ հետընտրական իրավիճակը» «Հ1»-ի դիտարկված եթերաժամերին համապատասխանաբար 17-րդ (258 վրկ.) եւ 50-րդ (28 վրկ.) տեղերում էին: Այլ խոսքով՝ Իրաքի ընտրություններին հատկացվել էր կես ռոպեից էլ պակաս ժամանակ, ինչն ակնհայտորեն անբավարար է լսարանին տեղեկատվություն տրամադրելու համար: Եվ թեպետ Իրաքի այլ իրադարձությունների լուսաբանմանը հատկացվել է 132 վրկ., դրանք եղել են այդ երկրում ահաբեկչական գործողությունների մասին կարճ հաղորդագրություններ, որոնք չեն առնչվել հետընտրական համատեքստին, ինչը, ավելի շուտ, հեռուստադիտողի համար դժվարացրել է Իրաքում ընդհանուր իրավիճակի ընկալումը:

Փորձագետների հարցմամբ 4-5-րդ տեղը զբաղեցրած «ԵՄ ԽՎ Լեռնային Ղարաբաղի հարցով զեկուցող Դեւիդ Աթկինսոնի զեկույցը եւ դրա արձագանքները» թեման «Հ1»-ում 7-րդ տեղում է (634 վրկ.): Բացի այս, ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացին առնչվող մյուս նյութերը 439 վայրկյան լուսաբանում են ունեցել:

«ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի հայտարարությունն այն մասին, որ Ամերիկան չի պատրաստվում հարվածել Իրանին» թեման, որ նախորդի հետ բաժանել էր 4-5-րդ տեղերը, չի շեշտվել «Հ1»-ի լրատվական ծրագրերում: Նույնը վերաբերում է նաեւ փորձագետների ուշադրությանն արժանացած այլ միջազգային թեմաներին, մասնավորապես՝ «Շամիլ Բասաեւի հարցազրույցը բրիտանական «Կանալ 4» հեռուստաընկերությանը» եւ «Ռուսաստանի՝ Փարիզյան ակումբին պարտքի մեծ մասի ժամկետից շուտ մարումը»:

Փորձագետներից մեկի՝ իբրեւ կարեւորությամբ երկրորդը նշած «Խորհրդարանական ընդդիմադիր խմբակցությունների Ազգային ժողով վերադառնալու խնդիրը» շաբաթվա ընթացքում «Հ1»-ի առավել շատ լուսաբանած թեմաների տասնյակում է՝ գրավելով 6-րդ տեղը (779 վրկ.):

Ֆրանսիայի Ազգային ժողովի խոսնակ ժան-Լուի Դեբրեի՝ Թուրքիա կատարած այցի ընթացքում արած առաջարկությունը՝ հայերի ցեղասպանության խնդրով ՄԱԿ-ի, ՆԱՏՕ-ի, Եվրոպայի խորհրդի եւ Շվեյցարիայի անկախ փորձագետների հետազոտություն անցկացնելու վերաբերյալ՝ լուսաբանվել է «Հ1»-ի լրատվական եթերում, թեպետ փորձագետներն այդ թեման իբրեւ առաջնային առանձնացրել են հաջորդ ժամանակաշրջանի (փետրվարի 7-13) հարցման մեջ: Այլ կերպ ասած՝ «Հ1»-ի՝ այդ թեմային անդրադառնալը նախորդել է դրա նկատմամբ հասարակական հետաքրքրությանը:

Ընդհանուր առմամբ, «Հ1»-ում լրատվական լուսաբանումը բնութագրվում է հատուկ ուշադրությամբ պաշտոնական հաղորդագրություններին, Հայաստանի եւ աշխարհի իրադարձությունների խրոնիկային՝ առաջնահերթ հետաքրքրություն ներկայացնող թեմաների թույլ շեշտադրմամբ:

Լրատվական թողարկումներում առանցքային թեմաների շեշտման նման բացակայությունը հատկապես զգալի է, քանի որ շաբաթվա, ամսվա հրատապ խնդիրները հազվադեպ են դառնում «մեկնաբանական» ծրագրերի առարկա: Վերջիններս, մասնավորապես՝ շաբաթական հասարակական-քաղաքական «5-րդ ալիք» հաղորդումը, իր պրոֆիլին համապատասխան, անդրադառնում է ընդհանուր բնույթի, օպերատիվ իրադարձություններին չառնչվող թեմաների:

«ԱԼՍ»

«Օրեցօր» լրատվական ծրագրում եւ նրա կիրակնօրյա լրատվական-վերլուծական թողարկման մեջ փետրվարի 1-ից 6-ն ընկած ժամանակաշրջանում ամենից շատ ուշադրություն է նվիրվել այդ հեռուստաընկերության սեփականատեր Տիգրան Կարապետյանի՝ Հայաստանի մարզեր կատարած այցելություններին (1142 վրկ.):

Հաջորդ երկու տեղերում ընթացիկ իրադարձություններն արտացոլող թեմաներն են. ՀՀ տնտեսության եւ ֆինանսների հարցեր (1093 վրկ.), խրոնիկա, Հայաստանի մարզերի իրավիճակ (697 վրկ.):

Այդ ժամանակաշրջանի համար փորձագետների կողմից իբրեւ առավել նշանակալի նշված թեմաները՝ «Վրաստանի վարչապետ Զուրաբ ժվանիայի մահն ու դրան հաջորդած իրադարձությունները», «ԵԱՀԿ փաստահավաք առաքելության այցը Լեռնային Ղարաբաղի շրջակա գրավյալ տարածքներ», համապատասխանաբար 10-րդ (348 վրկ.) եւ 19-րդ (135 վրկ.) տեղում են:

Փորձագետների կողմից չորրորդը նշված «ԵԽԽՎ Լեռնային Ղարաբաղի հարցով զեկուցող Դեւիդ Աթկինսոնի զեկույցն ու դրա արձագանքները» թեման չորրորդն էր «ԱԼՍ»-ի նորությունների թողարկումներում (646 վրկ.): Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը վերաբերող նյութերը 8-րդ տեղում են (423 վրկ.):

«Խորհրդարանական ընտրություններն Իրաքում եւ հետընտրական իրավիճակը» եւ «ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի հայտարարությունն այն մասին, որ Ամերիկան չի պատրաստվում հարվածել Իրանին» թեմաները փետրվարի առաջին շաբաթվա «Օրեցօրի» ուշադրության առարկա չեն դարձել: Ուշադրության չի արժանացել նաեւ փորձագետների նշած «Հռոմի Հովհաննես Պողոս Երկրորդ պապի հիվանդությունը» թեման:

Փորձագետների նշած այլ թեմաներից «Խորհրդարանական ընդդիմադիր խմբակցությունների ՀՀ ԱԺ վերադառնալու խնդիրը» հինգերորդն էր նորությունների ծրագրի թեմաների շարքում՝ 612 վայրկյան:

Այստեղ եւ հետագայում անհրաժեշտ է հաշվի առնել, որ միջազգային թեմատիկան հիմնականում լուսաբանվում է «Երկրագնդի զարկերակը» հաղորդման մեջ, որը եթեր է հեռարձակվում «Օրեցօրի» թողարկումներից հետո եւ չի հանդիսացել սույն մոնիտորինգի առարկա: Սրանով, հավանաբար, պետք է բացատրել «Օրեցօրի» անբավարար ուշադրությունը արտասահմանյան իրադարձություններին:

«ԱԼՍ»-ի հասարակական-քաղաքական «Հարցի արժեքը» եւ «Դիրքորոշում» հաղորդումները աչքի են ընկնում քննարկվող հարցերի լայն շրջանակով: Դրանցում հանդիպում էին նաեւ փորձագետների նշած որոշ թեմաներ: Սակայն դա էականորեն չէր փոխհատուցում լրատվական թողարկումներում այդ թեմաների նկատմամբ ուշադրության անբավարարությունը:

«ԱՐՄԵՆԻԱ»

Փետրվարի 1-6-ի «Ժամը» լրատվական ծրագրի հիմնական թողարկումներում փորձագետների կողմից առաջին հնգյակում նշված թեմաներից մի-

այն երկուսն են լրատվական լուսաբանումների վերին հորիզոնականներում. «Վրաստանի վարչապետ Ջուրաբ ժվանիայի մահն ու դրան հաջորդած իրադարձությունները»՝ 4-րդ տեղ (473 վրկ) և «ԵԽԽՎ Լեռնային Ղարաբաղի հարցով գեկուցող Դելիդ Աթլինսոնի գեկույցը և դրա արձագանքները»՝ 7-րդ տեղ (435 վրկ.): «ԵԱՀԿ փաստահավաք առաքելության այցը Լեռնային Ղարաբաղի շրջակա գրավյալ տարածքներ» թեման 26-րդ տեղում է (108 վրկ.), իսկ «Խորհրդարանական ընտրություններն Իրաքում և հետընտրական իրավիճակը» թեման՝ 27-րդ (107 վրկ.):

Վերը նշված բոլոր թեմաներից ամենից առաջ է «Խորհրդարանական ընդդիմադիր խմբակցությունների ՀՀ ԱԺ վերադառնալու խնդիրը», որ նույնպես առանձնացրել էին փորձագետները: Այն «Ժամը» լրատվականում գրավել է 3-րդ տեղը (493 վրկ.): Իսկ ամենից շատ լուսաբանվել են ընթացիկ իրադարձությունները ներկայացնող թեմաները՝ ՀՀ տնտեսության և ֆինանսների հարցերը (763 վրկ.) և մայրաքաղաքային կյանքի խրոնիկան (591 վրկ.):

Փորձագետների կողմից կարելու համարված թեմաներից «Ժամը», ինչպես որ դիտարկված մյուս լրատվական ծրագրերի մեծամասնությունը, ուշադրության չի արժանացրել «ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի հայտարարությունն այն մասին, որ Ամերիկան չի պատրաստվում հարվածել Իրանին», «Շամիլ Բասաեւի հարցազրույցը բրիտանական «Կանալ 4» հեռուստաընկերությանը» ու «Ռուսաստանի՝ Փարիզյան ակումբին պարտքի մեծ մասի ժամկետից շուտ մարումը»: Եվ, ինչպես «ԱԼՄ»-ում, «Արմենիայի» հիմնական լրատվական թողարկման մեջ բացակայել են Հռոմի Հովհաննես Պողոս Երկրորդ պապի հիվանդության մասին նյութերը, մի թեմա, որը փորձագետները նույնպես նշել էին: Այսպիսով, չի կարելի ասել, թե ծրագիրը հնարավորություն է տվել բավարար չափով տեղեկանալ առավել իրատապ իրադարձություններին: Միաժամանակ, ուշադրություն է գրավում «Ժամը» ծրագրում տարբեր թեմաներին հատկացված եթերաժամանակի ծավալների փոքր տարբերությունը:

«Ժամը» ծրագրում հրատապ թեմաներին անհրաժեշտ ուշադրության բացակայությունը որոշ, սակայն ոչ բավարար չափով փոխհատուցվել է հեռուստաալիքի մյուս «էքսպրես» ծրագրում, որը միավորում է լրատվությունն ու մեկնաբանությունը: Փետրվարի 1-ից 6-ի ժամանակահատվածում նրանում, մասնավորապես, լուսաբանվել են «Շամիլ Բասաեւի հարցազրույցը բրիտանական «Կանալ 4» հեռուստաընկերությանը», «Ռուսաստանի՝ Փարիզյան ակումբին պարտքի մեծ մասի ժամկետից շուտ մարումը», Հռոմի Հովհաննես Պողոս Երկրորդ պապի հիվանդությունը, իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորման գործընթացը, այսինքն՝ այն թեմաները, որոնք փորձագետները կարելու են համարել և որոնք դուրս են մնացել «Ժամը» լրատվականի ուղղակի լուսաբանումից:

«Իրականում» հասարակական-քաղաքական հաղորդումը, որպես կանոն, նվիրվում էր հասարակության համար կարելու, սակայն ոչ միշտ հրատապ իրադարձություններին վերաբերող թեմաներին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍԱԱԼԻՔ

Փորձագետների հարցման մեջ մեծ առավելությամբ առաջատար «Վրաստանի վարչապետ Ջուրաբ ժվանիայի մահն ու դրան հաջորդած իրադար-

ծությունները» թեման «Լրաբեր» լրատվական եւ «Կիրակնօրյա լրաբեր» լրատվական-վերլուծական ծրագրերի փետրվարի 1-ից 6-ի թողարկումներում 8-րդ տեղում էր (307 վրկ.): Իսկ փորձագետների կողմից կարելուրությամբ երկրորդը նշված «ԵԱՅԿ փաստահավաք առաքելության այցը Լեռնային Ղարաբաղի շրջակա գրավյալ տարածքներ» թեման 7-րդը (318 վրկ.): Մյուս՝ փորձագետների գնահատմամբ կարելուրությամբ 4-րդ՝ «Լեռնային Ղարաբաղի հարցով ԵՍԽՎ զեկուցող Դեւիդ Աթկինսոնի զեկույցն ու դրա արձագանքները» թեման ստացել էր 244 վրկ.: գրավելով 10-րդ տեղը:

Փորձագետների գնահատմամբ երրորդ՝ «Խորհրդարանական ընտրություններն Իրաքում եւ հետընտրական իրավիճակը» թեման «Յ2»-ի լրատվական եթերում որեւէ կերպ չի շոշափվել: Նույն կերպ՝ նաեւ փորձագետների կողմից գերակա համարված այլ թեմաներ: Միաժամանակ, ինչպես «Յ1»-ը, «Յ2»-ը նույնպես տեղեկացրել է Ֆրանսիայի ԱԺ խոսնակ Ժան-Լուի Դեբրեի՝ հայերի ցեղասպանության խնդրով միջազգային փորձագետների հետազոտություն անցկացնելու առաջարկի մասին, դրանով իսկ «առաջ անցնելով» փորձագետներից, որոնք այդ թեման առանձնացրել են հաջորդ շաբաթվա իրադարձությունների մեջ: Եվ, ընդհակառակը, ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի հայտարարությունն այն մասին, որ Ամերիկան չի պատրաստվում հարվածել Իրանին, լուսաբանվել է դիտարկման միայն երկրորդ շաբաթվա ընթացքում:

Իսկ «Լրաբերի» եւ «Կիրակնօրյա լրաբեր»-ի առաջին վեց թեմաներից բացարձակ առավելություն են ունեցել ՅՅ տնտեսության եւ ֆինանսների հարցերը (1898 վրկ.), ապա՝ կրոնական խնդիրներն ու կրոնական տարեթվերը (710 վրկ.), ՅՅ Ազգային ժողովի ընթացիկ գործունեությունը (509 վրկ.), միջազգային ծրագրերը եւ միջազգային կազմակերպությունների գործունեությունը ՅՅ-ում (506 վրկ.), Յայաստանի մարզերի իրադարձությունների խրոնիկան (465 վրկ.), ՅՅ նախագահի եւ նրա աշխատակազմի ընթացիկ գործունեությունը (389 վրկ.): Այլ խոսքով՝ ուշադրության կենտրոնում են եղել ընթացիկ, խրոնիկայի բնույթ ունեցող իրադարձությունները: Ընդամին, լրատվական ծրագրերը հատուկ չեն շեշտադրել փորձագետների նշածներից տարբերվող կոնկրետ որեւէ իրադարձություն: Ավելի շուտ, իրադարձությունների բավականին լայն ընդգրկման պարագայում, բացակայում է կենտրոնացումը առավել օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող թեմաների վրա:

Երկրորդ ալիքի մեկնաբանական ծրագրերը, թեպետ, որպես կանոն, շոշափում են հասարակական նշանակության թեմաներ, սակայն դրանք էլ չեն նպաստում լսարանի կողմից հիմնական հրատապ իրադարձությունների համահունչ ընկալելուն:

«ՇԱՆԹ»

Փետրվարի 1-ից 6-ի ժամանակահատվածում «Յորիզոն» լրատվական ծրագրում ուշադրության արժանանալու առումով առաջին տեղում նույն թեման էր, որն իբրեւ գլխավոր նշել էին փորձագետները՝ «Վրաստանի վարչապետ Զուրաբ ժվանիայի մահն ու դրան հաջորդած իրադարձությունները» (874 վրկ.):

Փորձագետների կողմից կարելուրությամբ երկրորդը նշված «ԵԱՅԿ փաստահավաք առաքելության այցը Լեռնային Ղարաբաղի շրջակա գրավյալ

տարածքներ» թեման եզրափակել է ամենից լայնորեն լուսաբանվող թեմաների տասնյակը (335 վրկ.): Ղարաբաղյան խնդրի կարգավորմանը վերաբերող այլ նյութերը, ինչպես նաև «ԵԽԽՎ Լեռնային Ղարաբաղի հարցով զեկուցող Դեւիդ Աթկինսոնի զեկույցն ու դրա արծագանքները» (որը նույնպես փորձագետների կողմից առանձնացվել էր կարելուների թվում) 3-րդ (482 վրկ.) եւ 8-րդ (373 վրկ.) տեղերում էին: Սրանք տվյալ խնդրի նկատմամբ լրատվական ծրագրի համահունչ վերաբերմունքի վկայություններ են:

Փորձագետների առանձնացրած եւս երկու թեմա՝ «Իրաքում խորհրդարանական ընտրություններն ու հետընտրական իրավիճակը» եւ «ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի հայտարարությունն այն մասին, որ Ամերիկան չի պատրաստվում հարվածել Իրանին», նույնպես լուսաբանվել են «Յորիզոնի» թողարկումներում: Սակայն եթե նշված թեմաներից առաջինը բավարար ուշադրության է արժանացել (6-րդ տեղ, 417 վրկ.), ապա երկրորդին ողջ շաբաթվա ընթացքում ծրագիրն անդրադարձել է մեկ անգամ, տրամադրելով 105 վրկ. (32-րդ տեղ):

Փորձագետների կողմից առաջնային համարված մյուս թեմաներից, «Յորիզոնը» ուշադրության չի արժանացրել, մասնավորապես, «Ռուսաստանի՝ Փարիզյան ակունքին պարտքի մեծ մասի ժամկետից շուտ մարումը», «ՀՀ-ում ԱՄՆ հյուպատոսությունում կաշառակերության փաստերը» թեմաները: Վերջին թեման լուսաբանվել է բոլոր հետազոտված հեռուստաալիքների լրատվական ծրագրերում, բացառությամբ «Շանթի»: Իսկ «Շամիլ Բասաեւի հարցազրույցը բրիտանական «Կանալ 4» հեռուստաընկերությանը» թեման «Յորիզոնում» լուսաբանվել է միայն հետազոտության հաջորդ շաբաթվա (փետրվարի 7- 13) ընթացքում:

Եվ վերջապես, «Շանթը» երրորդ հեռուստաալիքն էր («Հ1»-ի եւ «Հ2»-ի հետ), որի լրատվական եթերում հնչել է Ֆրանսիայի Աժ խոսնակ ժան-Լուի Դեբրեի՝ հայերի ցեղասպանության խնդրով միջազգային փորձագետների հետազոտություն անցկացնելու առաջարկը, որը փորձագետները կարելուրել են դիտարկման հաջորդ ժամանակաշրջանում:

«Շանթի» հասարակական-քաղաքական «Յեռանկար» եւ «Երկրորդ հայացք» ծրագրերը դիտարկման ժամանակաշրջանում գլխավոր ուշադրությունը դարձրել են Դեւիդ Աթկինսոնի զեկույցին եւ Լեռնային Ղարաբաղի խնդրով ԵԽԽՎ բանաձեւին: «Յեռանկարի» թողարկումների թեմաներից է եղել նաև ընդդիմադիր խորհրդարանական խմբակցությունների վերադարձը Աժ, որը նույնպես փորձագետների կարծիքով հրատապ էր:

7-13 ՓԵՏՐՎԱՐԻ, 2005 թ.

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Փետրվարի 7-ից 13-ի ժամանակահատվածում փորձագետները նախորդի համեմատ պակաս հստակ են առանձնացրել գլխավոր թեմաները: Ընդհանուր առմամբ նշված 21 իրադարձություններից առավել հաճախ հանդիպել են երեք թեմաներ.

1. Հյուսիսային Կորեայում եւ Իրանում միջուկային զենքի մշակման խնդիրը (12 միավոր),

2. Իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորման գործընթացը (8 միավոր),

3. Երեւանի «ՏԵՑ»-ի շրջակայքում տեղի ունեցած արյունալի փոխհրածգությունը (5 միավոր):

Մյուս թեմաները հավաքել են 3-ից 1 միավոր:

Անհրաժեշտ է նշել, որ երկրորդ հորիզոնականը զբաղեցրած « Իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորման գործընթացը» թեման փորձագետներն իբրեւ առաջնային արդեն նշել էին դիտարկման առաջին շաբաթում: Մյուս թեման՝ «ԵԱՀԿ փաստահավաք առաքելության այցը Լեռնային Ղարաբաղի շրջակա գրավյալ տարածքներ», նույնպես կրկնվել է փորձագետների հարցման մեջ: Եվս մեկ թեմա՝ «ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի այցելությունը Եվրոպայի եւ Մերձավոր Արեւելքի երկրներ», շարունակում էր փորձագետների ուշադրությանն արժանանալ: Բացի այս, եթե փետրվարի 1-ից 6-ի հատվածում «Երեւանի «ՏԵՑ»-ի շրջակայքում տեղի ունեցած արյունալի փոխհրածգությունը» թեման նշել էր միայն մեկ փորձագետ, ապա փետրվարի 7-ից 13-ը դա առաջին եռյակում էր: Ընդամեն, այդ իրադարձությանը «Խաչվող» թեմաների շարքում փորձագետները նշել են նաեւ «Արմենիա-Լադա» ընկերության նախագահ Ռաֆայել Շահմուրադյանի սպանությունը Տոյատիում» եւ «Հայաստանում քրեաժին իրավիճակի սրումը» թեմաները: Վերջինիս տակ հասկացվում էին, առաջին հերթին, վերը նշված հանցագործությունները:

Ինչ վերաբերում է փետրվարի սկզբին կարեւորագույնը համարված «Վրաստանի վարչապետ Զուրաբ ժվանիայի մահն ու դրան հաջորդած իրադարձությունները» թեմային, ապա, թեպետ տվյալ շաբաթում փորձագետները այն չէին նշել, բոլոր հետազոտվող հեռուստաալիքները շարունակում էին անդրադառնալ դրան, ճիշտ է՝ ոչ այնքան ինտենսիվ: Այս առումով առանձնանում էր «Շանթը», որի լրատվական լուսաբանումներում այդ թեման գրավել է վերին հորիզոնականներից մեկը (3-րդը):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Հայլուր» լրատվական ու «360 աստիճան» լրատվական-վերլուծական ծրագրերը փետրվարի 7-ից 13-ը ուշադրությունը կենտրոնացրել են ընթացիկ իրադարձությունների, կյանքի տարբեր բնագավառների խոռոնիկայի վրա, ընդ որում՝ առավել շատ մշակույթի եւ գիտության բնագավառի իրադարձությունների (2272 վրկ.) եւ ՀՀ ԱԺ գործունեության (1658 վրկ.):

Փորձագետների կարեւորածներից «Հ1»-ի լրատվական թողարկումներում առավել շատ լուսաբանվել են «Հրանտ Մաթեոսյանի 70-ամյակը եւ դրան նվիրված միջոցառումները» (622 վրկ.), «ԵԱՀԿ փաստահավաք առաքելության այցը Լեռնային Ղարաբաղի շրջակա գրավյալ տարածքներ» (390 վրկ.) եւ «Իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորման գործընթացը» (378 վրկ.) թեմաները:

Իսկ ընդհանուր առմամբ, փորձագետների նշած 21 թեմաներից 10-ը, այդ թվում՝ փորձագիտական հարցմամբ այս ժամանակաշրջանում առաջատար երեք թեմաները, ուղղակիորեն լուսաբանվել են «Հ1»-ի լրատվական եթերում. արդեն հիշատակված «Իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորման գործընթացը», ինչպես նաեւ՝ «Հյուսիսային Կորեայում եւ

Իրանում միջուկային զենքի մշակման խնդիրը» (264 վրկ), «Երեւանի «ՏԵՑ»-ի շրջակայքում տեղի ունեցած արյունալի փոխհրաձգությունը» (106 վրկ.):

Միեւնույն ժամանակ «Չայլուրը» լուսաբանել է գրող Օրհան Փանուքին Թուրքիայում դատական պատասխանատվության ենթարկելը (362 վրկ.), Թբիլիսիում Սբ. Աստվածածին եկեղեցու հայկական տապանաքարերը ջարդելը (37 վրկ.) եւ ներկայացրել է Իսպանիայում տեղի ունեցած հանրաքվեն՝ Եվրամիության սահմանդրության ընդունման հարցով (35 վրկ.): Այսինքն՝ շոշափել է թեմաներ, որոնք փորձագետները հիշատակել են հաջորդ փետրվարի 14-20-ի ժամանակահատվածում՝ կարծես առաջ անցնելով դրանց նկատմամբ հասարակական հետաքրքրությունից:

«ԱԼՄ»

Փետրվարի 7-ից 13-ի ժամանակահատվածի «Օրեցօր» լրատվական ծրագրի հիմնական եւ նրա կիրակնօրյա լրատվական-վերլուծական թողարկումներում առավել ուշադրության են արժանացել ընթացիկ իրադարձությունները: Մասնավորապես ՅՅ ԱԺ ընթացիկ գործունեությանը հատկացվել 1679 վրկ., Չայաստանի մարզերից նորություններին՝ 1019 վրկ., եւ ներքաղաքական խրոնիկային՝ 973 վայրկյան:

Այդ ժամանակաշրջանի համար փորձագետների առավել հրատապ համարած թեմաներից ամենից շատ լուսաբանվել են «ՅՅ ԱԺ գարնանային նստաշրջանի ձախողված սկիզբը» (557 վրկ.), «Չրանտ Մաթեւսյանի 70-ամյակը եւ դրան նվիրված միջոցառումները» (307 վրկ.), «Չայաստանում քրեածին իրավիճակի սրումը» (186 վրկ.) եւ «Արմենիա-Լադա» ընկերության նախագահ Ռաֆայել Շահնուրադյանի սպանությունը Տոլյատիում» (147 վրկ.):

Ընդամին, փորձագետների նշած 21 թեմաներից «Օրեցօր» լուսաբանել է միայն 6-ը, իսկ փորձագետների կարծիքով այդ ժամանակաշրջանի առաջնային երեք թեմաներից («Չյուսիսային Կորեայում եւ Իրանում միջուկային զենքի մշակման խնդիրը», «Իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորման գործընթացը», «Երեւանի «ՏԵՑ»-ի շրջակայքում տեղի ունեցած արյունալի փոխհրաձգությունը») ոչ մեկը ուղղակի լուսաբանում չի ունեցել:

Միեւնույն ժամանակ, «Օրեցօրը» անդրադարձել է Թբիլիսիում Սբ. Աստվածածին եկեղեցու հայկական տապանաքարերը ջարդելու (43 վրկ.) եւ ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի Չայաստան կատարելիք այցի (92 վրկ.) թեմաներին, որոնք փորձագետները նշել են դիտարկման հաջորդ ժամանակաշրջանում:

«ԱԼՄ»-ի վերլուծական, մեկնաբանական ծրագրերը փետրվարի 7-ից 13-ը նույնպես անմիջականորեն չեն անդրադարձել փորձագետների նշած թեմաներին:

«ԱՐՄԵՆԻԱ»

«Ժամը» ծրագիրը հետազոտված լրատվական ծրագրերից միակն էր, որ փետրվարի 7-ից 13-ի ընթացքում առավել մեծ ուշադրության է արժանացրել ոչ թե ընթացիկ նորությունները, այլ կոնկրետ թեմա՝ «ՅՅ ԱԺ գարնանա-

յին նստաշրջանի ձախողված սկիզբը» (913 վրկ.), որը փորձագետները նույնպես նշել էին տվյալ ժամանակահատվածի համար: Խորհրդարանի ընթացիկ գործունեությունը նույնպես չի վրիպել «ժամը» լրատվականի օբյեկտիվից՝ գրավելով երկրորդ տեղը (805 վրկ.): Բացի այդ, լրատվական ծրագիրը շարունակել է անդրադառնալ ընդդիմադիր խմբակցությունների խորհրդարան վերադառնալու խնդրին (238 վրկ.):

Փորձագետների հարցմամբ առաջին երեք տեղերը զբաղեցրած թեմաներից ուղղակիորեն լուսաբանվել է միայն «Երեւանի «ՏԵՑ»-ի շրջակայքում տեղի ունեցած արյունալի փոխհրաձգություն» թեման (55 վրկ., 33-րդ տեղ): Բավականին շատ ուշադրության է արժանացել «Արմենիա-Լադա» ընկերության նախագահ Ռաֆայել Շահնուրադյանի սպանությունը Տոլյատիում (254 վրկ., 13-րդ տեղ):

Փորձագետների հիշատակած 21 թեմաներից միայն եւս 2-ն են «ժամը» լրատվականում ուղղակի լուսաբանում ունեցել՝ «Հրանտ Մաթեոսյանի 70-ամյակը եւ դրան նվիրված միջոցառումները» (235 վրկ.) եւ «ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի այցը Եվրոպայի եւ Մերձավոր Արեւելքի երկրներ» (35 վրկ.):

Վերջին թեմային «Էքսպրես» լրատվական վերլուծական ծրագիրն անդրադարձել է երեք անգամ: Այդքան էլ՝ Իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորման գործընթացին եւ մեկ անգամ՝ Հյուսիսային Կորեայում եւ Իրանում միջուկային զենքի մշակման խնդրին: Այսպիսով «Էքսպրեսը» որոշ չափով փոխհատուցել է «ժամը» լրատվական ծրագրում այս ժամանակահատվածի հրատապ խնդիրներին ուշադրության բացակայությունը: «Արմենիայի» մյուս վերլուծական՝ «Իրականում» ծրագիրը, նույնպես շոշափել է մի շարք հրատապ թեմաներ, սակայն դրանցում չի եղել մեկը, որը լուսաբանված չլիներ «ժամը» լրատվականում:

ՀԱՅԱՎԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ ԶԵՌՈՒՄՏԱՎԼԻՔ

«Լրաբեր» եւ «Կիրակնօրյա լրաբեր» լրատվական ծրագրերում փետրվարի 7-ից 13-ը, ինչպես եւ նախորդ ժամանակաշրջանում, գերակայում էին ընթացիկ իրադարձություններն ու կյանքի տարբեր բնագավառների խրոնիկան: Առավել ակտիվորեն լուսաբանվում էին ՀՀ-ում մշակույթի եւ գիտության բնագավառի իրադարձությունները (1940 վրկ.), սոցիալական խնդիրները (1198 վրկ.), ՀՀ տնտեսության եւ ֆինանսների հարցերը (1074 վրկ.) եւ Հայաստանի մարզերից նորությունները (1012 վրկ.):

Այդ ժամանակահատվածի համար փորձագետների նշած 21 թեմաներից, «Հ2»-ի լրատվական եթերում ուղղակիորեն լուսաբանվել են ինը, այդ թվում՝ փորձագիտական հարցմամբ առաջատար երեքից երկուսը՝ «Իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորման գործընթացը» (319 վրկ.), «Հյուսիսային Կորեայում եւ Իրանում միջուկային զենքի մշակման խնդիրը» (211 վրկ.):

Փորձագետների նշած բոլոր թեմաներից առավել շատ ուշադրության են արժանացել «Հայաստանում տուրիզմի զարգացման հեռանկարների վերաբերյալ «ՄակԿինգի» միջազգային խորհրդատվական ընկերության կանխատեսումները» (439 վրկ.) եւ «Հրանտ Մաթեոսյանի 70-ամյակը եւ դրան նվիրված միջոցառումները» (349 վրկ.) թեմաները:

Բացի այդ, «Հ2»-ը շարունակում էր անդրադառնալ «Ընդդիմադիր խմբակցությունների խորհրդարան վերադառնալու խնդիրը» թեմային, որը հեռուստաընկերությունում առավել ակտիվորեն լուսաբանվողների շարքում 7-րդն էր (699 վրկ.):

«Լրաբերը» լուսաբանել է Թբիլիսիում Սբ. Աստվածածին եկեղեցու հայկական տապանաքարերը ջարդելու (35 վրկ.) եւ ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի Հայաստան կատարելիք այցի թեմաները, որոնք փորձագետներն առաջնային են համարել դիտարկման հաջորդ ժամանակաշրջանում:

«Հ2»-ի վերլուծական դիտարկված ծրագրերը չեն անդրադարձել փորձագետների նշած որեւէ թեմայի, դրանով իսկ չփոխհատուցելով լրատվական ծրագրերում այս ժամանակահատվածի հրատապ խնդիրներին ուշադրության բացակայությունը:

«ՇԱՆՔ»

Փետրվարի 7-ից 13-ի ժամանակահատվածում այս կամ այն թեմային հասարակական հետաքրքրության առաջնայնության բացակայությունը (ինչպես նշեցինք վերելում) արտացոլվել է նաեւ «Շանթի» լրատվական լուսաբանումներում: Եթե հեռուստաընկերության լուսաբանումը փետրվարի 1-ից 6-ը մեծապես համապատասխանում էր փորձագիտական գնահատականներին, ապա այս անգամ այն կենտրոնացել էր ընթացիկ իրադարձությունների եւ տարբեր բնագավառների խրոնիկայի վրա: Մասնավորապես, «Հորիզոն» լրատվական ծրագրում առավել շատ ուշադրության են արժանացել սոցիալական (1093 վրկ.) եւ ներքաղաքական (849 վրկ.) հարցերը:

Փորձագիտական հարցման մեջ նշված 21 թեմաներից «Հորիզոնի» եթերում ուղղակիորեն լուսաբանվել է ինը: Փորձագետների նշած բոլոր երեք առաջնային թեմաներն արտացոլվել են «Հորիզոնի» թողարկումներում. «Իսրայել-պաղեստինյան հակամարտության կարգավորման գործընթացը (498 վրկ.), «Հյուսիսային Կորեայում եւ Իրանում միջուկային զենքի մշակման խնդիրը» (288 վրկ.), Երեւանի «ՏԵՑ»-ի շրջակայքում տեղի ունեցած արյունալի փոխհրաձգության հետաքննությունը (188 վրկ.):

Իսկ փորձագետների նշած թեմաներից «Հորիզոն» ամենից շատ ուշադրության է արժանացրել Խորհրդարանի գարնանային նստաշրջանի ձախողված սկզբին (614 վրկ.):

«Հորիզոնի» եթերում փետրվարի սկզբին փորձագետների նշած՝ «Շամիլ Բասաեւի հարցազրույցը բրիտնական «Կանալ 4» հեռուստաընկերությանը» թեմային մի փոքր ուշացումով անդրադարձը (278 վրկ.) արդարացվում է գոնե նրանով, որ հայկական ՋԼՄ-ներն այդ թեմային ընդհանրապես քիչ էին անդրադարձել: Բացի այդ, «Հորիզոնը» դիտարկված լրատվական ծրագրերից միակն էր, որը տեղեկացրեց փետրվարի 13-ին կայանալիք «Գրեմի» մրցանակաբաշխության մասին (287 վրկ.): Այս ժամանակահատվածում թեման նշվել է փորձագետներից մեկի կողմից եւ լուսաբանվել է հաջորդ շաբաթվա ընթացքում, սակայն միայն երկու հեռուստաընկերությունների՝ «Շանթի» եւ «Հ1»-ի լրատվական եթերում:

«2-րդ հայացք» շաբաթական հասարակական-քաղաքական հաղորդումն այս ժամանակահատվածում է քննարկել Հայաստանում քրեածին իրավի-

ճակի սրման խնդիրը, ինչը հասարակական հետաքրքրության առումով արդարացված էր: Միաժամանակ, մյուս մեկնաբանական «Յեռանկար» ծրագիրը հինգ թողարկումներում, այդ եւ խորհրդարանի գարնանային նստաշրջանի ձախողված սկզբի թեմաներից բացի չի անդրադարձել փորձագետների նշած 21 թեմաներից եւ ոչ մեկին:

14-20 ՓԵՏՐՎԱՐԻ 2005 Ք.

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Փետրվարի 14-ից 20-ի ժամանակահատվածի համար փորձագետներն ընդհանուր առմամբ նշել են 15 իրադարձություն, որոնցից առաջին հնգյակում են՝

1. Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանությունը (18 միավոր),
2. Կիոտոյի արձանագրության ուժի մեջ մտնելը (7 միավոր),
3. Եվրոպական Միության սահմանադրության ընդունման հարցով հանրաքվեն Իսպանիայում (6 միավոր),
4. Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի այցը Հայաստան (6 միավոր)
5. Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի այցը Հարավային Կովկասի երկրներ (4 միավոր):

Փորձագետների նշած մյուս թեմաները հավաքել են 3-ից 1 միավոր: Դրանց թվում դարձյալ նշվել են Իրաքի խորհրդարանական ընտրությունների արդյունքները եւ ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի այցը Եվրոպա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 14-ից 20-ի ընթացքում փորձագետների կարելորած 15 թեմաներից «Հայլուր» լրատվականի հիմնական եւ «360 աստիճան» լրատվական-վերլուծական ծրագրի թողարկումներում արտացոլվել են 8-ը: Ընդամին, այդ ծրագրերի լուսաբանած իրադարձությունների նշանակալի մասը նշվել էր փորձագիտական նախորդ հարցումներում, որը սույն դիտարկման համատեքստում կարող է լավ ցուցանիշ համարվել:

Միեւնույն ժամանակ, «Հ1»-ի լրատվական ծրագրերը, ինչպես եւ նախորդ ժամանակահատվածում, կենտրոնացել են ընթացիկ իրադարձությունների եւ կյանքի տարբեր բնագավառների խրոնիկայի վրա: Առավել ուշադրության արժանացածներից առաջին 5 տեղերը զբաղեցնում են հենց իրադարձային եւ խրոնիկայի բնույթի թեմաները, որոնց մեջ առաջնությունը պատկանում է սպորտին (1564 վրկ.), միջազգային ծրագրերին եւ ՀՀ-ում միջազգային կազմակերպությունների գործունեությանը (1256 վրկ.), ՀՀ տնտեսության եւ ֆինանսների հարցերին (998 վրկ.), ՀՀ կառավարության ընթացիկ գործունեությանը (996 վրկ.), ՀՀ նախագահի եւ նրա աշխատակազմի ընթացիկ գործունեությանը (971 վրկ.):

«Հ1»-ի լրատվական եթերում փորձագետների նշած թեմաներից առավել լայնորեն լուսաբանվել է այս ժամանակաշրջանում փորձագետների կարծիքով առավել կարելոր իրադարձությունը՝ Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանությունը եւ դրանից հետո այդ երկրում քաղաքական իրավիճակի զարգացումները (629 վրկ.): Կիոտոյի արձանագրության ուժի

մեջ մտնելը (փորձագետների համար առաջնայնության առումով երկրորդ իրադարձությունը) ստացել է 157 վայրկյան: Նկատելիորեն ավելի շատ ուշադրության են արժանացել փորձագետների նշած ռեյտինգային հնգյակը եզրափակող երկու թեմաները՝ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի այցը Չայաստան (444 վրկ.) եւ Լավրովի այցը Չարավային Կովկասի երկրներ (84 վրկ.):

Բացի այս, ինչպես եւ նախորդ ժամանակահատվածում, «Հ1»-ի լրատվական եթերում ներկայացվել են թեմաներ, որոնք փորձագետները նշել են հաջորդ (փետրվարի 21-28) ժամանակահատվածի հարցման ընթացքում: Դրանք են՝ «Ռուսաստանի եւ Իրանի միջեւ պայմանագիրը՝ միջուկային թափոնների դուրս բերման մասին» եւ «ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսի հայտարարությունները Կալիֆորնիայի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ»:

«ԱԼՄ»

ՀՀ նախագահի եւ նրա աշխատակազմի ընթացիկ գործունեությանը (673 վրկ.) եւ ՀՀ տնտեսության եւ ֆինանսների հարցերին (636 վրկ.) զուգահեռ «Օրեցօր» լրատվական ծրագրի եւ նրա կիրակնօրյա լրատվական-վերլուծական թողարկման առավել հաճախակի լուսաբանվող թեմաների եռյակում է նաեւ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի այցը Չայաստան (619 վրկ.), որը փորձագետները նշել էին կարեւորների շարքում:

Փորձագետների կարծիքով մեծ հետաքրքրություն ներկայացնող երկու իրադարձություններից (Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Չարիրիի սպանությունը եւ Կիոտոյի արձանագրության ուժի մեջ մտնելը), առաջինը տվյալ ժամանակաշրջանում լուսաբանվել է միայն 46 վրկ., իսկ երկրորդն ընդհանրապես ուշադրության չի արժանացել: Բացի այդ թեմաներից, փորձագետների նշած միայն եւս երկու թեմաներ են արտացոլվել «Օրեցօրի» եթերում. «Էմ-Էս Էքսփլորեր» ընկերությանը (որի հիմնադիրներից էր «Ա1+» հեռուստաընկերությունը) ռադիոհեռարձակման արտոնագիր չտրամադրելը (185 վրկ.) եւ Երեւանում «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988 - 94 թթ.» հանրագիտարանային հրատարակության շնորհանդեսը (131 վրկ.): Միեւնույն ժամանակ, հեռուստաընկերության լրատվական եթերում շարունակվել են լուսաբանվել նախորդ հարցումներում փորձագետների նշած թեմաները:

«ԱԼՄ»-ի մեկնաբանական ծրագրերը այս ընթացքում օպերատիվ եւ հրատապ իրադարձությունների լուսաբանմանը որեւէ էական բան չեն ավելացրել:

«ԱՐՄԵՆԻԱ»

«Ժամը» լրատվական ծրագրի հիմնական թողարկումների «եթերային առաջատարները» փետրվարի 14-ից 20-ի ընթացքում ընթացիկ իրադարձություններն ու խրոնիկան արտացոլող երկու թեմաներ էին (ՀՀ նախագահի եւ նրա աշխատակազմի ընթացիկ գործունեությունը՝ 889 վրկ. եւ ՀՀ տնտեսության ու ֆինանսների հարցերը՝ 779 վրկ.), ինչպես նաեւ՝ Բուդապեշտում ադրբեջանական սպա Ռաֆիլ Սաֆարովի կողմից հայ սպա Գուրգեն Մարգարյանի սպանության տարելիցն ու այդ գործով դատավարությունը (816 վրկ.):

Դրանց նոր միայն հաջորդում է այդ ժամանակաշրջանում փորձագետների առավել կարեւորած թեմաներից մեկը՝ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի այցը Չայաստան (783 վրկ.), իսկ Ռուսաստանի արտգործ-

նախարարի Հարավային Կովկասի երկրներ այցին տրամադրվել է 211 վայրկյան:

Ընդհանուր առմամբ, փորձագետների նշած 15 թեմաներից, «Ժամը» լրատվականի եթերում տեղ են գտել 6-ը: Ըստ փորձագետների թիվ մեկ թեման (Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանությունը եւ այդ երկրի քաղաքական իրավիճակի զարգացումները), 12-րդն էր «Ժամը» ծրագրի հիմնական թողարկումներում (292 վրկ.): Իսկ նույն փորձագետների կարծիքով կարեւորությամբ 2-րդ եւ 3-րդ թեմաները՝ Կիոտոյի արձանագրության ուժի մեջ մտնելը եւ Եվրոպական Միության սահմանադրության ընդունման հարցով հանրաքվեն Իսպանիայում, ընդհանրապես չեն արտացոլվել լուսաբանումներում:

Վերջին երեք թեմաներից երկուսի ուշադրության բացակայությունը նշանակալի չափով փոխհատուցվել է «Էքսպրես» լրատվական-վերլուծական ծրագրի ակտիվ լուսաբանմամբ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՂ ԴՅՈՒՄՏԱԿԱԼԻՔ

Փետրվարի 14-20-ի ընթացքում փորձագետների կողմից իբրեւ առավել կարեւորներ նշված 15 թեմաներից 10-ը (այդ թվում՝ 4 առաջնայինները) արտացոլվել են «Լրաբեր» ծրագրի հիմնական եւ «Կիրակնօրյա լրաբեր» լրատվական-վերլուծական ծրագրի թողարկումներում: ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի այցը Հայաստան լուսաբանված թեմաներից 4-րդն էր (855 վրկ.): Իսկ նորությունների եթերի երեք առաջատարներն ընթացիկ իրադարձությունները եւ կյանքի զանազան բնագավառների խրոնիկան էին: ՀՀ տնտեսություն եւ ֆինանսներ (1893 վրկ.), ՀՀ նախագահի եւ նրա աշխատակազմի ընթացիկ գործունեություն (968 վրկ.), ՀՀ կառավարության ընթացիկ գործունեություն (932 վրկ.):

Բացի այս, հեռուստաընկերության լրատվական ծրագրերում շարունակվում էր նախորդ հարցմամբ փորձագետների նշած մի շարք թեմաների լուսաբանումը: Եվ ասես առաջ անցնելով հասարակական հետաքրքրությունից, եթերում հաղորդագրություններ են եղել ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի եվրոպական այցի եւ ռուս-իրանական միջուկային համագործակցության մասին: Այս թեմաները փորձագետներն առաջնային են համարել հաջորդ ժամանակաշրջանում (21-28 փետրվարի):

«Հ2»-ի մեկնաբանական ծրագրերը այս ընթացքում օպերատիվ եւ հրատապ իրադարձությունների լուսաբանմանը որեւէ էական բան չեն ավելացրել:

«ՇԱՆԹ»

Փետրվարի 14-20-ի ընթացքում «Հորիզոն» լրատվական ծրագրում առավել շատ լուսաբանվել է ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի այցը Վրաստան (863 վրկ.), ինչը տեղի էր ունեցել նրա Հարավային Կովկաս այցի շրջանակներում (իրադարձություն, որը փորձագիտական հարցմամբ 5-րդ տեղում էր): Լայնորեն լուսաբանված թեմաներից երրորդը նույնպես Սերգեյ Լավրովի պաշտոնական այցն էր, բայց՝ Հայաստան (742 վրկ.):

Տվյալ ժամանակաշրջանի համար փորձագետների կողմից առավել հրատապ համարված եւս երկու թեմա «Շանթի» լրատվական եթերի առաջատարների յոթնյակում են: Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրի

սպանությունը եւ այդ երկրում քաղաքական զարգացումները, որ առաջատարն էր փորձագետների հարցմամբ, «Յորիզոնում» հինգերորդն էր (622 վրկ.): Իսկ Իրաքի հետընտրական իրավիճակը, որ փորձագիտական հարցմամբ բաժանում էր 6-8-րդ տեղերը՝ 7-րդը (436 վրկ.):

Բացի այդ, հեռուստաալիքի լրատվական ծրագրերի հիմնական թողարկումներում շարունակվում էր նախորդ հարցմամբ փորձագետների նշած մի շարք թեմաների լուսաբանումը: Դրանցից մեկը՝ «Յյուսիսային Կորեայում եւ Իրանում միջուկային զենքի մշակման խնդիրը», նույնիսկ «Շանթի» լրատվական եթերի առաջատարներից էր՝ 682 վայրկյան լուսաբանումով գրավելով 4-րդ տեղը:

«Շանթի» մեկնաբանական ծրագրերը, այսինքն՝ «Դիրքորոշումը» եւ «2-րդ հայացք»-ը այդ ժամանակահատվածի համար փորձագետների նշած առավել հրատապ խնդիրներին չեն անդրադարձել:

21-28 ՓԵՏՐՎԱՐԻ, 2005թ.

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Փետրվարի 21-ից 28-ի ընթացքում փորձագետներն ընդհանուր առմամբ նշել են 18 իրադարձություն, որոնցից առավել հաճախ հիշատակվել են 6-ը.

1. ԱՄՆ եւ ՌԴ նախագահներ Ջորջ Բուշի եւ Վլադիմիր Պուտինի հանդիպումը Բրատիսլավայում (18 միավոր),
2. ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի այցը Եվրոպա (5 միավոր),
3. Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ընդդեմ Ռուսաստանի Չեչնիայի բնակիչների հայցի բավարարումը (5 միավոր),
4. Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի հատուկ ներկայացուցիչ Ռոբերտ Սիմոնսի այցը Չայաստան (5 միավոր),
5. ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսի հայտարարությունները Կալֆորնիայի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ (4 միավոր),
6. Կառավարող կոալիցիայի անդամ «Օրինաց երկիր» եւ Չայաստանի Հանրապետական կուսակցությունների միջեւ հարաբերությունների սրումը (4 միավոր):

Փորձագետների նշած մյուս թեմաները ստացել են 3-ից 1 միավոր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԶԵՆՈՒՄՍԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 21-28-ի համար փորձագետների կողմից կարելորված 18 թեմաներից 13-ը լուսաբանվել են «Հայլուր» լրատվական ծրագրի հիմնական եւ «360 աստիճան» լրատվական-վերլուծական ծրագրի տվյալ ժամանակահատվածի թողարկումներում: Սակայն դրանք եթերի առաջատարների շարքում չեն եղել. փորձագետների նշած թեմաներից ամենից շատ լուսաբանում ստացած Սումգայիթում հայկական ջարդերի տարելիցին նվիրված միջոցառումների լուսաբանումը գրավել է 7-րդ տեղը (598 վրկ.): Իսկ առավել մեծ ուշադրություն նվիրվել են ընթացիկ իրադարձություններին եւ կյանքի տարբեր բնագավառների խրոնիկային՝ սպորտին (1882 վրկ.), ՀՀ մշակույթի եւ գիտության բնագավառի իրադարձություններին (1642 վրկ), ՀՀ նախագահի եւ նրա աշխատակազմի ընթացիկ գործունեությանը (1316 վրկ), ՀՀ-ում միջազգային կազմակերպությունների գործունեությանը (1166 վրկ.):

Հետազոտության նախորդ փուլերում փորձագետների նշած մի շարք թեմաներ շարունակում էին մնալ «Հ1»-ի լրատվական ծրագրերի ուշադրության կենտրոնում, թեպետ դարձյալ լուսաբանման աննշան ծավալներով:

«Հ1»-ի «5-րդ ալիք» մեկնաբանական ծրագիրը, ինչպես եւ նախորդ ժամանակահատվածներում, փորձագետների նշած առավել հրատապ խնդիրներից էր անդրադարձել:

«ԱԼՄ»

«Օրեցօր» լրատվական ծրագրի հիմնական եւ նրա կիրակնօրյա լրատվական-վերլուծական թողարկումներում առավել շատ տեղ հատկացվել է «ԱԼՄ» հեռուստաընկերության սեփականատեր Տիգրան Կարապետյանի Հայաստանի մարզեր կատարած այցերին (1406 վրկ.): «Օրեցօրի» եթերում առաջատար 12 թեմաներից 10-ը նվիրված էին ընթացիկ իրադարձություններին եւ տարբեր բնագավառների խրոնիկային, այդ թվում՝ ներքաղաքական կյանքի խրոնիկային (1098 վրկ.) եւ ՀՀ նախագահի եւ նրա աշխատակազմի ընթացիկ գործունեությանը (622 վրկ.):

Փորձագետների կողմից հրատապների թվում նշված թեմաներից առավել շատ լուսաբանում ստացել է կապիտալ շինարարության հարցերով ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի աշխատանքային խորհրդակցությունը կառավարության անդամների հետ (497 վրկ.):

Փորձագետների հարցմամբ առաջատար թեման՝ «ԱՄՆ եւ ՌԴ նախագահներ Ջորջ Բուշի եւ Վլադիմիր Պուտինի հանդիպումը Բրատիսլավայում», «Օրեցօրում» 26-րդ տեղում էր (150 վրկ.), իսկ հաջորդ երկու թեմաները, որ փորձագետներն առանձնացրել էին իբրեւ առաջնային («ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի այցը Եվրոպա» եւ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ընդդեմ Ռուսաստանի Չեչնիայի բնակիչների հայցի բավարարումը») ծրագրում ընդհանրապես չեն լուսաբանվել:

Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի հատուկ ներկայացուցիչ Ռոբերտ Սինոնսի Հայաստան կատարած այցն էականորեն ավելի շատ ուշադրության է արժանացել (350 վրկ.), քան փորձագետների կողմից առավել հրատապ նշված մյուս թեման՝ «ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսի հայտարարությունները Կալֆորնիայի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ» (89 վրկ.): Ընդհանուր առմամբ, փորձագետների կողմից իբրեւ կարեւոր նշված 18 թեմաներից «Օրեցօրում» լուսաբանվել է միայն 5-ը:

«ԱԼՄ»-ի դիտարկված մեկնաբանական ծրագրերը չեն անդրադարձել տվյալ ժամանակահատվածի համար փորձագետների կողմից առավել հրատապ համարված թեմաներին:

«ԱՐՄԵՆԻԱ»

«Ժամը» լրատվական ծրագրի փետրվարի 21-28-ի հիմնական թողարկումներում առավել շատ լուսաբանված թեմաների թվում առաջին 10 տեղերը զբաղեցնում են ընթացիկ իրադարձություններին եւ կյանքի տարբեր բնագավառների խրոնիկային նվիրվածները: Մասնավորապես, նորությունների եթերի առաջատարներն էին ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաների այ-

ցերը (810 վրկ.), մայրաքաղաքային իրադարձությունների խրոնիկան (787 վրկ.) ու ՀՀ նախագահի եւ նրա աշխատակազմի ընթացիկ գործունեությունը (732 վրկ.):

Երկրորդ տասնյակը բացում է փորձագետների կողմից ամենահրատապների մեջ նշված «ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսի հայտարարությունները Կալֆորնիայի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ» թեման (356 վրկ.): Իսկ փորձագիտական հարցման առաջատար՝ «ԱՄՆ եւ ՌԴ նախագահներ Ջորջ Բուշի եւ Վլադիմիր Պուտինի հանդիպումը Բրատիսլավայում» թեման 23-րդ տեղում էր (175 վրկ.): Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի հատուկ ներկայացուցիչ Ռոբերտ Սիմոնսի Հայաստան կատարած այցին հատկացվել է 286 վայրկյան:

Ընդհանուր առմամբ, «ժամը» լրատվականում լուսաբանվել են փորձագետների կողմից առավել հրատապ համարված 18 թեմաներից 7-ը:

«Իրականում» մեկնաբանական ծրագիրը մանրամասն անդրադարձել է երկու թեմաների՝ Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի հատուկ ներկայացուցիչ Ռոբերտ Սիմոնսի այցին Հայաստան եւ ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսի հայտարարություններին:

Փետրվարի 21-ից 28-ը փորձագետների գնահատմամբ առավել կարելուված իրադարձություններից 9-ը արտացոլվել են «Էքսպրես» վերլուծական ծրագրում. Սունգայիթի ջարդերի տարելիցին նվիրված միջոցառումները (6 անգամ), ԱՄՆ եւ ՌԴ նախագահների հանդիպումը Բրատիսլավայում (6 անգամ), ԱՄՆ նախագահի այցը Եվրոպա (3 անգամ), Կառավարող կոալիցիայի անդամ «Օրինաց երկիր» եւ Հայաստանի Հանրապետական կուսակցությունների միջև հարաբերությունների սրումը (3 անգամ), Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության քաղաքական հետեւանքները (3 անգամ), Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի հատուկ ներկայացուցիչ Ռոբերտ Սիմոնսի այցը Հայաստան (2 անգամ), «Օսկարի» նրցանակաբաշխությունը (2 անգամ), երկրաշարժը Իրանում (2 անգամ), ահաբեկչությունը Իրաքի Էլ-Խիլա քաղաքում (1 անգամ): Բացի այդ՝ «Էքսպրեսը» շարունակում էր անդրադառնալ նախկինում փորձագետների նշած որոշ թեմաների:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԶԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ

«Լրաբերի» հիմնական եւ «Կիրակնօրյա լրաբեր» լրատվական-վերլուծական ծրագրի փետրվարի 21-ից 28-ի թողարկումներում առավել շատ ուշադրություն է հատկացվել կյանքի տարբեր բնագավառների ընթացիկ իրադարձություններին, մասնավորապես՝ ՀՀ-ում միջազգային ծրագրերին եւ միջազգային կազմակերպությունների գործունեությանը (1371 վրկ.), ՀՀ նախագահի եւ նրա աշխատակազմի ընթացիկ գործունեությանը (1294 վրկ.), սոցիալական հարցերին (1105 վրկ.):

Փորձագետների կարծիքով տվյալ ժամանակաշրջանի թիվ մեկ իրադարձությունը՝ «ԱՄՆ եւ ՌԴ նախագահներ Ջորջ Բուշի եւ Վլադիմիր Պուտինի հանդիպումը Բրատիսլավայում» «Հ2»-ի լրատվական եթերում ստացել է 394 վայրկյան: Իսկ ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի բուն այցը Եվրոպա (փորձա-

գետների կարծիքով հրատապությամբ երկրորդը), առավել լուսաբանված թեմաների շարքում 4-րդն էր (941 վրկ.):

Ըստ փորձագետների հրատապությամբ 3-4-րդ տեղերը բաժանած թեմաներից («Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի հատուկ ներկայացուցիչ Ռոբերտ Սիմոնսի այցը Հայաստան » եւ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ընդդեմ Ռուսաստանի Չեչնիայի բնակիչների հայցի բավարարումը») առաջինն արժանացել է ուշադրության (361 վրկ.), իսկ երկրորդը՝ ոչ:

Ընդհանուր առմամբ, փորձագետների կողմից առավել հրատապ համարված 18 թեմաներից «Հ2»-ի լրատվական ծրագրերում լուսաբանվել է 13-ը: Բացի այդ, հետազոտության նախորդ փուլերում փորձագետների նշած մի շարք թեմաներ մնացել են նորությունների թողարկումների ուշադրության կենտրոնում:

«Խոսքի իրավունք» եւ «Չորրորդ ստուդիա» ծրագրերը այդ ժամանակաշրջանում մի քանի անգամ անդրադարձել են փորձագետների կողմից առավել հրատապ համարված եւ դարաբաղյան հակամարտությանը (մասնավորապես՝ Սունգայիթի ջարդերի տարելիցին) վերաբերող իրադարձություններին:

«ՇԱՆԹ»

Փետրվարի 21-ից 28-ի ընթացքում փորձագետների հարցմամբ առավել կարելուր թեմաների անվիճելի առաջատարը՝ «ԱՄՆ եւ ՌԴ նախագահներ Ջորջ Բուշի եւ Վլադիմիր Պուտինի հանդիպումը Բրատիսլավայում», լուսաբանման ծավալով երկրորդն էր «Հորիզոնի» հիմնական թողարկումներում (1004 վրկ.): Դրան գերազանցել է «Խոջալուի իրադարձությունները ցեղասպանություն ճանաչելու մասին Ադրբեջանի պահանջը» թեման (1073 վրկ.), որն ընդհանրապես փորձագետները չէին նշել:

Ընդհանուր առմամբ, փորձագետների նշած 18 թեմաներից «Հորիզոնի» եթերում տեղ է հատկացվել 11-ին: Այդ թվում՝ Սունգայիթում հայկական ջարդերի տարելիցին նվիրված միջոցառումների լուսաբանումը 4-րդն էր (637 վրկ.):

Փորձագիտական հարցմամբ 2-4-րդ տեղերը բաժանած թեմաներից չի լուսաբանվել միայն «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ընդդեմ Ռուսաստանի Չեչնիայի բնակիչների հայցի բավարարումը» թեման: ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի եվրոպա կատարած այցը ստացել է 330 վրկ., իսկ Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի հատուկ ներկայացուցիչ Ռոբերտ Սիմոնսի այցը Հայաստան՝ 174 վայրկյան: «ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսի հայտարարությունները Կալֆորնիայի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ» թեման (որ նույնպես փորձագետներն առաջնային էին համարել)՝ ստացել է 341 վայրկյան:

Բացի այս «Հորիզոնի» եթերում շարունակվում էր անդրադարձը հետազոտության նախորդ փուլերում փորձագետների կարելուրած թեմաներին:

«Հեռանկար» մեկնաբանական ծրագիրը իր վեց թողարկումներից երեքը նվիրել է հետազոտության տարբեր փուլերում փորձագետների կողմից այս կամ այն կերպ հիշատակված թեմաներին. դարաբաղյան հակամարտության

պատմությանն ու կարգավորման գործընթացին (երկու անգամ) եւ ՀՀ ԱԺ գարնանային նստաշրջանի ձախողված սկզբին՝ նոր նիստերի մեկնարկի համատեքստում (մեկ անգամ):

VII. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Հայաստանի առաջատար հեռուստաալիքները, որոնք ինչպես սոցիոլոգիական հարցումների, այնպես էլ լսարանի ուսումնասիրման այլ մեթոդների արդյունքներով բնակչության համար տեղեկատվության հիմնական աղբյուր են, իրենց լրատվական թողարկումներում չեն լուսաբանում օրախնդիր թեմաների եւ իրադարձությունների նշանակալի մասը, դրանով իսկ սահմանափակելով տեղեկացված լինելու լսարանի իրավունքն ու անտեսելով նրա պահանջմունքները:

2) Ի տարբերություն երկրի քաղաքական ապագայի համար վճռորոշ ժամանակաշրջանների (տարբեր մակարդակների ընտրություններ, հանրաքվեներ), երբ, համաձայն նախորդ մոնիտորինգների արդյունքների, առաջատար հեռուստաալիքներն ակնհայտորեն պաշտպանում են գործող իշխանությունների ներկայացուցիչների շահերը, սույն հետազոտությունը չի արձանագրել եթերում այս կամ այն քաղաքական դիրքորոշումների գերակշռություն:

3) Միեւնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել առանցքային մի ամբողջ շարք հարցերի շուրջ առաջատար քաղաքական եւ հասարակական գործիչների տեսակետները ներկայացնելու՝ հեռուստաընկերությունների որոշակի պասիվությունը: Այդպիսով, իրապարակային քաղաքականության կուլտուրայի ձեւավորման մեջ ՁԼՄ-ների ավանդը դառնում է անբավարար:

4) Հետազոտված հեռուստաալիքների մեծամասնության վերլուծական ծրագրերը նույնպես բավարար չափով չեն նպաստում, որ լսարանը լավագույնս կողմնորոշվի տեղեկությունների հոսքում:

5) Մասնավորապես, միջազգային հիմնախնդիրները եւ սոցիալական հարցերը, որոնք ըստ վերջին տարիների բոլոր սոցիոլոգիական հարցումների ամենից շատ են հետաքրքրում լսարանին, հետազոտված ՁԼՄ-ների ծրագրային քաղաքականության մեջ գերակա չեն:

6) Միաժամանակ, հեռուստաալիքները մեծ ուշադրություն են դարձնում պետական մարմինների եւ երկրի բարձրագույն ղեկավարության, տվյալ հեռարձակող ընկերությունների վրա որոշակի ազդեցության լծակներ ունեցող քաղաքական գործիչների ու գործարարների ընթացիկ, ամենօրյա գործունեությանը: Թեպետ նման տեղեկատվությունը լսարանի արտահայտած պահանջմունքներից չէ:

Երեւանի մամուլի ակումբը շնորհակալություն է հայտնում Հայաստանի հանրային հեռուստատեսությանը, Հայկական երկրորդ հեռուստաալիքին, ԱԼՄ, «Արմենիա» եւ «Շանթ» հեռուստաընկերություններին՝ մոնիտորինգի ընթացքում ցուցաբերած ճեխնիկական աջակցության համար:

սի 21-ին այն ուղարկեց Հայաստանի իշխանություններին:

6. 2005 թ. սեպտեմբերի 1-ին այս փոփոխություններն ընդունվեցին Ազգային ժողովում՝ երկրորդ ընթերցմամբ: Իրենց վերջնական սարքերակով դրանք Հանձնաժողովին ներկայացվեցին 2005 թ. սեպտեմբերի 9-ին:

7. Երկրորդ ընթերցմամբ ընդունված՝ Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ սույն եզրակացությունը դրսևարարվել է աշխատանքային խմբի կողմից եւ Հայաստանի իշխանություններին ներկայացվել 2005 թ. սեպտեմբերի 19-ին: Հետագայում այն հաստատվել է Հանձնաժողովի կողմից՝ 64-րդ լիազույմար նիստում (21-22 հոկտեմբեր, 2005 թ.):

II. $\hat{e}^3 \tilde{N}^3 \hat{Y}^3 \text{ 1 } \tilde{m} \tilde{a} \tilde{U} \hat{Y} \div \acute{a} \div \acute{a} \tilde{E} \acute{a} \tilde{A} \tilde{a} \tilde{d} \tilde{Y} \gg \tilde{r} \tilde{c}^a$
 $^3 \acute{e}^3 \tilde{c} \tilde{C} \tilde{Y} \tilde{A} \tilde{Y} \tilde{A} \gg \tilde{r} \tilde{u} \tilde{U}^3 \tilde{u} \tilde{m} \tilde{A} \tilde{Y}^1 \acute{a} \tilde{d} \tilde{Y}^1 \text{ 3 } \acute{I} \tilde{E} \tilde{r} \tilde{U} \tilde{B}^3 \tilde{I} \acute{I} \text{ 3 } \acute{I}$
 $\hat{Y}^3 \tilde{E}^3 \cdot \acute{I} \tilde{C} \acute{I} \gg \tilde{r} \tilde{a} \tilde{d} \acute{a} \tilde{A} \tilde{a} \tilde{d} \tilde{Y}$

Ա. Նախնական նկատառումներ

8. Սույն դիտարկումները վերաբերում են միայն այն դրույթներին, որոնք առանձին քննարկվել են 2005 թ. հունիսի 23-24-ի հանդիպումներին եւ ամփոփվել (CDL(2005)052) փաստաթղթում: Դրանք մշակելիս՝ աշխատանքային խումբը նպատակ է ունեցել գտնել լուծումներ, որոնք կնպաստեն Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործունակությանը:

9. Սահմանադրության մյուս դրույթները, որոնք թեւ չեն արտացոլվել Հանձնաժողովի այս եզրակացության մեջ, բայց նշվել են նախորդ եզրակացություններում⁴¹, կարող են քննարկման մյուս դառնալ Հայաստանի իշխանությունների, ընդդիմադիր ուժերի եւ քաղաքացիական հասարակության շրջանում:

Բ. Մարդու իրավունքներ

Մարդու իրավունքների պաշտպանը

10. Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի սահմանադրական հիմնավորումը կարելուք այլ է Հայաստանում մարդու իրավունքների եւ ազատությունների արդյունավետ պաշտպանության ճանապարհին:

11. Այժմ հոդված 83.1-ի 1-ին պարբերությունում հստակ նախատեսված է, որ մարդու իրավունքների պաշտպանը պետք է ընտրվի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդի կողմից, ինչպես որ ներկայումս ամրագրված է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում: Օմբուդսմենի անփոփոխելիության սկզբունքը նույնպես հստակ հիշատակված է նույն հոդվածի 3-րդ պարբերությունում:

ԶԼՄ-ների ազատությունը, անկախությունը եւ բազմակարծությունը

12. Սահմանադրական փոփոխությունների առաջարկվող նախագծի հոդված 83.2-ը այժմ սահմանում է Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) անդամների նշանակման կարգը:

13. Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամներն այլեւս ոչ թե նշանակվում են նախագահի կողմից՝ ըստ ընդհանուր

⁴¹ CDL(2000)102rev., CDL-INF(2001)017, CDL-AD(2004)044 եւ CDL-AD(2005)016.

բնույթ ունեցող հողված 55.5-ի, այլ նշանակվում են 6 տարով՝ հետեւյալ կարգով. անդամների կեսն ընտրվում է Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը՝ նշանակվում է Հանրապետության նախագահի կողմից:

14. Հանձնաժողովը ողջունում է այս լուծումը, որն, անկասկած, առաջընթաց քայլ է ՀՀ-ի անկախության ճանապարհին: Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում, որպեսզի թե՛ Ազգային ժողովը եւ թե՛ նախագահը պահպանեն թեկնածուների՝ թափանցիկ եւ արժանիքներով պայմանավորված ընտրության կարգը: Այն հատկապես մատնանշում է, որ ՀՀ-ի անդամները չպետք է լինեն քաղաքական կուսակցությունների ակտիվ գործիչներ:

15. Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նաեւ, որպեսզի հանրային հեռարձակող կազմակերպությունների ղեկավար վարչությունների անդամները լինեն նշանակովի՝ խուսափելու համար «ցանկացած քաղաքական կամ այլ միջամտության»⁴² վտանգից: Այս տեսակետից խնդրահարույց է նկատվել Հանրապետության նախագահի կողմից Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի (ՀՀՌԽ) բոլոր անդամների նշանակումը, եւ առանձնակի ընդգծվել է, որ, նախագահի այս իրավասության պահպանման դեպքում, նշանակման գործընթացը պետք է լինի թափանցիկ եւ տեղիք չտա քաղաքական շահարկումների:⁴³ Այս առիթով Հանձնաժողովը նշում է, որ, ըստ Հայաստանի իշխանությունների ներկայացրած տեղեկության, ՀՀ-ն բաժնետիրական ընկերություն է:

Սա նշանակում է, որ դրա ղեկավար վարչության անդամները «պետական ծառայողներ» չեն եւ չպիտի նշանակվեն Հանրապետության նախագահի կողմից՝ համաձայն Սահմանադրության հոդված 55-ի 5-րդ պարբերության: Անշուշտ նախընտրելի է, որ լինեին այլ տարբերակներ, օրինակ՝ նշանակումն արվեր քաղաքացիական հասարակության եւ մասնագիտական կառույցների կողմից:

16. Հանձնաժողովն ընդգծում է գործող եվրոպական չափանիշների համեմատ այս հարցի կարգավորման անհրաժեշտությունը: Ուստի այն առաջարկում է, որպեսզի տվյալ օրենսդրությունը համապատասխանեցնան ենթարկվի՝ եվրոպայի խորհրդի օգնությամբ:

Գ. Իշխանությունների տարանջատում

Նախագահի անձեռնմխելիությունը

17. Նախագահի անձեռնմխելիության առնչությամբ Հանձնաժողովը գոհունակությամբ նշում է, որ լրամշակված հոդված 56.1-ի 2-րդ պարբերությունում ամբողջական ձեւով ներկայացված են ինչպես նախագահի անձեռնմխելիությունը իր լիազորությունների ժամկետում եւ դրանից հետո՝ կապված իր կարգավիճակից բխող գործողությունների հետ, այնպես եւ նրա պատասխանատվության ենթարկվելը իր լիազորությունների ավարտից հետո՝ իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար:

⁴² Տե՛ս, մասնավորապես, եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեից (ՆԿ) անդամ պետություններին ուղղված թիվ R(96)10 հանձնարարականը՝ «Հեռարձակման հանրային ծառայության անկախության երաշխավորման մասին», որը ՆԿ-ն ընդունել է 1996 թ. սեպտեմբերի 11-ին: Տե՛ս նաեւ՝ Նախարարների կոմիտեից անդամ պետություններին ուղղված թիվ Rec(2000)23 հանձնարարականը՝ «Հեռարձակման բնագավառը կարգավորող մարմինների անկախության եւ գործառնությունների վերաբերյալ»՝ ընդունված ՆԿ-ի կողմից 2000 թ. դեկտեմբերի 20-ին:

⁴³ 2000 թ. հոկտեմբերին ընդունված, ապա 2001 թ. լրամշակված՝ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաեւ՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգի վերլուծություն եւ մեկնաբանություններ, որոնք օրենքով հաստատվել են 2002 թ. հունվարի 11-ին (ATCM (2002)016rev, 2002 թ. հունիսի 26) եւ իրականացվել եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների գլխավոր տնօրինության Լրատվամիջոցների բաժնի կողմից:

Աժ արտահերթ նիստերը եւ նստաշրջանները

18. Հանձնաժողովը գոհունակությամբ արձանագրում է, որ արտահերթ նստաշրջանների եւ նիստերի մասին լրամշակված հոդված 70-ում այժմ հստակ ամրագրված է, որ Ազգային ժողովի նախագահն է գումարում խորհրդարանական արտահերթ նստաշրջան կամ նիստ՝ Հանրապետության նախագահի կամ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի կամ կառավարության նախաձեռնությամբ:

Կառավարության կազմավորումը

19. Հանձնաժողովը ողջունում է կառավարության կազմավորման մասին լրամշակված դրույթները, որոնք այժմ երաշխիք են հանդիսանում Հայաստանի հիմնական սահմանադրական մարմինների միջեւ պարտադիր հավասարակշռության համար:

20. Նորացված հոդված 55-ի 4-րդ պարբերության համաձայն, Հանրապետության նախագահը վարչապետ է նշանակում այն անձին, որը վայելում է պատգամավորների մեծամասնության վստահությունը: Առաջին նախադասության երկրորդ մասի հետեւյալ ձեւակերպումները՝ «իսկ *եթե դա հնարավոր չէ*, ապա *առավել թվով* պատգամավորների վստահությունը վայելող անձին» հստակ չեն, եւ անհրաժեշտ է սահմանել ճշգրիտ ընթացակարգ, որին պետք է հետեւել:

21. Այժմ վարչապետին կարող է պաշտոնանկ անել միայն Ազգային ժողովը՝ իր անվստահություն քվեով: Մյուս կողմից, իբրեւ փոխգիշումային լուծում, նախագահն իրավունք ունի Ազգային ժողովին ներկայացնել կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ (նորացված հոդված 84, 2-րդ պարբերություն):

22. Հունիսի 23-24-ի հանդիպումներին քննարկվեց անվստահության քվե ներմուծելու հնարավորությունը: Հանձնաժողովի աշխատանքային խմբի անդամների կարծիքով նման մեխանիզմն ընդհանուր առմամբ նպաստում է կառավարության կայունությանը եւ որպես այդպիսին կարող է օգտակար լինել:

23. Ինչ վերաբերում է նախագահի՝ Ազգային ժողովը «տեխնիկական» պատճառներով լուծարելու իրավասությանը, ապա լրամշակված հոդված 74.1-ի 2-րդ պարբերությունն այժմ ճշմարտացիորեն ասահովում է Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի ներգրավումը:

24. Կառավարության կառուցվածքի վերաբերյալ՝ Հանձնաժողովը գոհունակությամբ նշում է, որ այն այժմ սահմանվում է օրենքով:

Արտաքին քաղաքականությունը

25. Նորացված հոդված 85-ն այժմ իրավացիորեն սահմանում է, որ Հայաստանի արտաքին քաղաքականությունը կառավարությունը «նշակում եւ իրականացնում է» Հանրապետության նախագահի հետ համատեղ: Ըստ էության, Հանրապետության նախագահի լիազորությունների մասին հոդված 55-ում պետք է ավելի հստակ նշված լինի, որ նա «նշակում եւ իրականացնում է արտաքին քաղաքականությունը կառավարության հետ համատեղ», այլ ոչ թե՝ «իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը»:

Կառավարության նիստերը

26. Հանձնաժողովը գոհունակությամբ նշում է, որ նորացված հոդված 86-ի 2-րդ պարբերությունը հստակ սահմանում է, որ նախագահը կարող է հրա-

վիրել եւ վարել կառավարության նիստ՝ միայն *կաղված արտաքին քաղաքականության, դաժնաբանության եւ ազգային անվտանգության հարցերի հետ*:

Դ. Դատական իշխանության անկախությունը

Գլխավոր դատախազը

27. Ըստ լրանշակված հոդված 55-ի 9-րդ պարբերության՝ գլխավոր դատախազի տեղակալները նշանակվում եւ ազատվում են գլխավոր դատախազի առաջարկությամբ:

Դատավորների նշանակումը եւ ազատումը: Արդարադատության խորհրդի կազմը

28. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեից անդամ պետություններին ուղղված՝ «Դատավորների անկախության, արդյունավետության եւ դերի մասին» թիվ R(94)12 հանձնարարականում ասվում է.

«Դատավորների ընտրության եւ ծառայողական առաջխաղացման վերաբերյալ որոշումներ կայացնող ատյանը պետք է անկախ լինի կառավարությունից եւ վարչակազմից: Այդ ատյանի անկախությունն ապահովելու համար օրենքները պետք երաշխավորեն, որ, ասեմք, նրա անդամներն ընտրվեն դատական մարմինների կողմից, եւ որ այդ ատյանն ինքը սահմանի իր ընթացակարգային կանոնները: Սակայն որտեղ որ սահմանադրական կամ իրավական դրույթները եւ ընդունված կարգը թույլ են տալիս, որպեսզի դատավորներին նշանակի կառավարությունը, այնտեղ պետք է լինեն երաշխիքներ՝ ապահովելու համար դատավորների նշանակման ընթացակարգերի թափանցիկությունը եւ նրանց գործնական անկախությունը, ինչպես եւ այն, որ կայացված որոշումների վրա չեն ազդի որեւէ այլ հանգամանքներ, բացի այնպիսիներից, որոնք առնչվում են վերը նշված օբյեկտիվ չափորոշիչներին»:

29. Դատավորների կանոնադրության Եվրոպական խարտիայում նշված է.

«Ամեն այնպիսի որոշման առիթով, որն ազդում է դատավորի ընտրության, հավաքագրման, նշանակման, ծառայողական առաջխաղացման կամ լիազորությունների դադարեցման վրա, կանոնադրությունը նախատեսում է միջամտություն գործադիր եւ օրենսդրական իշխանություններից անկախ այնպիսի մի ատյանի կողմից, որի կազմի առնվազն կեսը դատավորներ են՝ ընտրված իրենց գործընկերների կողմից, ըստ դատական իշխանության ամենալայն ներկայացուցչականությունը երաշխավորող մեթոդների»:

30. Համաձայն Եվրոպական խարտիայի «Բացատրական հուշագրի», անկախ ատյանի «միջամտություն» եզրը նշանակում է՝ կարծիք, եզրակացություն, նկատառում կամ առաջարկ, ինչպես նաեւ իրական որոշում:⁴⁴

31. Սահմանադրության առաջարկվող նախագծի հոդված 94.1-ում արդարադատության խորհրդի կազմը սահմանվում է հետեւյալ կերպ. «Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով ընտրված ինը դատավորներ (չպետք է ասվի «մինչեւ») ինը դատավոր, սակայն, ըստ Հայաստանի իշխանությունների, սա թարգմանական սխալ է), Հանրապետության Նախագահի եւ Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ»:

⁴⁴ Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի (CCJԵ/ԵԴ) «Դատական իշխանության անկախության եւ անփոփոխելիության չափանիշների մասին» թիվ 1 (2001) եզրակացության 39-րդ պարբերությունը:

32. Ըստ նորացված հոդված 94.1-ի 3-րդ պարբերության՝ արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճարել դատարանի նախագահը՝ *առանց վճարկության իրավունքի*:

33. Հանձնաժողովի կարծիքով՝ արդարադատության խորհրդի կազմը համապատասխանում է վերը հիշատակված եվրոպական չափանիշներին:

34. Հունիսի 23-24-ին տեղի ունեցած հանդիպումների ժամանակ ձեռք է բերվել

համաձայնություն այն հարցի շուրջ, որ Հանրապետության նախագահը որեւէ մեկին կարող է նշանակել կամ ազատել միայն արդարադատության խորհրդի համապատասխան առաջարկությամբ կամ եզրակացությամբ: Այս կարելու սկզբունքն անհրաժեշտ է ավելի հստակ ամրագրել հոդված 55-ի 11-րդ պարբերության մեջ:

35. «Արդարադատության խորհրդի առաջարկությամբ կամ եզրակացությամբ» արտահայտությունը պետք է աներկբայորեն վերաբերի ցանկացած այնպիսի որոշման, որն առնչվում է դատավորի նշանակմանը, ծառայողական առաջխաղացմանը կամ նրա լիազորությունների դադարեցմանը: «*Կարող է դադարեցնել նրանց լիազորությունները*» արտահայտությունը պիտի փոխարինել «պետք է դադարեցնի նրանց լիազորությունները» արտահայտությամբ: 11-րդ պարբերության մեջ լրացուցիչ կետով պետք է հստակ ամրագրվի, որ նախագահը արդարադատության խորհրդի առաջարկությամբ կամ եզրակացությամբ «պետք է առաջ քաշի ծառայողական առաջխաղացման թեկնածուների ցանկում ընդգրկված դատավորներին»:

36. Հանձնաժողովն ընդգծում է այս հարցը գործող եվրոպական չափանիշների համեմատ կարգավորելու անհրաժեշտությունը, ուստի եւ առաջարկում է, որպեսզի հոդված 55-ի 11-րդ պարբերության վերաշարադրումից բացի, Հայաստանի իշխանությունները եվրոպայի խորհրդի աջակցությամբ մշակեն կամ վերանայեն նաեւ համապատասխան օրենսդրությունը:

Ե. Տեղական ինքնակառավարումը

37. Տեղական ինքնակառավարմանը վերաբերող 7-րդ գլխում կատարված փոփոխությունները համապատասխանում են Հանձնաժողովի նախորդ եզրակացություններում նշված նկատառումներին: Այսպես, հստակ ամրագրված է այն դրույթը, որ Երեւանը համայնք է, հետեւաբար՝ տեղական ինքնակառավարման միավոր: Նորացված հոդված 108-ում սահմանված է այն սկզբունքը, որ Երեւանի քաղաքապետը պետք է ընտրվի, թեպետ օրենքը կարող է նախատեսել *անուղղակի ընտրություններ*, որոնք «Տեղական ինքնակառավարման մասին» եվրոպական խարտիայի տեսակետից օրինական են: Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինների ձեւավորման եւ դրանց գործունեության առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Եթե իբրեւ լուծում նախատեսվի *ավագանու* կողմից քաղաքապետի անուղղակի ընտրություն, ապա տեղին կլինի այդ մասին հիշատակել հոդված 108-ում:

Զ. Սահմանադրության փոփոխումը

38. Ըստ լրանշակված հոդված 113-ի՝ սահմանադրական փոփոխությունների «հանրաքվեի դրված նախագիծը համարվում է ընդունված», եթե կողմ է քվեարկել ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների առնվազն 1/4-ը (նախկին 1/3-ի փոխարեն): Հանձնաժողովի կարծիքով նման պարզեցումը ողջունելի է:

Է. Անցումային Դրույթներ

39. Հանձնաժողովը կարծում է, որ սահմանադրական նոր դրույթները պետք է հնարավորինս շուտ մտնեն ուժի մեջ: Ակնհայտ է, որ ընտրովի մարմինների լիազորություններին վերաբերող դրույթները (հոդված 63-ի 2-րդ պարբ. եւ հոդված 107-ի 1-ին պարբ.) պետք է սպասեն մինչեւ որ սպառովի ներկայիս մարմինների լիազորությունների ժամկետը:

III օ 1/2 Ի 3 օձ՝ԱնձԿ»՞

40. Սահմանադրության փոփոխությունների լրամշակված նախագիծը ակնհայտ առաջընթաց է Վենետիկի հանձնաժողովի կողմից նախկինում դիտարկված նախագծերի համեմատությամբ: Հանձնաժողովի կարծիքով՝ սույն տեքստի հիման վրա հաջողությամբ անցկացված սահմանադրական հանրաքվեն կարող է լավ հիմք դառնալ՝ ապահովելու մարդու իրավունքների հարգման, ժողովրդավարության եւ օրենքի գերակայության տեսակետից Հայաստանի սահմանադրության համապատասխանեցումը եվրոպական չափանիշներին եւ ճանապարհի հարթել Եվրոպային հետագա ինտեգրման համար:

Հանձնաժողովը գնահատում է Հայաստանի իշխանությունների՝ այդ նպատակին ուղղված ջանքերն ու բարի կամքը:

41. Անշուշտ կարելու է, որպեսզի վերջնական տեքստի քննարկումն ընթանա բաց եւ թափանցիկ պայմաններում, ընդդիմադիր ուժերի եւ Հայաստանի քաղաքացիական հասարակության ներգրավմամբ: Անհրաժեշտ է գտնել հնարավորինս լայն քաղաքական կոնսենսուս:

42. Հիմնական մարտահրավերներից հաջորդը կլինի հանրաքվեի քարոզարշավի պատշաճ կազմակերպումը, որը կհանգեցնի Հայաստանի նոր Սահմանադրության ընդունմանը: Հանձնաժողովը քաջալերում է Հայաստանի իշխանություններին՝ անել առավելագույնը՝ 2005թ. նոյեմբեր ամսին սահմանադրական փոփոխությունների հաջողությունն ապահովելու համար: Բարեփոխումները հայ ժողովրդին պետք է ներկայացվեն պատշաճ ժամանակին ու կարգով: Դրա համար անչափ կարելու է, որպեսզի հանրաքվեի քարոզարշավն արժանանա ՁԼՄ-ների անկողմնակալ, համարժեք եւ լայն լուսաբանմանը:

43. Հանձնաժողովը ցանկանում է ընդգծել, որ սահմանադրական բարեփոխումների այս գործընթացի հաջողությունը կախված է Հայաստանի քաղաքական կառույցներից եւ արտացոլում է դրանց հասունության աստիճանը: Ոչ միայն մեծամասնությունը, այլեւ ընդդիմությունը պետք է ապացուցի փոխզիջումների գնալու կարողությունը՝ հանուն այնպիսի մի գործուն քաղաքական մթնոլորտի ձեւավորման, որի դեպքում է միայն հնարավոր ժողովրդավարության կայացումը Հայաստանում:

44. Անշուշտ, լավ Սահմանադրությունը ժողովրդավարության տանող առաջին վճռորոշ քայլն է, բայց եւ բավարար չէ: Հայաստանի իշխանությունները պետք է ստեղծեն քաղաքական ու սոցիալական այնպիսի միջավայր, որը նախադրյալներ կապահովի կառավարման նորաստեղծ համակարգի արդյունավետ իրականացման համար: Եվ այդ կարելու գործում Հանձնաժողովը պատրաստ է սատարել նրանց:

Թ Մ ռ Է Զ ՍԵՄԵՍՆԵՐ ԸՆԹԱՑՈՒՄԸ ԵՎ ԸՆԹԱՑՈՒՄԸ ԸՆԹԱՑՈՒՄԸ
ՕՆԻՆՈՒՄԸ ԸՆԹԱՑՈՒՄԸ ԸՆԹԱՑՈՒՄԸ ԸՆԹԱՑՈՒՄԸ ԸՆԹԱՑՈՒՄԸ
27-Շ Թ ՍԵՄԵՍՆԵՐ ԸՆԹԱՑՈՒՄԸ ԸՆԹԱՑՈՒՄԸ ԸՆԹԱՑՈՒՄԸ
Թ Բ ԸՆԹԱՑՈՒՄԸ ԸՆԹԱՑՈՒՄԸ

I. Թ ՍԵՄԵՍՆԵՐ ԸՆԹԱՑՈՒՄԸ ԸՆԹԱՑՈՒՄԸ ԸՆԹԱՑՈՒՄԸ
ԸՆԹԱՑՈՒՄԸ ԸՆԹԱՑՈՒՄԸ

«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը եւ այլ օրենքներ ՁԼՍ-ների իրավունքներին եւ պարտականություններին նվիրված դրույթներում, Երեւանի մամուլի ակումբի կատարած ուսումնասիրության համաձայն, հանրաքվեի ընթացքում զանգվածային լրատվության միջոցներով տարբեր տեսակետների քարոզչություն իրականացնելու համար հավասար եթերաժամանակ եւ թերթային տարածք տրամադրելու բավարար պայմաններ չեն ապահովվում:

«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում միայն նշվում է (հոդված 20)՝ «Պետությունը երաշխավորում է հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ քարոզչության ազատ իրականացումը», ապա եւ՝ «Քարոզչությունը կարող է կատարվել զանգվածային լրատվության միջոցներով, հրատարակային քարոզչական միջոցառումների ձեւով (ժողովներ, հանդիպումներ, հրատարակային ֆննարկումներ, բանավեճեր, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր), տրամադրված հրատարակելու, ծայրագրված եւ նկարահանված նյութեր տարածելու միջոցով»: Սակայն այս դրույթների իրականացման մեխանիզմներ օրենքը, ի տարբերություն ՀՀ Ընտրական օրենսգրքի, չի նախատեսում:

Վճարովի քարոզչությանն անդրադառնում է միայն «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը, որի վերջին պարբերությունն ասում է. «Հանրաքվեների և ընտրությունների քարոզչության ժամանակաշրջանում հեռուստառադիոընկերությունները հրատարակվող հայտերն են վճարովի ֆաղափական գովազդի ու քարոզչական այլ հաղորդումների՝ իրենց եթերաժամի արժեքը: Ցանկացողները վճարովի եթերաժամից օգտվում են լրատվության կարգով եւ հավասար լրատվություններով»:

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի հանրաքվեի քարոզչության ընթացքը ցույց տվեց, որ Հայաստանի հեռուստառադիոընկերությունները չեն կատարել օրենքի այս պահանջը, հանրաքվեի դրված հարցի քարոզչության համար վճարովի եթերաժամի սակագներ չեն հայտարարել: ԵՄԱ-ի դիտարկած հեռուստաընկերություններն ընդհանրապես վճարովի եթերաժամ չեն տրամադրել:

«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետում նշվում է. «Քարոզչություն կատարելու իրավունք ունեցող անձինք կարող են ստեղծել ֆա-

րոզչության հիմնադրամ՝ ֆարոզչությունը ֆինանսավորելու նպատակով»: Նույն հոդվածի 2-րդ կետում նշվում է՝ «*Հիմնադրամի միջոցները հավաքվում են ֆարոզչության իրավունք ունեցող անձի սկսած գրավոր դիմումի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում բացված հատուկ հաշվում»:* Իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ «*Արգելվում է ֆարոզչության ընթացքում հիմնադրամից դուրս միջոցներ ծախսելը»:*

Հատուկ հաշիվներում գումարների քիչ կուտակումն ու ծախսումը նաեւ նրանով է բացատրվում, որ լրատվամիջոցները վճարովի քարոզչության հնարավորություն չէին տալիս:

II. ԱՍ, Ք ԱձԾ Ի Ծ Ի ձԾ Ա ԱձՍՍ Ծ

Հայաստանի ՁԼՍ-ներում ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի լուսաբանման մոնիտորինգը Երեւանի մամուլի ակումբն անց է կացրել 2005 թվականի նոյեմբերի 5-ից 25-ը, Բաց հասարակության ինստիտուտի մարդու իրավունքների եւ կառավարման դրամաշնորհների ծրագրի օժանդակությամբ իրականացվող «Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների մոնիտորինգ» ԵՄԱ-ի նախագծի շրջանակներում:

Սոնհսորհնգի խումբը.

ծրագրի տնօրեն՝ **Բորիս Նավասարդյան,**
համակարգող - խմբագիր՝ **Էլինա Պողոսբեկյան,**
խորհրդականներ՝ **Վարդան Պողոսյան, Մեսրոպ Հարությունյան,**
դիտարկողներ՝ **Արմինե Սուքիասյան, Սեդա Շիգանյան, Արմեն Նիկողոսյան, Սաթենիկ Դաբադյան:**

Սոնհսորհնգի նպատակն էր՝ քանակական տվյալների ստացման եւ վերլուծության միջոցով պարզել.

- ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի՝ 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի նկատմամբ Հայաստանի ՁԼՍ-ների ուշադրության աստիճանը,

- հասարակությանը նոյեմբերի 27-ի հանրաքվեի, սահմանադրական բարեփոխումների գործընթացի եւ բովանդակության մասին աղեկվատ տեղեկություններ մատուցելու աստիճանը:

Սոնհսորհնգն ընդգրկել է.

4 համազգային հեռուստաընկերություն. Հայաստանի հանրային հեռուստատեսությունը (Հ1), ԱԼՍ-ը, «Արմենիան», Հայկական երկրորդ հեռուստաալիքը (Հ2), որոնք հեռարձակվում են Հայաստանի ողջ տարածքում կամ դրա նշանակալի մասում:

7 համազգային թերթ. պաշտոնական՝ «Հայաստանի Հանրապետությունը» (օրաթերթ) եւ «Ռեսպուբլիկա Արմենիան», ինչպես նաեւ՝ «Ազգ», «Առավոտ», «Հայկական ժամանակ», «Հայոց աշխարհ» օրաթերթերն ու ռուսալեզու «Գոլոս Արմենիին»:

(Յեռագոհված ՁԼՄ-ների ցանկն ու համառոտ բնութագրերը՝ ստորև):

Մոնիտորինգի առարկա էին թերթային բոլոր այն հրապարակումները, վերոհիշյալ հեռուստաընկերությունների հիմնական լրատվական թողարկումները, այն լրատվական-վերլուծական ծրագրերը եւ մեկնաբանական հաղորդումները, որոնցում առկա էր 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի, Սահմանադրության փոփոխությունների նախագծի մասին ցանկացած հիշատակում:

III. ՔԱՆԱԷՆՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՈՒՄԸ

Մոնիտորինգի մեթոդալոգիան տարբեր էր՝ կախված լրատվամիջոցների տեսակից:

1.ՅԵՐՈՒՄՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԼՈԳԻԱՆ

Յեռուստաընկերությունների մոնիտորինգի մեթոդալոգիան, իր հերթին, տարբեր տեսակի ծրագրերի/հաղորդումների (լրատվական/լրատվական-վերլուծական, մեկնաբանական) համար տարբեր էր:

Ա. ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Լրատվական եւ լրատվական - վերլուծական ծրագրերի հեռագոհության մեթոդալոգիան ներառում էր.

- Յեռուստաընկերության յուրաքանչյուր լրատվական ծրագրի հիմնական թողարկման, յուրաքանչյուր լրատվական-վերլուծական ծրագրի ընդհանուր ժամանակային տեւողության հաշվարկը (վայրկյաններով), բացառությամբ եղանակի տեսության, քաղաքական եւ առեւտրային գովազդի, այդ թվում՝ հայտարարությունների, հեռուստածրագրերի ծանուցման եւ այլն:

- Յեռուստաընկերության յուրաքանչյուր լրատվական ծրագրի հիմնական թողարկման, յուրաքանչյուր լրատվական-վերլուծական ծրագրի հեռուստանյութերի ընդհանուր քանակի հաշվարկը (բացարձակ թվերով)՝ բացառությամբ եղանակի տեսության, քաղաքական եւ առեւտրային գովազդի, այդ թվում՝ հայտարարությունների, հեռուստածրագրերի ծանուցման եւ այլն:

Յեռուստանյութ էր համարվում.

Եթերի թեմատիկորեն, կառուցվածքով եւ ձեւավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝

ա) լրատվական ծրագրի առանձին սյուժեն,

բ) հաղորդավարական տեքստով մատուցված առանձին տեղեկատվությունը,

գ) հաղորդման թեմատիկորեն առանձնացված մասը (բաժինը, սյուժեն), որը

վերաբերում էր հաղորդման մյուս մասերից տարբեր թեմայի կամ խնդրի, **դ)** հեռուստահարցազրույցում թեմատիկորեն առանձնացված հարցը եւ դրա պատասխանը, որը վերաբերում էր մյուս հարցերից ու պատասխաններից տարբեր թեմայի կամ խնդրի,

ե) հաղորդումը կամ հարցազրույցը, որում շոշափվում էր մեկ թեմա կամ խնդիր, չէր մասնատվում եւ դիտարկվում էր իբրեւ մեկ նյութ,

զ) սյուժեների ծանուցումները դիտարկվում էին իբրեւ այն նյութի մաս, որին վերաբերում էին,

է) սյուժեին (ռեպորտաժին եւ այլն) նախորդող վերնագիրը, ենթավերնագիրը, լիդը, հաղորդավարական տեքստը, դիտարկվում էին իբրեւ այդ սյուժեի (ռեպորտաժի եւ այլն) մաս:

- Հեռուստաընկերության յուրաքանչյուր լրատվական ծրագրի հիմնական թողարկման, լրատվական-վերլուծական ծրագրի հեռուստանյութերում 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի, Սահմանադրության փոփոխությունների նախագծի մասին հիշատակումների ընդհանուր քանակի (բացարձակ թվերով) հաշվարկը: Յուրաքանչյուր մեկ հեռուստանյութում արձանագրվում էր մոնիտորինգի թեմայի միայն մեկ հիշատակում:

- Հեռուստաընկերության յուրաքանչյուր լրատվական ծրագրի հիմնական թողարկման, լրատվական-վերլուծական ծրագրի հեռուստանյութերում 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի, Սահմանադրության փոփոխությունների նախագծի մասին հիշատակումների ընդհանուր ժամանակային տեւողության հաշվարկը (վայրկյաններով):

- Հեռուստաընկերության յուրաքանչյուր լրատվական ծրագրի հիմնական թողարկման, լրատվական-վերլուծական ծրագրի հեռուստանյութերում 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի, Սահմանադրության փոփոխությունների նախագծի մասին դրական, բացասական եւ չեզոք հիշատակումների ընդհանուր քանակի (բացարձակ թվերով) հաշվարկը: Յուրաքանչյուր մեկ հեռուստանյութում արձանագրվում էր մոնիտորինգի թեմայի հիշատակման միայն մեկ նշան:

Նշանային (դրական, բացասական) հիշատակումներ էին համարվում նրանք, որոնք լսարանի վրա քննարկվող թեմայի վերաբերյալ միանշանակ դրական կամ բացասական (այսինքն՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծին կողմ կամ դեմ) տպավորություն էին թողնում: Այն դեպքում, երբ նման միանշանակություն չկար, հիշատակումն արձանագրվում էր իբրեւ չեզոք: Դիտարկողի բոլոր կասկածները նույնպես մեկնաբանվում էին հոգուտ հիշատակումը չեզոք արձանագրելու (*այս սկզբունքը գործում էր նաեւ մեկնաբանական հաղորդումները եւ թերթային հրատարակումներն ուսումնասիրելիս*):

- Հեռուստաընկերության յուրաքանչյուր լրատվական ծրագրի հիմնական թողարկման, լրատվական-վերլուծական ծրագրի յուրաքանչյուր հեռուստանյութում սահմանադրական բարեփոխումներին անմիջականորեն վերաբերող թեմաների արձանագրում (բացարձակ թվերով):

Սահմանադրական բարեփոխումներին առնչվող թեմաների ցանկը.

1. Մարդու եւ քաղաքացու իրավունքներ ու ազատություններ
2. ՀՀ նախագահի լիազորություններ
3. ՀՀ Ազգային ժողովի լիազորություններ
4. ՀՀ կառավարության իրավասություններ եւ լիազորություններ
5. ՀՀ դատական իշխանության անկախություն
6. ՀՀ դատախազության կարգավիճակ եւ իրավասություններ
7. Տեղական ինքնակառավարում
8. Համայնքի ղեկավարի պաշտոնանկության խնդիրը
9. Երեւանի կարգավիճակը
10. Տեղեկատվության եւ խոսքի ազատության բնագավառ
11. Երկքաղաքացիություն
12. Ընտրական իրավունք եւ հանրաքվեներ
13. Սահմանադրական կարգի հիմունքներ եւ այլ ընդհանուր հարցեր
14. Նոյեմբերի 27-ի հանրաքվեի կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող հարցեր

Վերոհիշյալ թեմաները որոշվել են փորձագիտական մակարդակով: Առանձնացվել են 2005 թվականի նոյեմբերի 27-ին հանրաքվեի դրված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 12 հիմնական թեմատիկ բաժինները (1-12 կետեր): Դրանց ավելացվել են եւս երկուսը (13 եւ 14): Ընդսնին, 13-րդ կետում («Սահմանադրական կարգի հիմունքները եւ այլ ընդհանուր հարցեր») արձանագրվում էին 1-12 կետերում չընդգրկված, սակայն սահմանադրական բարեփոխումներին առնչվող թեմաները, իսկ 14-րդ կետում հանրաքվեի կազմակերպմանն ու նախապատրաստությանն առնչվող ընթացակարգային հարցերը (*թվարկված թեմաներն արձանագրվում էին նաեւ մեկնաբանական հաղորդումները եւ թերթային հրատարակումներն ուսումնասիրելիս*):

Բ. ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Մեկնաբանական հաղորդումների հեռազոտության մեթոդալոգիան ներառում էր.

- Հաղորդման հիմնական մասնակիցների արձանագրում՝ նշելով յուրաքանչյուրի անունը, ազգանունը, պաշտոնը կամ զբաղմունքը:

- Հաղորդման մեջ մոնիտորինգի թեմայի առկայության ձեւի որոշումը (բացարձակ թվերով).

1. ամբողջությամբ մոնիտորինգի թեմային վերաբերող հաղորդում,
2. մասնակիորեն մոնիտորինգի թեմային վերաբերող կամ դրա հիշատակում պարունակող հաղորդում:

- Հաղորդման մեջ մոնիտորինգի թեմայի նկատմամբ վերաբերմունքի բնույթի՝ դրական, բացասական, չեզոք, որոշումը (բացարձակ թվերով): Յուրաքանչյուր հաղորդման մեջ արձանագրվում էր մոնիտորինգի թեմայի հիշատակման միայն մեկ նշան:

- Յուրաքանչյուր հաղորդման մեջ սահմանադրական բարեփոխումներին անմիջականորեն վերաբերող թեմաների (*դրանց ցանկը սես վերելում*) արձանագրում (բացարձակ թվերով):

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Եթեր դուրս գալու պարբերականությունը - օրական 19 ժամ:

Հ1-ում հետազոտվել են «**Հայլուր**» լրատվական եւ կիրակնօրյա «**360 աստիճան**» լրատվական-վերլուծական ծրագրերը, մեկնաբանական «**Խաչմերուկ**» եւ «**5-րդ անիվ**» հաղորդումները:

«**Հայլուր**» լրատվական ծրագիրը եթեր է հեռարձակվել շաբաթական 6 օր, երկուշաբթից - ուրբաթ օրական 6 անգամ, շաբաթ օրերը՝ 5 անգամ: Մոնիտորինգի են ենթարկվել «Հայլուրի» ժամը 21:00-ի հիմնական թողարկումները, բացառությամբ նոյեմբերի 24-ի թողարկումը, որը եթեր է հեռարձակվել ժամը 19:00-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է 18 թողարկում:

«**360 աստիճան**» լրատվական-վերլուծական ծրագիրը եթեր է հեռարձակվել շաբաթական մեկ օր (կիրակի), ժամը 20:00-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «360 աստիճանի» 3 թողարկում:

«**Խաչմերուկ**» մեկնաբանական հաղորդումը եթեր է հեռարձակվել շաբաթական 3 օր (երեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ), ժամը 18:50-ին, բացառությամբ նոյեմբերի 24-ի թողարկման, որը հեռարձակվել է 18:20-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «Խաչմերուկի» 9 թողարկում:

«**5-րդ անիվ**» մեկնաբանական հաղորդումը եթեր է հեռարձակվել շաբաթական 1 օր (երկուշաբթի), ժամը 22:00-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «5-րդ անիվի» 3 թողարկում:



ԱԼՄ - մասնավոր հեռուստառադիոընկերություն: Հիմնադրվել է 2000 թվականին: Հիմնադիրը - «ԱԼՄ հոլդինգ» ընկերության նախագահ Տիգրան Կարապետյան: Եթեր դուրս գալու պարբերականությունը - օրական 21 ժամ:

ԱԼՄ-ում հետազոտվել է «**Օրեցօր**» հիմնական լրատվական ծրագիրը եւ նրա կիրակնօրյա լրատվական-վերլուծական թողարկումը, մեկնաբանական «**Հարցի արժեքը**» եւ «**Դիրքորոշում**» հաղորդումները:

«**Օրեցօր**» լրատվական ծրագիրը եթեր է հեռարձակվել շաբաթական 7 օր, երկուշաբթից - շաբաթ օրական 4 անգամ, կիրակի օրերը՝ 1 անգամ: Մոնիտորինգի են ենթարկվել «Օրեցօրի» ժամը 20:00-ի հիմնական եւ կիրակի օրերին՝ ժամը 17:00-ի (նոյեմբերի 6-ին) եւ 14:00-ի (նոյեմբերի 20-ին) թողարկումները: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է 20 թողարկում:

«**Հարցի արժեքը**» մեկնաբանական հաղորդումը եթեր է հեռարձակվել շաբաթական 2 օր (երեքշաբթի եւ շաբաթ), ժամը 21:30-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «Հարցի արժեքի» 5 թողարկում:

«**Դիրքորոշում**» մեկնաբանական հաղորդումը եթեր է հեռարձակվել շաբաթական 1 օր (հինգշաբթի), ժամը 21:30-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «Դիրքորոշման» 3 թողարկում:



«ԱՐՄԵՆԻԱ» - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998 թվականին: Հիմնադիրները - «Գաֆեսչյան» ընտանեկան ֆոնդ եւ «Սարգսյանների ընտանիք» ֆոնդ: Եթեր դուրս գալու պարբերականությունը - օրական 24 ժամ:

«Արմենիա»-ում հետազոտվել է **«Ժամը»** հիմնական լրատվական ծրագիրը եւ մեկնաբանական **«Իրականում»** հաղորդումը:

«Ժամը» լրատվական ծրագիրը եթեր է հեռարձակվել շաբաթական 7 օր, երկուշաբթից - շաբաթ օրական 4 անգամ, կիրակի օրերը՝ 1 անգամ: Մոնիտորինգի են ենթարկվել «Ժամը» ծրագրի ժամը 20:30-ի հիմնական թողարկումները: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է 21 թողարկում:

«Իրականում» մեկնաբանական հաղորդումը եթեր է հեռարձակվել շաբաթական 5 օր (երկուշաբթից-ուրբաթ), ժամը 19:00-ին, բացառությամբ նոյեմբերի 7-ի եւ 8-ի թողարկումների, որոնք հեռարձակվել են ժամը 22:30-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «Իրականումի» 15 թողարկում:



ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՄՏԱԱԼԻՔ (ՀԶ) - մասնավոր հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998 թվականին: Հիմնադիրը - մասնավոր անձինք: Եթեր դուրս գալու պարբերականությունը - օրական 18 ժամ:

ՀԶ-ում հետազոտվել են **«Լրաբեր»** լրատվական եւ **«Կիրակնօրյա լրաբեր»** լրատվական-վերլուծական ծրագրերը, մեկնաբանական **«Չորրորդ ստուղի»** եւ **«Խոսքի իրավունք»** հաղորդումները:

«Լրաբեր» լրատվական ծրագիրը եթեր է հեռարձակվել շաբաթական 6 օր, երկուշաբթի՝ օրական 3 անգամ, երեքշաբթից - շաբաթ՝ օրական 5 անգամ: Մոնիտորինգի են ենթարկվել «Լրաբերի» ժամը 23:00-ի հիմնական թողարկումները, բացառությամբ նոյեմբերի 25-ի թողարկումը, որը եթեր է հեռարձակվել ժամը 20:00-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է 18 թողարկում:

«Կիրակնօրյա լրաբեր» լրատվական-վերլուծական ծրագիրը եթեր է հեռարձակվել շաբաթական մեկ օր (կիրակի), ժամը 21:00-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «Կիրակնօրյա լրաբերի» 3 թողարկում:

«Չորրորդ ստուղի» մեկնաբանական հաղորդումը եթեր է հեռարձակվել «Լրաբեր» լրատվական ծրագրի շրջանակներում: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «Չորրորդ ստուղի» 9 թողարկում:

«Խոսքի իրավունք» մեկնաբանական հաղորդումը եթեր է հեռարձակվել շաբաթական 1 օր (կիրակի), ժամը 21:30-ին, բացի այդ նոյեմբերի 12-ին եղել է հատուկ թողարկում՝ ժամը 20:30-ին: Մոնիտորինգի ընթացքում հետազոտվել է «Խոսքի իրավունքի» 4 թողարկում:



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթական հինգ անգամ): Հիմնադրվել է 1990 թվականին: Հիմնադիրը - «Հանրապետություն» ՓԲԸ: Հիմնական ծավալը - 4 տպագրական մամուլ (A2 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը - 6000 օրինակ: Հետազոտված ժամանակաշրջանում լույս է տեսել 15 համար, որից 1-ը 6 տպագրական մամուլ (A2 չափսի 12 էջ) ծավալով:



«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ» - ռուսերեն թերթ (լույս է տեսնում շաբաթական երկու անգամ): Հիմնադրվել է 1990 թվականին: Հիմնադիր - «Հայաստանի Հանրապետություն - Ռեսպուբլիկա Արմենիա» ՓԲԸ: Հիմնական ծավալը - 2 տպագրական մամուլ (A3 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը - 2000 օրինակ: Հետազոտված ժամանակաշրջանում լույս է տեսել 6 համար, որից 1-ը 4 տպագրական մամուլ (A3 չափսի 16 էջ) ծավալով:



«ԱԶԳ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթական հինգ անգամ): Հիմնադրվել է 1991 թվականին: Հիմնադիրը - «Ազգ» օրաթերթ» ՍՊԸ: Հիմնական ծավալը - 2 տպագրական մամուլ (A3 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը - 3000 օրինակ: Հետազոտված ժամանակաշրջանում լույս է տեսել 15 համար, որոնցից 8-ը ունեցել են «Ազգ-ներդիր» հավելված, որը մոնիտորինգի առարկա չի հանդիսացել:



«ԱՌԱՎՈՏ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթական հինգ անգամ): Հիմնադրվել է 1994 թվականին: Հիմնադիրը - «Առավոտ» օրաթերթ» ՍՊԸ: Հիմնական ծավալը - 2 տպագրական մամուլ (A3 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը - 4100 օրինակ: Հետազոտված ժամանակաշրջանում լույս է տեսել 15 համար, որից 4-ը 4 տպագրական մամուլ (A3 չափսի 16 էջ), իսկ 1-ը՝ 3 տպագրական մամուլ (A3 չափսի 12 էջ) ծավալով:



«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթական հինգ անգամ): Հիմնադրվել է 1997 թվականին: Հիմնադիր - «Դարեսկիզբ» ՍՊԸ: Հիմնական ծավալը - 2 տպագրական մամուլ (A3 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը - 4840 օրինակ: Հետազոտված ժամանակաշրջանում լույս է տեսել 15 համար, որից 4-ը 3 տպագրական մամուլ (A3 չափսի 12 էջ) ծավալով:



«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ» - օրաթերթ (լույս է տեսնում շաբաթական հինգ անգամ): Հիմնադրվել է 1997 թվականին: Հիմնադիրը - «Հայոց աշխարհ» օրաթերթի խմբագրություն» ՍՊԸ: Հիմնական ծավալը - 2 տպագրական մամուլ (A3 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը - 3500 օրինակ: Հետազոտ-

ված ժամանակաշրջանում լույս է տեսել 15 համար, որից 2-ը 4 տպագրական մամուլ (A3 չափսի 16 էջ), իսկ 1-ը՝ 3 տպագրական մամուլ (A3 չափսի 12 էջ) ծավալով:



«ԳՈՂՈՍ ԱՐՄԵՆԻԻ» - ռուսերեն թերթ (լույս է տեսնում շաբաթական երեք անգամ): Հիմնադրվել է 1991 թվականին: Հիմնադիրը - «Գոլոս» ՍՊԸ: Հիմնական ծավալը - 4 տպագրական մամուլ (A2 չափսի 8 էջ): Հայտարարված տպաքանակը - 3500 օրինակ: Հետազոտված ժամանակաշրջանում լույս է տեսել 9 համար, որոնցից 3-ը ունեցել են «Մոնիտոր.Ru» հավելված, որը դիտարկման առարկա չի հանդիսացել:

V. Ծ ԵÀŒÊ ²² ÈÆÛ° ðÆ° Ì Â° ðÂ° ðÆŒàÛÆ àðÆÛŒÆ Æ²Î ² Û² òØ Ûî° Ê ÛàÈŒÆ Û

Համեմատելի նյութ ունենալու համար, յուրաքանչյուր հեռուստաալիքի լրատվական, լրատվական-վերլուծական ծրագրերի, մեկնաբանական հաղորդումների, ինչպես նաև յուրաքանչյուր թերթի հրապարակումների մոնիտորինգի արդյունքների տվյալներն ընդհանրացվում էին ամեն շաբաթ եւ մոնիտորինգի ողջ ժամանակաշրջանում:

VI. Ծ ԵÀŒÊ ²² ÈÆÛ° ðÆ° Ì Â° ðÂ° ðÆŒàÛÆ àðÆÛŒÆ ² ð, ÛàŒÛÛ° ðÀ

Ստորեւ ներկայացվում են մոնիտորինգի ողջ ժամանակաշրջանի (2005 թվականի նոյեմբերի 5-ից 25-ը) ընդհանրացված տվյալները՝ ըստ հետազոտված յուրաքանչյուր հեռարձակվող եւ տպագիր ՁԼՄ-ի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ (Հ1)

Մոնիտորինգի ամբողջ ժամանակաշրջանում «Հայլուր» լրատվական ծրագրի հետազոտված հիմնական թողարկումների ընդհանուր տեւողությունը կազմել է 48985 վայրկյան, որից Սահմանադրության փոփոխություններին, հանրաքվեին եւ դրանց առնչվող այլ հարցերին հատկացվել է 11459 վրկ. (կամ՝ 23,4%): Ընդամին, «Հայլուրի» 497 հեռուստանյութերից 98-ում (19,7%) շոշափվել է մոնիտորինգի թեման: Սրան նվիրված տեղեկատվական նյութերը մեծ մասամբ ունեցել են կամ չեզոք, կամ դրական բնույթ՝ համապատասխանաբար 49 եւ 41 հիշատակում: Դրական լուսաբանումը հիմնականում բաժին էր ընկնում սահմանադրական փոփոխությունների ընդունման կողմնակիցների («Այո» շտաբ) քարոզարշավի ռեպորտաժներին: Դրանցում հնչեցվում էին այդ անձանց դիրքորոշումներն ինչպես Սահմանադրությանը, հանրաքվեի կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող մի շարք ընդհանուր հարցերի, այնպես էլ նախագծի՝ երկքաղաքացիությանը, ՀՀ նախագահի եւ խորհրդարանի լիազորություններին, քաղաքացիների իրավունքներին եւ ազատություններին առնչվող կոնկրետ դրույթների վերաբերյալ: Բացասական բնույթ ունեին 8 լրատվական նյութեր, որոնցում փոփոխվող Սահմանադրության հակառակորդները («Ոչ» շտաբ) իրենց քարոզարշավի ընթացքում կոչ էին անում քվեարկել դեմ, իսկ ավելի ուշ՝ բոյկոտել հանրաքվեն:

Ինչ վերաբերում է թեմատիկ ընդգրկմանը, ապա «Հայլուրում» լուսաբանվել են նախագծի բոլոր բաժինները, բացառությամբ համայնքի ղեկավարի պաշտոնանկության խնդրի: Լրատվական ծրագիրն առավել հաճախ անդրադարձնում էր 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող հարցերին (79 նյութերում) եւ սահմանադրական փոփոխությունների այլ ընդհանուր հարցերին (32): Երկքաղաքացիության խնդիրը շոշափվել է 15 նյութերում, նախագահի լիազորությունները՝ 12, նույնքան նյութերում՝ ՀՀ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները: 9 դեպքում խոսվել է Ազգային ժողովի լիազորությունների, 5-ական անգամ տեղական ինքնակառավարման եւ դատական իշխանության անկախության մասին: Այլ թեմաների հիշատակումները հատուկեմտ են եղել:

«360 աստիճան» լրատվական-վերլուծական ծրագրի հետազոտված 8877 վայրկյանից 2604 վայրկյանը (կամ 29,3 %) վերաբերել է մոնիտորինգի թեմային: Այն հիշատակվել է կիրակնօրյա ծրագրի 18 նյութերից 6-ում. 4 անգամ՝ չեզոք: 2 դրական լուսաբանումներն անդրադարձել են Երեւանի պետական համալսարանի ուսանողների հետ երկրի նախագահի հանդիպմանը եւ Ռոբերտ Քոչարյանի Հունաստան կատարած այցին: Երկու միջոցառումների ընթացքում էլ սահմանադրական փոփոխություններն ուշադրության են արժանացել:

«Հայլուրի» եւ «360 աստիճանի» ընդհանուր առմամբ հետազոտված 57862 վայրկյան եթերաժամանակի 14063 վայրկյանը (կամ 24,3 %) հատկացվել է սահմանադրական փոփոխություններին: Ընդամենը 53 նյութերում լուսաբանումը կրել է չեզոք, 43-ում դրական եւ 8-ում բացասական բնույթ:

Մոնիտորինգի ժամանակաշրջանում ՀՀ-ի «5-րդ անիվ» մեկնաբանական հաղորդման հետազոտված բոլոր երեք թողարկումներն էլ ամբողջությամբ մվիրված են եղել մոնիտորինգի թեմային: Երկու հաղորդումներ չեզոք բնույթ են ունեցել, դրանց մասնակիցներն ինչպես դրական, այնպես էլ բացասական կարծիքներ են արտահայտել Հիմնական օրենքի փոփոխությունների վերաբերյալ: Դրանցից մեկում «կողմ» եւ «դեմ» բանավեճն ընթացել է երկքաղաքացիության հարցի շուրջ: Մյուսում՝ Հայաստանի եվրոհիտեզրացման հեռանկարը քննարկվել է սահմանադրական փոփոխությունների, մասնավորապես՝ քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների, օրենսդիր եւ դատական իշխանությունների լիազորությունների տարանջատման համատեքստում: Երրորդ հաղորդման հիմնական թեման հանրաքվեի դրված նախագծով նախատեսվող դատական բարեփոխումներն էին: Դրա երկու մասնակիցներն էլ փոփոխությունների այդ հատվածի վերաբերյալ դրական կարծիք են հայտնել:

Քարոզարշավի ընթացքում ՀՀ-ը բացել էր «Խաչմերուկ» խորագրով նոր հաղորդաշար: Դրա բոլոր ինը հաղորդումներն ամբողջությամբ վերաբերել են սահմանադրական փոփոխություններին: «Խաչմերուկում» հերթագայությամբ հյուրընկալվել են երկու՝ «այո»-ի եւ «ոչ»-ի ճամբարի ներկայացուցիչները: Այդպիսով հաղորդման 5 թողարկում կրել է դրական, 4 թողարկում՝ բացասական բնույթ: Դրանցում առավել հաճախ շոշափվել են ընդհանուր թեմաները (9 դեպքում), հանրաքվեին առնչվող կազմակերպական հարցերը, երկքաղաքացիությունը եւ նախագահի լիազորությունները (8-ական), քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները (6), խորհրդարանի լիազորությունները (5):

ԱԼՍ

Մոնիտորինգի ամբողջ ժամանակաշրջանում հետազոտված «Օրեցօր» լրատվական ծրագրի եւ դրա կիրակնօրյա լրատվական-վերլուծական թողարկման ընդհանուր տեւողությունը կազմել 35111 վայրկյան, որից 9182 վայրկյանը (կամ 26,2%) հատկացվել է սահմանադրական փոփոխություններին: Ընդսմին, «Օրեցօրի» 335 հեռուստանյութերից 58-ում (կամ 17,3%) շոշափվել են մոնիտորինգի թեմաները: Դրան նվիրված նյութերի մեծ մասը՝ 35-ը, ունեցել է չեզոք բնույթ, 20-ը՝ դրական, 3-ը՝ բացասական: Ինչպես եւ 31-ի դեպքում, նշանային հիշատակումները հիմնականում եղել են Սահմանադրության փոփոխությունների կողմնակիցների եւ հակառակորդների այն քարոզչական միջոցառումներին վերաբերող լրատվական նյութերում, որտեղ ներկայացվել են նրանց տեսակետները նախագծի տարբեր դրույթների մասին: Ինչպես եւ «Հայլուրը», ԱԼՍ-ի լրատվական ծրագիրը եւս առավել հաճախ լուսաբանել է հանրաքվեի կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող հարցերը (45 նյութերում), սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ այլ ընդհանուր հարցեր (27), երկքաղաքացիությունը (12) եւ նախագահի լիազորությունները (10): Ազգային ժողովի լիազորությունների եւ քաղաքացիների իրավունքների ու ազատությունների մասին խոսվել է համապատասխանաբար 9 եւ 8 նյութերում: Այլ թեմաների հիշատակումները հատուկենտ են եղել: Երեւանի կարգավիճակը, տեղեկատվության եւ խոսքի ազատության բնագավառը ոչ մի անգամ չեն շոշափվել:

ԱԼՍ-ի «Դիրքորոշում» եւ «Հարցի արժեքը» մեկնաբանական ծրագրերի թողարկումներից ոչ մեկն ամբողջությամբ նվիրված չի եղել մոնիտորինգի թեմային: «Դիրքորոշման» մեջ բոլոր երեք չեզոք մասնակի հիշատակումները վերաբերել են ընդհանուր սահմանադրական եւ հանրաքվեին առնչվող հարցերին, ինչպես նաեւ՝ երկքաղաքացիությանը, նախագահական լիազորություններին, քաղաքացիական իրավունքներին եւ ազատություններին: Ինչ վերաբերում է «Հարցի արժեքին», ապա մոնիտորինգի ընթացքում ուսումնասիրված հինգ թողարկումներից միայն մեկում է հյուր եղել: Մյուս չորս թողարկումների միակ մասնակիցը եղել է ԱԼՍ-ի սեփականատեր եւ հաղորդման վարող Տիգրան Կարապետյանը: «Հարցի արժեքի» 5 մասնակի հիշատակումներից 3-ը դրական էին, 2-ը՝ չեզոք: Հաղորդման մեջ շոշափվել են ընդհանուր հարցերն ու նախագահի լիազորությունները, երկքաղաքացիությունը եւ Երեւանի կարգավիճակը, հանրաքվեին առնչվող հարցերը, տեղական ինքնակառավարումը, խորհրդարանի լիազորությունները եւ քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները:

«ԱՐՄԵՆԻԱ»

Մոնիտորինգի ժամանակաշրջանում ուսումնասիրվել է «Ժամը» լրատվական ծրագրի հիմնական թողարկումների ընդհանուր 29144 վայրկյան, որից 7624 վայրկյանը (կամ 26,2%) հատկացվել է սահմանադրական բարեփոխումներին: Այսպիսով, եւ «Արմենիա»-ն եւ ԱԼՍ-ը մոնիտորինգի թեմային հատկացրել են լրատվական եթերաժամանակի հավասար ծավալ (տոկոսային արտահայտությամբ): Սակայն «Արմենիա»-ում հետազոտված լրատվական նյութերի ընդհանուր քանակի մեջ մոնիտորինգի թեմային վերաբերող նյութերի բաժինը համարյա երկու անգամ գերազանցում է ԱԼՍ-ի նույն ցուցանիշին: «Ժամը» ծրագրի 191 նյութերից 63-ը (կամ 33%) նվիրված էին սահմանադրական թեմաներին: Ընդսմին, համաժողովրդական քվեարկու-

թյան դրված փոփոխությունների մասին խոսվել է մեծամասամբ դրական՝ 38 անգամ, եւ չեզոք՝ 25 անգամ: Բացի այս, «Ժամը» մոնիտորինգի ենթարկված լրատվական ծրագրերից միակն է, որտեղ Սահմանադրության փոփոխությունների հիշատակումները ոչ մի անգամ բացասական բնույթ չեն ունեցել: Իբրեւ հիշատակումների դրական համատեքստ է ծառայել նորացված Սահմանադրության կողմնակիցների քարոզարշավի մասին տեղեկատվությունը: Իսկ նախագծի հակառակորդների քարոզչական գործունեության լուսաբանումն այնպիսին էր, որ համատեքստը չեզոք էր ստացվում: Այսինքն, լրագրողները կամ շրջանցում էին համապատասխան միջոցառման բովանդակությունը, կամ ռեպորտաժներում եղած անձանց՝ փոփոխությունների վերաբերյալ բացասական դիրքորոշումներն այս կամ այն կերպ փոխհատուցվում էր մեկնաբանություններով: Առավել մեծ ուշադրություն է դարձվել ընդհանուր (47 նյութերում) եւ հանրաքվեին վերաբերող (36) հարցերին: Երկքաղաքացիության եւ խորհրդարանի լիազորությունների մասին խոսվել է 16-ական անգամ, նախագահի լիազորությունների, քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների մասին՝ 13-ական, 33 կառավարության իրավասությունների եւ լիազորությունների ու դատական իշխանության անկախության մասին 5-ական անգամ: Այլ թեմաներին բաժին են ընկել հատուկեմտ հիշատակումներ: Տեղեկատվության եւ խոսքի ազատության բնագավառը, դատախազության կարգավիճակն ու լիազորությունները, ինչպես նաեւ համայնքի ղեկավարի պաշտոնանկության խնդիրը լրատվական ծրագրում ոչ մի անգամ չեն շոշափվել:

«Արմենիա»-ի մեկնաբանական «Իրականում» ծրագրի՝ մոնիտորինգի ընթացքում ուսումնասիրված 15 թողարկումներից 13-ը նվիրված էր սահմանադրական փոփոխություններին. 12-ը՝ ամբողջությամբ, 1-ը՝ մասնակիորեն: Հաղորդման 12 թողարկումներում հյուր են եղել հանրաքվեի դրված նախագծի կողմնակիցները, որոնք դրական են արտահայտվել դրա մասին: Միակ բացասական գնահատականը հնչել է, երբ «Իրականումի» հյուրն է եղել ընդդիմության ներկայացուցիչ, «Ազգային ժողովրդավարների դաշինք» կուսակցության նախագահ Արշակ Սադոյանը: Քննարկումների հիմնական թեմաներ են եղել, մասնավորապես, ընդհանուր հարցերը (13), նախագահական եւ խորհրդարանական լիազորությունները (10-ական), հանրաքվեի կազմակերպման եւ անցկացման հարցերը, քաղաքացիների իրավունքները եւ ազատությունները (9-ական), երկքաղաքացիությունը (5):

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՄՏԱԿԻՔ

Մոնիտորինգի ամբողջ ժամանակաշրջանում «Լրաբեր» լրատվական ծրագրի տեւողությունը կազմել է 39206 վայրկյան, որից 12607 վայրկյանը (կամ 32,2%) հատկացվել է սահմանադրական բարեփոխումներին: Ընդամին, «Լրաբերի» 400 հեռուստանյութերից 106-ում (կամ 26,5%) շոշափվել է մոնիտորինգի թեման: Ինչպես եւ «Արմենիա»-ում, 32-ի լրատվական լուսաբանումներում («Լրաբերում») գերակշռում էին դրական հիշատակումները՝ 58, այն դեպքում, երբ չեզոքները եղել են 39, իսկ բացասականները՝ 9: Դրական համատեքստը հիմնականում առկա էր սահմանադրական փոփոխությունների կողմնակիցների քարոզարշավի մասին ռեպորտաժներում, բացասականը՝ վերջիններիս ընդդիմախոսների ելույթներում: Ամենից հաճախ ներկայացվել են կարծիքներ ընդհանուր (82 նյութերում) եւ սահմանադրությանն առնչվող (73) հարցերի վերաբերյալ: Այնուհետեւ եղել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են նախագահի լիազորությունները (24), երկքաղաքա-

ցիությունը, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները (23-ական), խորհրդարանի լիազորությունները (19), դատական իշխանության անկախությունը (10): Ամբողջության մեջ, ինչպես եւ «Հայլուրում» (Հ1), «Լրաբերում» լուսաբանվել են նախագծի բոլոր թեմատիկ բաժինները, բացառությամբ համայնքի ղեկավարի պաշտոնակազմության խնդրի:

«Կիրակնօրյա լրաբեր» լրատվական-վերլուծական ծրագրի ուսումնասիրված թողարկումների 5529 վայրկյան ընդհանուր տեսողության 1326 վայրկյանը (կամ 24%), նվիրված է եղել մոնիտորինգի թեմային: Այն հիշատակվել է կիրակնօրյա այդ ծրագրի 22 նյութերից 7-ում, հիմնականում դրական համատեքստում՝ 5: Չեզոք հիշատակում եղել է 2 անգամ, բացասական՝ ոչ մի: Մեծամասամբ խոսվել է ընդհանուր հարցերի եւ հանրաքվեի կազմակերպման ու անցկացման մասին:

Ընդհանուր առմամբ «Լրաբերի» եւ «Կիրակնօրյա լրաբերի» ուսումնասիրված եթերաժամանակի 44735 վայրկյանից 13933 վայրկյանը (կամ 31,1%) հատկացվել է սահմանադրական բարեփոխումներին: Ընդսմին, լուսաբանումը 63 նյութերում ուներ դրական բնույթ, 41-ում՝ չեզոք եւ 9-ում՝ բացասական:

Այսպիսով, բոլոր ուսումնասիրված հեռարձակվող ՁԼՄ-ներից Հ2-ը լրատվական լուսաբանումներում մոնիտորինգի թեման ամենից շատն է ուշադրության արժանացրել, եւ լուսաբանումը, ինչպես եւ «Արմենիա» հեռուստաընկերությունում, աչքի է ընկել վառ արտահայտված նշանայնությամբ. նշանային (մեծամասամբ դրական) հիշատակումները գերազանցել են չեզոքները:

Դեպի դրականը շեղումը բնորոշ էր նաեւ Հ2-ի «Չորրորդ ստուդիա» եւ «Խոսքի իրավունք» մեկնաբանական ծրագրերին: «Չորրորդ ստուդիայի» 9 հետազոտված թողարկումներից 7-ը ամբողջությամբ, իսկ 2-ը մասնակիորեն նվիրված են եղել Սահմանադրության փոփոխություններին: Ընդսմին, նախագծի վերաբերյալ միակ բացասական հիշատակումը հնչել է թեմային մասնակիորեն վերաբերող թողարկումներից մեկում: Մյուս 8 թողարկումների հյուրերը կողմ են արտահայտվել նորացված Հիմնական օրենքի ընդունմանը: «Խոսքի իրավունքի» 4 թողարկումներից 3-ը ամբողջությամբ շոշափում էին ուսումնասիրվող թեման, 2-ը՝ դրականորեն, 1-ը՝ չեզոք: Երկու մեկնաբանական հաղորդումների մասնակիցներն էլ քննարկել են նախագծի զանազան հարցերը, բացառությամբ համայնքի ղեկավարների պաշտոնակազմության եւ Երեւանի կարգավիճակի, ընտրական իրավունքի եւ հանրաքվեների խնդիրների:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

«Հայաստանի Հանրապետության» 698 ուսումնասիրված հրապարակումներից 125-ը (կամ 17,9%) նվիրված է եղել սահմանադրական բարեփոխումներին: 103-ը (82,4%)՝ ամբողջությամբ եւ 22-ը (17,6%)՝ մասնակիորեն: 72 հրապարակումներում լուսաբանումը չեզոք էր, 53-ում՝ դրական: Միանշանակ բացասական վերաբերմունք պաշտոնաթերթի էջերում չի եղել եւ ոչ մի նյութում: Լայնորեն լուսաբանվել է «այո» եւ «ոչ» շտաբների քարոզարշավները: Ընդսմին, նորացված Սահմանադրության կողմնակիցների գործունեությանը նվիրված հոդվածները հիմնականում դրական համատեքստում էին, հակառակորդներինը՝ չեզոք: Մասնավորապես, հրապարակվում էին տարբեր կարծիքներ, որոնք դրական էին գնահատում խորհրդարանի լիազորությունների ընդլայնման եւ նախագահի լիազորությունների կրճատման, դատա-

կան իշխանության անկախության, երկքաղաքացիության արգելքի վերացման, տեղական ինքնակառավարման ոլորտի նորամուծությունների հարցերը: Ընդհանուր առմամբ, թեմատիկ ընդգրկման առումով, թերթն ամենից շատ ուշադրության է արժանացրել հանրաքվեի կազմակերպման եւ անցկացման հարցերին (60 հրապարակումներում), ընդհանուր հարցերին (59), Ազգային ժողովի լիազորություններին (34), երկքաղաքացիությանը (23), նախագահի լիազորություններին (20), քաղաքացիների իրավունքներին եւ ազատություններին (19), դատական իշխանության անկախությանը (16): Սահմանադրական փոփոխությունների մյուս բոլոր թեմաները նույնպես շոշափվել են «Հայաստանի Հանրապետության» հրապարակումներում:

«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ»

«Ռեսպուբլիկա Արմենիայի» 150 ուսումնասիրված հրապարակումներից 32-ը (կամ 21,3%) նվիրված է եղել սահմանադրական բարեփոխումներին: 26-ը (81,2%)՝ ամբողջությամբ եւ 6-ը (18,8%)՝ մասնակիորեն: Ինչպես եւ «Հայաստանի Հանրապետությունը», նույնանուն ռուսալեզու պաշտոնաթերթը աչքի է ընկել բացասական բնույթի հիշատակումների բացակայությամբ. 19 հրապարակումներում լուսաբանումը չեզոք էր, 13-ում՝ դրական: Մասնավորապես ներկայացվել են դիրքորոշումներ, որոնք դրական են գնահատել օրենսդիր մարմնի լիազորությունների ընդլայնումը ի հաշիվ նախագահական լիազորությունների կրճատման, ինչպես նաեւ իշխանության երեք թեւերի հավասարակշռումն ընդհանրապես: Բացի երկու՝ տեղեկատվության ոլորտի եւ խոսքի ազատության, դատախազության կարգավիճակի եւ լիազորությունների թեմաների, սահմանադրական փոփոխությունների մյուս բոլոր թեմատիկ բաժիններն այս կամ այն հաճախականությամբ հիշատակվել են «Ռեսպուբլիկա Արմենիայի» հրապարակումներում: Սակայն ամենից մեծ ուշադրություն դարձվել է ընդհանուր եւ հանրաքվեին առնչվող հարցերին (համապատասխանաբար 19 եւ 14 հրապարակումներում):

«ԱԶԳ»

«Ազգի» 530 ուսումնասիրված հրապարակումներից 43-ը (կամ 8,1%) նվիրված է եղել սահմանադրական բարեփոխումներին: 33-ը (76,7%)՝ ամբողջությամբ եւ 10-ը (23,3%)՝ մասնակիորեն: Սոնիտորինգի ենթարկված բոլոր տպագիր ՁԼՄ-ներից «Ազգն» ամենից քիչն է անդրադարձել Սահմանադրության թեմային: Բացի այս, սա միակ հրատարակությունն է, որտեղ նշանային հիշատակումների հարաբերակցությունը համարյա հավասար է. 8 բացասական եւ 7 դրական: Իսկ լուսաբանումների մեծ մասը՝ 28-ը, եղել է չեզոք: Իբրեւ դրական սահմանադրական փոփոխություններ նշվել են, մասնավորապես, երկքաղաքացիության արգելքի վերացումը եւ քաղաքացիների իրավունքների ու ազատությունների ընդլայնումը: Բացասական բնույթ ունեին հիմնականում սահմանադրական փոփոխությունների հակառակորդների քարոզարշավի մասին տեղեկատվական նյութերը, որոնցում բացասական տեսակետներ էին արտահայտվում: Թեմատիկ ընդգրկմամբ, թերթի էջերում հիշատակվել են սահմանադրական փոփոխությունների բոլոր բաժինները: Ընդսմին, հրատարակությունն առավել հաճախ անդրադարձել է հանրաքվեին առնչվող (39 հրապարակումներում) եւ ընդհանուր (21) հարցերին: Սրանց հաջորդում են քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները (15), ընտրական իրավունքը եւ հանրաքվեները (11):

«ԱՌԱՎՈՏ»

«Առավոտի» 701 ուսումնասիրված հրապարակումներից 186-ը (կամ 26,5%) նվիրված է եղել սահմանադրական բարեփոխումներին: 157-ը (84,4%)՝ ամբողջությամբ եւ 29-ը (15,6%)՝ մասնակիորեն: Թերթի լուսաբանումը հիմնականում չեզոք բնույթ է կրել՝ 133 հիշատակում: Ընդսմին բացասական երանգով լուսաբանումները (42) համարյա չորս անգամ ավելի էին, քան դրականը (11): Սա բացատրվում է սահմանադրական փոփոխությունների հակառակորդների տեսակետների եւ նրանց քարոզարշավի նկատմամբ թերթի ուշադրությամբ: Այլոց թվում, իբրեւ նախագծի թերություն թերթի էջերում հաճախ է նշվել երկքաղաքացիության արգելքի վերացումը: Սահմանադրական բոլոր բաժիններն առավել կամ պակաս հաճախականությամբ հիշատակվել են «Առավոտի» հրապարակումներում, սակայն մեծ մասը բաժին է ընկել հանրաքվեի կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող (125) եւ ընդհանուր (72) հարցերին: Մնացած թեմաներից յուրաքանչյուրը հիշատակվել է երկու տասնյակից ոչ ավելի անգամ. նախագահի լիազորություններ (21), երկքաղաքացիություն (17), խորհրդարանի լիազորություններ (15), քաղաքացիների իրավունքներ եւ ազատություններ (14):

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

«Հայկական ժամանակի» 491 ուսումնասիրված հրապարակումներից 153-ը (կամ 31,2%) նվիրված է եղել սահմանադրական բարեփոխումներին: 131-ը (85,6%)՝ ամբողջությամբ եւ 22-ը (14,4%)՝ մասնակիորեն: Սոնիտորինգի ենթարկված բոլոր տպագիր ՁԼՄ-ներից «Հայկական ժամանակն» ամենից շատն է անդրադարձել Սահմանադրության թեմային: Այս թերթում նշանային եւ չեզոք հիշատակումների հարաբերակցությունը համարյա հավասար էր, ընդ որում առաջինների թվում գերակշռում էր բացասականը: Սահմանադրական փոփոխությունների նախագծի 76 չեզոք հիշատակումների դիմաց, բացասական էր 69-ը եւ դրական՝ 8-ը: Բացասական համատեքստով քննադատվում էին ինչպես սահմանադրական փոփոխություններն ընդհանրապես, այնպես էլ նախագծի առանձին, մասնավորապես՝ իշխանության օրենսդիր եւ գործադիր թեւերի լիազորություններին, երկքաղաքացիությանը վերաբերող դրույթները: Ուշադրություն էր դարձվում սահմանադրական փոփոխությունների հակառակորդների տեսակետներին եւ նրանց քարոզարշավին: «Հայկական ժամանակի» էջերում շոշափվել են սահմանադրական փոփոխությունների բոլոր բաժինները, դրանց մեծ մասը՝ ակտիվորեն: Ընդսմին, նյութերի մեծ մասում խոսվում էր հանրաքվեի կազմակերպման եւ անցկացման մասին (127): Ընդհանուր հարցերը քննարկվել են 72 հրապարակումներում, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները՝ 43, ընտրական իրավունքը եւ հանրաքվեները՝ 39, նախագահի եւ խորհրդարանի լիազորությունները՝ համապատասխանաբար 36 եւ 33: Երկքաղաքացիության հարցին, կառավարության իրավասություններին եւ լիազորություններին թերթն անդրադարձել է համապատասխանաբար 22 եւ 20 հրապարակումներում:

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

«Հայոց աշխարհի» 539 ուսումնասիրված հրապարակումներից 145-ը (կամ 26,9%) նվիրված է եղել սահմանադրական բարեփոխումներին: 124-ը (85,5%)՝ ամբողջությամբ եւ 21-ը (14,5%)՝ մասնակիորեն: «Հայկական ժամա-

նակից» հետո տպագիր ՁԼՄ-ներից մոնիտորինգի թեմային ամենաշատ ուշադրություն արժանացրել է հենց այս թերթը: Ինչպես եւ «Հայկական ժամանակում», «Հայոց աշխարհում» էլ համարյա հավասար է չեզոք եւ նշանային հիշատակումների հարաբերակցությունը, սակայն ի տարբերություն «Հայկական ժամանակի» նշանայինների երանգը գերակշիռ մեծամասնությամբ դրական է՝ 70, բացասական հիշատակումները՝ 3-ն են, չեզոքը՝ 72-ը: Ուղիղ հակադարձ պատկերն է նկատվում նաեւ նախագծի առանձին դրույթներին նվիրված հրապարակումներում: Մասնավորապես, դրական վերաբերմունք է արտահայտվել իշխանության օրենսդիր եւ գործադիր թւերի լիազորությունների վերաբաշխման, երկքաղաքացիության վերաբերյալ: Ուշադրություն է դարձվել նաեւ Սահմանադրության կողմնակիցների քարոզարշավին եւ դիրքորոշումներին: Ինչպես եւ «Հայկական ժամանակը», «Հայոց աշխարհ» էլ 127 հրապարակումներում անդրադարձել է հանրաքվեի կազմակերպման եւ անցկացման հարցերին: Այնուհետեւ ըստ հիշատակումների հաճախականության հետեւում են սահմանադրական փոփոխությունների ընդհանուր հարցերը (70), ընտրական իրավունքը եւ հանրաքվեները (51), քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները (47), խորհրդարանի եւ նախագահի լիազորությունները (համապատասխանաբար 31 եւ 28), երկքաղաքացիություն (27), կառավարության իրավասություններն ու լիազորությունները (20): Եվ դարձյալ ինչպես «Հայկական ժամանակում», «Հայոց աշխարհի» էջերում էլ մեծամասամբ ակտիվորեն քննարկվել են սահմանադրական փոփոխությունների բոլոր բաժինները, բացառությամբ համայնքի ղեկավարի պաշտոնակության խնդրի:

«ԳՈՂՈՍ ԱՐՄԵՆԻԻ»

«Գոլոս Արմենիի» թերթի 488 ուսումնասիրված հրապարակումներից 56-ը (կամ 11,5%) նվիրված է եղել սահմանադրական բարեփոխումներին: 45-ը (80,4%)՝ ամբողջությամբ եւ 11-ը (19,6%) մասնակիորեն: Եվ թեպետ լուսաբանման մեծ մասն ունեցել է չեզոք բնույթ (34 հիշատակում), նշանային հիշատակումների հարաբերակցությունը նույնն է, ինչ «Առավոտում», սակայն տրամագծորեն հակառակ կերպով. դրական հիշատակումներն ավելի քան չորս անգամ գերազանցում են բացասականներին (համապատասխանաբար 18 եւ 4): Թերթի էջերում առավել հաճախ դրական են ներկայացվել երկքաղաքացիության արգելքի վերացումը, ինչպես նաեւ խորհրդարանի եւ նախագահի լիազորությունների վերաբաշխումը: Սահմանադրական բոլոր բաժիններն այս կամ այն չափով շոշափվել են «Գոլոս Արմենիի» թերթի հրապարակումներում, սակայն առավել հաճախ հրատարակությունն անդրադարձել է ընդհանուր եւ հանրաքվեին առնչվող հարցերին (համապատասխանաբար՝ 31 եւ 28 անգամ): Երկքաղաքացիությունը հիշատակվել է 16 դեպքում, նախագահի լիազորությունները՝ 13, Ազգային ժողովի լիազորությունները եւ դատական համակարգի անկախությունը՝ 12-ական, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները՝ 11:

VII. 2 Øö àö àðØ

1. Լրատվական լուսաբանումը հեռուստաընկերություններում: Հեռարձակվող ՁԼՄ-ների մոնիտորինգի ենթարկված ողջ լրատվական լուսաբանումից 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեին, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծին եւ սրանց առնչվող այլ հարցերին ամենից շատ **էթերաժամանակ** տրամադրել է Հայկական երկրորդ հեռուս-

տաալիքը (այդ ալիքի հետազոտված ամբողջ լրատվական եթերաժամանակի 31,1%-ը): Նրան հաջորդում են «Արմենիա» եւ ԱԼՍ հեռուստաընկերությունները (26,2-ական %), Հ1-ը (24,3%):

Սակայն մոնիտորինգի թեմային նվիրված **լրատվական հեռուստանյութերի ֆանակական ցուցանիշով** առաջատարը «Արմենիա»-ն է (այդ հեռուստաալիքի ուսումնասիրված ամբողջ լրատվական նյութերի 33%-ը): Նրան հետեւում են Հ2-ը (26,8%), Հ1-ը (20,2%) եւ ԱԼՍ-ն (17,3%):

2. Հեռուստաընկերությունների լրատվական լուսաբանման նշանայնությունը: Առավել վառ արտահայտված նշանայնություն դրսևորվել է Հ2-ի եւ «Արմենիա»-ի հետազոտված լրատվական/լրատվական-վերլուծական ծրագրերում: Սրանցում նշանային (մեծամասամբ դրական) հիշատակումները գերազանցում էին չեզոքներին: Ընդսին, «Ժամը» («Արմենիա» ՀԸ) միակն էր լրատվական ծրագրերից, որի լուսաբանումը ոչ մի անգամ բացասական բնույթ չի ունեցել: Հ1-ի եւ ԱԼՍ-ի լրատվական նյութերը մեծամասամբ մատուցվում էին կամ չեզոք կամ դրական համատեքստում: Բոլոր հեռուստաալիքներում նշանային հիշատակումները հանդիպում էին հիմնականում Սահմանադրության փոփոխությունների կողմնակիցների եւ հակառակորդների քարոզարշավների վերաբերյալ լրատվական նյութերում, որոնցում բերվում էին նրանց կարծիքները հանրաքվեի դրված նախագծի տարբեր դրույթների վերաբերյալ: Բացասականի փոքր բաժինը բացատրվում է ամենից առաջ նրանով, որ շատ դեպքերում նորացված Սահմանադրության հակառակորդների քարոզչական գործունեության լուսաբանումը չէր անդրադառնում միջոցառման բովանդակությանը, ինչի պատճառով համատեքստը ստացվում էր չեզոք:

3. Մեկնաբանական հաղորդումներ: Մոնիտորինգի ենթարկված մեկնաբանական հաղորդումներից «Արմենիա»-ն եւ Հ2-ը իրենց թողարկումների 80%-ը եւ Հ1-ը՝ բոլոր թողարկումներն ամբողջությամբ նվիրել են սահմանադրական բարեփոխումներին: Այդ հաղորդումներում, իբրեւ կանոն, հյուր են եղել փոփոխությունների նախագծի կողմնակիցները կամ հակառակորդները, ինչը եւ պայմանավորել է դրանց բնույթը: Սակայն չեզոքների նկատմամբ նշանային հիշատակումների գերակշռության պայմաններում դեպի դրականը մեծ թեքում է նկատվում «Արմենիա»-ի («Իրականում») եւ Հ2-ի («Չորրորդ ստուդիա» եւ «Խոսքի իրավունք») հաղորդումներում: Ինչ վերաբերում է Հ1-ին, ապա նշանային հիշատակումների համարյա հավասարություն է նկատվում «Խաչմերուկ» ծրագրում, որը սկսեց հեռարձակվել հանրաքվեի քարոզարշավի ընթացքում: Հաղորդմանը, հերթագայությամբ, հյուր էին լինում Հիմնական օրենքի փոփոխությունների կողմնակիցների եւ հակառակորդների ներկայացուցիչները: Հ1-ի մյուս հաղորդումը՝ «5-րդ անիվը», հիմնականում աշխատում էր «դեմ առ դեմ» ֆորմատով, այսինքն՝ մասնակիցներ էին լինում սահմանադրական փոփոխությունների եւ կողմնակիցները, եւ հակառակորդները, որոնք արտահայտում էին ինչպես դրական, այնպես էլ բացասական կարծիքներ, ինչը հաղորդմանը չեզոք բնույթ էր հաղորդում: Ի տարբերություն հիշյալ հեռուստաալիքների, ԱԼՍ-ի «Դիրքորոշում» եւ «Հարցի արժեքը» մեկնաբանական ծրագրերը Հայաստանի համար թիվ մեկ իրադարձությանն անդրադառնում էին «հընթացս»: Հավանաբար, հեռուստաալիքի դիրքորոշումն այդպիսին էր, որովհետեւ այդ հաղորդումների վա-

րողն ու անմիջական մասնակիցն ինքը՝ ԱԼՄ-ի սեփականատերն է: Սրանով հանդերձ, մասնակի հիշատակումների բնույթը կամ չեզոք էր, կամ՝ դրական:

4. Լուսաբանումը տպագիր ՁԼՄ-ներում: Մոնիտորինգի ենթարկված բոլոր թերթերից հանրաքվեին, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծին եւ սրանց առնչվող այլ հարցերին ամենից շատ ուշադրություն է դարձրել «Հայկական ժամանակը» (այդ թերթի հետազոտված հրապարակումների ընդհանուր քանակի 31,2%-ը): Նրան հետեւում են «Հայոց աշխարհը» (26,9%), «Առավոտը» (26,5%), «Ռեսպուբլիկա Արմենիան» (21,3%), «Հայաստանի Հանրապետությունը» (17,9%), «Գոլոս Արմենիին» (11,5%), «Ազգը» (8,1%): Բոլոր հրատարակությունները բավականին մեծ հետաքրքրություն են ցուցաբերել թեմայի նկատմամբ: Ընդսմին, ամբողջովին սահմանադրական փոփոխություններին նվիրված հրապարակումների թիվը գերազանցել է այն հրապարակումների թվին, որոնցում դրանք մասնակիորեն են շոշափվել:

5. Թերթային լուսաբանման նշանայնությունը: «Հայաստանի Հանրապետություն» եւ «Ռեսպուբլիկա Արմենիա» պաշտոնաթերթերի հրապարակումներն ունեին միայն չեզոք կամ դրական համատեքստ (բացասական վերաբերմունք ոչ մի հրապարակման մեջ չի եղել): Նորացված Սահմանադրության կողմնակիցների գործունեությանը, կարծիքներին նվիրված հոդվածները հիմնականում դրական բնույթ ունեին, իսկ հակառակորդներին նվիրվածները՝ չեզոք:

«Հայկական ժամանակի» եւ «Հայոց աշխարհի» դիրքորոշումները շատ նման էին, սակայն հակադիր: Երկու թերթերում էլ չեզոք եւ նշանային հիշատակումների հարաբերակցությունը համարյա հավասար էր, սակայն վերջիններիս բնույթը՝ հակաբեւեռ. «Հայկական ժամանակում» գերակշռում էին բացասական, իսկ «Հայոց աշխարհում» դրական հիշատակումները: Սահմանադրության փոփոխությունների նախագծի առանձին դրույթների անդրադարձող հոդվածներում լինում էր քննադատություն («Հայկական ժամանակի» էջերում) եւ գովաբանում («Հայոց աշխարհում»): մասնավորապես, բացասական/դրական են եղել անդրադարձներն իշխանության օրենսդիր եւ գործադիր թեւերի միջեւ լիազորությունների բաշխման, երկքաղաքացիության խնդիրներին: «Հայկական ժամանակն» ակտիվորեն է լուսաբանել նորացված Սահմանադրության հակառակորդների քարոզարշավն ու կարծիքները, «Հայոց աշխարհը»՝ դրա կողմնակիցների:

Ձուգահեռները նկատելի են նաեւ մյուս երկու՝ «Առավոտ» եւ «Գոլոս Արմենիի» թերթերի լուսաբանումներում: Երկու հրատարակություններում էլ չեզոք լուսաբանումների գերակշռության պայմաններում, նշանայինների հարաբերակցությունը համարյա միեւնույնն է, սակայն հակաբեւեռ. «Առավոտում» բացասականը համարյա չորս անգամ ավելի է, քան դրականը, իսկ «Գոլոս Արմենիի» թերթում դրականը ավելի քան չորս անգամ գերազանցում է բացասականին: Արմատապես տարբեր էր նաեւ հրապարակումներում սահմանադրական փոփոխությունների այս կամ այն խնդրի նկատմամբ վերաբերմունքը: Օրինակ, երկքաղաքացիության արգելքի վերացումը «Առավոտի» էջերում դիտարկվում էր իբրեւ նախագծի թերություններից մեկը, իսկ «Գոլոս Արմենիի» թերթում՝ իբրեւ նրա նվաճումը:

Սահմանադրության թեմային բոլորից քիչ անդրադարձել է «Ազգը», միակ հրատարակությունը, որտեղ դրական եւ բացասական հիշատակումները համարյա հավասար են, իսկ թերթի դիրքորոշումը կարելի է բնութագրել ընդհանուր առմամբ իբրեւ չեզոք:

6. Տպագիր եւ հեռարձակվող ՁԼՄ-ներում սահմանադրական փոփոխություններին վերաբերող թեմաների լուսաբանումը: Սահմանադրական փոփոխություններին անմիջականորեն առնչվող թեմաների հիշատակումների ցուցանիշով, մոնիտորինգի ենթարկված եւ հեռարձակվող, եւ տպագիր ՁԼՄ-ները իրենց լուսաբանումներում ուշադրությունը կենտրոնացնում էին ամենից առաջ հանրաքվեի կազմակերպման ու անցկացման եւ սահմանադրական փոփոխությունների այլ ընդհանուր հարցերի վրա: Այս երկու թեմաները մեծ առավելությամբ առաջատարներ են: Հեռուստաալիքներում հիշատակումների հաճախությամբ երկրադաքացիությունն էր: Թերթերում այդ թեման ընդամենը 7-րդ տեղում էր, իսկ 3-րդում՝ ՀՀ քաղաքացիների իրավունքների ու ազատությունների թեման էր: Վերջինս հեռուստաթերթում 5-րդ տեղում էր: Հեռուստատեսությամբ մի քիչ ավելի է խոսվել ՀՀ նախագահի լիազորությունների մասին (հեռուստատեսություններում 4-րդ, թերթերում՝ 5-րդ տեղ), իսկ մամուլում՝ Ազգային ժողովի լիազորությունների մասին (թերթերում 4-րդ, հեռուստատեսություններում՝ 6-րդ տեղ): Ընտրական իրավունքի եւ հանրաքվեների թեման, որ թերթերի էջերում հարյուրից ավելի հիշատակում էր ունեցել (6-րդ տեղ), թերթում անգամ տասը հիշատակում չունեցավ: Հեռարձակվող եւ տպագիր ՁԼՄ-ներում համարյա հավասար դիրք ունեն կառավարության իրավասությունների ու լիազորությունների, դատական իշխանության անկախության, տեղական ինքնակառավարման եւ Երեւանի կարգավիճակի թեմաները: Եվ հեռուստատեսություններում, եւ թերթերում «հետնապահներն» են դատախազության կարգավիճակի եւ լիազորությունների, տեղեկատվության եւ խոսքի ազատության բնագավառի, համայնքի ղեկավարի պաշտոնանկության թեմաները:

7. ՁԼՄ-ների կողմնորոշումը: Մոնիտորինգի ենթարկված բոլոր հեռուստաընկերությունները եւ յոթ թերթերից չորսը («Հայաստանի Հանրապետություն», «Ռեսպուբլիկա Արմենիա», «Հայոց աշխարհ», «Գոլոս Արմենի») սպասվող հանրաքվեն եւ Սահմանադրության փոփոխությունները լուսաբանել են դեպի նախագծի կողմնակիցները հակումով: Խիստ քննադատական դիրքորոշում է ունեցել «Հայկական ժամանակը», դեպի նախագծի հակառակորդներն է հակվել «Առավոտը»: «Ազգը» արտահայտված համակրանքներ եւ հակակրանքներ չի դրսևորել:

Երեւանի մամուլի ակումբը շնորհակալություն է հայտնում Հայաստանի հանրային հեռուստատեսությանը, ԱԼՄ-ին, «Արմենիային», Հայկական երկրորդ հեռուստաալիքին մոնիտորինգի ընթացքում ցուցաբերած ՏԵԽՆԻԿԱԿԱՆ աջակցության համար:

VIII. օ à ð Ò ² ¶ Æ ² Î ² Û ¶ Û ² Ð î à ð Ø

Որոշելու համար, թե լսարանին որքան ադեկվատ եւ որակյալ էին դիտարկվող ՁԼՄ-ները ծանոթացնում Սահմանադրության փոփոխությունների բովանդակությանը, իրականացվել է փորձագիտական գնահատում:

Իբրեւ փորձագետ հանդես էր գալիս իրավաբան, «Ժողովրդավարություն» ՀԿ-ի նախագահ Վարդան Պողոսյանը:

ՁԼՄ-ների մոնիտորինգի (2005 թվականի նոյեմբերի 5-ից 25-ը) ընթացքում փորձագիտական գնահատման համար առանձնացվել են այն թերթային հրապարակումները եւ հեռուստանյութերը, որոնք պարունակել են Սահմանադրության փոփոխությունների նախագծի բովանդակային վերլուծություն, մեկնաբանություն, կամ՝ կարծիքներ:

Հաշվի առնելով, որ տպագիր մամուլը լսարանին ավելի լայն հնարավորություն է տալիս մանրամասնորեն ծանոթանալու հասարակական հնչեղություն ունեցող հարցերի՝ այդ թվում Սահմանադրության փոփոխությունների նախագծի բովանդակային վերլուծությունների հետ, փորձագիտական ուսումնասիրության ենթարկվեցին գլխավորապես թերթերի հրապարակումները:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հարցի էության չեզոք եւ խորը վերլուծություններ պարունակող հրապարակումները քիչ էին ու դրանց ազդեցությունն աննշան: Ստորեւ ներկայացվում են առավել տիպական հրապարակումները, որոնց կարելի է բաժանել երեք խմբի:

Առաջին խումբը կազմում են այն հրապարակումները, որոնք հիմնականում հայտարարություններ (երբեմն՝ հայհոյախառն) եւ պիտակավորումներ են պարունակում: Այդպիսի օրինակ է, մասնավորապես «Հայոց աշխարհ» օրաթերթում (11 նոյեմբերի, 2005թ.) տպագրված «Ինչու՞ է շահարկվում երկքաղաքացիության հարցը» հոդվածը: Այն բնավ չի անդրադառնում երկքաղաքացիության արգելքի վերացման հետ ծագող ռեալ խնդիրներին, այլ միայն հայտարարում է. «*իրականում սա ՀՀ-ի ներկա դիրքում մեջ գոյություն ունեցող «կրկնակի սահմանները» փոքրեցնելու... անհաջող փորձ է»:*

Նման մի հրապարակում է նաեւ «Հայկական ժամանակ» օրաթերթում (17 նոյեմբերի, 2005թ.) «Տխմարություն առանց սահմանի» խմբագրականը: Այս հոդվածում կան այսպիսի տողեր. «*Այդ դեղինը բնական հարց է առաջանում. բա ինչի՞ համար է հանրավելն (ընդ որում դարձադիր), ինչի՞ համար եմ հանրավել անում, որ համայնային բյուջեների փողերը մսխե՞մ, այ Վենեսիլյան ...» կամ «եթե նախագծին նայում եմ որքան իրավական փաստաթուղթ, որն արժանացել է Վենեսիլյան եւ սեղական հասագլուխների հավանությանը...» եւ այլն:*

Երկրորդ խումբը կազմում են այն հրապարակումները, որոնք բացահայտում են հեղինակների անիրազեկությունը կամ դիտավորյալ խեղաթյուրումը եւ ապատեղեկացնում ընթերցողին:

Այդպիսին է «Հայկական ժամանակում» տպագրված Աննա Մկրտչյանի «Զգուշացեք դավադրություն է» նյութը (25 նոյեմբերի, 2005թ.): Այստեղ թերեւս կա միայն մեկ ճիշտ պնդում, այն է, որ «*խախտելով ընդունված կարգը՝ վարչախումբը «Սահմանադրության փոփոխություններ կատարելու մասին» նախագծով հանրավելի է դրել ոչ միայն իր առաջարկությունները, այլեւ սահմանադրության՝ փոփոխման չենթարկված նորմերը»:* Հոդվածագիրն այնուհետեւ

տել պնդում է, որ պետք է զգուշանալ, քանի որ նախագծում կա դավադրություն: Եվ հղում է կատարում այն հոդվածներին, որոնք դավադրություն չեն էլ կարող պարունակել: Սա ցույց է տալիս, որ հեղինակը չի ցանկացել կամ չի կարողացել ըմբռնել այդ փոփոխությունների բովանդակությունը: Բերենք երկու օրինակ. հոդվածագիրը հղում կատարելով նախագծի 6-րդ հոդվածին, ասում է, որ բացասաբար է գնահատում *«Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքները, ինչդեռ նաեւ սահմանադրությանը եւ օրենքներին հակասող ճանաչված այլ իրավական ակտերը իրավաբանական ուժ չունեն»* դրույթը հանելու փաստը: Նա, սակայն, չի անդրադառնում դրա փոխարեն նախագծում ներառված դրույթներին, որոնք հստակ ամրագրում են իրավական նորմերի հիերարխիան: Հեղինակն անդրադարձել է նաեւ սեփականության անձեռնմխելիության իրավունքին՝ ասելով, թե *«Հայաստանցիները չեն ունենալու սեփականության անձեռնմխելիության իրավունք»*: Մինչդեռ Սահմանադրության փոփոխությունների նախագծի տեքստում հստակ ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում եւ երաշխավորվում է սեփականության իրավունքը (հոդված 8), ինչի տակ հասկացվում է նաեւ անձեռնմխելիությունը:

Անիրագելության օրինակ է ՀՀ ԱԺ պատգամավոր Արմեն Աշոտյանի *«Իշխանությունը պատկանում է ժողովրդին. եւ դա պետք է հասկանա երկրի յուրաքանչյուր քաղաքացի»* հոդվածը (*«Ռեսպուբլիկա Արմենիա», 23 նոյեմբերի, 2005թ.*): Այս հոդվածը վերաբերում է Սահմանադրության փոփոխությունների նախագծի 8-րդ գլխին: Հոդվածագիրը փաստորեն ներկայացնում է գործող Սահմանադրության տեքստը, բայց պնդում է, որ սրանք Սահմանադրության փոփոխությունների առավելություններն են: Ըստ էության Սահմանադրության 111-րդ հոդվածում բովանդակային փոփոխություն գրեթե չի կատարվել, պարզապես վերջին մասում միայն ճշգրտվել է, թե Ազգային ժողովն ինչ ժամկետում պետք է քննարկի հարցը, եթե Սահմանադրության փոփոխությունների նախաձեռնությամբ հանդես է գալիս Հանրապետության նախագահը: Բայց հոդվածագիրը սրանից եզրակացնում է, թե *«նախագծում հսակ տարանջատված են նախագահի եւ խորհրդարանի տարականություններն ու իրավասությունները»*: Այնուհետեւ հեղինակը կատարում է հաջորդ ոչ ճիշտ պնդումը, թե *«Խիս կարելու է համարում նախագծի այն դրույթը, որի համաձայն կարող են անցկացվել երկրի եւ ժողովրդի համար առավել կարելու օրինագծերի հանրափայտներ»*: Այս դրույթը նոր չէ: Այն կա գործող Սահմանադրությունում: Ընդ որում՝ խոսքը ամենակարելու հարցերի վերաբերյալ հանրաքվեի մասին չէ, այլ ցանկացած օրինագիծ հանրաքվեի դնելու մասին: Հեղինակը գրում է նաեւ, թե իր կարծիքով հատկապես կարելու նշանակություն ունի նախագծի 114-րդ հոդվածը, որտեղ ամրագրված է, որ Սահմանադրության 1-ին, 2-րդ եւ նույն՝ 114-րդ հոդվածները փոփոխության ենթակա չեն: Սա էլ գործող Սահմանադրության տեքստն է՝ առանց որեւէ ստորակետի փոփոխության:

Որեւէ լուրջ վերլուծություն չկա *«Հայաստանի Հանրապետություն»* թերթում տպագրված *«Արդարադատության լուրջ երաշխիք»* հոդվածում (*«ՀՀ», 23 նոյեմբերի, 2005թ.*), որտեղ հեղինակ Գոհար Նուրիջանյանը, չնայած վերնագրին, գրեթե չի անդրադառնում արդարադատության խնդիրներին: Արվում են ընդհանուր դատողություններ, որոնք շատ դեպքերում տրամաբանական մտքի տեսակետից իրենց ավարտին հասցված չեն: Հոդվածում իշխանությունների բաժանման հարցն է բարձրացվում (նախագահ-խորհրդարան) եւ արվում է մի տարօրինակ պնդում, թե ներկայումս *«երկրի նախագահ եւ ֆաղափական մեծամասնությունը հարաբերությունները»* դեռեւս լուրջ քննարկման առարկա լինել չեն կարող, քանի որ քաղաքական կուսակցու-

թյունները հաճախ փոխում են իրենց դիրքորոշումները կամ որ «մեզանում գիշերը կարելի է որդես սոցիալիս կամ դեմոկրատ ֆնել, իսկ առավոտյան աչքերը բացել որդես ֆրիսոնյա-ազգայնական»։ Թե սա ինչ կապ ունի Ազգային ժողով - նախագահ փոխարարությունների հետ, հեղինակն այդպես էլ չի պարզաբանում։ Հոդվածի վերջում ասվում է. «Հաճախ է խոսվում, թե բարեփոխումների տարբերակը տարատարան է եվրոպական ընթանիֆին ինտեգրվելու ճանադարհին։ Մասնագետների կարծիքով, որդես եվրոպական ընթանիֆի անդամ, մենք ստանձնել ենք այս տարտավորությունը...»։ Ստացվում է, թե հոդվածագիրն առանց մասնագետի կարծիքի չէր կարող գալ այն պարզունակ եզրահանգմանը, որ մենք ստանձնել ենք պարտավորություններ եւ պետք է կատարենք դրանք։

Հրապարակումների երրորդ խումբը նրանք են, որոնցում հեղինակները կամ հարցազրույցով տեսակետ արտահայտողները կատարում են Սահմանադրության փոփոխությունների նախագծի դրույթների վերլուծություն, սակայն եզրահանգումներն անում են ելնելով իրենց քաղաքական կամ այլ սուբյեկտիվ հայացքներից։

Այդպիսի հրապարակումներից է, օրինակ, «Հայաստանի Հանրապետությունում» հրապարակված «Գլխարկից մինչեւ տեղական իշխանավոր» («ՀՀ», 15 նոյեմբերի, 2005թ.) նյութը, որը վերաբերում է տեղական ինքնակառավարմանը, ավելի ստույգ՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 109-րդ հոդվածին, ըստ որի համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու համար, անհրաժեշտ է Սահմանադրական դատարանի համապատասխան եզրակացությունը։ Հրապարակման հեղինակ Արամ Սարգսյանը այդ հոդվածի փոփոխությունից հանգել է բացառապես դրական եզրակացության, ինչն արդարացված չէ, քանի որ տեղական ինքնակառավարումը ժողովրդավարության առանձին եւ ինքնուրույն համակարգ է եւ չպետք է որեւէ կախվածության մեջ գտնվի գործադիրից։

«Ռեսպուբլիկա Արմենիա» թերթում տպագրված «Ժողովրդավարության խորացման, քաղաքացիական հասարակության ձեւավորման մեխանիզմը» (9 նոյեմբերի 2005թ.) հոդվածում, անդրադառնալով Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի ձեւավորման կարգում առաջարկված դրական փոփոխություններին, հեղինակ, Սահմանադրական իրավունքի փորձագետ Արամ Անանյանը միեւնույն ժամանակ չի նշում, որ այդ հանձնաժողովի կազմը անմիջապես չի փոփոխվելու, ինչպես դա պահանջում էր եվրոպայի խորհուրդը։

«Ռեսպուբլիկա Արմենիա» թերթում ՀՀ ԱԺ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռաֆիկ Պետրոսյանն իր «Դատական իշխանության անկախության երաշխիքները» վերնագրով հոդվածում («ՌԱ», 16 նոյեմբերի, 2005թ.) նշում է, թե իբր գործող Սահմանադրությամբ արդարադատության նախարարն է կազմում դատավորների առաջխաղացման ցուցակները կամ նրանց ենթարկում կարգապահական պատասխանատվության կամ դիմում երկրի ղեկավարին՝ դատավորի լիազորությունները վերացնելու համար։ Հեղինակը պնդում է, թե այդ լիազորությունները՝ նախագծի փոփոխություններով, փոխանցվում են արդարադատության խորհրդին։ Դրանք այսօր էլ արդարադատության խորհրդի լիազորություններն են, պարզապես այդ լիազորություններն արդարադատության խորհուրդն իրականացնում է արդարադատության նախարարի առաջարկով։ Ըստ հեղինակի, դատավորների անկախությունը շատ ավելի երաշխավորված կլիներ, եթե նրանց պաշտոնան-

կության համար անհրաժեշտ լինելու նաև Ազգային ժողովի համաձայնությունը: Սա տեսակետ է, որը կարելի է ընդունել, բայց չպետք է կարծել, որ սրանից է կախված լինելու, ինչպես Ռաֆիկ Պետրոսյանն է նշում, «*դասական համակարգի 100 տկոսանոց անկախությունը*»:

«Առավոտ» օրաթերթի (2005թ. նոյեմբերի 19-ի եւ 24-ի) համարներում հրապարակված են հարցազրույցներ քաղաքական վերլուծաբան Լեւոն Ջուրաբյանի հետ: Ուսումնասիրված նյութերից սրանք թերևս միակն են, որ լուրջ բովանդակային վերլուծություն են պարունակում: Նախ, պետք է ասել, որ Լեւոն Ջուրաբյանը երկու հարցազրույցում էլ մի քանի արդարացի պնդումներ է կատարում: Առաջինում («*Փորձում են Սահմանադրությամբ օրհնականացնել խախտումները*», «Առավոտ», 19 նոյեմբերի) նա կարծիք է հայտնում, որ օրենսդրական փոփոխություններ կատարելու տեխնիկայի տեսակետից Սահմանադրության փոփոխությունների նախագիծը բավականին անգրագետ է, որի հետ կարելի է համաձայնել: Երկրորդ պնդումն այն է, որ այն տեսքով, որով ներկայացված է նախագիծը, հնարավոր չէ պարզել, թե իրականում ինչն է փոփոխվել: Սովորական քաղաքացին, որը պարտադիր չէ, որ լինի սահմանադրական իրավունքի մասնագետ, անպայման պետք է վերցնի գործող Սահմանադրության տեքստը, վերցնի փոփոխությունների նախագծի պաշտոնական տեղեկագիրը կամ հատուկ բուկլետը եւ իրար հետ համեմատի 117 հոդված, որպեսզի հասկանա, թե ինչ է փոփոխվում այս նախագծով: Սա նույնպես գործող օրենսդրության եւ մարդու իրավունքների կոպիտ խախտում է, որովհետեւ մարդուց պահանջում են կատարել այնպիսի աշխատանք, որը պետք է անել Ազգային ժողովը: Այս առումով նրա գնահատականները տեղին են: Լեւոն Ջուրաբյանը անդրադարձել է սեփականության օտարման վերաբերյալ դրույթին եւ երկքաղաքացիության մասին դրույթին: Եվ այստեղ էլ կարելի է համաձայնել, որ դրանք իսկապես գործող Սահմանադրության հետ համեմատ հետընթաց են: Այս երկու իրավունքների վերաբերյալ, վերլուծաբանը տվել է հիմնավորված բնորոշումներ:

Երկրորդ հարցազրույցում («*Փոփոխությունների նախագիծը ճգնաժամահարույց է*», «Առավոտ», 24 նոյեմբերի, 2005թ.) անդրադարձ կա Սահմանադրության փոփոխությունների նախագծի 51-րդ, 52-րդ հոդվածներին, որոնք լուրջ թերություններ ունեն, որովհետեւ հստակ չեն ամրագրում այն ժամկետները, թե երբ պետք է անցկացվի հանրապետության նախագահի ընտրությունը, եթե քվեարկությունը չի ավարտվում թեկնածուներից մեկի հաղթանակով կամ եթե թեկնածուներից մեկը մահանում է: Այս հոդվածները, թերևս, ունեն ճգնաժամեր առաջացնելու ներուժ: Դրանց վերաբերյալ Լեւոն Ջուրաբյանի եզրահանգումները հիմնավորված են: Միեւնույն ժամանակ երկու հարցազրույցներում էլ կան չհիմնավորված եզրահանգումներ: Այսպես, անդրադառնալով անձնական եւ ընտանեկան կյանքի պաշտպանության իրավունքին, որին վերաբերող հոդվածում միայն խմբագրական փոփոխություն է տեղի ունեցել, նա դա ներկայացնում է իբրեւ հետընթաց:

Կրոնի եւ համոզմունքների արտահայտման ազատությանը վերաբերող Սահմանադրության փոփոխությունների նախագծի 26-րդ հոդվածը գնահատելով, վերլուծաբանը անտեսում է, որ գործող Սահմանադրության 23-րդ հոդվածը վրիպակ ունի. այնտեղ ամրագրված է, որ կրոնի եւ համոզմունքների արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ Սահմանադրության 45-րդ հոդվածում նախատեսված հիմքերով: Սակայն, իրականում 45-րդ հոդվածում նման հիմքեր չկան: Այդ հղումը վերաբերում է 44-րդ հոդվածին: Նախագիծն ընդամենը ուղղել է վրիպակը:

«Փոփոխությունների նախագիծը ճգնաժամահարույց է» հոդվածը նույնպես ընդհանուր առմամբ արտացոլում է վերլուծաբանի խիստ քննադատական վերաբերմունքը նախագծի նկատմամբ: Հարցազրույցը վարողի հարցին, թե արդյոք ինքը իսկապես չի տեսնում, որ նախագիծն առավել հավասարակշիռաժողովուն է ապահովում իշխանության ճյուղերի միջեւ, վերլուծաբանը պատասխանում է. «Եկեք վերլուծենք՝ արդյո՞ք այդպե՞ս է» եւ բերում է նախագծի միայն բացասական կողմերը: Վերլուծաբանը չի ցանկանում անդրադառնալ նաեւ հավասարակշռությունն ապահովող դրույթներին եւ տպավորություն է ստեղծում, թե փոփոխությունների նախագիծն ամբողջությամբ ճգնաժամահարույց է:

Նկատի ունենալով վերոբերյալ օրինակները, ինչպես նաեւ Երեւանի մամուլի ակումբի մոնիտորինգի տվյալները, ըստ որի հրապարակումներում առավել շատ շոշափվել են սահմանադրական բարեփոխումների՝ ընդհանուր բնույթ կրող բաժիններ, կարելի փաստել, որ լրատվամիջոցները բավարար չեն իրազեկել հասարակությանը Սահմանադրության փոփոխությունների էությանը:

IX. Այս Թ Անօ՞՞ օ 1/4 2 1 2 օ ան Ա Անօ՞՞ օ օ

Հայաստանի ՁԼՄ-ների մոնիտորինգը, որ իրականացվել է 2005 թվականի նոյեմբերի 5-ից 25-ը, ցույց տվեց, որ քանակական առումով հայկական թերթերը եւ հեռուստաընկերությունները բավարար ուշադրություն են դարձրել ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի հանրաքվեի թեմային: Միաժամանակ, հետազոտված ՁԼՄ-ների գերակշիռ մեծամասնությունն անտեսեց նման արշավները լուսաբանելու անկողմնակալության եւ բազմակարծության սկզբունքները: Չապահովվեց հասարակությանը սահմանադրական փոփոխությունների բովանդակության մասին բազմակողմանի, հավաստի եւ իրազեկ տեղեկություններ հաղորդելը:

Ասվածն ամենից առաջ վերաբերում է հայկական առաջատար հեռուստաալիքներին, որոնք այսօր երկրում հասարակական կարծիքի ձեւավորման առավել արդյունավետ եւ ազդեցիկ միջոցներն են: Թերթերն ավանդույթի համաձայն բաժանված էին հակամարտող ճամբարների եւ քարոզարշավը լուսաբանում էին սեփական քաղաքական կողմնորոշումներին համապատասխան: Սակայն Հայաստանում կարելուրագույն քաղաքական իրադարձությունների ժամանակաշրջաններում ԵՄԱ-ի անցկացրած ՁԼՄ-ների մոնիտորինգների (սկսած 1996 թվականից) ընթացքում սա երկրորդ անգամ է, երբ հեռուստաալիքները կողմնակալությամբ չզիջեցին տպագիր պարբերականների: Առաջին անգամ նման իրավիճակ է եղել 1996 թվականին՝ պետական հեռուստաալիքների գերակայության պայմաններում, այն դեպքում, երբ ներկայումս Հայաստանում գործում են տասնյակ մասնավոր հեռուստաընկերություններ, իսկ պետական հեռարձակումը փոխարինված է հանրայինով:

Ընդ որում, եթե թերթերը որոշակիորեն հավասարակշռում էին իրար՝ պաշտպանելով տարբեր դիրքորոշումներ, իսկ միակ լրատվամիջոցը (հետազոտվածներից), որում Սահմանադրության փոփոխությունների նախագծին «կողմ» եւ «դեմ» կարծիքների հարաբերակցությունը համարյա հավասար էր՝ «Ազգ» թերթն էր, ապա բոլոր համազգային հեռուստաալիքները թույլ տվեցին նշանակալի շեղում հօգուտ մեկ՝ նախագծին աջակցության տեսակետի: Հեռարձակվող ՁԼՄ-ների կողմից նման լուսաբանումը ընդունված միջազգային չափանիշների խախտում է:

Հայաստանի պաշտոնական ՁԼՄ-ների (Հայաստանի հանրային հեռուստատեսության Չ1-ալիքի, «Հայաստանի Հանրապետություն» եւ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթերի) մոնիտորինգը ցույց տվեց, որ նրանք բոլորը կամ ընդհանրապես ամբիոն չեն տրամադրել փոփոխությունների նախագծի հակառակորդներին (թերթերի դեպքում), կամ կողմնակիցներն առավելություն են ունեցել հակառակորդների նկատմամբ (Չ1-ի դեպքում): Վերջինս «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի խախտում է: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ Չ1-ի «Խաչմերուկ» ծրագիրը միակն էր հետազոտվածներից, որում փոփոխությունների նախագծի կողմնակիցներն ու հակառակորդները սեփական դիրքորոշումներն արտահայտելու հավասար հնարավորություններ են ստացել:

Հանրաքվեի որակյալ լուսաբանումը դժվարանում էր մի շարք օբյեկտիվ պատճառներով: Մասնավորապես, սահմանադրական փոփոխություններն առնչվում էին սկզբունքային հարցերի լայն շրջանակի, եւ ՁԼՄ-ների համար ծայրահեղորեն դժվար էր դրանց բոլորին բավարար ուշադրություն դարձնել: Առավել եւս, որ իրավիճակը բարդանում էր ժամանակի սղությանը. մինչեւ վերջին պահն էլ նախագծի տեքստում կատարվում էին էական փոփոխություններ, եւ դրա վերջնական տարբերակը հասարակությանը մատչելի դարձավ հանրաքվեից ընդամենը մեկուկես ամիս առաջ:

Սահմանադրության փոփոխությունների բովանդակության մասին հասարակությանը տեղեկացնելը բարդանում էր նաեւ նրանով, որ քննարկման համար առաջարկվում էր, որպես կանոն, ամբողջ նորացված տեքստը, որում ծայրահեղորեն դժվար էր տարբերակել փոփոխությունը հիմնական տարբերակից: Միայն փաստաթուղթը հիմնավորապես ուսումնասիրած մասնագետները կարող էին դատել փոփոխությունների նախագծի առավելությունների ու թերությունների մասին: Ի հետեւանք, մանուլում «կողմ» եւ «դեմ» փաստարկները կարող էին վերաբերել ինչպես գործող Սահմանադրության դրույթներին, այնպես էլ առաջարկվող փոփոխություններին: Այս հանգամանքը միայն շփոթեցնում էր քաղաքացիների մեծ մասին եւ խանգարում նրանց գիտակցված ընտրություն կատարել:

Օբյեկտիվ պատճառների թվին պետք է դասել նաեւ հանրաքվեների մասին ՀՀ օրենսդրության այն մասի անկատարությունը, որը վերաբերում է համապատասխան արշավների ժամանակ ՁԼՄ-ների գործունեության կարգավորմանը: Թեպետ անհրաժեշտ է նաեւ փաստել ՁԼՄ-ներում հօգուտ քաղաքական խնդիրների օրենքների պահանջները շրջանցելու ձեւավորվող պրակտիկան:

Քարոզարշավի լուսաբանման որակի վրա ազդեց նաեւ սահմանադրական փոփոխությունների շուրջ իրավիճակի չափից ավելի քաղաքականացումը: Քաղաքական ուժերի վարքը հանգեցրեց նրան, որ ողջ գործընթացում ուշադրությունը կենտրոնացվում էր ոչ այնքան փոփոխությունների բովանդակության, դրանց դրական կամ բացասական կողմերի վրա, որքան իշխանությունների եւ ընդդիմության հակամարտության: Պատահական չէ, որ բոլոր հետազոտված ՁԼՄ-ներից քարոզարշավի առավել ակտիվ լուսաբանմամբ աչքի ընկան արմատապես հակադիր քաղաքական դիրքորոշումներ ունեցող երկու թերթերը՝ «Հայկական ժամանակը» եւ «Հայոց աշխարհը», որոնց գործունեության մեջ լուսավորչական քաղադրատարրը ակնհայտորեն գիջում էր քարոզչականին:

Եվ ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ ՁԼՄ-ներում Սահմանադրության փոփոխությունների լուսաբանումներում հիմնական ուշադրությունը հատկացվում էր հանրաքվեի կազմակերպման եւ անցկացման հարցերին եւ ընդհանուր թեմաներին, այն դեպքում, երբ փոփոխությունների էությունը, դրանց հիմնական դրույթները հայտնվեցին երկրորդ պլանում: Այսպես, նվազագույնս լուսաբանվել են բարեփոխումների այնպիսի սկզբունքային խնդիրներ, ինչպես խոսքի եւ տեղեկատվության ազատության երաշխիքը, համայնքի ղեկավարի պաշտոնանկության խնդիրը, դատախազության կարգավիճակը եւ լիազորությունները:

Ընդ որում, բնութագրական է, որ փոփոխությունների էության եւ բովանդակության լուսաբանմանը որոշակի մակերեսային վերաբերմունք են դրսևորել հավասարապես եւ հեռարձակվող, եւ տպագիր ՁԼՄ-ները: Թեպետ պետք էր սպասել, որ թերթերն իրենց էությանը պետք է ցուցաբերեին առավել խորություն եւ վերլուծականություն, քան իրենց էլեկտրոնային գործընկերները:

Մոնիտորինգը թույլ է տալիս եզրակացնել Հայաստանում հրապարակային քաղաքականության մշակույթի ցածր մակարդակի մասին: Անգամ այն պայմաններում, երբ հետազոտված ՁԼՄ-ների մեծամասնությունը ցուցաբերեց որոշակի կողմնակալություն, միակողմանիություն, ակնհայտ էր, միաժամանակ, այն դժվարությունները, որոնց բախվում էին նրանք՝ փնտրելով գրուցակիցներ, որպեսզի հասարակությանը լավագույնս տեղեկացնեն սահմանադրական փոփոխությունների բովանդակությանը: Ձգացվում էր հանրաքվեի համատեքստում մարդկանց հետաքրքրող, հուզող հարցերի վերաբերյալ պատասխանատու, անաչառ, իրազեկ եւ անկաշկանդ խոսելու պատրաստ քաղաքական գործիչների, փորձագետների ակնհայտ պակաս:

Այս քաղաքական արշավի բնորոշ գիծը հարցազրույցից ընդդիմադիր քաղաքական գործիչների հրաժարվելուց որոշ ՁԼՄ-ների ներկայացուցիչների բողոքն էր: Մի շարք ՁԼՄ-ներ սրանով բացատրեցին փոփոխությունների նախագծի վերաբերյալ տարբեր տեսակետների ներկայացման դիսբալանսը: Այս փաստը եւս ինչ-որ չափով վկայում է հրապարակային քաղաքականության վերոհիշյալ հիմնախնդրի մասին: Սակայն գլխավոր պատճառը, հավանաբար, իշխանամետ ՁԼՄ-ների նկատմամբ ընդդիմության աճող անվստահությունն է, որն իր հերթին հետեւանք է այնպիսի նախադեպերի, երբ ընդդիմադիր գործիչների խոսքերը խեղաթյուրվել են, նրանց հարցազրույցների տեսագրությունները մոնտաժվել են, կամ հարցազրույց վարողները չափազանց կողմնակալություն են դրսևորել: Այս խնդրի խորացմանը նպաստում է նաեւ ուղիղ եթերում լրատվա-քաղաքական ծրագրերի պակասը:


ՁԼՄ-ներում Սահմանադրական փոփոխությունների լուսաբանման մոնիտորինգը մեկ անգամ եւս ընդգծեց Հայաստանի տեղեկատվական ոլորտի այն բացասական միտումները, որ վերջին երեք-չորս տարիներին նշում են Երեւանի մամուլի ակումբը, տեղական եւ միջազգային այլ հասարակական կազմակերպությունները: Դա նահանջն է բազմակարծությունից, իշխանությունների ուժեղացող վերահսկողությունը ամենից առաջ հեռուստատեսության վրա, հասարակության տեղեկատվական պահանջների անտեսումը, հասարակական-քաղաքական գործընթացներում ՁԼՄ-ների դերի նվազումը:

Սահմանադրության փոփոխությունների հիշատակումների բնույթը հեռուստահաղորդումներում (բացարձակ թվերով)


- դրական
- բացասական
- չեզոք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ (Հ1)

Լրատվական եւ լրատվական-վերլուծական ծրագրեր («Հայլուր», «360 աստիճան»)




Մեկնաբանական հաղորդումներ («Խաչմերուկ», «5-րդ անիվ»)




ԱԼՄ


Լրատվական եւ լրատվական-վերլուծական ծրագիր («Օրեցօր»)



Մեկնաբանական հաղորդումներ («Հարցի արժեքը», «Դիրքորոշում»)




Սահմանադրության փոփոխությունների հիշատակումների բնույթը հեռուստահաղորդումներում (բացարձակ թվերով)




«ԱՐՄԵՆԻԱ»

Լրատվական եւ լրատվական-վերլուծական ծրագիր («Ժամը»)




Մեկնաբանական հաղորդում («Իրականում»)




ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՄՏԱՎԼԻՔ (ՀԶ)

Լրատվական եւ լրատվական-վերլուծական ծրագրեր («Լրաբեր», «Կիրակնօրյա լրաբեր»)




Մեկնաբանական հաղորդումներ («Չորրորդ ստուդիա», «Խոսքի իրավունք»)




Սահմանադրության փոփոխությունների հիշատակումների բնույթը թերթերում (բացարձակ թվերով)

- դրական
- բացասական
- չեզոք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»




«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ ԱՐՄԵՆԻԱ»




Սահմանադրության փոփոխությունների հիշատակումների բնույթը թերթերում (բացարձակ թվերով)

- դրական
- բացասական
- չեզոք

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»




«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»




Սահմանադրության փոփոխությունների հիշատակումների բնույթը թերթերում (բացարձակ թվերով)

- դրական
- բացասական
- չեզոք

«ԱՌԱՎՈՏ»




«ԳՈԼՈՍ ԱՐՄԵՆԻ»




Սահմանադրության փոփոխությունների հիշատակումների բնույթը թերթերում (բացարձակ թվերով)

- դրական
- բացասական
- չեզոք

«ԱԶԳ»




Սահմանադրության փոփոխություններին առնչվող թեմաների հիշատակումների հաճախականությունը (բացարձակ թվերով) Հայաստանի հանրային հեռուստատեսություն (Հ1), ԱԼՄ, «Արմենիա», Հայկական երկրորդ հեռուստաալիք (Հ2) հեռուստաընկերություններում



ՀՀ Սահմանադրության փոփոխություններին առնչվող թեմաների ցանկը

1. Մարդու եւ քաղաքացու իրավունքներ ու ազատություններ
2. ՀՀ նախագահի լիազորություններ
3. ՀՀ Ազգային ժողովի լիազորություններ
4. ՀՀ կառավարության իրավասություններ եւ լիազորություններ
5. ՀՀ դատական իշխանության անկախություն
6. ՀՀ դատախազության կարգավիճակ եւ իրավասություններ
7. Տեղական ինքնակառավարում
8. Համայնքի ղեկավարի պաշտոնանկության խնդիրը
9. Երեւանի կարգավիճակը
10. Տեղեկատվության եւ խոսքի ազատության բնագավառ
11. Երկքաղաքացիություն
12. Ընտրական իրավունք եւ հանրաքվեներ
13. Սահմանադրական կարգի հիմունքներ եւ այլ ընդհանուր հարցեր
14. Նոյեմբերի 27-ի հանրաքվեի կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող հարցեր

Սահմանադրության փոփոխություններին առնչվող թեմաների հիշատակումների հաճախականությունը (բացարձակ թվերով) «Հայաստանի Հանրապետություն», «Ռեսպուբլիկա Արմենիա», «Ազգ», «Առավոտ», «Հայկական ժամանակ», «Հայոց աշխարհ», «Գոլոս Արմենիի» թերթերում



ՀՀ Սահմանադրության փոփոխություններին առնչվող թեմաների ցանկը

1. Մարդու եւ քաղաքացու իրավունքներ ու ազատություններ
2. ՀՀ նախագահի լիազորություններ
3. ՀՀ Ազգային ժողովի լիազորություններ
4. ՀՀ կառավարության իրավասություններ եւ լիազորություններ
5. ՀՀ դատական իշխանության անկախություն
6. ՀՀ դատախազության կարգավիճակ եւ իրավասություններ
7. Տեղական ինքնակառավարում
8. Համայնքի ղեկավարի պաշտոնանկության խնդիրը
9. Երեւանի կարգավիճակը
10. Տեղեկատվության եւ խոսքի ազատության բնագավառ
11. Երկքաղաքացիություն
12. Ընտրական իրավունք եւ հանրաքվեներ
13. Սահմանադրական կարգի հիմունքներ եւ այլ ընդհանուր հարցեր
14. Նոյեմբերի 27-ի հանրաքվեի կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող հարցեր

ĐÚêî²ÙàôØ
ÄàÔài ð, ²ì ²ð²Î²Û´²ð°öàÊ àôØÛ°ðÆ
ØàÙÆàðÆÛ¶

¼°Î àôÙò
2005

°ñ»ð ÝÇÙ³ ÙáðÇ³ Ì áðµ

0002, EĐ, °ñ»ð Ý
Ô³ ½³ ñö³ ñã »óÇ 9µ
Đ»é. +37410 53 00 67; 53 35 41
Û³ ùë. +37410 53 76 62; 53 56 61
¿É÷ áëi. pressclub@ypc.am
www.ypc.am